

# Մ Ո Ւ Ռ Ք

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն, Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն, Գ Ր Ա Կ Ա Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11-12 1894 ՆՈՅԵՄԲ.-ԴԵԿՏԵՄԲ. 1894 № 11-12

## Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Ց Ա Ր Ի

երև

|                                   |      |   |
|-----------------------------------|------|---|
| 1 ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆՑ, ԳԱԲՐԻԷԼ . . . . . | 1529 | Չարարեր խարաղանը (պատմ.):                                     |
| 2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . .    | 1535 | Ասում են պօէտ, (բանաստեղծ.):                                  |
| 3 ՆՈՅՆԸ . . . . .                 | 1536 | Հիասթափութեան էլէգիա (բան.):                                  |
| 4 ՍՏԻՆԴՐԵՐԳ, ԱԻԳՈՒՍՏ . . . . .    | 1537 | Խղճի խալթոցները (պատմ.):                                      |
| 5 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷԲՍԱՆԴՐ . . . . .  | 1539 | Մեռեալի սէրը (բանաստ.):                                       |
| 6 ԿՈՊՊԷ, ՖՐԱՆՍՈՒԱ . . . . .       | 1561 | Համբույր (պատմաւածք):   |
| 7 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ . . . . .    | 1567 | Նրդ (բանաստեղծութիւն):  |
| 8 ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. . . . .           | 1568 | Զգալնաչափ (պատմ.):  |
| 9 ՆՈՅՆԸ . . . . .                 | 1572 | Զիտի (պատմաւածք):   |
| 10 ՇԱՆԹ . . . . .                 | 1577 | Նրազ օրեր (լիշատակարանից):                                    |
| 11 ՍԻԶՈՎԱ, Ա. . . . .             | 1601 | Վ հնեակեան հաշիա (պատմ.):                                     |
| 12 ՎՐՈՅՐ, Մ. . . . .              | 1609 | Աղամեանի նամակները (վերջ):                                    |
| 13 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . .   | 1625 | Կպրոցական նամակներ: VII VIII.                                 |
| 14 ՍԷՅԼԱՆ . . . . .               | 1639 | Սասուն (նկարագիր) (չարունակ):                                 |
| 15 ՂԱԶԱՐԱՆ, ԵՐՈՒԱՆԻ . . . . .     | 1654 | Անցեալի լիշատակը (չար.):                                      |
| 16 Լ. Մ. . . . .                  | 1667 | «Պետրոս Գուրեան»:   |
| 17 Յ. Կ. . . . .                  | 1671 | «Ամբէլի լիշատակարանից»:                                       |
| 18 ԳՆՈՒՆԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ . . . . .    | 1676 | Լիբմոնտովի «Կեր»:   |
| 19 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՐ. . . . .   | 1692 | Ճամանակակից Տեսութիւն:— Հակա-<br>կան խնդրի նորագոյն դարդպոմը: |
| 20 ԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ. . . . .       | 1722 | Շուշալ դարմոցը 1893/94 թ.                                     |
| 21 Ա. Ա. . . . .                  | 1730 | Արհեստաւորաց Մուրճ բնկերութիւն:                               |
| 22 ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. . . . .          | 1735 | Նամակներ Անդրիպից, I.   |
| 23 Շ. . . . .                     | 1744 | Քաղաքական տեսութիւն:  |
| 24 ԽՄԲ. . . . .                   | 1766 | Զանազան լուրեր:   |
| 25 ԽՄԲ. . . . .                   | 1754 | «Մուրճ»-ի բովանդակութիւն. 1894 թ.                             |

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր




Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵՍՏՆԻ

Типография М. Д. Ротшильдъ Гол. пр., д № 41.

1894



# Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

---

№ 11—12 1894      ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ      1894 № 11—12

---

ՎԵՅՅԵՐՈՐԳ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Ա. Գ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1894



VII SURԻ „ՄՈՒՐՃ“ SURԻ VII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Ք Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻԱԿ. ՀԱՄԱՐ ԲԱՅԻԱԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1895 թվականին կը հրատարակի նոյն ծրագրով և նոյն գիրքով, որպէս և նախկին վեց տարիներում: «ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալում, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմածքներ:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ:
- IV. Նկարագրական-ճամբորդական:
- V. Գիտական հանրամատչելի յօդւածներ:
- VI. Հետազօտութիւններ անտեսական, սոցիալական, պատմական:
- VII. Գրական քննադատութիւն:
- VIII. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի:
- IX. Ժամանակակից Տեսութիւն մեր կեանքի ընթացիկ խնդիրների և այլ յօդւածներ մեր ժամանակակից ներքին կեանքից:
- X. Գաւառական նամակներ:
- XI. Թղթակցութիւններ Ռուսաստանից և Արտասահմանից:
- XII. Քաղաքական տեսութիւն:
- XIII. Զանազան լուրեր:
- XIV. Յայտարարութիւններ և տեղեկատուներ:

«ՄՈՒՐՃ»-ի ԳՐԱԿԱՆ ՄԱՍԸ ապահովւած է բազմաթիւ աշխատակիցներով, որոնց կազմը ուժեղանում է նորերի նպաստներով:

Ներկայ 1894 թւականի մինչ ներկայ ա խօը աշխատակցել են «Մուրճ»-ին հետեւեալ անձերը՝ որոնց անունները զատուորում ենք ըստ աշխատակցութեան հնութեան.

- |   |                          |
|---|--------------------------|
| 1 Արտիսանեանց, Ա.                             | 21 Գաղբաշեան, Յար.       |
| 2 Մանուէլեանց, Լևոն                           | 22 Յակոբեան, Յակոբ       |
| 3 Վարդանեանց, Գր.                             | 23 Խանդաղեան, Խորէն քահ. |
| 4 Ծատուրեան, Ալ.                              | 24 Ասուածատրեանց, Գէորգ  |
| 5 Մխրթարեան, Արշալուս<br>(Նուճը և Արգահատեան) | 25 Աղէլեան, Ա.           |
| 6 Ղազարեան, Երւանդ                            | 26 Բահաթրեան, Սարգիս     |
| 7 Արծր. Էնի, բժ. Վահան<br>(Նուճը և Ֆելիքս)    | 27 Ղլածեան, Արսէն վարդ.  |
| 8 Խաժակիեան, Գ.                               | 28 Մարդանեան, Ֆրիդոն     |
| 9 Նաւասարդեան, Մկրտ.                          | 29 Տէր-Մարտիրոսեան, Միք. |
| 10 Փափաղեան, Վ.                               | 30 Յովհաննիսեան, Միք.    |
| 11 Վանցեան, Գր.                               | 31 Միրիմանեան, Յար.      |
| 12 Մնացականեան, Գարբ.                         | 32 Մելքումեան, Մ.        |
| 13 Բաշինջաղեան, Գէորգ                         | 33 Գուրբախեան, Յովհ.     |
| 14 Մուրադեան, Յակոբ                           | 34 Տէրեան, Սա.           |
| 15 Ղարաջեան, Գէորգ                            | 35 Սողոմոնեան, Բ.        |
| 16 Աթանասեան, Աշոտ                            | 36 Մէդնիկեան, Յովհ.      |
| 17 Բալաղեան, Սամուէլ                          | 37 Գնուէի, Յովհ.         |
| 18 Զաքարեան, բժ. Թադէոս                       | 38 Տէր Մկրտչեան, Մ.      |
| 19 Աղաչեան, Ղազարոս                           | 39 Մինասեան, Երւ.        |
| 20 Վրոյր                                      | 40 Գեմիրճեան, Գերենիկ    |
|   | 41 Բահաթրեան, Լևոն       |
|   | 42 Սէլւան                |

Բաժանորդ գրելու համար պէտք է զիմել՝

Խմբագրատունը—Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“

Արտասահմանից—Tiflis, Rédaction „MOURTCH“:

Կամ մեր գործակալութիւններին (տես կազմի վերջին երեսը):  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 10 ռուբլի տարեկան:

Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 ռուբլի:

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռ. (կամ 4 ռ.) սկզբում, մնացածը մինչ առաջին կիսամեակի լրանալը:

## ՉԱՐԱԲԵՐ ԽԱՐԱԶԱՆԸ

ԳԱՔԻՒՆԷԼ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑԻ

Կարօի նման տղամարդ հով է տեսել: Երբ գութանի մածը բռնած, կեռխարազանը ձեռքին, «հէլ-էլ» կ'ասէր, ձայնը եկեղեցու զանգերի նման կը զընդզընգար: Տղամարդ, թէ կին, համագիւղացի, թէ օտար, մօտէն անցնելուց, բերանները բաց կը մնային, կը թուլանային: Մէկ օր գիւղի տղերքը գնացել էին Բայազէդ: Դա էլ, խարազանը ձեռքին, բաղարում ման էր գալիս: Բոլոր թուրքութիւնը ապշել էր, որ հայի թէ սիրունը թէ քաջը ձեռ չի ընկնի. լսել էին, ասում էին նրանք, բայց չէինք տեսել: Հասակը, կ'ասես, բարձրազլուխ բարդու, աչքերը, արծուային, կապոյտ, երեսի կաշին սպիտակ ու կարմիր:

Բայց, ափսոս, Կարօն դեռ երիտասարդ ժամանակ քուռ ու կոճակ եղաւ:

Մի օր Կարօն տանը նստած էր: Հովիւը խաբար բերեց, թէ զբրդերը եկան գիւղի ոչխարը քշեցին, — նա լերդուպատառ սլառմում էր թէ ճամբորդ քրդերը մի եղ առաջներն արած եկան, ինքը նրանց իբրև հիւրեր կաթով կերակրեց, իսկ վերջը նոքա այս բանը արեցին: Կարօի ընկերներից մէկը, տասն օր առաջ Կարսումն էր եղած, մի լաւ կեռ փայտ էր տեսել, — մէկ լաւ փայտ, որը Կարօից զատ հին էր արժան բանեցնի, ու առել նրա համար: Այդ փայտն էլ մօտը դրած էր: Խաբարն լսելուն Կարօն փայտը վերցրեց, մէնակ վազեց դէպի քրդերը, Շրփշիփայ ձորի միջին հասաւ նրանց. չորս քուրդ, մի եզ բարձած և գիւղի ամբողջ հոտը իրեն էշով տանում էին: Հովաւկան շները, տէրերը կորցրած, հե-

ուուից խեղճ-խեղճ հետևում էին հոտին և զումում աւազակների վերայ:

Գալլի կուրմանջաց, դուում էր Կարօն, մեր ոչխարը մի տարէք, —ասում է ու բլրակի գլխին հեռու կանգնում:

—Հայ է դու բմրի, Ֆլլաս, դու դնէնի զի հարա (այ դու մեռնես, հայ, տեսնում ես ինչ կատաղածն է) իրար ասում են քրդերը, մենք քու ոչխարներն տանում ենք, թէ քաջ տղայ ես, եկ խի:

—Մէկ-մէկ էք հետս կուելու, թէ չորսով էլ միանգամից:

—Մէկ-մէկ, պատասխանեցին քրդերը, և նոցանից մէկը վահանը ձեռին, կոսլան էլ աջում, ցոլաց դէպի Կարօն: Կարօն էլ աբան փաթաթեց թևը ու դէպի քուրդը:

Մեր Կարօն առաջին թարփումն էլ քրդին վայր է զցում ու շուլալում դէպի միւսները:

—Լօ, տու տխակի Ֆլլայ բի (դու մի հայ տղայ լինես) քրդին վայր զցես, ասեցին երկու քրդերը և վազեցին դէպի Կարօն: Միւսը մնաց էշն ու ոչխարը քշելու:

Քրդերը յարձակեցին Կարօի վրայ: Կարօն մերթ շոգում էր, մերթ կանգնում, մհակը պնդեցնում ու փայտերը զլում: Ինչքան փայտ զցում էին, մէկն էլ է նրան չէր առնում: Վերջը նա երկու քրդին էլ վայր զցեց ու վազեց դէպի ոչխար տանողը, որը իրենց եզն էլ գիւղի ոչխարի ու էշի հետ թողեց փախաւ:

Որքան զարմացան և ուրախացան մեր գիւղացին, երբ Կարօն այնքան քաջութիւն ունեցաւ, որ մենակ զիւղի ոչխարն ու քրդերի եզը բերեց և իսկոյն և եթ եզը մորթեց ու ցրեց շինականին: Եզը տեղից տեղ իւղ էր, իսկ կաշին հաստ: Կարօն դրա կաշու ամենալաւ տեղիցը իրեն խարազանի ոլոր շինեց ու զցեց Կարօից բերած փայտի վրայ: Այդ օրից դէս, էլ այդ խարազանը ձեռից վայր չէր զցի:

—Որ տասը մարդ էլ լինի, էլի չեմ վախի, կասէր նա, միայն այս խարազանը ձեռիս լինի:

Քրդերը լուր կը հասցնեն իրենց էլին, —էլ աղասուն կասեն.

—Մարդը աղամարդութիւնով ձեզնից խլել է, իրեն հալալ լինի: Ես ձեր կողմը չեմ պահի, թէ ձեզ մէջ էլ այդպիսի աղամարդ կայ, թող ձեր վրէժը Կարօից հանի:

Վերջին ռուս-տաճկական պատերազմի տարին էր: Աշխարհը, ամեն մէկը մտածում էր, ինչ կերպով իրեն գլուխը պահի: Կարօն շատ փնտռեց հրացան, բայց գտնել չկարողացաւ: Մի գիշեր, երբ մտատանջութեան մէջ քնեց, երազում տեսաւ, որ մեծեր, շատ ժիր, մարդ մտանցաւ իրեն և ասաց.

— Կարօ ջան, սկի բանից մի վախեցի, ուր դնաս, կու՛ի մէջ մտնես, անօրայի ձեռ ընկնես, քանի խարազանդ մօտդ է, քեզ ոչ մի վնաս չի դիպչի:

Չարմացած Կարօն երազում չոզեց նրա առաջ և հարցրեց.

— Դու ո՞վ ես, ինձ ասա, քոյ սուրբ հրաշքին մեռնեմ:

Մերը կամաց ու հանդարտ հեռանալով պատասխանեց.

— Մի վախեցի ես քոյ օղնականն ու պահապանն եմ, ես Մահուայ սուրբ Վարդանն եմ:

Կարօն միւս օր այս երազը բոլորին պատմեց և յայտնեց, թէ պէտք է պատերազմ գնայ: Գրացիներն ի հարկէ նրա երազ տեսնելուն հաւատացին, բայց պատերազմ գնալուն— ոչ:

Ռուսի զօրքը զրեւ էր մեր գիւղի մօտ: Ամեն օր վարժութիւններ էին լինում: Գիւղացիներէր շատերը միշտ ընդեղէններ ստանում ու սրան նրան ծախում էին, իսկ Կարօն միշտ զօրքը վարժելու մօտ էր: Հազար սուլթաթ ինչպէս էին ոտերը միասին փոխում, հրացանները չփոփոփ ուսերը դնում և ուղիղ կանգնում: Հաստափոր դեներալը ձիով ման էր զալիս, նրան մօտենում էր դնդապետը և յետոյ բարձր ձայնով գոռում. սրան հետևում էին սպաները, որոնք նոյնպէս բարձր ձայնով գոռում էին «մարչ» ու զօրքը, կասես, որպէս մի մարդ խրի-թրփի, խրի-թրփի առաջ գնում, յետ դառնում:

Կարօն այս բոլորին նայում էր և կասես դժուր: Նա ինքն սկսում էր ոտերը չափով գցել, առաջ դնում, յետ դառնում, ձեւի խարազանը հրացանի փոխարէն ուսին դնում ու իջեցնում: Մօտի եղողները յաւեա ծիծաղում էին նրա վրայ: Նա ինքն էլ էր ծիծաղում ու ասում.

— Ես էլ պտի կռիւ էթամ:

Տաճկի զօրքն էլ մեր գիւղից հեռու չէր: Գիշեր-ցերեկ թնդանօթներ թամբուցը մեզ խուլեցնում էր: Վերջապէս մի օր գիւղում

տարածւոց, թէ վաղը գլխաւոր կռիւն է լինելու: Կարօի կին Շամամը, երազը տեսնւած օրից հաւատացած էր, որ իր ամուսինը պէտք է պատերազմ գնաց, բայց խեղձ հարսը լուռ նայում էր էրիկի արարքին և նրան ոչինչ չէր ասում, միայն վարմանոց գնալուց, դռնումը կու սրբելուց, երբ իրեն միայնակ և ազատ էր զգում, աչքերից յորդ արտասուէք էր թափում, երբեմն էլ իրեն ինն ամսեայ որդուն, Վարդանին, ձեռն առնում, լալով փայփայում էր ու հետք զրուց անում:

—Վարդան ջան, ախար քո հայրը պատերազմ է գնալու, որ մեռաւ, չես ասի. էս ում աղէն է: Կասեն, սրա հօր ոչժը սուրբ Կարապետայ էր, կասեն սրայ հայրը քանի քանի փահլէվաններ է գետին զարկել: Դու քոյ հօրը չես տեսի! ասում էր նորահարսը և աչքերից կայլակները թափում, իսկ Վարդանը նրան նայում էր ու անմեղ ժպտում:

Կարօն արդէն երկու շաբաթ էր, որ գիշերները խորապանը գնում էր իրեն և կնոջ մէջ տեղը: Շամամը լաւ հասկանում էր, որ էրիկը մի խորհուրդ ունի, որը կատարելու համար ուզում է սուրբ մնայ:

—Կարօ, վերջապէս յետին գիշերը դիմեց նա ամուսնուն, ես չգիտեմ, վաղը դու ուր ես գնում:

—Ե՛, շատ էլ գիտես:

—Բա, դու ինձ ու Վարդանին թողնում ես:

—Ոչինչ, սուրբ Կարապետ ձեզ կը պահի:

—Ես էլ քեզ հետ կը գամ:

—Ո՞նց ես էլ քեզ հետ կը գամ:

—Ընենց Վարդանին կը գրկեմ, ու քո հետ կը գամ: Ես կուից հեռու կը կանգնեմ, թամաշա կանեմ, իսկ դու կուի:

—Գժուկ էս... Մի լայ, Շամամ ջան, մի լայ:

—Թէ որ չէ, Վարդանին տանը կը թողնեմ, մի փայտ էլ ես կը վերցնեմ կը գամ, որտեղ դու կուես, ես էլ քեզ մօտ կուի կանեմ:

—Կնիկ, դու ուզում ես իմ աղամարդու թիւնը գետնին տաս, կնիկ, չես թողնում, ես գնամ կուի:

—Բա որ մեռա՞ր:

—Մեռայ, ես մեռայ այսքան մարդ մեռնում է, մէկն էլ ես:

Ասեմք մի տաս տարի էլ աւել ապրեցայ, ինչա է աւելանալու, չէ՞ որ դարձեալ մեռնելու եմ: Այդ է, Վարդանը քեզ տղայ: Գլխին մեռնեմ, ընենց տղայ ըլլի, որ տասն ինձանից արժենայ:

—Կարօ, Կարօ, բացականչելով բարձրացաւ կինը և մօտեցաւ էրիկի ոտերին, ես քո ոտը պաշեմ, կռիւ մի գնա:

—Վայ, Շամամ, ինչ ես անում, - վեր ցատկեց Կարօն և անզգայ չոզեց մէջ տեղ դրած խարազի վրայ ու գրկեց Շամամին:

—Շամամ ջան, քեզ մատաղ, Շամամ, աչքիս լոյս Շամամ, դու զիտես, որ ես քեզ ողջ աշխարհի հետ չեմ փոխի: Էս սար ու ձոր ինձ մօտ մէկ է, դու մէկ, իմ ճամբէն մի բռնի, ես չեմ կարող, կռիւ չգնամ:

—Կարօ, քո հօրն ու մօրը կ'ասեմ:

—Եթէ կռիւ չգնամ, ինձ քարափէն կը զցեմ, կը սպանեմ:

Աննեակը մոլթն էր ու լուռ: Կարօի ծնողները գոմուֆն էին քնել: Յանկարծ աքաղաղը կանչեց. կարծես լուսադէմ էր: Կարօն գրկեց Շամամին, քանի անգամ համբուրեց նրա աչք ու երեսը: Կուացաւ Վարդանի օրօրոցի վրայ և, նրան չգարպեցնելու համար, սկսեց կամսոց լիզել նրա այտերը և զուգ սառը կալլակները թափեցին անմեղ քնով ննջած մանուկի երեսին: Բակումը լաւեց ոտքի մի կամացուկ ձայն, դրացու շան հաջողը, և Կարօն ծածկեց հեռւի մոլթերի մէջ:

—Մտեա պրիշոյ, մի սողաթի մօտ կանգնած, ասում էր Կարօն, աչքերը խոժոռելով, — «էթ» թիւը երկարացրած, խարազանը ցոյց տալով — «էթ կռուտին պռապալ» այսինքն՝ ես եկել եմ սրանով քուրդ սպանեմ:

—Պոշեօլ տի... (կորիք) հայհոյեց սողաթը և հրացանի պոչով Կարօին խփեց:

Վերջապէս Կարօն մօտեցաւ մի բարձրահասակ երիտասարդ սպայի և մի հայի օգնութիւնով հասկացրեց նրան իր ցանկութիւնը պատերազմում մասնակցելու:

—Արմեանին, — հարցրեց երէտասարդ սպան:

—Երման, պատասխանեց Կարօն, լուսաւորչու հաւատն եմ, ու խաչ քաշեց երեսը:

Ռուս ու տաճիկ արդէն նիզակներով իրար էին հասել:

Կարօն ինչպէս ինչպէս իրենց տնէն եկել էր, այնպէս էլ մտաւ

կուիւ: Նրա գլխին տիրող սուրերը նրա փայտին առնում, կտոր-  
կտոր էին լինում, իսկ սունգիները նա փայտով արագ թեքում էր  
իրենից: Նա, իրենը մոռացած, խարազանով սրան նրան էր հար-  
ւածում և իր զարմանալի թարփերով բոլորին վայր զցում:

—Մալադեց արմեանին, յանկարծ լսեց նա սպալի ձայնը:

—Եա, քեզի մեռնեմ Մակուայ սուրբ Վարդան, փնթփնթաց  
նա, խարազանը սրտտեցրեց ձեռին ու դարձեալ դէպի թշնամին ցուաց:  
Բայց այստեղ մի դնդակ նրան տեղն ու տեղը վայր զցեց:



# ՀԻԱՍԹԱՓՈՒԹԵԱՆ ԷԼԷԳԻԱ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

## I

Օ, սիրո իմ, քեզ ինչ պատահեց,  
Որ դու յոգնեցիր, թուլացար այդպէս?  
Ձըլինի մօտ է քո վերջին ժամը,  
Երբ բաբախելուց պիտի դադարես?

Ուր ես դու, իմ սուրբ ոգևորութիւն?  
Ուր էք, իմ մտքի վըւեմ թըռիչքներ?  
Աւաղ, չար բախտի մի հատիկ հարւած —  
Եւ անհետացան նախկին անուրջներ!

Այժմ ինչ անեմ? Այժմ ում զիսեմ?  
Ում ասեմ. «տուր ինձ մըխիթարութիւն»  
Երբ ամենքըն էլ ինձպէս ողբում են  
Փայլուն յոյսերի տըխուր խորատիւմ?

Բայց ո՛չ. թող լըռի այս հառաչանքը,  
Յուսոյ մի նըշոյլ չկայ սորա մէջ.  
Թող կուրծքըս մաշէ հողուս տանջանքը —  
Դուք, հաւատ և յոյս, մնացէք անշէջ!

Շուշի, 1894 թ. 7 հոկտեմբերի.

# ԽՂՃԻ ԽԱՅԹՈՑՆԵՐԸ

(Շեղական գրականութիւնից)

ԱՒԴՈՒՍՏ ՍՏՐԻՆԴԵՐԳԻՅ

Թարգմ. ՄԿՐՏԻՉ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՅԻ

Այս պատահեց 1870 թւի սեպտեմբեր ամսուայ կէսերում: Մարտո կոչւած փոքրիկ գեղի ամենալաւ պանդոկներէց մէկում— Cercle անւանուած սրճատան մի սենեակում՝ իր գրասեղանի առաջ նստել էր շապկի թուկը չեա ծայած պարոն Փոն-Բլաչխուեոյերը, որը Բերլինի երկրաբանական ինստիտուտում օգնականի պաշտօնակատար էր, իսկ առ այժմ պահեստ զօրքի տեղապահ էր: Կանգուն օձիքաւոր նրա զինւորական զգեստը՝ աթոռի մէջքակալի (dossier) վրա գցած, կախւել էր թոյլ ու անշարժ կերպով. դատարկ թեքերը նմանում էին զիտի բազուկներին, որոնք կարծես թէ փակչում էին ամուր կերպով աթոռի ոտներովն այն նպասակով, որ եթէ ընկնելու լինի, գոնէ զլսի վրա շընկնի: Հէնց դատկատեղի վրա մի լայն հետք էր մնացել քամարից. պատեանը մաշել էր հազուստի ձախակողմեան փեշը, որի կունակը այնպէս էր թողոտ, որպէս փողոցը:

Պարոն տեղապահը իր քորեչած (каптъ) վարտիկի վրա կարող էր ամեն երեկոյ երկրի երրորդական (tertiarire) ծալքերի մասին երկրաբանական ուսումնասիրութիւններ անել և երբ մի կունգուռ (պատգամաբեր զինւոր) ներս էր մտնում նրա սենեակը՝ զինւորի կոշիկներէց թողած հետքերը լաւ ապացոյցներ էին իմանա-

լու համար թէ այն մարդը քանչև է արդեօք իոսէն կամ պլիոսէն (iocéne, pliocene <sup>1)</sup> հողային ծալքերի վրա:

Իսկապէս նա իրեն աւելի երկրաբան էր զգում քան թէ զինւորական. սակայն ներկայ լուսին նա շատ հասարակ կերպով մի նամակ էր գրում:

Ակնոցները դէպի ճակատը բարձրացրած, գրիւն սեղանի վրա էր գրել ու լուսամուտից դէպի հեռուն էր նայում: Նրա աչքի առաջ տարածւել էր մի մրգաստան իր աշնանային կատարեալ փառահեղութեամբ: Տանձենիներն ու խնձորենիները ճղնակոտոր էին լինում իրենց ծանր բեռնից. նարնջագոյն գգումները փայլփլում էին արևի տակ զորշ կանաչաւուն ու ժանեկագորգ տերեւայից կանգառներով շրջապատած: Այ կարմիր պոլպիկները (tomate-помидоры) բսել էին կաթնեգոյն ծաղկակազամբների մօտ և տարածւել էին ցանցորմի երկարութիւնով. տեփուրի չափ լայն արևածաղիկները զարձրել էին իրենց ոսկեայ թեփշիները դէպի արևմուտք, ուր արևը արդէն մայր մտնելու վրա էր: Խոշոր-խոշոր դալիաները, որոնցից մի քանիսը նոր թռչած ճերմակեղէնի հոտն էին արձակում, միւսները կապ-կարմիր արիւնի գոյնով որ վազում է կամ հոշոտած մսի կարմիր գոյնով, իսկ մնացածները զարձեալ, ծծումբի և վուշի գոյնով, շերտաւորւած ու բծաւորւած, միախառնւում էին գոյների փառահեղ երկինքանոց կազմելով: Եւ, հէնց մէջտեղում, գեծանը—երկու կողմից ևս եղբւրած կրկնաշաբբ մեխակներով, որոնցից առաւել մօտիկները բևեռային երկնակապոյտ գոյնի, իսկ երկրորդ շարքը դեղին յարդագոյնի—երկարւում էր հեռանկարում մինչև թուխ կանաչաւուն որթերի այգին, բաքոսի նիզակների այն անտառը զարդարւած փոքրիկ ողկոյզներով, որոնք այս ու այն կողմերում տերևների տակից վեր էին հանել զլուսնները:

Եւ աւելի հեռու հասկերով ծանրաբեռնւած արտերը և տակաւին անհունձ ու շիկնած ծղոտներով ծածկւած, որոնք իրանց քիտտերն ու փոկոճները թեքել էին դէպի գետին, պատրաստ էին,

<sup>1)</sup> Այս անունով կոչւում են երկրաբանութեան մէջ հողի այն խավրը, որոնց մէջ գտնում են քարացած կենդանիներ (հանածոներ):

նոյն իսկ ամենաթեթև քամուց և չափազանց հասունութիւնից վերադարձնել ինչ որ նրանից ստացել էին. այն մօր ստիւքների նման, որին արգելւած է սննդիկ իր զաւակին: Իսկ բոլորովին խորքում երևում էին կաղնիների թոյր կատարները, Ֆոնտենըբլօի հաճարների խրոխտ սաղարթները, որոնց ծրագծերը բոլորում էին բարակ աղւամագով, նուրբ ժանեակներով, Մալինի հինաւուրց ժանեկիկների նման. այն ինչ նրանց ամենաբարձր ձղների միջով վերջալոյսի արևի ուղղահայեաց ճառագայթները իրենց ոսկեզոծ թելերն էին ոլորում:

Ուշի մնացած քանի մի մեղուններ թուչկոտում էին տակաւին մրգաստանի անուշահամ մեղրալից բաժակիկների վրա և կարմրալանջը մի խնձորենու վրա թատած՝ զեղզեղում էր իր դայլայլիկները: Երբեմն մեխակի ծաղիկները արձակում էին իրենց թնայանոյշ բոյբու, որը մարդուս չիշեցնում էր բոյբերի (parfum) խանութից, դուռը յանկարծուստ բացած միջոցին, խիտ գոլորշու նման արտաբուրդ զգլթիչ անուշահոտութիւնը:

Տեղապահը մնացել էր, գրիչը ձեռին, շլացած այս հրաշալի տեսարանով. «Որչնոյն զեղեցիկ աշխար է» մտածում էր նա և մտաբերում էր իր հայրենիքի աւազոտ անապատները, որտեղ բուսած քանի մի հատ զաճած սոճիներ, որոնք կառկառած իրենց այլանդակ ու կոճղոտ ճիւղերը դէպի երկինք, կարծես թէ, աղբսում են այս վերջինին չթողնել իրենց անհետանալ աւազի մէջ:

Բայց, լուսամուտի շրջանակով կրկալած (eneadré) այս հեռանկարի վրա, անցնում էր երբեմնապէս և ժամացոյցի ճոճանակի ճշտութեամբ պահնակի հրացանի շաքը, որը պահնակութիւն էր անում անշեղ ճշտապահօրէն մի տանձենու տակ, որը ծանրաբեռնւած էր նապոլէօն կոչւած զեղեցիկ տանձերով: Փայլվող սինը երկու մասի էր կիսում այն պատկերը:

Տեղապահը սկզբում մտածեց խնդրել պահնակին, որ աւելի հեռու տեղ կատարի իր պահնակութիւնը. բայց չհամարձակեց: Եւ զէնքի ցոլքից խոչս տալու պատճառով աչքերը դէպի ձախ կողմը դարձրեց մի տան վրա: Այնտեղ նա տեսաւ անպատուհան խոհանոցի զեղնագոյն պատը, որին դէմ էր առել մի հինաւուրց ու թշւառ խաղողի որթ աջնպէս չորացած, կարծես թէ սնկաբանա-

կան հաւաքածուից լինէր հանւած: Զուրկ բուրգովին տերւներէից ու ողկոյզներէից և կիսով չափ ճիճուներէից կերւած արիշի (espalier) վրա մեխւած՝ նա մի խաչեցեալին էր նմանում, որը կարծես թէ սարածելով իր նիհար բազուկները զիտաւորել էր ձանգել անցնող պահնակին և խեղդել նրան իր ճիւղաղային թւերի մէջ:

Տեղապահը յետ շրջւեց և ուղիղ հայեացքով նայեց իր գրասեղանի վրա, որտեղ մնացել էր տակաւին անշարժ կիսակատար գրած նամակը, որ գրել էր չորս ամսից առաջ ամուսնացած իր ջահել կրնկան, — պատերազմն սկսելուց երկու ամիս առաջ:

Սեղանի վրա գտնուող հեռագիտակի և Ֆրանսիայի շտաբի փըռւած քարտէզի կողքին գրւած էին Հարոմանի Phibosophie des Unbewussten և Շոպենհաուէրի Parerga und Paralipomena հեղինակութիւնները:

Յանկարծ տեղից վեր կենալով՝ նա սկսեց սենեակում յետ ու առաջ քայլել: Այս սենեակը ակումբի վաղեմի դահլիճն էր, որը ծառայում էր նաև ինչպէս սեղանատուն. նկարիչների ընկերութեան համար: Այս դահլիճի պատերը զարդարւած էին նկարած դարևանդներով, յիշատակ այն ուրախ օրերի, որ անցուցել էին այս գեղեցիկ և հիւրընկալ երկրում. պատկերները ներկայացնում էին պարող աղջիկներ իսպանական կրօնաւորների հետ, Նորմանդիայի ու Բրըտանի ծոփափեր, հոլանդական հողմաղացներ, նորվեգիական ձկնորսների դեղեր և Շեքսպիրայի տեսարաններ: Անկիւններից մեկում ընկած էր նկարչական հաշմանդամ ընկուղեւուց շինած ձիակը (chevalet) որը կարծես թէ աշխատում էր թաղչիլ որ և է սպանացող ս ինի սուկերից: Մի կեղտոտ ներկասնակ, զանազան կիսաչոր գոյներով, մնացել էր այնտեղ պատից կախւած ինչպէս մի յոշոտած լեարդ խաչապանի (tripier) խանութում: Կարմիր գդակները, քրտինքի, աղտոտւած, արևից ու անձրևից խունացած քաշ էին ընկել շորկախից (portemanteau, вешалка):

Տեղապահի վրա ջանկարծ մի տեսակ շփոթութիւն տիրեց այնպէս, ինչպէս մի մարդ որ և է պատճառից ստիպւած մոնի մի մասնաւոր բնակարան և սարսափով սպասի թէ, ահա, որտեղ որ է տանտէրը կը վրա հասնի: Նա նորից նստեց նամակագրութիւնը շարունակելու համար:

Նամակի առաջին երեսները արտայայտում էին ամբողջովին նրա զգացած հրճւանքը, շփոթմունքն ու կրած երկիւղները ստացած լուրի վերաբերմամբ, որով հաստատուում էր նրա տածած բերկրա-  
ուիթ լուրը—հայր դառնալ: Այժմն նա դարձեալ վերցրեց գրիչն առաւել խօսակցելու գիտաւորութիւնով քան թէ որ և է մտեր-  
մական բան ասել կամ թէ խնդրելու համար, և նա գրեց.

«Ինչպէս, օրինակի համար, այն օրը, երբ հինգ հարիւր հոգի հետս առած, առանց ուտել խմելու տասնուչորս ժամ շարունա-  
կաբար ճանփա գնալուց լերջը հասաչ մի անտառ, որի մէջ, պա-  
սահմամբ, պաշարեղէնով լիքը ու բարձի թող արած մի Փուրգոն գտանք: Գիտե՞ս թէ ինչ պատահեց: Զորսխումբը խառնեց և զին-  
ւորները, որոնց աչքերը անօթութիւնից ստիպւած ակնախորշերից դուրս էին թափւել ժայռերից կախւած բիւրեղների նման, իրար անցան ու վրա ընկան պաշարեղէնի վրա սովալըլուկ գայլերի պէս. սակայն պաշարը հազիւ քսան հինգ հոգուն կը բաւէր: Կռիւն սկսեց: Իմ տւած զինւորական կարգապահութեան կոչերը զուր անցան և հիսնապետներին, որը մերկացրած թրով սպառնում էր, զգետնեցին հրացանի կոնդախներով: Տասն ու վեց հոգի վիրաւոր-  
ներ՝ մահամերձ տարածւեցին գետնի վրա: Իսկ նրանք, որոնք կարողա-  
ցան ուտելու բան ճանգել, այնպէս ազահաբար կերան, որ ստիպւած պառկոտեցին գետնի վրա ու այնտեղ և եթ քնեցին: Եւ սակայն սրանք հայրենակիցներ էին հայրենակիցների դէմ մարտնչող, այս վայրենի կենդանիները իրար ձեռքից կերսկնէր էին չափըշտակում...»

«Կամ թէ այն օրը, երբ մենք հրաման ստացանք պատնէշներ կանգնեցնել շուտափոյթ: Մենք մի անտառազուրկ երկրումն էինք գտնւում, հետևապէս ստիպւած էինք լաստեր զործածել: Ի՞նչ ահ-  
ռելի տեսարան: Հազիւ մի ժամաչ ընթացքում խաղողի այգիները ոչնչացան, որթերը տերեւներով և ողիոյգներով արմատահան եղան ցախկապեր ունենալու համար. այս ցախկապերը թրչւել էին տա-  
կաւին կէսհասուն ողիոյգների հիւթից: Քառսուն տարեկան որթեր էին: Մենք քառսուն տարիների աշխատանք մի կէս ժամաչ միջո-  
ցում ոչնչացնում էինք: Եւ այս անում էինք այն նպատակով, որ պատասպարւած լինելով կարողանանք սրտներին ուղածին չափ հրա-  
ցանել մեր ցախկապերի մշակողներին...»

«Կամ թէ, երբ մենք հարկադրեաժ էինք ցորենի արտերում լրտեսող զօրաշղթայ կազմել, ցորենի հատիկները կարկտի պէս վար էին թափւում մեր ստների տակ և կոտրոած ծղոտները թեքւում էին գեանի վրա հէնց առաջին անգամ տեղացող անձրևից փթելու համար: Հաւատով ես, թանգագին և ամենատենչալի ամուսինս, որ մարդս կը կարողանայ այսպիսի անցքերից յետոյ քնել: Եւ սակայն, ես պարտաւորութիւնս եմ կատարել, ուրիշ ոչինչ: Իսկ կան գլուխներ, որոնք յանդգնում են հաւատացնել թէ մարդս իր պարտականութիւնը խղճմտաբար կատարելուց յետոյ կարող է հանգիստ հանդարտ քնել:

«Սակայն մեզ աւելի դժւարատար դէպքեր են սպասում: Նատ կարելի է գիտես, որ Ֆրանսիացիք, իրենց զօրքերը շատացնելու նպատակով, ազատ հրացանակիրներ (francs-treurs) անունով կամաւորներին վաշտեր են կազմակերպել իրենց հայրենիքն ու օջախները պաշտպանելու որոշումով: Պրուսական կառավարութիւնը չհամարելով նրանց իբրև զինւորներ՝ սպառնում է կոտորել տալ նրանց ամեն ուրեք, որտեղ էլ պատահելու լինեն, իբրև դաւաճան և լրտեսներին. միշտ աչքի առաջ ունենալով այն սկզբունքը թէ պետութիւններն են պատերազմ մղում իրար դէմ և ոչ անձնաւորութիւնները: Զինւորներն անձնաւորութիւններ չեն: Եւ այն ազատ հրացանակիրները զինւորներ չեն արդեօք: Նրանք հագած ունին մեր հալածազօրք վաշտերի համազգեստի նման գորշագոյն հագուստ, և, ինչպէս երևում է, այս համազգեստն է զինւոր: Բայց նրանք ցուցակագրեաժ չեն, առարկում են մեզ: Ճշմարիտ է, նրանք ցուցակագրեաժ չեն. որովհետև պետութիւնը ոչ թէ միայն ժամանակ չէ ունեցել տակաւին այս բանի համար, այլ և, հաղորդակցութիւնների դժւարութեան պատճառով տէրութիւնը այս անելու համար անելք կացութեան մէջ է գտնւում նիւթական կողմից: Ներկայ բոպէիս, այն տարաբաղդներից երեք հոգի են գտնւում սենեակիս դռկից բխարի խաղալու դահլիճում և սպասում եմ մեր գլխաւոր զինւորական վարչութեան կողմից հրամանին սրանց վիճակի մասին»...

Նա ընդհատեց գրութիւնն և ներս կանչեց կուսուրուին:

—Գերիներն ինչպէս են, հարցրեց պարոն Գոն-Բլաչխուեո-դերը:

—Լաւ են, տեղապահ: Նրանք բիլիարդ են խաղում և երևում է, որ հանգիստ և ուրախ են տրամադրւած:

—Գնա՛, ասա՛, որ նրանց քանի մի շիշ սպիտակ զինի տան. բայց ասա, որ թեթև զինի լինի: Աւրիշ ի՞նչ նոր բան կայ:

—Ոչ մի նորութիւն: Մառայութիւն, պարոն տեղապահ:

Պարոն Ֆոն-Բլայխտեոդերը շարունակեց գրել:

«Տարօրինակ մարդիկ են այս Ֆրանսիացիները: Այն ազատ-հրացանակիրները, որոնց մասին փոքր ինչ վերը յիշատակեցի և, որոնք հաւանական է—ասում եմ հաւանական է, որովհետև դեռ ևս յոյսս չեմ կորել նրանց վերաբերութեամբ—քանի մի օրից յետոյ մահւան կը դատապարտեն, դալից դահլիճում բիլիարդ են խաղում: Որչափ ուրախ արհամարանք կեանքի դէմ: Ճշմարիտ, ինչ որ մի վսեմ բան կայ կեանքն այսպէս արհամարելու մէջ: Կամ թէ շատ կարելի է, որ կեանքն ինքն ըստ ինքեան շատ քիչ արժէք ունի, որովհետև մարդիկ կարողանում են բերկրալից սրտով նրանից բաժանուել: Սրանով ուզում եմ ասել, պարզ բան է, որ եթէ մարդս կապւած չէ կեանքի հետ այնպիսի անուշ կապերով ինչպէս ես: Ասածս հասկանում ես, անգինս, այնպէս չէ. պատկերացնում ես քեզ այն, ինչ որ «կապեր» եմ անւանում: Ա՛խ, այլ ևս չգիտեմ թէ ի՞նչ եմ գրում. քանի-քանի գիշերներ անքուն եմ անցուցել և գրուս...»

Մէկ մարդ դուռը ձեծեց:

—Ներս համեցէք, ասեց տեղապահը:

Եւ գեղի քահանան ներս եկաւ: Սա մօտաւորապէս մի հիսուն տարեկան կը լինէր, զուրեկան դէմքով, որի վրա սակայն նկատելի էր տրամութիւն և եռանդ:

—Պարոն տեղապահ, եկել եմ ձեզնից գերիններին այցելելու թույլտուութիւն խնդրելու:

Տեղապահը ելաւ տեղից, հազաւ իր զինւորական համազգեստն շտապով ու քահանային առաջարկեց սո՛՛ֆայի (գիւան) վրա նստել: Բայց հազիւ էր վերջացրել իր նեղ համազգեստը կոճկել, որի կանգուն օձիքը երկաթեայ օղակի պէս սեղմեց նրա վիզը և այս բանից, կարծես թէ, առաւել վեհ օրգանները ճնշւեցին նրա մէջ, թւաց թէ նրա արիւնը դադարեց շրջան առնելուց այն գաղտնի ճանփաներով, որոնք առաջնորդում են դէպի սիրտը: Մի ձեռքով վրասեղանի

վրա դուրս Շոպենհաուերի հեղինակութեան վրա չենւելով ասեց.

—Պատրաստ եմ ծառայել ձեզ, տէր-հայր. սակայն չեմ կարծում թէ շատ էլ ուշադրութիւն դարձնեն ձեզ: Նրանք բիլիարդ են խաղում:

—Թոյլ աւէք ինձ կարծել, պարոն տեղապահ, պատասխանեց քահանան, որ հայրենակիցներին առնուել լաւ եմ ճանաչում քան թէ դուք: Մի հարց եմ առաջարկում. այն ջահել մարդիկ կը դատապարտւե՞ն մահուան:

—Հաստատուպէս, պատասխանեց պարոն Փոն-Բլայխուեռերը, ինչպէս վայելում էր իր պաշտօնին: Տէրութիւններն են պատերազմում և ոչ թէ անձնաւորութիւնները:

—Ուրեմն, պարոն տեղապահ, դուք և ձեր զինւորները անձնաւորութիւններ չէք:

—Ո՛չ, ներկայ բոպէում, տէր-հայր: —Իր կնոջն ուղղած նամակը թղթապանակի տակը դրեց: —Ներկայումս՝ ես Գերմանիային դաշնակցող պետութիւնների ներկայացուցիչն եմ միմիայն:

—Ձեր շնորհալի թագուհին, որի վրայից թող Ասուած չվերացնի երբէք իր պահապան ձեռքը, մի՞թէ նա ևս Գերմանիային դաշնակցող պետութիւններից մէկի ներկայացուցիչ չէր, երբ նա հրաւէր էր կարգում գերմանական տիկիներին վիրաւորներին օգնութիւն հասնելու գործում մասնակից լինելու համար: Ես անձամբ եմ ճանաչում Փրանսիացիներից շատերին, որոնք նրան օրհնում են, թէև Փրանսիական ազգը պատերազմում է ձեր ազգի դէմ: Պարոն տեղապահ, խնդրում եմ յանուն Փրկիչ Յիսուսի, —քահանան տեղից ելնելով բռնեց սպայի ձեռները ու շարունակեց հեկեկալով, —չէք կարող արդեօք դիմել նրան:

Տեղապահը, որ համարեա թէ սառնասրտութիւնը կորցնելու վրա էր, իր սխալը դրստելով պատասխանեց.

—Մեզանում կինմարդիկ քաղաքականութեան մէջ չեն միջամտում:

—Առաւել վնաս, պատասխանեց քահանան գոռոզ դիրք ընդունելով:

Տեղապահը դէպի պատուհանը դարձած լինելով՝ չլսեց նրան: Նա դառնում էր նեարդային, մեռելային տժգնութիւն տարածւեց

նրա դէմքի վրա: Թւում էր թէ նրա կանգուն օձիքը անկարանում էր նրա գլխի արինը իր տեղում պահել:

—Նստեցէք, խնդրեմ, տէր-հայր, ասեց նա մի կերպ: Դուք կարող էք տեսնել զերիններին. բայց կը պարտաւորէք ինձ, եթէ բարեհաճէք մնալ դարձեալ քանի մի վայրկեան ինձ մօտ:

Նա ականջ էր դնում և հիմա լսում էր որոշ կերպով արագավազ ձիու երկքայլ ամբակները զոփիւնը:

—Մենակ միք թողնի ինձ, տէր-հայր, ասաց նա ուժգնապէս շունչ քաշելով:

Քահանան մնաց այնտեղ:

Տեղապահը պատուհանից դուրս թեքւեց որքան կարելի էր: Սմբակների զոփիւնը առաւել մօտիկից էր լսում. յանկարծ ձին զաղարեց արագաբար վազելուց, սկսեց ջամբաքայլ առաջ գալ ու կանգ առաւ...

Հեծւորի խթաններէ, թրի չըխչըխիցն ու ոտնաձայն էր արձագանգում... Եւ մի ծրար դրեց պարոն Ֆոն-Բլաչլուռերի ձեռքի մէջ. նա ծրարի փաթեթը պատուեց:

—Ո՞ր ժամն է, հարցրեց նա ինքն իրեն: Ժամը վեցն է: Նրկու ժամից վերջը, տէր-հայր, զերինները առանց դատի և ատենագրութեան, մահան կը դատապարտեն:

—Անկարելի է, պարոն տեղապահ, այդպէս չին զրկում մարդկանց դէպի յաւիտենականութիւն:

—Յաւիտենականութիւն է թէ մի այլ բան, այդ է: Պատուէրի մէջ ասած է, որ «չրեշտակ տեառն» աղօթքից առաջ ամեն բան վերջացած պէտք է լինի, հակառակ դէպքում ես կը դատապարտուեմ իբրև զերինների հետ համախոհ գործակից: Ինձ խտտապէս յանդիմանութիւն արեցին օգոստոս ամսի երեսուն մէկին կայացած հրամանավճիւրը իսկոյն և եթ չկատարելուս պատճառով: Տէր-հայր, դնացէք նրանց մօտ, խօսեցէք հետները, անգտեցէք ինձ այդ կռից (ստիպած աշխատանք):

—Մի դատավճիռ իրաւացի յայտարարելուց յետոյ՝ դուք այդ բանը կո՞ն էք անւանում:

—Ես մարդ եմ սակայն, տէր-հայր: Մի՞թէ կարծում էք, որ ես մարդ չեմ, ի՞նչ է:

Նա համազգեստի կոճակները ետարեց աւելի ազատօրէն շունչ քաշելու նպատակով ու սկսեց սենեակում ետ ու առաջ քայլել:

—Ի՞նչ պատճառով չենք կարողանում մնալ շարունակ այն, ինչ որ ենք: Ինչի՞ համար դատապարտւած ենք կրկնակի անձնաւորութիւն լինել: Տէր-հայր, զնացէք նրանց մօտ և հետները խօսեցէք: Ամուսնացած են նրանք. երեխայ, կին ունեն: Հայր ու մայր կարելի է:

—Երեքից ոչ մէկը ամուսնացած չէ, պատասխանեց քահանան: Բայց չէք կարող արդեօք, մի գիշեր գոնէ շնորհել նրանց:

—Անկարելի է. հրամանը յատկապէս ասում է «Հրեշտակ տեսուն»-ից առաջ և լուսածագին մենք կը մեկնենք այստեղից: Մտէք նրանց մօտ, տէր-հայր, զնացէք:

—Ես գնում եմ արդէն, պարօն տեղապահ. բայց լաւ պահեցէք մտքներումդ, որ այս սենեակից շապկանց չդուրս դաք: Եթէ ոչ ինքներդ էլ նոյն վտանգի կենթարկւէք, որովհետև համազգեստն է զինւորը:

Քահանան դուրս գնաց:

Պարօն Ծոն-Բլայխուեսդերը վերջացրեց իր նամակը ծայրայեղ յուզւած կացութեան մէջ. յետոյ նա դրեց ծրարի մէջ և ձայնեց կունդուռին:

—Այս նամակը զցեցէք փոստի տուփի մէջ և հիմնապետին ինձ մօտ զրկեցէք:

Հիմնապետը ներս եկաւ:

—Երեք անգամ երեք, կանի իննը և քսան... Ո՛չ, այսպէս չէ... երեք անգամ եօթը... չէ... Դուք կը վերցնէք հետներդ երեք անգամ... դո՛ք կը տանէք հետներդ քսան և եօթը մարդ և մի ժամից յետոյ հրացանել կը տաք երեք զերիններին: Ահա, այս է հրամանը:

—Հրացանէլ, հարցրեց հիմնապետը վարանելով:

—Այո՛, հրացանէլ: Զինւորների միջից ամենավատթարներին ջոկեցէք, նրանց, որոնք արդէն վառօդի հոտով կշտացած են, հասկացա՛ք: Օրինակի համար Բեզելին 86-րորդ վաշտից, Գլեբրին 18-րորդ վաշտից և այսպէս հետևեալները: Ասեցէք նոյնպէս, որ մի շրջիկ պահնակավաշտ կազմակերպւի անյապաղ—տասն ու վեց հոգի

ամենալաւ զինւորներից: Մենք կը գնանք Ֆոնտենըբլօի կողմերը խուզարկելու... Եւ մինչ մեր վերադարձը... ամեն բան վերջացած լինի: Հասկացա՞ք:

—Տասն ու վեց հոգի տեղապահի համար և քսան ու եօթը զինւոր գերիների համար: Թող Ասուած պահպանի ձեզ, իմ տեղապահ:

Պարոն Ֆոն-Բլայխտեոդերը կոճկեց իր հագուստը, թուրը գօտկեց և մի բևեռներ զրեց գրպանում: յետոյ մի սիզար վառեց, բայց չկարողացաւ ծխել: Նրան օդ էր պակասում: Իր զրասեղանի թողը սրբեց խնամքով և թաշկինակով մաքրեց թղթհատը, կնքամոմն ու լուցկիների կողփը: Նա կողք-կողքի զրեց քանոնն ու գրչատուփը ուղիղ անկիւնի ձևով ծրծաթղթապանակի դէմ առ դէմ: Յետոյ՝ աթոռները մէկը միւսի տեղը դարսելով գրպանից հանեց փոքրիկ խոզանակն ու սանրը և հայելու դիմացը կանգնելով սկսեց մազերը յարդարել:

Պատից վերցրեց ներկաթիակն և վրայի ներկերը զննեց շարունակ կանգ առնելով կարմիր ներկի բազմագոյն երփնեռանգի վրա և վերջը փորձեց ձիակը ոտների վրա կանգնեցնել: Երբ նա վերջապէս լսեց բակի կողմից եկող շրջիկ պահնակների հրացանի ձայնը, արդէն ոչ մի առարկայ չէր մնացել, որին ձեռք տւած չլինէր: Նա շուտափոյթ կերպով միացաւ զինւորների հետ ու հրամայեց.

—Դէպի ձախ, օն անդր: Եւ զինւորների գլուխն անցած գեղից դուրս ելաւ շտապով:

Թշնամուց փախչելուն էր նմանում այս արարքը, զինւորները դժւարութիւնով էին հետևում նրան: Արօտատեղերով անցնելու միջոցին կարգադրեց, որ զինւորները շղթայաձև, մէկը միւսի ետևից առաջ գնան, որպէս զի արօտի մեծ տարածութիւն ոտնատակ շտան: Նա ետ չէր նայում նրան անմիջապէս հետևող առաջին զինւորը տեսնում էր թէ ի՞նչպէս էր նա դողդողում և նրա կոնակը ցնցում էր երբեմնակի այնպէս, որ կարծես թէ հարւածներ լինէր ստանալիս: Անտառի մէջ առաջնորդող գեծանի մօա հրամայեց «կանգ» (halt) և զինւորներին հանդարտ մնալու և հանգստանալու պատուէր տալուց յետոյ նա մտաւ անտառը:

Մէն-մենակ ու համոզուած, որ ոք չի տեսնում իրեն, նա քանի

մի անգամ ուժգնապէս շունչ քաշեց և զէպի «Գործ օ լու» կոչ-  
 ւած մութ թաւուար թափանցեց: Մառերի բուներն և մացառ-  
 ները թագնւել էին արդէն սուերի տակ. բայց հաճարի և կաղ-  
 նինների կատարները ոսկեզոծւել էին մայր մոնոզ արևի ճառագայթ-  
 ներից: Այս տեսարանը նրան թւում էր կարծես, որ ինքը պառ-  
 կած է ծովի յատակի վրա, որտեղից կանաչաւուն ջրի միջով տես-  
 նում էր ցերեկւայ լոյսը, որը այլ ևս տեսնելու չէր երբէք: Փա-  
 ռահեղ անտառը, որը շատ յաճախ էր աճոքել նրան հոգեկան տան-  
 ջանքներից, նրան երևում էր այս երեկոցեան վերին աստիճանի ան-  
 յարմար, չափազանց անհամբոյր, սաստիկ զզւելի: Կեանքը իր բո-  
 լոր հակասութիւններով և կրկնանձնութիւններով (dualites) սու-  
 կումն էր ազդում նրա վրա. նոյնպէս և բնութիւնն ինքը իր ան-  
 գիտակ ու կամազուրկ քնարբութեամբ: Նրանում, այսինքն բնու-  
 թեան մէջ ևս տիրում է կատաղի կռիւ գոյութեան համար, թէև  
 առանց ոճիւնների, բայց ոչ պակաս ահռելի քան թէ գիտակցական  
 կեանքի պատճառով: Նա տեսնում էր թէ ինչպէս նորաբողբոջ կաղ-  
 նինները ուռճանում էին հաճարից արձակւած մատղաշ որբուկներին  
 (rejeton) խեղդելու համար որպէս զի այս վերջինները շարունակ  
 որբուկներ մնան, և ինչպէս հաղարաւոր հաճարներից հաղիւ միայն  
 մէկին էր յաջողւել լոյսին մօտենալ ու մի հսկայ դառնալ և իր  
 վրէժը լուծելու նպատակով միւսների կեանքը կորզել: Եւ կաղնին,  
 որ տարածում է լրբաբար իր կոշտ ուռուցիկներով ծածկւած թւերը  
 կարծես թէ արևի լոյսը միմիայն ինքը վայելելու զիտաւորու-  
 թեամբ, ահա նա է հնարել ստորերկրեայ գոյութեան կռիւը: Սա  
 տարածում է իր արմատները անսահման կերպով պատառոտելով  
 հողը և ծծելով սրանից բոլոր սննդիչ հիւթերը:

Սակայն առաջ է գալիս արդարատը. սա սպանում է իր մա-  
 հաբեր ծուծով այն բոլորը, ինչ որ իրեն շրջապատում է: Այս՝  
 հանձարն է. թունաւորելը սրա զիւտն է: Այ՛ մի արմատ չի կարող  
 սրա սուերի տակ զարգանալ. սրա շուրջ պատող հողը սևա-  
 նում է մութը գերեզմանի պէս և ահա այս է պատճառը, որ ասպա-  
 գան սրան է պատկանում:

Շարունակ առաջ գնալով նա իր թրով կտրատում էր ջահեղ  
 ծառեր և մացառներ մոռանալով հանդերձ, որ քանիսին էր հաշ-

մանդամ անուամ: Նա այս մասին անդիտակ էր: Իր հոգեկան բոլոր զործօն ուժերը միախառնած էին զուր տեղը ինչպէս մի հաւանդի մէջ (mortier) թափւած: Նրա մտքերը ձգտում էին բիւրեղանալ, սակայն լուծւում էին նրանք և խառնակուում: Յուշերն, խղճի խայթերը, յոյսեր, բերկրառիթ և օխտւր հոգեկան զգացումները խառնւում էին նրա հոգու մէջ փոխարկելով մի անորոշ զանգւածի, որը արտայայտում էր ատելութիւն այն բոլորի դէմ, ինչ որ կեղծ, շինծու էր, որոնք մի անբացատրելի ոյժի ունակութեամբ կառավարում են աշխարհը:

Մաւրտի կողմից լսելի էր, տարածութեան միջով, երկար հնչւող և ժայռերի մէջ արձագանդող որոտմունք: Այն թմբուկն էր Նախ լսեց մի երկար ու ձիգ աղբուռումն. յետոյ միմեանց յաջորդելով լսեցին հարւածների մէկ, երկու, կարծ ու խուլ ձայնով այնպէս, որ կարծես թէ մէկը դադաղ լինէր զամելիս և աշխատում է շխանգարել ննջեցեալի տան լուսթիւնը... Պարոն Ֆոն Բլաշխուեղերը ժամացոյցին նայեց. եօթից քառորդ էր պակաս: Մի քառորդ ժամից վերջը ամեն բան վերջացած կը լինի: Նա կամենում էր վերադառնալ ու տեսնել: Նրբէք: Մինչի համար ուրեմն նա փախաւ այնանդից: Աշխարհն էլ տալու լինեն, նա չի կարող տեսնել... Եւ նա մի ծառի վրա բարձրացաւ:

Նա տեսաւ լուսաշուք և ուրախ գեղը շրջապատւած փոքրիկ մրդաստաններով և գեղի զանգակատունը, որը միւս տանիքներից բարձր էր կանգնած: Աւելի բան չտեսաւ նա: Ժամացոյցը ձեռքին նա վայրկեաններ ցուցնող սլաքն էր դիտում: Զիկ-չիկ, չիկ, չիկ... Թւում էր խիստ արագ-արագ էր վազում, այն ինչ միւսը, որը բույգներն է ցոյց տալիս ցնցւում էր մի անգամ երբ առաջինը մի շրջան էր լրացնում: Ժամեր ցուցնող սլաքը կարծես կանգնած լինէր. սակայն սա էլ էր շրջան կատարում:

Այժմ եօթից հինգ բույգ էր միայն պակաս: Տեղապահը ուժգին կերպով ընդգրկեց հաճարի սև ու լերկ բուռը զողորջուն ձեռքով ժամացոյցը բռնած: Նրա քներակները զարկում էին սաստկապէս ու մազերը փշաքաղւում էին:

Ճանաչք: Ճայթող տախտակի ձայն լսեց և գեղի ուղղութեամբ, սևաքարով (ardoise) ծածկւած մի տանիքի ու ճերմակ ծաղիկներով

զարդարւած խնձորենու վրա բարձրացաւ կապույտ ծուխ, սպիտակ կապտաուն՝ ինչպէս զարնանային ամպ: Եւ ամպի վերևում միայն մի փոքրիկ սև շրջան, մի երկրորդը, բազմաթիւ փոքր շրջաններ այնպէս, ինչպէս որ հրացաններ լինեն զարակելիս աղաւնիների և ոչ թէ թիրախի (cible) վրա:

—Նրանք բոլորն էլ այնպէս անգութ չեն, ինչպէս ես էի կարծում, մտածում էր ծառից վար իջնելով և համարեա թէ անդորրւած՝ երբ արդէն ամեն բան վերջացել էր: Գեղի փոքրիկ զանգը սկսեց ղողանջել: Հանգիստ և խաղութիւն ննջեցիալներին, որոնք իրենց երկրային պարտաւորութիւնը կատարել են: Եւ ինչի՞ արդեօք ոչ այն կենդան մնացածներին, որոնք նոյնպէս իրենց պարտքը կատարած են:

Արեգակը մայր էր մտել և լուսինը, որի բաց-դեղնագոյն մահիկը կէս օրից սկսած շարունակ տեսանելի էր երկնքում, սկսեց կարմրել և լոյսն աւելցնել, այն ինչ տեղապահը ուղեկցւած մի բուռն զինւորներով մօտենում էր Մոնտրկուրին անընդհատ կերպով փոքր զանգակի ղողանջը լսելով: Փոքրաթիւ վաշտը հասաւ Նմուրի մեծ ուղին, որը երկու ափերից և բարտիներով կրկնաշարք ծառազարդւած՝ նրան թւում էր ուղեգնացութեան համար շինւած: Նա շարունակեց առաջ գնալ մինչև որ գիշերը վրա հասաւ ու լուսինը փայլեց իր բոլոր շողերով: Զինւորների յետին շարքը քրթմնջում էր արդէն, որ մի՞թէ տասնապետը չի կարող հասկացնել տեղապահին թէ երկիրը այս կողմերը անապահով է և որ ստիպւած լինելով հետևեալ օրը՝ լուսածագին և եթ չլիք զօրաբանակ մոտելու համար. այս միջոցում պարոն Ֆոն-Բլաչխուեոյերը գոչեց «կանգ»: Նրանք մի բլրակի վրա էին, որտեղից կարելի էր Մաւրլոտը տեսնել: Տեղապահը ուշադրութիւնը խիստ լարած՝ նայում էր իր առաջ իզը գտած որսկան շան նման:

Կարձեալ լսեց թմբուկի որոտը և իններորդ ժամը զարկեց Մոնտրկուրում, Գրեցում, Բուրոնում, Նըմուրում և բոլոր զանգակները միաձայն ղողանջեցին «Հրեշտակ Տեառն» աղօթքի ժամի միջոցը, մէկը միւսից աւելի մեծագոչ ձայնով. բայց Մաւրլոտի զանգի ձայնը բոլորից ուժգին էր թնդում, որը օգնութիւն, օգնութիւն էր կանչում: Եւ պարոն Ֆոն-Բլաչխուեոյերը անկարացաւ օգնութեան

հասնել: Մի ահուելի թնդիւն լսեց երկրի խորքերից լսող գոռոցի նման, որից ամբողջ շրջակայքը դղրդեց: Շալոնի մօտ գտնուող գլխաւոր բանակից արձակած զիշերային թնդանօթի որսոն էր այս: Եւ զիշերայ պահուն՝ Լուանգի վրա բամբակի պէս տարածւած մառախուղի միջից լուսինն իր գլուխը դուրս հանեց: Գետի ջրերը այնպէս գեղեցիկ կերպով էին փայլիլում լուսնի ճառագայթներով, որ տեսնողը կը կարծէր թէ ֆոնտենըբլօի հրաբուխի պէս սև ու մութ անտառից լաւայի չորձանք է դուրս հոսում: Անտանելի զիշեր էր և մարդիկ այն ատրիճանի գոգունած, որ ամեն մի սպիտակ բունից գրաւող չղիկները նրանց շուրջն էին թրթռում: Ամենին յայտնի էր թէ տեղապահը ինչի մասին էր մտածում. սակայն տարօրինակ էր թւում այս նրանց:

Վերջապէս տասնապետը համարձակեց յայտնել, իբրև մի զեկուցումն, տեղապահին, որ վերադարձի նշանը տւած է արդէն: Պարոն Փոն-Բլայխուեռերն՝ ընդունեց ամենայն խոնարհութիւնով այս զեկուցումն ինչպէս մի հրաման և վերադարձի հրաման տւեց:

Մի ժամուայ միջոցից յետոյ, երբ արդէն Մաւրտի մեծ ճանփի վրա էին, տասնապետը նշմարեց, որ տեղապահի ձախ սրունգը՝ հէնց ծնկան մօտ, այնպէս էր կծկւել, որ կարծես թէ ուռուցք լինէր վրան բսած:

Մեծ հրապարակը հասնելուն պէս պարոն ֆոն-Բլայխուեռերը արձակեց զինուորներին առանց երեկոյեան աղօթքն ասել տալու նրանց:

Նա չէր ուզում վերադառնալ. մի անյայտ ոյժ մղում էր նրան, ինքն էլ չգիտէր թէ դէպի ուր: Աչքերը չռած, պինչերը դողդողուն, նա սկսեց վազել: Նա վազում էր պատերի երկարութիւնով ցանկանալով մի յայտնի հոտ առնել. բայց ոչ մի հոտ չզգաց, ոչ մէկին չպատահեց:

Վերջապէս չոգնելով նա, դէպի տուն դիմեց: Ասպարում վարանելուց յետոյ խոհանոցի կողմն գնաց: Յանկարծ տեսաւ, որ հիսնապետի դէմ առ դէմ էր կանգնել ինքը և այն աստիճանի դողաց, որ հարկադրեց պատի դէմ յենւել: Հիսնապետն էլ շփոթւած իր բոլոր ոյժը հաւաքեց սւ ասեց.

— Պարոն տեղապահ, ես ձեզ ամեն տեղ որոնեցի զեկուցանելու համար...

—Շնտ լաւ, շնտ լաւ: Ըստ կարգին է ամեն բան: Գնացէք տուն և քնեցէք, ընդհատեց պարոն Փոն-Բլաչխոեոզերը չկամենալով շատ բաներ լսել:

—Ամեն բան կարգին է, պարոն տեղապահ, բայց...

—Լաւ է, շնտ լաւ է, գնացէք... գնացէք...

Եւ պարոն Փոն-Բլաչխոեոզերը շարունակեց այնպէս արագ և անընդհատ կերպով խօսել, որ չիսնապետը մի խօսք անգամ չկարողացաւ հասկանալ: Իւրաքանչիւր անգամ երբ նա բերանը բացում էր, տեղապահի բերնից խօսքերի մի այնպիսի չորձանք էր թափուում, որ հիսնապետը առանց այլ ևս փորձ փորձելու հեռացաւ այնտեղից:

Տեղապահը շունչ քաշեց ինչպէս պատժից ազատուած մի երեխայ: Նա պարտեղ մտաւ. լուսնեակը խոհանոցի դեղնագոյն պատը լուսաւորում էր ու խաղողի որթը իր կմախքային թևերը տարածում էր ճրմկոտալով ու չորանջելով: Այս ինչ է: Խաղողի որթը, որ երկու կամ երեք ժամից առաջ չորացած, տերևներից զուրկ, ծըմնուած ու մի գորշագոյն կմախքի էր նմանուում, այժմն նա բեռնաւորուած է մուգ-կարմիր գեղեցիկ ճուրթերով: Նա աւելի էս մօտեցաւ համոզւելու համար, թէ արդեօք միևնոյն որթն էր այն թէ ոչ: Պատին մերձենալուն պէս նա ոտը դրեց մի ինչ որ մածոնի բանի մէջ և թանձր ու զարշ հոտը, որը յատուկ է սպանդանոցին, ուղղակի նրա երեսին զարկեց: Եւ նա նկատեց, որ իսկ և իսկ միևնոյն որթն էր այս. իսկ պատը շատ տեղերից ճաքճաքած ու արինով էր սրսկւած: Այստեղ, այստեղ...

Նա փախաւ շտապով այնտեղից: Դռան շէմքը անցնելով գայթեց կռունգի տակից ինչ որ կպած մի բանի պատճառով: Նա հանեց կոշիկներն ու հռու շտապեց: Ապա մտաւ իր սենեակն որտեղ արդէն ընթրիքի սեղանը պատրաստի էր: Չնայելով անտանելի սովածութեան, նա չկարողացաւ ուտել և կանգ առաւ անթարթ կերպով սեղանի վրա նայելով: Ամեն բան շտապ էր պատրաստուած: Կարագը կարմիր բոխով զարդարւած շտա թարմ և համեղ էր թուում: Ձիւնի պէս սպիտակ էր սիւռոցը, որի վրա կարած կարմիր գլխատառերը նկատեց նա. սակայն գլխատառերը ոչ իրենն էին և ոչ իր կ'ոջը: Պանիրը խաղողի տերևների վրա էր շնորհալի կեր-

պով դրւած: Տեսնողը կը համոզուէր, որ միայն երկիւղից ստիպւած չէ եղել տանտիրինոջ ձեռքը այսպէս պատրաստելու համար: Անուշաբոյր ձերմակ հացը, թլաշած շիշով կարմիր գինին, զիտտի (gigot) վարդագոյն թլաշները, թուում էր թէ այս բոլորը բարեկամունչու ձեռքերն են մատուցել: Նա քաշուում էր կերակրին ձեռք տալուց. յանկարծ վերցրեց փոքրիկ զանգակը: Պանդոկապետի կինը ներս գնաց ու աւանց մի խօսք արտասանելու կանգնեց շէմքում աչքերը տեղապահի ոտների վրա շրտած սպասում էր նրա հրամաններին: Տեղապահը չգիտէր այլ ևս իր ցանկացածը, չէր կարողանում մտաբերել թէ ինչի համար էր զանգահարել: Սակայն հարկաւոր էր մի բան ասել:

— Աշտացած էք ինձանից, հարցրեց նա համարեա անգիտակցօրէն:

— Ո՛չ, պարոն տեղապահ, պատասխանեց կինը յարգանքով: Արիշ ինչ կը կամենաք, պարոն, աւելցրեց նա շարունակ յառած աչքերով պարոն Ֆոն-Յլաչխուեոյերի ոտները դիտելով:

Պարոն տեղապահը կուացաւ տեսնելու համար, թէ ինչն էր գրաւում այն կնոջ ուշադրութիւնը և տեսաւ, որ ինքը դուլպաներով էր ու յատակն էլ ծածկուել էր կարմիր բծերով: Արքանն յամանակ էր նա ման եկել այսօր:

— Տւէք ձեր ձեռքը, յարգելի տիկին, ասեց նա իր ձեռքը մեկնելով նրան:

— Երբէք, պատասխանեց կինը ուղղակի նրա երեսն ի վեր նայելով և սենեակից դուրս դնաց:

Այս մերժումից նա իր սառնարիւնութիւնը վերստացաւ և մի աթոռ վերցնելով նստեց ընթրելու: Բայց երբ ուզեց մի թլաշ միս վերցնել, մսի հոտից շնչասպառւեց: Պատուհանը բացեց ու թեփշին դուրս նետեց զէպի բակը: Ամբողջ մարմնով դողալով ինքն իրեն հիւանդ զգաց: Նրա աչքերը, յանկարծ չափազանցօրէն զգայուն դառնալով, անկարացան լոյսին նայել. ամեն մի ձօխ գոյնից նա վրդաւում էր: Նա դուրս նետեց կարմիր գինով լեցուն շիշը և կարողի վրայի կարմիր բողկը: Կարմիր գլխնոցները, ներկաթիակը, բոլորը, ինչ որ կարմիր էր, դուրս նետւեցան սենեակից: Յետոյ նա ընկաւ թուլացած իր անկողնի վրա: Բայց, հակառակ յօգնածու-

Թեան, չկարողացաւ աչքը փակել և դահլիճին դուկից սենեակից խօսակցութեան շշուկ էր լսուում: Նա չէր կամենում լսել, սակայն, հակառակ իր ցանկութեան, ականջները լսում էին և հասկացաւ որ խօսակցողները երկու տասնապետներ էին, որոնք զրուցում էին զարեջուր խմելով հանդերձ:

—Նրանից երկու փոքրները զոչաղ տղերք էին. բայց մեծը...

—Այդպէս ես ասում երևի այն պատճառով, որ նա փալաւի պէս պատի տակ վայր ընկաւ: Զէ որ նա շատ աղաչեց մեզ իրեն ցանկից կապել չւանով, որպէս զի կարողանար կանգնած մնալ, ինչպէս ինքն էր ասում:

—Այո, հապա այն երկուսը. արևս վկայ, շատ զարմանալի էին: Նրանք այնպէս էին կանգնել այնտեղ, կրծքի վրա ձեռները խաժմերած, կարծես թէ իրենց լուսանկարն էին ուզում հանել տալ:

—Հն, հն, հն: Սակայն երբ սևագլուխը ներս գնաց բլիխարդի դահլիճը նրանց յայտնելու, որ բաները բուրդ է, նրանք՝ երեքն էլ նւագել են, — գոնէ այսպէս էր պատմում հիսնապետը: — Սակայն նրանք չեն աղաղակել, գլխութիւն չեն խնդրել մի խօսքով անգամ: Այս շատ ճիշտ է:

—Այո, հպարտ տղերք էին նրանք: Քո կենացը:

Պարոն Փոն-Բլայխտեոզերը կոխեց զլուխը բարձերի տակ և վերմակի երկու ծայրերով ականջները խցեց: Յետոյ անկողնից վերկացաւ: Մի անդիմադրելի հարցասիրութիւն գրաւում էր նրան դէպի այն դուռը, որի ետևը երկու մարդ խօսակցում էին: Նա շաա բան էր ցանկանում լսել նրանցից, բայց որովհետև խօսակցողները ցած ձայնով էին զրուցում, այս պատճառով նա ոտի ծայրերի վրա մօտեցաւ դռանը: Ականջը կղպանքի ծակի վրա դնելով նա լսեց.

—Քեզ եմ ասում. լմւ գննեցիր մեր զինւորներին: Նրանք այնպէս էին գոյները նետել, ինչպէս չիբուխիս գորշագոյն մոխրը, — և շատերը նրանցից օդի մէջ պարպեցին իրենց հրացանները: Այս մասին մարդու բան չասես, նամանաւանդ որ այն դերիները իրենց մասն ստացան: Այն տարաբախտները իրենց հայրենի օջախը թողած միջոցներում քանի մի Ֆոլնո աւելի ծանր կը լինէին կը ռուելիս քան թէ այսօր: Կարծես գիր արտուտներ լինէին հրացանելիս:

—Իսկ տիրացուների խումբը իրենց կարմիր հագուստներով, տեսմբ նրանց: Ինչպէս էին բուրվառները գցում օպերայի եղանակներ երգելով. իսկ յետոյ հրացանների ձայնիւնից ինչպէս գլորեցին ոլոռնի ածուներում: Վիրաւոր թռչունների պէս, որոնք աչքերը խամրած՝ թռիկներն են թափահարում: Պան, պան, պան. սակայն, ինչ կարող ես անել. պատերազմ է: Քո կենանցը:

Պարոն Փոն-Բլայխտեողերը արդէն բաւականին բան իմացաւ: Գլխի ուղեղը լցել էր արիւնով, նա անկարանում էր քնել: Ներս գնաց ընդհանուր դահլիճը և հրամայեց զենւորներին հեռանալ այնտեղից: Ապա, փաղարաթելուց (շորերը հանել հանգստանալու նպատակով) և զլուխը զովացնելու համար տաշտի մէջ թրջելուց յետոյ, վերցրեց Շոպենհաուէրի գիրքն ու սկսեց կարդալ: Նրա զարկերակները բախխում էին ուժգնապէս:

Գիրքը ձեռից վար ընկաւ:

Նրա անկողնում մէկը մաքառում և գոռում էր: Ո՞վ էր այս մարդը: Նա տեսաւ մի մարմին, որի փորը կծկւել, կուրծքը տակառի կրկալների (շրջանակ) պէս ձիգ-ձգւած էր. մի տարօրինակ խրպոտ ձայն աղմուկ էր արձակում վերմակի տակից: Իր սեփական անձն էր այս: Երկուսի էր բաժանւել նա ուրեմն, քանի որ ինքն իրեն տեսնում, լսում էր, ինչպէս մի այլ անձնաւորութեան: Բղաւոցը շարունակւում էր. դուռը բացւեց և պանդոկապետի կինը ներս եկաւ, ի հարկէ, նախապէս դուռը ծեծելուց յետոյ:

—Ի՞նչ էք ցանկանում, պարոն տեղապահ, հարցրեց կինը շրթունքի վրա օտարտաի ժպիտ ծաղկելով:

—Ե՞ս, ասեց նա, ոչինչ: Բայց այս միւսը խիստ հիւանդ է երևում և, խօսք չկայ, կամենում է բժշկին հրաւիրել տայ: —Այս գիւղում բժիշկ չկայ. սակայն քահանան սովորութիւն ունի օգնութեան հասնել մեզ, պատասխանեց կինը, որ այլ ևս չէր ժրպտում:

—Եթէ այդպէս է, ուրեմն մարդ զրկեցէք քահանային կանչելու, ասեց տեղապահը. թէև մինչև օրս նա երբէք շատ լաւ կարծիքի չէ եղել սևագլուխների վերաբերութիւնով:

—Բայց հիւանդացած միջոցներում կարելի է նա փոխում է իր գաղափարները, պատասխանեց կինը սենեակից դուրս գնալով:

Յկաւ քահանան իսկոյն և եթ, մահճակալին մօտեցաւ ու հիւանդի շնչերակը շօշափեց:

— Ի՞նչ ունի նա, հարցրեց հիւանդը: Ինչո՞վ է նա հիւանդ:

— Խղճահարուժիւնով, եղաւ քահանայի կարճ պատասխանը: Պարոն Փոն-Բլայխուեոզերը սարսափեց:

— Խղճահարուժիւն, որովհետեւ նա իր պարտաւորութիւնը կատարե՞լ է:

— Այո, ասեց քահանան և թաց շորով փաթըթեց հիւանդի գլուխը: Լսեցէք ինձ, եթէ տակաւին ընդունակ էք հասկանալ խօսքերս: Մի ահռելի վիճակ է սպասում ձեզ, առաւել սոսկալի վիճակ քան թէ այն երեք հոգուն պատահածը: Զգուշացէք. ես նշանները լաւ եմ ճանաչում: Դուք խելագարելուն մօտ էք: Փորձեցէք ըմբռնել այս միտքը իր բոլոր սոսկալի կողմերով, աշխատեցէք ըմբռնել ամբողջովին և ձեր ուղեղը կը վերստանայ իր սովորական գործունէութիւնը: Նայեցէք ինձ ուղղակի երեսիս: Դուք երեւակայում էք ձեր մէջ միանգամից երկու անձնաւորութիւն, դուք կարծում էք թէ ձեր անձի միւս կէսը օտար է ձեզ: Ի՞նչպէս ընկաք այդ դրութեան մէջ: Սրա պատճառը հասարակական խաբէբայութիւնն է, որ մեզ իւրաքանչիւրիս երկու անձնաւորութիւն է երեւակայեցնում:

Դուք մի այլ անձնաւորութիւն էիք երբ ձեր կնոջը նամակ էիք գրում և մի այլ անձնաւորութիւն ինձ հետ խօսելու միջոցին: Ինչպէս դերասանը կորցնում է իր իսկական անձնաւորութիւնը և խաղացած զանազան դերերի խառնուրդի է փոխարկւում, այնպէս էլ մարդս, որ հասարակութեան մի անդամն է ներկայացնում, բաժանւում է երկու, եթէ ոչ բազմաթիւ անձերի: Եւ երբ մի յուզմունք, մի մտաւորական երկրաշարժ պատառոտում է մարդու հոգին, այն վայրկեանին նրա միմեանց կպած երկու ետերը հսկում են իրար: Գետնի վրա ես տեսնում եմ մի գիրք, որը ինձ անծանօթ չէ: Սրա հեղինակը խորը մտածող մարդ էր, կարելի է շատ շատերից առաւել խորը մտածող: Նա համոզւած էր երկրային կեանքի թշուառ և ունայնութեան վերաբերմամբ այնպէս, ինչպէս մեր Տէր Փրկիչ Յիսուան էր ուսուցանում: Սակայն նա ևս անկարող գտնուեց երկուութիւնից զերծ մնալ. որովհետեւ կեանքը, հէնց աշ-

խարհ գալուցն և եթ, սովորութիւնը, մարդկային անկարութիւնը, այս բոլորը ստիպեցին նրան այսպէս լինել:

Գուք հասկանում էք այժմս, որ ես բացի աղօթագրքերից, ուրիշ գրքեր էլ եմ կարդացել. և ձեզ հետ խօսում եմ իբրև բժիշկ և ոչ իբրև քահանայ: Մենք իրար հասկանում ենք: Միթէ կարծում էք թէ ես չեմ տանջւել ինքս հոգու երկուութիւնով: Ես ոչ մի կասկած չեմ տածում դէպի սրբազան բաները, որոնք կազմում են իմ ոսկորն ու մարմինը: Բայց և այնպէս Աստուանունով չեմ խօսում ձեզ հետ... Մենք իւրացնում ենք մեզ խաբեբայութիւնը մեր մօր արգանդում, ծծում ենք մայրական ստինքներից և նա, ով որ ներկայ հանդամանքներում ճշմարտութիւն կը քարոզի,—զուտ ճշմարտութիւն—այն... այն... Սակայն կարողանում էք ասածներս ըմբռնել:

Հիւանդը լսում էր ագահաբար. նոյն իսկ մի անգամ աչքը չըթարթեց քահանայի երկարատև ճառախօսութեան միջոցին:

—Իսկ այժմ խօսենք ձեր մասին, շարունակեց քահանան: Մի հրեշտակ՝ լուսավառ մաշալը (torche) ձեւին և թւից վարդերով լեցուն մի կողով կախած, փռում է այն վարդերը մարդկային կեանքի աղտեղութիւնների վրա: Սա մի խաբեբայ հրեշտակ է և կոչւում է Գեղեցիկ: Յունաստանում հեթանոսները պաշտում էին այս Գեղեցիկին, իշխանները բոլոր դարերում ընդգրկել են այս Գեղեցիկը ամենաքնքջ կերպով իրենց թւերով. որովհետև այս Գեղեցիկն է, որ փոխակերպում է իրերը այն աստիճանի, որ մարդիկ այս իրերը չեն տեսնում այլ ևս այնպէս, ինչպէս որ բնական պէտք է լինէին: Այս Գեղեցիկը անցնում է մեր կեանքի բոլոր շրջաններով ու կեղծում է, կեղծում է, կեղծում է ամեն բան: Եւ ինչ պատճառով, ով զինւորական, ինչու էք պատերազմը, նւագարանի ձայներով և փողփողող դրօշակներով առաջ մղում, եթէ ոչ նրա ահուելի կողմերը քողարկելու նպատակով:

Հիւանդը, որ գալարւում էր ձգձգումներից, միացրեց երկու ձեռքերն ևս իբր աղօթելու միջոցին, ապա կծուեց իր մատները մինչ ոսկրները այնպէս, որ զունգները պոկեցին իրենց սեղերից:

Սակայն քահանայի դէմքը մի սոսկալի արտայայտումն ընդունեց: Անողոք, անգութ, ստելութեամբ վառւած նա շարունակեց.

—Գու ընապէս բարի ես, հէնց այս պատճառով քեզ պատժելով չեմ պատժում բարի մարդուն, բայց այն ներկայացուցչին, որը դու ես կայացնում: Թող այս պատիժը օրինակ լինի միւսների համար: Յանկլեմնում ես արդեօք տեսնել այն երեք դիակները: Ուզում ես տեսնել:

—Ո՛չ, ի սէր Քրիստոսի, գոչեց հիւանդը պինդ բռնելով քրտինքից թռչած ձեռքով քահանայի ուսը:

—Վատարիութիւնդ ապացուցում է, որ դու մարդ ես և այդ մարդը երկչոտ, վատարի է:

Հիւանդը՝ ինչպէս խարազանի մի ուժգին հարւածից ցնցւեց: Նրա դէմքը խողաղ կերպարանք ընդունեց, կուրծքը մեղմաբար էր շնչում և հանդարտ ձայնով ասեց.

—Հեռացիր այստեղից, սաթացէլի ծնունդ քահանայ. ես կարող եմ ինձ մոռանալ:

—Բայց ես այլ ևս չեմ գայ քեզ մօտ, եթէ նորից ապսպրելու լինես: Եւ եթէ չես կարող քնել, լաւ յիշիր, որ ես չեմ դրա պատճառը. այլ, շատ հաւանական է, այնտեղ գետնատարած ընկած երեք դիակները, բիլիարդի դահլիճում, այստեղ ահա, այս բիլիարդի վրա: Դէհ, նայիր:

Նա բացեց լայն կերպով բիլիարդի դահլիճի դուռը: Եւ հիւանդի սենեակը լցւեց փենոլային թթւատի (acide phénique) կծու հոտով:

Պարոն Ֆոն-Բլայխուեռները սիրտ տոչորող մի ճիչ արձակեց, վեր թռաւ գողինքից և, մինչև քահանան կը կարողանար նրան բռնել, նա արդէն պատուհանից վար էր ցատկել: Չինուորները բազում բռնեցին նրան: Տեղապահը ուզեց խածոտել նրանց: Ամբաստանի կապկապած նրան տարան զխաւոր բանակի շարժական հիւանդանոցն և այնտեղից էլ, ծանրապէս խելագարւած, մի գժատուն տեղափոխեցին նրան:

## ՄԵՌԵԱԼԻ ՍԷՐԸ

(Աերմոնտովից)

ԱԼԵՔՍԱՆԳՐ ՓԱՏՈՒՐԵԱՆԻ

Հոգ չէ, որ, ընկեր, սառն հողի տակին  
Քառայ ապաստան,  
Միշտ և ամեն տեղ քեզ հետ իմ հոգին  
Կլինի յաւիտեան.  
Քաղցր մոռացման, քաղցր հանգստի  
Աշխարհ վերացած,  
Ե՛ւ այնտեղ յուզմունքն սիրոյ ու վշտի  
Ես չեմ մոռացած!

Անվախ թողնելով երկունքի ժամում  
Ե՛ւ քեզ, և՛ աշխարհ,  
Հոգիս տենչում էր. որ դար անջատում –  
Անջատում չկար!  
Ես տեսնում էի երկնային ոգիք,  
Տխրում, հառաչում,  
Որ քեզ նոցա մէջ, ընկեր գեղեցիկ,  
Չէի ճանաչում:

Ինձ ի՛նչ, թէ հզօր փայլում է երկինք,  
Դրախտն է սրբազան.  
Այնտեղ տարել եմ ես երկրային կիրք  
Ինձ հետ անբաժան:

Եւ ամենուրեք ես փայփայում եմ  
 Նորան իմ կրճքում:  
 Լալիս, կարօտում ու նախանձում եմ,  
 Ինչպէս անցեալումս:

Թէ յանկարծ օտար համբոյցր է խաղում  
 Քո վառ այտերին,  
 Համր տանջանքով յուզում է, դողում  
 Իմ սիրող հոգին.  
 Թէ երբեմն օտար մի անուն տալով,  
 Դու քուն ես մտնում,  
 Մ, այդ անունը՝ կըրակ դառնալով,  
 Կուրծքս է այրում:

Ո՛չ. դո՛ւ չպէտք է սիրես ուրիշին,  
 Երբէք, յաւիտեան.  
 Սրբազան ուխտով, հարսնացունս անգին,  
 Դու իմն ես միայն!  
 Եւ, աւանդ, քո լացն, աղերսանք ու վախ  
 Իզնուր են, հոգեանկ,  
 Ես չեմ փափագում ո՛չ օրեր խաղաղ,  
 Ո՛չ անդորր վիճակ:

20 փետրւարի 1892 թ.

Մովսէս

## Հ Ա Մ Բ Ո Յ Բ

(Փ Ր Ա Ն Ս Ո Ւ Ա Կ Ո Պ Պ Է-ից)

### ԱԼԵՔՍԱՆԴԻ ԾԱՏՈՒՐԵԱՆԵՒ

Ի՛նչ վատ երեկոյ է նոյեմբերի երեկոն: Փողոցում, ամեն մի քայլի վրայ պատահում ես ցեխով ու ջրով լի փոսիկների, ուր անդադառնում է գազավառ լսպտերի լոյսը: Ոտի վրայ օրօրելով, իսկ երբեմն էլ աչս ու այն կողպած խանութին զիպչելով, փողոցի մայթով անցնում է մի թշւառ. պատանի: Նա մօտ քսան տարեկան կը լինի: Սնցորդները նրան տեսնելով՝ մի կողմն են քաշում. իսկ մի քանիսները վրան ծիծաղում են, նրան հարբածի տեղ ընդունելով: Բայց նրանք սխալում են. պատանին հարբած չէ. նրան հալից գցել են քաղցն ու յոգնածութիւնը:

Լէօ Բերնիսը մանկութիւնից զգում էր իւր մէջ բանաստեղծական շնորհ: Հայրենի քաղաքի փոքրիկ ուսումնարանում, որտեղ նրան, իբրև ջերմեռանդ և աղօթասէր ընտանիքից մնացած մի որբ զաւակի, կարեկցական զգացմունքից զրզւած՝ ուսուցանում էին քիչ լատիներէն, քիչ էլ յունարէն—այդ ուսումնարանում նա ծոյլ աշակերտ էր համարւում: Սակայն երբեմն, կարծես որևէ քմահաճութիւնից, յանկարծ անասելի զարմացնում էր ուսուցիչներին և բոլոր առարկաներում իւր ամենազօրեղ ու առաջնակարգ համարւած դասընկերների առաջն էր կտրում: Լէօն տաննօթ տարեկան էր, երբ վերջնական քննութիւններին կտրւեց պատմութիւնից, որովհետև լաւ չ'գիտէր պատերազմների ժամանակագրութիւնը, որ այնպէս անհրաժեշտ է մեր առօրայ կեանքի համար: Սակայն ծերուկ քահանան, որ մի քաջագէտ բանասէր էր և երեսպալի պէս միամիտ մարդ (սրա ղեկաւարութեամբ Լէօն անցնում էր ճարտա-

սանութիւնը), հրաժեշտի ժամանակ պաշարելով ու իւր օրհնութիւնը տալով Աօին, գուշակեց նրան մատենագրի փառաւոր ապագայ: Դրա պատճառն այն էր, որ մանուկը հաւատ ընծայելով ծերուկին, ցոյց էր տւել նրան մի փոքրիկ տետրակ, որ մաքուր արտագրւած էին Աօի բանաստեղծական առաջին փորձերը—գարնան կոկիկ պօէմաներ, թարմ, որպէս նշի գոյնը:

Ուսումնարանական կապանքներից ազատւելուն պէս՝ Աօն թուաւ փարիզ և ապրում էր այնտեղ, ինչպէս ուրիշ շատերն են ապրում—ապրում էր իդէալներով, յոյսերով և անպիտան խողի ապուխտով: Դեռ գիտութեանը մնում է մեկնել, թէ արդեօք չոր ու վտիտ երշիկը, իրաւ., նպաստում է էլէգիայի ծաղկման և կամ խողի ճարպագանիքը— սօնէտի հիւսւածքին: Բայց ապացուցւած փաստ է, որ մատաղ պօէտները սովորաբար ուրիշ կերակուր չեն ճանաչում:

Ըստ սովորութեան, Աօ Բերնիսն իւր ձեռագիրն առաջ ինքը տարաւ Իշանաւոր հրատարակիչներից մէկի մօտ: Նրկու ամսից յետոյ ներկայացրին մի փոքրիկ հաշիւ, որ պատկանում էր Վիլիամայի շատուկ գրականական կրիտիկոսի բեղմնաւոր գրչին: Այդ քննադատական հաշիւը պսակներով էր պսակում մատաղ պօէտին և վերջանում էր նրանով, որ առաջարկվում էր հրատարակել այդ աշխատութիւնն, իհարկէ պօէտի ծախքով ու պատասխանատուութեամբ: Բայց տեսէք, որ Աօի բախտը բանեց. նրա աշխատութիւնը կարդացւեց և մամուլի կողմից ըստ արժանոյն գնահատեց: Սակայն դրանից զորձն առաջ չ'գնաց, որովհետև պօէտի ապրուստի միակ միջոցներն էին մի քանի սակաւավարձ դասերը և բթացնող ու առաւել ևս սակաւավարձ արտագրութիւնները: Եւ առաջ քան ճոխ կեանքի և խուր բանաստեղծութիւնների շքեղ, ծաղկանկարներով զարդարւած հատորի մասին մտածելը, նա պէտք է հոգս քաշէր ամենայն օր մի կտոր խողի երշիկ ճարելու, այն էլ մի'շտ ու մի'շտ խօզի երշիկ: Նա չէր համարձակվում իւր ցանկութիւնը մինչև անգամ մի հատ կօտլէտի կամ մի կտոր տապակած մսի հասցնել:

Ընդհանրապէս նա շատ ազնիւ և մաքուր կեանք էր վարում:

«Ճանապարհներդ հարթած» գրողներ, իմ թանկագին և պատւական բարեկամներ, ձեռքը սրաներիդ դրած՝ ճշմարիտը խոստովանեցէք, ո՞վ մեզանից չի ափսոսում այն անցած-գնացած հեռա-

ւոր ժամանակը, երբ մեր ջէբերում հազարից մի անգամ էր լսվում դրամների զնդզնգոցը, այն ինչ մեր սրտերում եռում էին անկաշառ իղձերը, մեր մտքերում թագաւորում էր միայն մաքուր, անշահախնդիր դեղարւեստը:

Սակայն չքաւորութիւնը չափից դուրս արդէն անողոք էր դեպի խեղճ Լէօ Բերնիսը: Շուտով արտագրութիւնն ու դասերը չքացան: Այն պանսիօնը, որ նա մի փոքրիկ, կեղտոտ անկիւնի և մի փոր անսնդարար հացի համար վզին կապելով պահապան զամփոռի շլթան վերակացուի դժւարատար պաշտօնն էր կատարում—այն պանսիօնն էլ անանկացաւ ու փակեց: Լէօն երեք օր փողոցի սալայատակի վրայ անցկացրեց և քարուքանդ տների աւերակումն էր քնում: Այն խոնաւ ու ցուրտ օրին, երբ Լէօն օրօրելով անցնում էր փողոցով, իւր առաւօտեան նախաճաշիկից յետոյ, որ բաղկացած էր մի փոքրիկ կտոր հացից և անխուսափելի երշիկից, նա տասնուչորս ժամ շարունակ բերանում նշխար չէր դրած:

Խեղճը ջէբում, որ ասես, գրօջ չունէր: Բայց այս դիշեր նա ունէր ապաստան: Նրա բարեկամներից մէկը, որ համարեա նոյնքան հարուստ էր, որքան և ինքը Լէօն և որն առաւօտանից նոյնպէս փողոց էր դուրս եկել մի գործ ձարելու—այդ բարեկամը Լէօին առաւօտեան նախաճաշիկի համար երկու սու տալով խոստացել էր գիշերն էլ օթեան տալ իւր աղքատիկ կացարանում: Բայց այդ բարեկամը շատ հեռու էր ապրում—Մօնմարտեան այգուց այն կողմը, մի հոս ընկած տեղում. և Լէօն այժմ քաղաքային գրադարանից, ուր նա մի քիչ տաքանալու համար անց էր կացրել ամբողջ երեկոն, գնում էր այնտեղ՝ իւր բարեկամի մօտ: Ողորմելին պէտք է ժամ ու կէս ճանապարհ գնար, որպէս զի արժանանար քաղցած փորով ձգւելու «էժանագին համարների» փոքրիկ, չոր ու կոշտ բազմոցի վրայ: Թշառ տղան զգում էր, թէ ինչպէս ծնկները ծալում են և նրան այնպէս էր թւում, որ ոչժ չի ունենալ տեղ հասնելու: Ստամոքսն այրում ու մխտում էր. գլուխը ցաւից ճաքում էր: Լէօն յուսահատութեան մէջ էր:

Յանկարծ փողոցներից մէկի անկիւնում, նրանից շատ մօտ լուեց մի կանացի ձայն—մի քիչ խոճաճ, բայց ստատիկ կոշա ձայն:

—Սիրուն տղայ, գնանք ինձ մօտ:

Լէօն մեքենայարար նայեց կնոջ վրայ: Դա մի հասողիկ, սեւահեր ու տարիքով կին էր—երեսունից անց, քրքրւած մազերով, մթազոյն հագուստով, մէջքին սև թիկնաշոր զցած: Նա աւելի նման էր արուարձանում ապրող մի արհեստագէտ կամ մի բանւոր կնոջ. սակայն նախշած աչքերը և այտերին քսած կարմիր ներկը վկայում էին, թէ ինչով է նա պարապում:

Մտտազ պօէտն անմեղ պատանի էր: Նա դէռ ոչ մի կնոջ չէր սիրել, բացի իր ցնորքների անմարմին կոյսերից և դիցուհիներից: Եւ այդ հանդիպումը սարսափեցրեց նրան: Նա ուզեց շուտով անցնել կնոջ մօտով, հեռանալ նրանից, բայց թուլացած ոտները չը հնազանդեցին: Նա մի քանի քայլ անելով, ստիպւած եղաւ կանգ առնել և դէմ ընկնել պատին, որպէս զի վայր չ'նկնի:

—Հը, ինչու չես գալիս... ինչ է պատահել, տղայ... աւելորդ կոնծել ես, հմ:

Կինը հետևեց նրան. հասաւ և բոլորովին մօտենալով՝ լկտի ժպիտով նայեց ուղղակի նրա երեսին:

Խեղճ տղան ոյժից ընկել էր. ճակատին սառը քրտինք էր գուրտաւել:

—Թողէք ինձ, — շնջաց նա:

Կնոջ երեսը միանգամից փոխւեց: Մի բարի զգացմունք փայլեց նրա աչքերում:

—Դու հիւանդ ես:

Դժբախտ տղան, որ այնքան տանջւել էր, չ'կարողացաւ իրան զսպել:

—Ես առաւուտանից ոչինչ չեմ կերել, — աղեկատուր մրմնջաց նա, — ես քաղցած եմ:

Այն ժամանակ կինն էլ առանց մտածելու, զօրով թևանցուկ արաւ տղային, քաշքշելով տարաւ նրան մի անմարդաբնակ փողոց, բացեց նեղլիկ դուռը և ներս տարաւ մի փոքրիկ սենեակ, որ գտնվում էր առաջին չարկում: Դա մի աղքատիկ ծակուռ էր, ուր դարստոտած էին մի քանի խորաշէն աթոռներ և մի մահճակալ՝ ծածկւած բամբկէ կարմիր վերմակով: Կնոյ սեղանի վրայ վառվում էր պղնձէ մոմակալում ցցւած մոմը:

Քաղցից ու ամոթից թուլացած՝ Լէօն աթոռի վրայ ընկաւ և

երեսը ձեռքով ծածկելով, լաց եղաւ: Հեծկլոոցից նրա ամբողջ մարմինը թռթռում էր: Կինը յուզմունքից ու կարեկցութիւնից ամբողջապէս դողդողալով, արտասուքի երկու ծանր կաթիլներ աչքերին, բաց արաւ կերակրի պահարանը, հանեց ափսէ և սաստիկ շտապելով իւր հիւրի առաջ դրեց հաց, շշով գինի և մի մեծ կտոր եփած սառն միս:

Լէօն լալիս էր և սրտաշարժ ձայնով կրկրնում. «Շնորհակալ եմ... շնորհակալ եմ...»:

—Շնորհակալութիւնս որն է,—խօսքը կարում էր կինը, այլ ևս պոռ» չասելով նրան, և համակաւ լինելով մի տեսակ բնազդական շարժանքով դէպի նրա վիշտը,—առաջ կերէք, յետոյ...:

Եւ երբ Լէօն դողդոջուն ձեռքերով ագահաբար սկսեց ուտել, կինը վախենալով որ մի գուցէ խեղճ տղան իրանից ամաչի, սեղանի մօտից հեռացաւ և բուխարու առաջ ծունկ չոքեց, որ կրակը թեժացնի: Նա բոլոր ժամանակ խանձողները դէս ու դէն շուռ տալով, ինքն իրան քրթմնջում էր. «խեղճ տղայ, խեղճ տղայ»...:

Նա վեր կացաւ, նորից մօտեցաւ սեղանին և վախենալով որ տղան, շատ կարելի է, համեստութիւնից քաշվում է շատ ուտել, էլի մի կտոր միս դրեց ափսէի վրայ, գինի ածեց և մի առանձին հոգածութեամբ սկսեց մեծարել ու հիւրասիրել նրան, ինչպէս մայրը իւր որդուն:

—Ի՛նչ անխելք եմ,—յանկարծ բացականչեց կինը,—պէտք է հօ վրէն մի տաք բան խմել, թէ չէ ստամոքսը չի մարսի... մի թաս սուրճի—մնց էք...:

Կինն էլի վազեց դէպի բուխարին, աթոռ քաշեց տակը, նստեց, սրճամանը դրեց երկու քարերի արանքում և սկսեց սուրճ պատրաստել:

Լէօն աչքի տակով նայեց կնոջ վրայ: Դա վերջին լթշատ արարածներից մէկն էր—տրորած, մաշած, հաստ կազմաւորով և ուռած ձեռքերով մի կօկօտ կին: Սակայն եղան էր արդեօք նա երբ ևիցէ թարմ, զւարթ, գէթ փոքր ինչ գեղեցիկ: Հազիւ թէ Այժմ նա համարեա պառաւ էր. երեսը դեղնած ու մտոտ, կզակր երեք ծալ, քունքերի մօտ նկատելի էին ալէխառն մազեր:

Բայց Լէօ Բերնիսը, որ Մուսայի հարազատ զաւակներինցն էր,

և որին վիճակւած էր ասլագայում նշանաւոր պօէտ դառնալ, նայում էր կնոջ վրայ երախտագիտական զգացմունքից ջրակալած, նազելի աչքերով: Եւ երբ կինը սուրճ լցեց նրա համար և մի քիչ էլ իրան ածեց, որ նրան սեղանակից լինի, Լէօն հարցրեց կնոջ անունը:

Կինն իսկոյն չ'պատասխանեց: Նա կանգնած էր սեղանի հակառակ ծալրում և ձեռքը խաչած, կարծես, մի բան խորհում էր:

— Ի՞նչ հարկաւոր է ձեզ իմ անունը, — վերջապէս, երկչոտութեամբ արտասանեց նա... — Ի՞նչ առնչութիւն կարող է լինել ինձ պէս մի կնոջ և ձեզ պէս մի բարեհամբոյր ու վայելչագեղ պարոնի մէջ... Այն, ինչ որ ես արի, մի առանձին բան չէր: Էլ ուրիշ ոչ մի բան անելու իրաւունք չունեմ... Ի՞նչ արարեց անբախտ էք. ես այդ տեսնում եմ: Բայց արիացէք. ձեր ձեռքին է երիտասարդութիւնը, իսկ դա մեծ գանձ է... Ի՞նչով էք պարապում:

Լէօն դառն կերպով ժպտաց:

— Ես ոտանաւորներ եմ գրում, — պատասխանեց նա:

Կինը շ'զարմացաւ:

— Հասկանում եմ, դուք երգեր էք յօրինում... համբերութիւն ունեցէք. յաջողութիւն կը գտնէք... Իսկ եթէ դուք անպատճառ ուզում էք իմանալ իմ անունը, համեցէք. ինձ ամենքն էլ կոչում են Մարգո: Բայց եթէ դուք երբ 'լ իցէ պատահմամբ մտարեւէք ինձ, անւանեցէք... այդ աւելի գեղեցիկ կը լինի... անւանեցէք ինձ Մարգարիտ:

Նա լռեց և աչքերը կախ զցեց: Լէօն զգաց, որ իրան մնում էր միայն հեռանալ:

Սակայն դռան շեմքում, երբ Լէօն ուղում էր դուրս դալ, խոր զգացւած լինելով այն հեղութեամբ ու կարեկցութեամբ, որ նա դուռը մի ողորմելի արարածի սրտում յանկարծ մի հրաշալի միտք փայլեց նրա ուղեղում: Նրան տիրեց բանաստեղծական ոգևորութիւն: Լէօն առաւ այդ կնոջ, այդ աղախնի, այդ թշուառ հակիւ կոչո, կնճռոտ, սև եղունգներով պատած ձեռքը և խոնարհելով, լի ակնածութեամբ համբուրեց այդ ձեռքը, որպէս թագուհու ձեռք:

# Ե Ր Գ

ԳԵՐԵՆԻԿ ԳԵՄԻՐՃԵԱՆԻ

## I

Այն հովտի մէջ կախարդական  
Ուռենին էր սօսափում  
Եւ նորա տակ ալէկական  
Փոքրիկ առուն խոխոջում:  
Երբ լուսինը իր շողերը  
Երկնքում էր վառվում  
Եւ իր նսեմ, խոլ սուերը  
Առի մէջն էր դողդողում,  
Մենք կնքեցինք այն վառ գիշեր  
Մեր սուրբ ուխտը յաւիտեան  
Եւ ուռենին սօսափում էր  
Մի մեղեդի քաղցրական...

## II

Այն հովիտը հիմա մթին  
Հառաչում է ու տխրում...  
Օ՛ տեսնում եմ իմ ուռենին  
Այն յուսահատ վայրերում...  
Փայլուն գիշեր, փայլուն գիշեր,  
Ո՛ր հեռացար այս հովտից.  
Սիրուն աչեր, սիրուն աչեր,  
Ո՛ր չքացաք իմ սրտից...  
Տերևներին դեղնած, խղճուկ  
Հալածում է ցուրտ քամին...  
Յիշատակներ, զնում էք դուք--  
Տարէք ձեզ հետ այս հողին...

## Ջ Գ Ա Յ Ն Ա Չ Ա Փ

(Տուրիստի չիշողութիւններից)

### Վ. ՓԱՓԱԶԵԱՆՅԻ

Պատահել է ձեզ նկատել որ մրգավաճառների թղթէ տոպրակները զանազան գրքի կտորներից են շինած լինում և երբ մի քիչ աւելի ենք զննում, դուրս է գալիս սր այդ թուղթն էլ հանւած է կամ մի ամսագրից և կամ ձեզ ծանօթ մի գրքից:

Այնպէս լաւ տանձեր ունէր մրգավաճառ Սարգիսը, որ անցնելիս կանգ առայ և երկու ֆունտ գնեցի: Կշռեց, լցրեց արդէն պատրաստ մի թղթէ տոպրակի մէջ և աւաւ ինձ: Դրսում դեռ երեք հատ տանձ չէի կերել, նկատեցի որ տոպրակի թուղթը ամսագրից է հանւած ու այն էլ Փրանսերէն ամսագրից, թէև երեսի ճակատի վրա ամսագրի անունը չկար բայց մի յօդւածի կիսաորը á suivre (շարունակելի բառից և մի ուրիշ յօդւածի սկսիլը՝ ինձ այդ եզրակացութեան բերաւ): Երբ տուն մտայ, ինամքով երկու կէս արի տոպրակը և սկսեցի կարդալ: Կարդացածս մի շնորհականս կոչւած գրոյց էր. ոչ մի ստորագրութիւն չունէր տակը: Ես թարգմանում եմ, բայց յայտարարում որ եթէ մէկը կարողանայ ինձ ասել թէ որ ամսագրից է կամ ո՞վ է հեղինակը, շնորհակալ կը լինեմ:

Ահա այդ գրոյցը:

Մի ծեր բրամին մի երեկոյ տուն էր վերադառնում: Վերջալոյսի ժամանակ էր, երբ նա մօտեցաւ քաղաքին:

Յանկարծ նկատեց երկու մանուկների, որոնք կուշ էին եկել մի վրանաձև շորի տակ: Մօտ գնաց ու առանց տեսնելու, աշխատեց լսել նրանց խօսակցութիւնը:

Մանուկներից մէկը—մի փոքրիկ աղջիկ, լաց էր լինում ու հաց ուզում. քաղցած էր: Միւսը—մի տղայ, որ քիչ աւելի հասակաւոր էր քրոջից, մխիթարում էր աղջկան, առարկելով որ մայրիկը շուտով կը գար սւ հաց կը բերէր:

Եւ իսկապէս, քիչ յետոյ մայրիկը եկաւ յոգնած ու դժգոյն: Քայլուն պէս հանեց զամբիւղից մի հաց ու դրեց մանուկների առջև:

Աղջիկը իսկոյն հացի վրայ ընկաւ ազահուլթեամբ, իսկ տղան իւր հացը երկու կտոր արեց. մի կտորը ծածկաբար թաքցրեց մի անկիւնում, իսկ միւս կտորը ուզում էր բաժանել իր մօր հետ և որովհետև մայրը մերժեց ուտել, այն ժամանակ ինքը կերաւ ամբողջը:

Տղայի այդ վարմունքը հետաքրքրեց Բրահմինին և նա վճռեց միւս օրը դալ և տեսնել թէ տղան արդեօք պակաս քաղցած էր աղջկանից:

Միւս օր կէսօրից յետոյ նա քաղաքից դուրս եկաւ և զնաց դէպի վրանը: Առանց աղմուկ հանելու մտեցաւ: Միւնոյն բանը տեսաւ. փոքրիկ աղջիկը լաց էր լինում ու հաց ուզում, իսկ տղան աշխատում էր նրան մխիթարել: Վերջապէս երբ տղան տեսաւ որ աղջիկը ձայնը չի կտրում, հանեց երեկւայ պահած հացն ու տւաւ քրոջ: Քոյրը աւաւ, ուզեց բերանը տանել, բայց իսկոյն էլի գետին ձգեց ու ասաց.

—Բաց չէ՞ որ դա քո հացն է.

—Ես քաղցած չեմ, ի՞նչ եմ անելու.

—Ես էլ չեմ ուզում.

—Ինձ էլ պէտք չէ:

Եւ հացը մնաց գետնի վերայ: Մանուկներից ոչ մէկը չէր ուզում զիպչել հացին:

—Այդ լաւ է մտածեց Բրահմինը.—հացի այդ կտորի շնորհիւ աղջիկը այլևս մինչև երեկոյ հանդարտ կը մնայ և չի լայ:

Ու երբ Բրահմինը տուն էր վերադառնում, մտածեց առաքինութեան մասին: Մտածեց ու գտաւ, որ առաքինութիւնը ծնում է զգացմունքներից:

Յետոյ էլ մտածեց թէ արդեօք չէր կարելի կշռել մարդկային զգացմունքների աստիճանը մի գործիքով, ինչպէս որ չափում է տաքութեան աստիճանը:

Եւ որոշեց շինել մի զգայնաչափ:

Վերցրեց որբի արտասուքից մի քանի կաթիլ, լցրեց մի ապակեայ բարակ խողովակի մէջ ու զնաց դէպի վրանը: Այնտեղ նա խողովակը դրեց տղայի սրտի վերա և երբ արտասուքը սկսեց եռ գալ, նա նշանակեց խողովակի վերայ եռացման կէտը 100 թւով: Յետոյ նա գտաւ մի խորթ մայր և նրա — դէպի իր խորթ որդին ունեցած — զգացմունքը չսփելուն նշանակեց 0-ով:

Եւ այդպէս դէպի վեր ու դէպի վար բաժանումներ անելով զգայնաչափը պատրաստ էր:

Բայց պէտք էր գտնել արտասուքի սառելու կէտը. որպէս ջերմաչափի մէջ սնդիկի — իրեն սառուցման կէտը կայ:

Դրա համար էլ Բրանմինը ամբողջ քաղաքում, չէտոյ էլ ամբողջ աշխարհում սկսեց ման գալ իր դործիքով և փնտրեց ամենախիստ շարագործներ: Ո՛չ մի դէպքում արտասուքը չէր սառում:

Բրանմինը դրանից չէտոյ եզրակացրեց որ երևի բնութեան մէջ՝ արտասուքի սառուցման աստիճանը չէր գտնվում:

Ու դադարեցրեց իր հետախուզութիւնը:

Հանձարեղ գիւտի հռչակը տարածվում էր ամէն կողմ: Հարուստ և աղքատ, խելօք կամ չիմար գալիս էին Բրանմինի մօտ: Ամէն ոք կամենում էր իմանալ իր զգացմունքների աստիճանը: Մի հարց, որ առանց գործիքի դժւար է լուծուում:

Վերջապէս եկաւ և մի կին:

Այդ կինը իր ամբողջ կեանքը անց էր կացրել եկեղեցուն ծառայելով: Յայտնի էր որպէս մի խիստ ջերմեռանդ անձ և ոչ ոք չէր կասկածում նրա առաքինութեան վերայ:

Եկաւ նա, թէև գիտէր որ իր կեանքովը — որը նա Աստուծոն էր նւիրել — իր զգացմունքները այնքան վսեմացրել էր որ բոլորի սխալներն արհամարհելով, ինքը միայն արժանի էր մեն — մենակ՝ տիրապիտել երկնային բոլոր վարձատրութիւնները:

Այդպիսի բացարձակ բարոյականի տէր անձը ուրեմն և պէտք չէր ունենալ իր զգացմունքների քանակութիւնը գիտենալու:

Բայց նրա ուզածը այն էր, որ մի անգամ ևս կարողանար ականերև կերպով փայլեցնել իր բարձր առաքինութիւնը ամբոխի առջև:

Եւ նա հպարտութեամբ մօտեցաւ գործիքին... Արտասուքը վաչրկենապէս ցած իջաւ, և... սառեց:

Բրահմինը հիացած, ուրախ, վեր թռաւ ու օրհնում էր կնոջը: Նա խելոյն նշանակեց սաւուցման կէտը և նրա կողքին էլ արձանագրեց սոյն խօսքերը:

«Առաքինութիւնը՝ վատթարութեան աստիճանի»:

Կինը կատաղեց: Տաճարի շեմքի վերայ բարցրացաւ ու այնտեղից մեծ ձայնով զրգուեց ամբուխին՝ սատանայական զիւտերի դէմ և խորհուրդ տուեց, յանուն ամենամեծ փառացն Աստուծոյ ոչնչացնել զգայնաչափը:

Բարեպաշտները զրգուեցին, «սուրբ» կրակով վառված յարձակում գործեցին Բրահմինի տան վերայ և փշրեցին գործիքը:

Զգայնաչափը այլ ևս չկար:

Եւ ՚էնց այդ օրւանից է, որ այլ ևս չկայ մի կշիռ մարդկային առաքինութիւնների և զգացմունքների համար...

## Չ Ի Ս Տ Ի

(Տուրիստի փոշոգութիւններից)

### Վ. ՓՍՓԱԶԵԱՆՅԻ

Կայարանի մայթի վրայ էլ են շարոււմ ամեն առաւօտ, այդ աղտոտ հազուստով թշուա կոշկաջինջները: Սանդուխտների զլխից սկսած, նրանք բռնոււմ են մայթի մի մասը: Առաջին տեղը բռնոււմ է լայն դէմքով մի հայ. նրանից քիչ հեռու Ծ-6 յոյն պատանիներ, որոնցից երկուսը անդադար կուոււմ կամ վիճոււմ են. մէկը համր է և «չիստի» բառը կանչելու փոխարէն. «ա, ա, ա» է անոււմ, իսկ չորրորդը, որի գծագրութիւնները ժամանակից առաջ չափահաս եղած մանուկի գծեր են—անցորդներին է զննոււմ ուշադրութեամբ, մանաւանդ կանանց:

Մենակ այնտեղ չէ կոշկաջինջների տեղը: Նրանք Բաթումի անց ու դարձ ունեցող բոլոր փողոցների անկիւններում կան. անցնելիս նայոււմ են կոշիկիդ և եթէ նրան մաքուր չը տեսնեն, խլացնոււմ են ականջդ իրենց կանչելով. յաճախ իսկ իրենց արկղիկի ուսի վերայ, խոզանակով ծեծոււմ են նրան և ետեւիցդ են գալիս, անդադար «չիստի» կանչելով:

—Չիստի... լսեց կողքիցս, երբ բարեկամիս հետ կայարանի մայթի վերա էինք:

—Կողքիտ նայիր, ասաց բարեկամս—կոշկաջինջը հայրենակիցդ է:

Նայոււմեւ և այդ գէր դէմքով հայի մէջ տեսնոււմ եւմ վաղուցեայ ծանօթ փիլիսոփայ Մանուկին: Տասը տարի առաջ, ուսին

մի մեծ սահառ, քարը էր գալիս նա Քրիստոսի փողոցներում և «գարեաչի բնակի» էր աղաղակում: Իսկ այժմ կայսրանի մայթի վերա և Բաթումի փողոցներում մանգալով, խողանակով արկղիկն է ծեծում ու «չիստի» ձայնում:

Երևի փիլիսոփայ Մանուկին վիճակած էր միշտ քարը գալ և միշտ աղաղակել. ապրել էր պէտք: Անցեալ օր էլ մի Մարտիրոսի ցոյց տւին ինձ, որ նաւամատոցի վերայ նստած, չը ճանաչելու համար դլսարկը մինչև աչքերը իջեցրել, ակնադիր միշտ դէպի ցած՝ կոշիկներ էր սրբում, «չիստի» գոչում: Վենետիկի դպրոցից էր այդ Մարտիրոսը և ով ինձ նրան ցոյց տւաւ, սրտակռանքով էր խօսում նրա մասին:

Ապրել է պէտք. ստամոքսը ոչ փիլիսոփայ է ճանաչում և ոչ էլ Վենետիկի դպրոց. նա միայն ուտել է ուզում:

Նայեցի Մանուկին: Նա էլ ինձ տեսաւ, ճանաչեց, հայեացքը ուրիշ կողմ դարձրեց և դադարեց «չիստի» կանչելուց:

Մօտեցայ ու ոտքս դրի նրա արկղիկի վերայ: Հանեց լուսթեամբ խողանակները—երեսիս չէր նայում—վարտիկիս ծայրերը դարձրեց ու սկսեց սրբել:

—Ո՞րտեղ էիր այսքան ժամանակ, հարցրի մեղմութեամբ:

—Յնցւեց, բայց առանց վեր նայելու՝ կովմաց:

—Կոշիկ եմ սրբում:

Երկուսս էլ լռեցինք: Յոյն պատանին որ մի լաւ զննել էր ինձ, այժմ վրզը երկարցրել, աշխատում էր գրպանիս եղած զիրքը զննել:

—Գիտես, խօսեցի քիչ յետոյ—Քրիստոսից եմ գալիս. այնտեղ էջնաթենց Տիգրանին տեսայ...

—Է, արեց նա.

—Ի՞նչ էր ծախում... Ի՞նչ է եղել նրանց. սնանկացել են:

—Եղբօր փողերը հատաւ արդեօք, աւելացրեց նա—ոտքդ քիչ պինդ կոխիր... Աստուած արդեօք իր դատաստանը կատարեց վերջապէս... խօ գիտես նրա եղբօր արածները:

—Լսել եմ:

—Լսածդ ի՞նչ կը լինի որ... պիտի տեսնել, իր վրայ փորձել: Նրա արածները երկնքին սիւն եղան, սիւն...

—Քո փողերն էլ է կերել:

— Ի հարկէ... բայց քիչ. ինձ շատ խաբել չկարողացաւ. դրա համար էլ ինձ մատնեց, քիչ մնաց բռնել տար երկրում:

— Ես շատ եմ լսել նրա մասին, ասացի ես—բայց զարմանում եմ թէ ինչպէս կարող է մարդ խաբել այստէս ժամանակ և իր պառն քրտինքը աչքերը բաց ուրիշի ձեռքը տալ:

— Չը տւիր ինչ կանես. մօտն ես գործում, փողը իրեն չես տաց, կասի—ինձ չես հաւատում. դէհ, որ չես հաւատում՝ դնա, ինձ մօտ էլ մի ծառայիլ: Ի՞նչ կարող ես անել: Չափում ես, կշռում և մտածում ես— Ձտամ, ինձ դուրս կ'անի. թէ որ տամ, գուցէ խղճաց ու չ'ուտի... ուրեմն տամ, գուցէ չ'ուտի... և տալիս ես

— Առանց ստորագրութեան.

— Ստորագրութիւնը որն է. ճերան չես հաւատում. գո՞ղ ես համարում, որ ստորագրութիւն էլ ես ուղում. քանի քեզ պէսների փող կայ նրա մօտ. 10—15 տարի է սաղ վանեցւոց ու աշխարհին էլ յայտնի է, որ էջնաթենց Կարապետը փող ուտող մարդ չէ, որ...:— Ահա թէ ինչ կ'ասի քեզ: Բացի դրանից շատ էլ ստորագրութիւն եղաւ ի՞նչ կարող ես անել: Դատ բանալը հեշտ բան է. չ'է որ եթէ 100 մանէթ առնելիք ունենաս, 200 էլ դատի ծախս պէտք է քեզ... Երկիր փող ուղարկելու համար ստորագրութիւնը որն է...

— Քեզ ինչ է արել նա.

— Ինձ շատ բան չէ արել. . կոշիկներդ—գիտե՞ս—հալից ընկել են, կրունկները փոխել տուր...: Ուզեց շան պէս դատածս, մի քիչ ունեցածս ձեռքիցս խլել—չ'կարողացաւ, չ'ուտի, վարպետ եղայ. մօտիցն էլ շուտ դուրս եկայ: Ինձ և միւսներին, օրինակ, ասել էր, որ իր աւած բուլկիներից քանի հատ որ մնաց ամէն երեկոց, պիտի ետ առնէր: Երեք-չորս օր լաւ էր... մէկ օր էլ բարկացաւ. «չան որդիներ, ասաց, ձեր քեաւթու հացերը ես պիտի սաղացնեմ. հոգիներդ դուրս գայ՝ ման եկէք ու ծախէք: Ասում էր «ման եկէք»... Առաւօտեան ժամը 6-ից, երբեմն 5-ից մինչև 11. կեսօրից յետոյ 4-ից մինչև 9-ը էլ տեղ չէր մնում. առանց կանգնելու՝ ման էինք զալիս. ձայներս կարվում էր գողալուց. թափառական հրէյացի պէս մի բոպէ մի դռան շէմքի վրա նստել չէինք կարող... «Քալէ», «քալէ», կոչում էր մեզ մեր ստամոքսը. «քալէ» ձայնում էր

աղան... և մենք քայլում էինք, անդադար քայլում... ըշտէ այս-  
պէս ենք ապրում մենք...: Միւս ուրիշ բեր, աս լմնցաւ:

Պահ մի մեզնից ոչ ոք չը խօսեց. ես աւելի միւս ոտքս, նա  
ներկը քսեց և երբ խօզանակով սկսեց շփել, շարունակեց:

—Ըշտէ ասանկ, ազաս... օրը մինչև երեկոյ, վեց ամիս անդա-  
դար քալեցի ու քալեցի. գոռացի ու կանչեցի, հաց-պանրից ու  
երբեմն էլ ասորի կամ պարսիկ խոհարարների աղտոտ կերակրներից  
զատ բան չը կերայ... քիչ փող ետ ձգեցի:

—Որքան.

—Յիսուն մանէթ... լաւ փող էր, կարող էի երկիր վերադառ-  
նալ, մի թեթև գործ բռնել:

—Է՛, ի՞նչու չը վերադարձար.

—Հիւանդացայ, ունեցածս էլ կերայ ու մի քիչ էլ պարոք արի.  
շատ էի սքայլել...:

Ժպտեց դաւնութեամբ ու լռեց: Պատկերացան մտքիս մէջ այդ  
խկնդիկ թափառող թշառ հայրենակիցներս, որոնցից յաճախ կա-  
րելի է տեսնել Թիֆլիսի փողոցներում քարշ գալիս: Փոշոտ, յոգնած  
խուպոտ ձայնով զոչումեն նրանք զգարեալի բուլկի... և ոչ ոք չէ  
զթում նրանց, ոչ ոք...:

—Կլօր-դատի Խաչօին ճանաչում ես, հարցրեց յանկարծ Մա-  
նուկը առանց ինձ նայելու և շարունակելով սրբել:

Ձէ, այդ ի՞նչ Խաչօ է:

—Կն, որին ուսու Խաչօ էլ էին ասում: Ռուսէթ շաս էր մնա-  
ցել: Մի տղայ ունէր, միասին էին Թիֆլիզ: Որդին աչչի էր, հայ-  
րն էլ բուլոչնիկ՝ Եյնաթի Կարապետի մօտ:

—Լաւ, յետոյ.

—Կարապետը Խաչօին սկսեց համոզել, որ իր աշխատածից որ-  
դուն շտար և տուն էլ չ'ուղարկէր: «Տնաւէր, ասում էր նրան—որ-  
դիդ էլ է աշխատում, թող նա տունը պահի, իսկ դու փող ետ  
ձգիր, որ հզուց-մէկէլօր թէ ազատ քեզ չ'ուղի պահել, դու խեղճ  
չմնաս... Խաչօն համոզեց, ամսական մինչև 10ռ15 մանէթ ետ  
էր ձգում. շան պէս էլ կեանք վարում: Փողերը թողնում էր Կարա-  
պետի մօտ: Տարի մ' երկու, մօտ 300 մանէթ աշխատեց. էլ նրա  
քէֆինքէֆ չէր հասնի. ուղեց փարէն առնել ու երկիր վերադառ-

նալ: 30-35 ոսկի էր. բոլ փող էր. ուզեց Կարապետից:

—Ստացա՛ւ.

—Համբերիր... Կարապետը, աղիս ասեմ, նրան համոզեց որ փող հետը տանել վտանգաւոր է, քիւրդերը կը խլէին և այլն, որ թող Խաչօն երկիր էրթաց ու Կարապետը հեռագրով նրան փող կը հասցնի—«փողը տիրոջ առջև դուրս կը գաջ»... հաւատաց Խաչօն ուրիշ ճար էլ չունէր թէ որ չը հաւատար: Հասաւ երկիր—«փողը տիրոջ առջև» չ'ելաւ: Նամակ գրեց, սրտաստխան չկայ: Ետ դարձաւ Քիֆլիդ եկաւ. Կարապետ վռնտեց իր խանութից. «Ես ես ձգում վրաս—ասաց—ի՛նչ փող, ի՛նչ բան, թնդթղ ուր է»... Յուսահատ Խաչօն այս դուռ—աչն՝ դուռ ընկաւ ու... այս մէկ կոշիկը էլ հալից ընկել է, զխտե՛ս...

—Յեսո՞յ, չեսո՞յ գոչեցի ես նեղացա՛հ—Խաչօն ի՛նչ եղաւ:

—Ինչ պիտի լինէր. մառախից-ցաւից մեռաւ: Տարանք թաղեցինք վերայի գերեզմանատուն: Որդին էլ երկիր երթալու ժամանակ սպանւեց: Տասը--կին ու տղայ—հողի ունեն. Աստուած նրանց ումուտին հասնի, ով զիտէ այժմ քանիսը քաղցածութիւնից մեռել են...

Վերջացաւ սրբելուց: Վճարեցի. ոչ ես խօսեցի և ոչ նա, այլ հեռացայ:

Երբ իջնում էի սանդուխտներից և հեռանում կայարանից, դեռ բաւական տեղ լսում էի Մանուկի տխուր ձայնը, որ գոչում էր.

—Ձիտի...

## ԵՐԱԶ ՕՐԵՐ

(Գիշերօթիկի մը յուշատետրէն)

Շ Ա Ն Թ Ի

Յունիս 8, Ղիլիջան

Արթնածիս պէս պատուհան վազեցի: Թէև արևը բաւական բարձր, սակայն սենեակս դեռ բոլորովին շուքի ու զովութեան մէջ էր: Տուներնիս լեռան լանջին է փակած, ուսկէ քանի մը ծերունի ծառեր իրենց սուտերներու ուռկանը վրանիս կը նետեն: Մեզի կից տուն չի կայ. կատարեալ կղզի մը, որը դրկող ծովը առատ դալարն է. իսկ մեզի ամենէն մօտիկ եղող բնակարանը ուրիշ պատիկ ամարանոց մը, մերինին պէս ձերմակ, մերինին պէս նոր ու մերինին պէս գետնաչարի: Ճիշտ իմ երազած վայրերէս մէկը, զիւզի ծայրը աւանձնացած, զառիվայրի կուրծքին, բնութեան ծոցը:

Իննը երկար ամիսներ զպրոցի չորս պատերուն մէջ ձգնելէն վերջը՝ ինչ ուրախութիւն է զգալ ժայռերու դրացիութիւնը պատըշգամբիդ դէմ, ձորի խորքէն գետակին երաժշտութիւնը պատուհանիդ տակ, ծառերու փսփսուկը սենեակիդ վրան:

Զգիտեմ՝ ինչպէս շնորհակալ լինեմ տիկնոջ բժիշկին, որ այս ամառ մերիններու ամարանոց զնալուն պատճառ է եղած: Թիֆլիսի ամառներէն արդէն կատարելապէս զգած էի, բաղդէս է:

Իսկ երէկ զիշերւան իմ Ղիլիջան հասնելս նկարեցու բան էր: Հազիւ վար ցատկեցի սուրճանդակի սալակէն, որ ինքզինքս պաշարւած գոտայ վեցեակ մը բազուկներով: Կենդանի պատկեր մը պատշգամին վրայ. հօրեղբայրս իր 60 տարիներու ծանրութեամբ

վիզս փաթթեալ կը խնդար. տիկինը կուլար ուրախութենէն, պարոն Մկրտիչը (տիկնոջ եղբայրը) իր ոսկրոտ ձեռքին մէջ դաստակս պինդ մը սեղմած՝ ոչ մէկ կերպ թողնելու արամազրութիւն չէր ցոյց տար. քիչ մը հեռուն Հուրբսին էր կեցած, որ չհամարձակելով մօտենալ՝ բերանը բաց կը ժպտէր՝ ցոյց տալով մէջընդմէջ ահուաներու զոյգ շարք մը. մինչ իմ նախորդ ամառուան մտերիմ շնիկս՝ աւելի համարձակ՝ հազուստներս կը համըտար անհանգիստ կերպով պոչը շարժելով:

Կեռ այսօր ալ մինչև կէս օր տնեցիք ինծմէ հազիւ կարօտնին առին: Հօրեղբայրս չէր թողնէր, որ քովէն հեռանաի: Ինծի կարդացնել տուաւ հօրմէս ու ընդհանրապէս Վանէն ընդունած բոլոր վերջին նամակներս: Չնայելով որ քառասուն տարիէն աւելի է Քրիֆլիս կը կենայ, հոն մեծցած է ու հոն ալ պատկած, բայց և այնպէս միշտ խոր կարօտով կը յիշէ Վանը, սովորաբար լմեր պրակտըս կ'անուանէ:

Ճաշէն վերջը գնացի գիւղ Միքայէլը գտնելու. բայց չար բաղդէս իմացայ, որ Նոր-Բայազիտ է դնացեր. մե'զք, ընկեր մը կ'ունենայի, մանաւանդ տեղացի ալ էր:

Վերադարձիս մեր տան մօտերը՝ արքունի մեծ ճանապարհին վրայ երկու կին նշմարեցի, որ թե թեի դէպի ինծի կուգային: Մէկը տարւոք, վայելչատես կին մըն էր, թեակիցը 17-ի մօտիկ աղջիկ մը: Անոնք ալ ինծի կը դիտէին. երբ իրարու մօտեցանք՝ աղջիկը սկսաւ շեշտակի աչքերուս մէջ նայել. ես կարմրեցայ ու հայեացքս փախուցի. անցնելու պէս հետաքրքրութիւն մը ունեցայ ետ նայելու, բայց ինքնասիրութեանս չի ձգեցի ու ճանբաս շարունակեցի:

Դէպքը ինքնըստինքեան ոչինչ, միայն ինծի սաստիկ զայրացուց, ինչ չիմար բնաւորութիւն է այս. ինչ կայ այսպէս կարմրելու, երբ աղջիկ մը աչքը դէմքիս կը նետէ: Տարօրինակ հակասութիւններ կան կազմիս մէջ. մէկ ամբըչկոտ եմ, տղայամիտ ու անհամարձակ, մէկ ալ՝ յանդուգն, հասուն ու անդուսպ. ոչ մէկ զգացումս միւսին չի բռներ:

## Յուլիս 9.

Աստուծոն զեռ շատ կանուխ էր, որ ելաց պատշգամբ Հազիւ ինձմէ քանի մը տասնեակ քայլ արդէն արքունի ճանապարհն է, որ ձորի վրայէն և գետն է, որ ձորի մէջէն ձեռք ձեռքի տւած կը վազեն դէպի Աղստեւի դաշտը:

Օղը մաքուր էր ու յըստակ՝ աղջկան մը առաջին համբոյրին պէս զով ու թարմ՝ քունէն նոր ելած ծովու առաջին ժպիտին պէս: Թոքերս կեանք կը ներշնչէին:

Պատշգամի երկու կողմէն դէպի վար հակած ծառերու խումբը հովի իւրաքանչիւր քմահաճոյքէն իրարու զիրկ կը նետուէին ու կը փսփսային երեւակայութիւն զրգռող փսփսուքով մը. վարը խտտերուն մէջ ծղրիտը սիրերգ մը կը ծլւլար. անդին գետն էր, որ մտածկոտ մարդու մը նման, անվերջ կը կրկնէր միւսնոյն երգին միւսնոյն կտորը: Սիրուն ամառային համանւագ մը:

Աւ ես զրավւած՝ անձնատուր էի բոլորովին բնութեան այդ ծիծաղկոտ երաժշտութեանը, երբ չանկարծ մօտէն բարձր ու զւարթ քրքիւ մը ինձի ցնցեց. բնութեան երգի մէկ կտորն էր այդ: Մեքենաբար այն կողմ՝ դարձայ, ու որքան մեծ եղաւ զարմանքս, երբ երեկւան աղջիկը ձանչցայ. միայն այն տարբերութեամբ, որ շատ պարզ հազւած էր ու, փոխանակ տարիքը առած կնոջ մը, հետը երիտասարդ սպասուհի մը ունէր:

Մնշուշո նշմարած էր ինձի. գոնէ ես այդպէս կարծեցի, թէ և աղջիկը առանց իմ կողմն նայելու՝ թռչկոտելով ու բարձր-բարձր ուսերէն շաղակրատելով՝ ձորէն վար աներևոյթ եղաւ իր ընկերուհիին հետ:

Ես մոլորուն հայեացքով կը հետևէի իրեն, մինչև աչքէս կորուսի. բայց զեռ երկար կը լսէի իր հնչուն ծիծաղը ու առոյգ ձայնը, մինչև որ հետզհետէ թուլնալով՝ վերջնականապէս հալեցաւ գետի կարկաչին մէջ: Ի՛նչ տարօրինակ աղջիկ. և ո՞վ է արդեօք:

Հռոթսին թէյ բերաւ: Կերպ մը նկարագրեցի այդ երկու աղջիկները ու հարցուցի, թէ կը ձանչնայ:

— Հասկցայ, մեր դրագիներն են. տես, այս տունը կը նստին. ըսաւ՝ իմ երէկւան նշմարած ախարանոցս մատնանիշ ընելով: Քոյր

ու եղբայր են. մայր մը ու պզտիկ քոյր մը ունին ընդամենը. երկու-երեք տարի է Քիֆլիս եկած են Ռուսաստանէն. մեր տիկինը ծանօթ է. աղէկ մարդիկ են, մենակ քիչ մը աղջիկը...

—Է՞, հարցուցի հետաքրքիր:

—Ուսումնական է:

—Ի՞նչ ընենք. ուսումնականը գէշ է, չէ՞ ես ալ ուսումնական եմ:

—Ձէ, դուն մանչ ես. աղջիկներուն շատ բացելը սազ չի գար: Թէյամանը առաւ ու հեռացաւ:

Սկսայ մտածել. ո՛չ թէ Հռոմբսիի կանանց կրթութեան աննպատ փիլիսոփայութիւնը, այլ պարզապէս իր տւած տեղեկութիւններուն վրայ. և քիչ քիչ ընկզմեցայ անըրջանքի մէջ:

Այդ աղջիկը երէկ ու այսօր երկու հանդիպումներուն ալ տարօրինակ ու զարմանալի տպաւորութիւն մը ըրաւ վրաս: Միւս կողմէն կրթւած է եղեր, գեղեցիկ է ու իմ միակ զբացուհիս այս առանձնութեան մէջ: Երազանքիս մէջ ինծի այնպէս կը թւի, թէ արդէն բուն կերպով կը սիրեմ այդ աղջիկը. և երեւակայութիւնս պահ մը շատ հեռուները կը թուչի օդային սիրոյ թևերուն վրայ...

Ձարմանալի տղայ եմ ես. աղջիկ մը, որ վրաս ազդելու չափ դիմպծային համաշփութիւն ունի, առաջին անգամ հանդիպելուն, երբ դեռ հետը բառ մը չեմ փոխանակած, երբ խորհրդաւոր քող մը կայ ձգւած իր բովանդակ էութեանը վրայ, և միայն քողի մէկ բարձրացուցած ծայրէն գեղեցիկ դէմք մը ինծի կը նայի՝ ես անմիջապէս կը չափշտակեմ. հոգիս շարժում մը կ'ունենայ, կ'ողբւորեմ ու կը մտածեմ, որ ան է, ան, որուն անհամբեր կը սպասէի և որ կրճքիս ծարաւը պիտի զովացնէ. ու կը թաղւեմ երեւակայութեան ու անուրջներու մէջ. պէտք մը, անհրաժեշտութիւն մըն է այս սրտիս համար: Սակայն կանցնի քանի մը օր, գուցէ կը մօտենամ աղջկանը. խորհրդաւոր քողը, եթէ բոլորովին չի բացուի, գէթ մասամբ կը պատռի, և ես պատուածքէն կը տեսնեմ, որ ան ալ միւսներուն նման նոյն հասարակ աղջիկն է. կը սիրասթափիմ անմիջապէս, առանց աղէկ հասկնալու, թէ ինչո՞ւ. նոյն իսկ այդ «հասարակ» բառը, շատ որոշ չեմ ըմբռնիր. միայն կ'ըզգամ, որ այս ալ չի կրցաւ սիրտս նւաճել:

Հնցիտ անձրևի սպասող մթնոլորտին մէջ հովերու քմայքէն

ամպեր կը դիզւին. փայլակ ու որոտ. յոյսն է, որ կը ժպտի. բայց ահա կը փչեն հովերը, ամպերը կը ցնդին, ու այն խաղաղ, միակերպ կապոյտն է կեանքիս երկինքին վրայ:

Յուլիս 11.

Հօրեղբայրս այսօր Թիֆլիս վերադարձաւ՝ գործերը ձգել չի կրնար: Տունը բոլորն ալ կտարած են. իսկ ես, ճշմարիտը խօսելով, հօրեղբօրս մեկնումէն այնքան ալ զժգոհ չեմ. թե երս չափ մըն ալ ազատութիւն ստացան. տան մէջ պ. Մկրտիչը ձայն չ'ունի, դալով տիկնոջ՝ ես անոր աչքին արդէն հասուն ու խելացի մարդ եմ, ոչ թէ քսան-քսանըմէկի մօտիկ դպրոցական մը:

Երկու օր է կը կարդամ Շիլլերի «Դօն-Վարլոսը». ինչ տիպ է, Աստուած իմ, այդ մարքիզ Պոզան, այդ անձնուէր հայրենասէրը, այդ խմորած մեծ մարդը. և անոր փաթթուած այդ իդէական, անփորձ երիտասարդը, սիրոյ ու կեանքի աւազին շփման տակ ոգևորւած այն ազնիւ Դօն-Վարլոսը: Ա՛, կը սիրեմ ես այդ մարդիկը՝ այդ երկու իդէալական տիպերը. և նոր չէ, որ ես անոնց հետ կը ծանօթանամ. անոնց ձայնը կարծես շատունց է ես լսած եմ:

Իրիկունը ուշ ատեն երկար կը շրջէի մեր տան դիմացը կանաչներուն վրայ: Մութ խիտ մութ գիշեր էր: Ծառերուն տակը բանդուած գաղջ ու բուբումնալից օդը չափրեցուց ինձի, մանաւանդ Դօն-Վարլոսի ազդեցութիւն ալ դեռ բոլորովին վրայէս անցած չէր:

Ուղեղս գործել սկսաւ. ապագայի ծրագիրներ՝ կախարդական շրջանակներու մէջ... Ծննդավայրս իմ արդէն, գործի, աշխատանքի վրայ, ոչ թէ հիմիկան պէս օդային անընթերու մէջ... կը խրեմ ու կը խրեմ ծրագիրներուս նրբութիւններուն, երկրորդական մանրամասնութիւններուն մէջ:

Ա՛, երկինք, ինչ սուրբ ըղձեր կան կրծքիս տակ, ինչ ոգևորութիւն կ'երագեմ ու ինչ անձնամոռ լեցուն կեանք: Բայց այդ տեսներու եմ արդեօք: Ա՛վ գիտէ. զուցէ իմ կեանքս ալ այս երագներէն ու անընթանքէն անդէն պիտի շ'անցնի. զուցէ այս բոլորը անփորձ ու եռուն տարիներու ցնորքներ են լոկ, որուն պիտի չաջորդէ սանձուած հասունութիւնը. և ես ալ պիտի դառնամ այն հարիւրաւոր-հազարաւոր միջակ-հասարակ էակներէն մէկը, որոնք

շուրջս կը վխտան, որոնք կ'ուսեն միայն ապրելու համար և կ'ապրին միայն ուսելու համար. և այս բոլորը, որ աշխարհը աչքիս գեղեցիկ կը ցուցնէ և որ կեանքիս խորհուրդ կու տայ, այս բոլորը, որ զգացումներուս մէջ ազնուութիւն կը թափէ և որ սրտիս իգէականի ծարաւը կու տայ, ահ, այս բոլորը գուցէ ցնդեն պիտի կեանքիս մատղաշ օրերուն հետ: Չէ որ ամենքն ալ ականջիս այդ երգը կը կրկնեն. գուցէ իրաւունք ունին. միթէ իմ անփորձութիւնս այդքան մարդոց փորձառութենէն աւելի վեր է: Եւ ինչո՞ւ կը պահանջեմ, որ ուրիշներէն բարձր պիտի լինեմ, իմ ո՞ր առաւելութեանո համար. ես ալ նոյն հասարակ մէկ նմուշը չեմ: Ո՛ւհ, Աստուծ իմ, ինչ սարսափ այս մտածումները. որքան դառնութիւն, որքան թոյն կայ այս խոհերուն տակ, որ ամբողջ հոգիս, բոլոր ոգևորութիւնս սպաննել կ'ըսպառնայ: Ո՛հ, չեմ կրնար հաւտար, անկարելի է. ո՛չ, ես չեմ կրնար ոչինչ մը լինիլ:

Յունիս 12.

Այս քանի մը օրւան մէջ շրջակայքը տեղ չի մնաց չափչփեցի: Մեր տան ետեւի լեռը՝ իր թզուկ անտառակով, վարը ձորը՝ իր գետակով, մեր պատշգամի դիմացին վազող արքունի խճուղին՝ իր վերստի սիւներովը՝ այս բոլորը արդէն իմ սեփական տունս է կարծես:

Առտու իրիկուն շատ աղէկ է. ցերեկներն է քիչ մը ձանձրալի. անեցիք կը քնանան, տունը կը լռէ, միւս կողմէն ալ տաքը կը ճնշէ: Բնթերցանութիւնս է միակ ընկերս ու սփոփիչս: Հոտս սնդուկ մը դիրք եմ բերած. ընելու շատ գործ:

Գեղեցիկ դրացուհիիս գրեթէ ամեն օր էլ կը հանդիպեմ, կամ առտունները կամ իրիկունը շրջագայութեանս միջոցին: Նոյնն է միշտ. զարմանալի բնաւորութիւն մը. բաց, զւարթ, անհոգ, եռուն. իսկը ազատ թռչուն մը, չգիտեմ հիանամ, թէ պախարակեմ:

Կ'ըզգամ, որ իր ուշադրութիւնը դրաւած եմ:

Անցեալ օր աղախնի գլխարկը յափշտակած կը վազէր՝ հեւալով, խնդալով, քշելով ու քովէս այնքան մօտիկ անցաւ. որ օղը-քոլոնի փափուկ հոտ մը գէմքս պարուրեց: Նախորդ իրիկունն ալ պզտիկ քրոջը ձեռքէն շրջանակը առած կը դարձնէր՝ զւարթ ու կարմրած

ետեհն վազելով. եթէ չըզգուշանայի շրջանակը ոտքերուս վրայէն պիտի անցնէր. աղջիկը չար ժպիտով մը անցողակի ճիւղարտոն մը ըսաւ ու սլացաւ: Երէկ իրիկուն ալ վարը՝ ձորը հանդիպեցայ իր եղբօրը հետ. երեսունի մօտիկ սիրուն երիտասարդ մը, արևստագէտի հովերով ու անգլիական այամօրութեանով: Աղջիկը ոռուսերէն օփերետի մը սիրուն մէկ կտորը կ'երգէր. ա՛յ, ինչպէս անուշ էկալինձի աչք սորոն գետակի ձաչն պահող երգակցութեան մէջէն:

Ընդհանրապէս շատ օղաչին, խորհրդաւոր ու հրապուրիչ տպաւորութիւն մը կ'ընէ վրաս: Տեսակ մը հետաքրքրութիւն առաջացած է մէջս. երբ դուրս կելնեմ, միշտ իրեն հանդիպելու տարտամ յոյս մը ունիմ. թէև երբ իրեն կը հանդիպիմ անյարմարութիւն մը, ճնշում մը կ'ըզգամ. և իր խոր, յանդուգն հայեացքէն խուսափելու համար՝ բանով մը զբաղել կը կեղծեմ:

Յունիս 13.

Ո՛ւհ, ապուշ եմ ես, կատարեալ ապուշ...

Իրիկան դէմ տիկնոջ հետ պտոյտի էինք ելած. գնացինք մինչև գիւղ: Վերադաձնուս՝ հերոսուհիս տանը առջևէն անցած տեսանք, որ ծառերուն տակ սեղանի մը քով նստած էին մայր ու աղջիկ կը կարէին:

Հարկ եղաւ մօտենանք:

Տիկինը մեզի ծանօթացուց:

— Ամուսնիս եղբօր որդին՝ Երևանդ Վէեան:

Եւ ինձի դառնալով՝

— Տիկին նաթալիա Զ...ովա և օրիորդ Վարդուհի Զ...ովա:

— Այո՛. կարծեմ, մէկ-երկու անգամ ձանապարհին իրար հանդիպելու պատահութիւնը ունեցանք. ըսաւ տիկին նաթալիան ծամծամած հայերէնով մը ու խառնափրնթոր բառերով, որոնցմէ ես ինքս զխուս մէջը նախադասութիւններ կը շինէի, քան թէ ուղղակի իր ըսածը կը հասկընայի:

— Թէև ինքը մեզի տեսնելու պէտք չ'ըզգաց, աւելցուց օրիորդը նոյն խեղճուկ հայերէնովն ու հեգնական ժպիտով մը:

— Ինչպէս, հարցուցի ես շըւարած այսպիսի անսպասելի յարձակման մը առջև:

—Երևի՛ չէ նըշմարած. հա՛, Երւանդ, ինձի դարձաւ տիկինը.  
Ես թեթեւ մը այլայլեցայ:

—Տեսէ՛ք, տիկին, կարմրեցաւ. ըսել է յանցաւոր է. բացա-  
կանչեց օրիորդը մատովը ինձի ցոյց տալով ու բարձրաձայն քըր-  
քըշալով:

Ես աւելի կարմրեցայ. ու կարմրելու վրայ սկսայ զայրանալ:  
Բարեբաղդաբար տիկինները խօսքի բռնեցան ու ես մոռցեցայ:  
Անոնք վրացերէն կը խօսէին: Ես օրիորդը այդ միջոցին առաւ իր  
ձեռագործը ու սկսաւ արագ աշխատել. բայց յանկարծ նետեց ծուն-  
կերուն վրայ ու նորէն ինձի գիմեց ժպտալով:

—Սակայն ինչո՞ւ չէք խօսիր.

—Տիկինները կը լսեմ. ըսի պատասխան մը տըւած լինելու  
համար:

—Ուրեմն վրացերէն գիտէք, հարցուց:

Ալ ետ չէր կրնար դառնար. ստիպեցայ ստելու:

—Շատ քիչ, գրեթէ ոչինչ:

Բայց իսկոյն ստելուս զղջացի ու տեսակ մը ձնշում ու զայ-  
րոյթ զգացի ինքզինքիս դէմ: Միևնոյն ժամանակ ուղեղս տակնու-  
վրայ կ'ընէի խօսելու նիւթ մը ձարելու համար: Ուղեցի օդի մա-  
սին խօսիմ՝ ծիծաղելի թւեցաւ, ամարանոցի մասին՝ շատ սովո-  
րական էր. յանկարծ մէկէնիմէկ հարցուցի.

—Արդեօք կրնամ հետաքրքրուեր, օրիորդ, որ զպրօցը յաճա-  
խած էք:

Աղջիկը զսպւած ժպիտով մը երես նայեցաւ ու պատասխանեց.

—Թիֆլիսի աղջկանց գիմնագիտնը.

—Աւարտած էք, կարծեմ:

—Ոչ. ի՞նչպէս կրսեն հայերէն... ներեցէք, հայերէն աղէկ  
չգիտեմ. այս ձեռք վերջընթեր պատարանն էի, աւարտեց ուսերէն:

—Ա՛, ճիշտ ինձի պէս:

—Իրմէ, բաղդակից ենք ուրեմն:

Նորէն ձեռագործը վերցուց ծունկերէն:

Տիկինները շարունակ կը խօսէին: Ես հեռու կը նայէի ծառե-  
րու մէջէն՝ անչարմար գիրքով մը աթոռիս եզերքին նստած: Նող-  
կալի դրութեան մը մէջ էի. աղջկան ներկայութիւնը, որ իր քննող

աչքերը յաճախ վրաս կը դամէր, իր բաց բնաւորութիւնը, որ իմ  
ամբշկոտութիւնս աւելի կը շեշտէր, իր խրոխտ ու ժպտուն ձայնը,  
որ կարծես վրաս գերազանցութիւն մը ունէր՝ վրաս շատ գէշ  
կ'ազդէր, հպարտութիւնս կը վերաւորէր, ինծի կը պզտիկցնէր:

Այդ միջոցին էր, որ օրիորդը կրկին ինծի զմեց և այս ան-  
գամ բոլորովին ուսերէն:

—Պարոն, շատ կը խորհիք. երևի աւելի խորհիլ կը սիրէք,  
քան խօսիլ... փիլիսոփայօրէն. աւելցուց անմիջապէս:

—Երևի փիլիսոփաներէն բնաւ չէք ախորժիր. ըսի ես ակա-  
մայ ժպտալով՝ իր հեզնութենէն վշտացած լինելս ծածկելու համար:

—Ո՛չ, ինչո՞ւ, ընդհակառակը, միայն բան մը կայ, որ քիչ մը  
շատ կը մտածեն ու միշտ թթւած են: Սակայն անշուշտ խօսքս ձեր  
մասին չէ. ես կատակ ըրի:

Բաց անոր այս արդարացուիլը ինծի համոզեց, որ վշտանալս  
նկատած էր և այս զաղափարը այնպէս զարկաւ սրտիս, որ ամօթէն  
ու կատաղութենէս լացս պիտի դար:

—Ո՛չ... ինչո՞ւ... ի՞նչ փոյթ... կըմկմացին շրթունքներս, չգիտ-  
նալով ինչ պատասխանեն:

Ա՛, յիմար, յիմար վիճակի մէջ էի:

Երբ տիկինը հրաժեշտի համար ոտքի ելաւ՝ կարծես բանտէն  
կ'ազատէի:

Օրիորդի ձեռքը թոթւեցի:

—Անտարակոյս ասկէ վերջը երբ իրարու հանդիպենք՝ այլ ևս  
գաւազաննուդ կոթը զննելու պէտքը պիտի չ'ըզգաք. ըսաւ օրիորդը  
պինդ մը ձեռքս սեղմելով:

Աղջկան մը առջև ծաղրելի լինելէս խայթւած, ինքնասիրու-  
թիւնս ոչնչացած, զայրոյթէս ինքզինքս ուտելով՝ նետեցայ սե-  
նեակս ու դուռը կողպեցի:

Երկար ատեն մահճակալիս վրայ փրուած կը մտածէի...

Ա՛, ես ապուշ եմ, իրաւ ապուշ:

Յունիս 14.

Արթնցայ թէ չէ ուղեղս նոյն խնդրով զբաղել սկսաւ: Սա-  
կայն թարմ ապաւորութեան ճնշիչ ազդեցութենէն կազդուրւած,

լոյսի հետ ամեն բան աղէկ կողմէն դատուելու արամաղիր, քունէն թարմացած խոհերս նոր ուղղութիւն մը աւին: Սկսած էր երէկ-ւան հակազդեցութիւնը. ես էր, որ կը բողբէր. իրաւ, ինչո՞ւ երէկ գիշեր այնքան վրդովւած էի. աղջկան հետ շնորքով չխօսելու համար. սակայն աղջկան մը հետ նոր ծանօթացած՝ ինչ խօսէի իր հետ. իսկ խնթ-խելօք բերնէս դուրս տալ ես չեմ կրնար. և այդ միթէ ինծի պատիւ չէ և վերջապէս որքան ինքը իրաւունք ունէր ինծմէ խօսիլ պահանջելու, այնքան ալ ես իրաւունք ունէի. դեռ քիչ մըն ալ աւելի, քանի որ իր հիւրն էի: Ուրեմն յանցանքըս պահանջոտ չլինելու է. չխածնելուս համար է, որ ինծի կը խածնեն. լու, այդ դիւրին է. ես ալ կրնամ խածներ և վախնամ աւելի գէշ: Աղջիկը համարձակ է, ցաւցնելու աստիճան պինդ ձեռքս կը սեղմէ, աղէկ, եսալ կրնամ լացնելու աստիճան սեղմել. ան առանց քաշելու բերնին եկածը կ'ըսէ, ես ինչո՞ւ քաշեմ և միթէ իմ քովս փոտած սրախօսութիւններ քիչ կայ. ան ինծի առաջին անգամէն փրկիսովայ կ'անուանէ ծաղրածութեամբ. արդ՝ ես ինչո՞ւ իրեն պիտի չհասկցնեմ, թէ ինքը աշխարհիկ սովորական աղջիկ մըն է, որուն հետ լուրջ խօսակցութեան մը բռնուել չես կրնար. անչ քեզի պարզութիւն. սակայն այդ կուպիտ պիտի լինի, որո՞ւ հոգ, քանի որ այդ կը պահանջեն ինծմէ. միշտ գերադասելի է կուպիտ լինիլ, քան ծիծաղելի: Բայց տաքնալը աւելորդ է. պաղարիւն պէտք է լինիլ. ու պիտի յարձակիլ չպաշարուելու համար: Իր զէնքերը իր գէմ:

Այս որոշումներով զինուած՝ իրիկան գուրս ելայ շրջելու. հաստատ համոզւած լինելով, որ աղջկան հանդիպելու էի ու չխաբւեցայ: Եղբօրը թեւը մտած կը պտտէր:

Երբ մօտեցանք՝ շիտակ դիմեցի օրիորդին և առանց սաստիկ կարմրելուս ուշք դարձնելու՝ պինդ սեղմեցի իր փափուկ ձեռքը, թէև ոչ լացնելու աստիճան:

Խեղճը զարմացած երեսս նայեցաւ, խնդաց ու խփոյն մեղի իրարու ներկայացուց:

Եղբայրը՝ պարոն Կարապետ 2...ով՝ նկարիչ էր:

—Նկարիչ, ա՛, որքան ուրանի եմ, բացականչեցի ես:

Այս բացականչութիւնս երեւի պարոնին շատ հաճելի եղաւ.

որովհետև բացարձակ համակրական շեշտով մը պատասխանեց.

—Երևի նկարչութիւնը դուք ալ շատ կը սիրէք:

Ա՛, անտարակուս, գեղարւեստներու սիրահարն եմ, թէև դրժ-բազդաբար բոլորէն ալ բոբիկ: Միայն ըսէք ինչդրեմ, աւելի տեսարանով կ'ըզբաղւիք, թէ...

—Գիտէք, պարոն, ես իբրև արհեստաւոր նկարիչ չեմ. արդէն այդ արհեստաւորներէն չեմ ալ ախորժիր, որովհետև անոնք ստակի համար կ'աշխատեն, իսկ ստակը բանաստեղծութիւնը կ'ըսպաննէ: Ես պարզ նկարչութեան սիրող մըն եմ, որ միայն արւեստի սիրուն համար կը նկարեմ: Եւ այդ պատճառով է, որ ինքքզինք գովելու համար չեմ ըներ, նկարներս անհամեմատ առաւելութիւն մը ունեն:

—Սակայն ես ուզեցի իմանամ...

—Պետերբուրգ ձմեռան տեսարան մը նկարած եմ, որ ամբողջ մայրաքաղաքի զարմանքը շարժեց:

—Ուրեմն աւելի տեսարաններով կը զբաղւիք:

—Այո. Կովկասէն լեռնանկար մը ունիմ, որ կնեազ Կ. իր հիւրասենեակի մէջն է կախած. այն կնեազը, որ իմ մտերիմ բարեկամն է և միշտ սալոններու հերոսը: Բայց երբեմն ծովանկարներով ալ կը պարապիմ. Կասպից ծովէն էթիւտ մը ունէի, որ նոյն իսկ Այվազովսկին մաստ խածաւ: Ամբողջ երկու օր իրարու հետ էինք, միևնոյն սենեակը, որ երբ Ռոստով էի: Գիտէք Այվազովսկին քանի մը խոշոր թերութիւններ ունի. ես արդէն իրեն ալ ըսի, և շատ ուրախ եղաւ. սակայն այդ նշմարող ոչ ոք չի կայ. անուն է՝ անգամ որ էլնէ, այլ ևս կ'երթայ:

—Եւ ո՞ր ուսած էք արդեօք,

—Եղած եմ Պետերբուրգ, Մասկա, Ադեսսա, քանի մը ամիս ալ նկարչութեան ծննդավայրը՝ Իտալիա: Այո, Ադեսսա եղած միջոցիս գնչուհիի մը գլուխը նկարեցի...

—Ուրեմն կենդանագրութեամբ ալ կըզբաղւիք:

—Ա՛հ, և առանց գովելու կըսեմ, որ այդ ճիւղին մէջ շատ վարժ վրձին մը ունիմ. ինչ կըսէի. հն, Ադեսսա գնչուհիի մը գլուխը նկարեցի և այնպէս հրաշալի դուրս եկաւ, որ քնեակինեա Մ.-ը կատարելապէս պատկերին սիրահարւեցաւ. քնեակինեա Մ.-ը՝ անշուշտ լսած էք՝ Մասկաւի ամենանըշանաւոր տիկիններէն է.

ճիշդ երեք անգամ իր փռուաւոր ամարանոցին մէջ tête-à-tête իր հիւրը լինելու պատիւը ունեցած եմ: Ինչ նշանաւոր կին է և ինչպէս զեղեցիկ: Մեղք որ Մասիւա երկար չի կրցայ մնալ:

— Ի սրտէ կը շնորհաւորեմ ձեր յաջողութիւնները. ըսի ես ծածուկ հեղնութեամբ մը: Եւ օրիորդին դառնալով աւելցուցի:

— Սակայն, օրիորդ, չէք խօսիր. երևի, այսօր ալ դուք փիլիսոփայութեան միտում մը ունիք:

— Ո՛չ, պատասխանեց ժպտալով՝ անակընկալ հարցէս ցնցած: Եղբօրս քաջագործութիւնները կը լսեմ, շարունակեց:

— Ինչպէս երէկ ես տիկիններու խօսակցութիւնը:

Ձգացի, որ համեմատութիւնս շատ համով փախաւ և աղջկան վարանուէն օգտւելով՝ շարունակեցի:

— Իսկ ինձի այնպէս թւեցաւ, թէ դուք ալ, ինչպէս ես երէկ, խօսելու նիւթ մը ձարելու կը դժարանայք. իսկ նկարչութենէն երևի արդէն կշտացած էք:

Ուրեմն երէկ նիւթ չի ձարելնո՞ւղ համար չէիք խօսէր:

— Կը կարծէի՝ այդ դուշակած պիտի լինէիք. երևակայեցէք իմ դրութիւնս. շատ սովորական չնչին բանի մը վրայ խօսել առաջին անգամ տեսակցած անձի մը հետ՝ պարզ է, որ տխմար բան է. իսկ եթէ քիչ մը լուրջ խնդիր յարուցանէի՝ դուք պիտի չախորժէիք:

— Այդ ձեզի ո՞վ ըսաւ:

— Որովհետև ամեն քիչ թէ շատ լուրջ բան ձեզի համար փիլիսոփայութիւն է, ուրկէ կ'ահաբեկիք:

— Շատ աննախանձելի ու անիրաւ գաղափար մը կազմած էք վրաս. պատասխանեց խնդալով ու հովանոցին ժապաւէնին հետ խաղալով:

— Շիտակը փիլիսոփայութենէն ես ալ չեմ ախորժիր, մէջ նետուեցաւ պարոն Կարապետը: Բարեկամ, ատոնք բոլորն ալ իրականը թողած օղային տեսութիւններու ետէն վազող մարդիկ են, որոնց մէջ զեղեցիկի զգացումը չի կայ: Հաւատացէք, իմ ուրախկարս անոնց ամբողջ փիլիսոփայութեան հետ չեմ փոխիր:

— Ձեր ո՞ր ուրանկարը. հարցրի ես վերին աստիճանի միամիտ դէմքով մը:

Զարմանքով տեսայ, որ ծաղրս չըմբռնեց կամ գուցէ չըմբռնել ձևացուց ու պատասխանեց.

— Որ և է, որը որ կ'ուզէք:

Բայց քոյրը հասկեցաւ ու թեթեւ մը ժպտեցաւ:

— Իսկ դ՞ուք, օրինորդ, նկարչութեան մասին նոյն զաղափարը ունիք. հարցուցի ես խօսակցութեան այսպէս անչարմար տեղ կարուելէն վախնալով:

Եւ սկսաւ խօսքը նորէն նկարչութեան շուրջը դառնալ: Ճշմարիտը չգիտեմ, պարոն Կարապետի ծիծաղելիութենէն, թէ իմ առաջին յաջողութենէս, թէ վերջապէս այսօրւան մէկ մասնաւոր տրամադրութիւնէս՝ չափազանց զւարճաբան էի դարձած. կը սրախօսէի ու կը խօսէի ոգևորած:

Բաւական երկար միասին շրջագայելէ վերջը՝ երբ արդէն սկսած էր մթնել՝ իրարմէ բաժնուեցանք:

— Ե՛, այսուհետեւ մեր տան դռները ձեզի համար միշտ բաց է. ըսաւ պարոն Կարապետը բացարձակապէս զո՛հ հետս ծանօթանալէն:

— Մնորհակալ եմ. կ'աշխատեմ՝ օգուեմ արտօնութիւնէս:

Ու պինդ-պինդ սեղմեցի երկուքի ձեռքն ալ:

Ամբողջ իրիկունը դեռ նոյն ուրախ տրամադրութեան տակն էի. տարօրինակ բան՝ ռուսերէն անմիտ հրդ մը կը ծամ ծամէի:

Երբ մտայ սենեակս ու նստեցայ մահճակալիս վրայ՝ ջիշեցի նախորդ զիշերը ու ժպտեցայ. որքան տարբերութիւն: Եւ ինքս ալ զարմացայ այս աստիճան զւարթ ու զւարճախօս լինելուս վրայ. բայց զո՛հ էի: Աղջիկը հիմա գիտէ, որ երբ ուզեմ կրնամ իր թեթեւ գերը խաղար և եթէ չեմ խաղար՝ այդ իմ բարի կամքէս է կախուած: Ահ, այսօր ինձմէ զո՛հ եմ. միանգամ ընդմիշտ վարկս ապահովուած է այդ աղջկան առջև:

Միայն կը զարմանամ. ինչո՞ւ այսչափ հոգ աղջիկան մը դէմ ինքզինքս բարձրացնելու. արդեօք սեռական հպարտութիւնն է այս:

Յունիս 16.

Երէկ ու այսօր Տուրգենևի «Նախընթաց իրիկունն» էր ձեռքս: Նոր վերջացուցի ու կը մտածեմ: Ե՛րբ մենք ալ այդ տեսակ երի-

տասարդութիւն մը պիտի ունենանք արդեօք. Ինսարովներ, նպատակով մը ոգևորած էակներ, որոնք համալսարաններէ նոր ուժերով դառնան իրենց հայրենիքը, ոչ թէ հանգիստ օրեր ու ոսկի դիզելու, այլ ամեն խոչնդոտ արհամարելով ժողովրդի մէջ մտնելու, հանրային նպատակի մը աջակցելու, եթէ ոչ նոյն իսկ զոհ երթալու համար. ուր է սկզբունքի համար ամեն բան զոհող անհատ մը ուր է: Իսկ Էլէնան. Ստուած իմ, Էլէնան. պիտի սնենանք այդ տեսակ աղջիկ մը, որ թողնէ կեանքի բոլոր դիւրութիւններն ու բարօրութիւնը երթալու համար իր սիրահարին ու իր սիրահարի գաղափարներուն ետեւէն մինչև օտարութեան մէջ, մինչև կես-վայրենի լեռներուն մէջ, մինչև վառողի ծուխին մէջ...

Կարդացած գրքիս համեմատ ալ բանաստեղծական տեղ մը քաղած եմ կարգալու համար: Մեր տունէն ոչ այնքան հեռու՝ ձորին մէջ, գետի եզերքին, հսկայ ուռիի բունն է թիկնաթուս, նոյն ուռիի ոստերուն թաւուտը հովանոցս: Գետը կը գլորի առջևէս ժայռերու մէջէն խլացուցիչ ժխոր մը հանելով. և այդ սրտիս կորով աւող գետի կատաղի ծեծկուռքը միանալով ընթերցանութեան թողած զգացումներուն՝ աւելի ևս կը դուգուեն ու կը սրեն երևակայութիւնս:

Միջագէտիմն ալ, որ ոչ նուազ ցնցեց հոգիս: Խորը թաղած էի անըջանքիս մէջ, երբ գլորւող քարերու թփուտուք մը գլուխս կամաց մը ետ դարձուց: Զորի լանջէն երկու հոգի կ'իջնէին՝ աղայ ու աղջիկ մը՝ քով քովի, երկուքն ալ երիտասարդ, երկուքն ալ սիրուն. աղու կերպէն համալսարանական մը կարէլի էր գուշակել: Անոնց խօսւածքը ես չ'էի հասկնար. նախ ցած կը խօսէին, երկրորդ կարծեմ՝ վրացերէն. գետի աղմուկն ալ արգելք էր: Սակայն ինչ հարկ բառեր լսելու. արդէն զիտէի ինչ խօսելնին, գրեթէ կէտ առ կէտ: Պահ մը առաջ Էլէնան ու Ինսարով ինչ կը խօսէին գրքիս մէջ. ա, այդ խօսակցութիւնը երիտասարդ դպրոցականի մը ու սիրուն աղջկա մը մէջ. նոյն, նոյն միշտ, անփոփօխ բնալուծութեան Փօրմիւլներուն պէս: Անոնք խօսելով ու հանդարտ եկան անցան առջևէս անտարբեր նայւածք մը նետելով ինծի ու գրքիս. շրջագետսի շրջիւն մը մօտէս ստեցաւ. և հազիւ տասը քայլ անդին աղջիկը իր ժանեակներու մէջ կորած դաստակը նետեց թոյլ մը աղուն մէջ-

քը: Աչքերուս դէմ, գրէ թէ իրարու փաթթած, խիքերու խշրտուքի մէջէն, ծառերու շրշուկի տակէն, գետի հեգնող քրքիջի քովէն կ'երթան յամրաքայլ իրենք ալ շրշուկով, իրենք ալ քըրքըջալով... Ու սկսայ նախանձել. տարօրինակ, չար նախանձ մը, ինչո՞ւ այդ տղան պիտի սիրէր. մինչ ես սրտիս բոլոր պատրաստականութեան հակառակ, հողիիս բովանդակ զեղման հակառակ, սիրելու անհուն պահանջիս հակառակ՝ միշտ նոյն անզոյգ անապատի արմաւինին էի. չ'էի կրնար գտներ մէկը, չ'էի հանդիպեր մէկուն, որու սրտին մէջ թափէի սիրոս ճնշող յուզումներուս յորդումը, որու նայածքին մէջ կարդայի անըրջած ապագայիս ու յոյսերուս իրականացման պատգամը, որու շրթունքներուն համբոյրը կեանքիս համտար, էութեանս բոյր, որ իդէական մտապատկերներուս գեղեցիկ ներկայացուցիչը լինէր, որ... է:

Նետեցի զիրքս, ցատկեցի ոտքի, թափ տւի ձեռքս ու բռունցքս սեղմած սկսայ արագ-արագ երթելեկի ծառերուն տակ:

Յունիսի 19.

Ամէն իրիկուն իրարու հետ ենք. ես ու Զ.-երը՝ քոյր ու եղբայր:

Աղւոր, շատ աղւոր իրիկուններ:

Արևի ձորի մէկ շրթունքէն կ'անհետի, մինչ միւսէն լուսնի կիսադէմը դուրս կը սողայ՝ տմոյն լոյս մը թափելով անասառակին ու արքունի խճուղիին վրայ:

Լիաթոք ներշնչելով գիշերային անուշ թարմութիւնը՝ կը խօսինք, թոյլ ու չ'կապկպած խօսակցութիւն մը, որ արդէն սկսաւ ինծի ձանձրացնել: Մանաւանդ որ բաբելոնեան լեզու մը կը գործածենք. ոչ անոնք շնորհքով հայերէն խօսիլ կրնան, ոչ ես շնորհքով ուսներէն:

Պ. Կարապետը կը պատմէ յաճախ իր ձամբորդութիւններէն, եւրօպական կեանքէն. սովորաբար անեկրօսներ:

Ես ընդհանրապէս աւելի կրաւորական գեր ունիմ՝ խօսակցութեան մէջ. երբեմն միայն ջերմ կերպով մէջ կը նետուեմ. և այդ պարագային անպատճառ վէճ կ'յառաջանայ. յիմար, անմիտ վէճ մը, որ ամէն անգամ զղջալ կուտայ պատճառ լինելուս:

Օրիորդը կը լսէ, կը խնդայ, կը խօսի. ամէն դէպք, ամէն իր անօր համար նիւթ է, միշտ պատրաստ խօսք մը կայ բերնին: Վայրկիաններ ունի միայն, երբ ջանկարծ լուսկեաց կը դառնայ, դէմքին՝ զայրոյթի ժպիտ մը կը փախչի, և աչքերը անիմաստ ակնարկով մը մեր ու մեզի շրջապատող առարկաներու վրայէն կը սահին. երևի այս ալ աղջկային է:

Փէկե միշտ իր տարօրինակ խօսւածքը, իր անհանգիստ, անսովոր շարժումները վրաս տպաւորութիւն մը կընեն, անորոշ, տարտամ տպաւորութիւն մը, բայց արդէն կ'զգամ, որ պատուած է, խորհրդաւոր քողը: Սիրուն կորութիւններով, հրապուրիչ փափկութեամբ շարժուն կերտածմըն է այդ աղջիկը. ուր սիրտն ու միտքը հալած են խել մը աշխարհիկ շաղփազիներ, մանրիկ յուզումներ ու չնչին հոգեր ձուլելու համար:

Ես հետզհետէ կըմբռնեմ, որ իրմէն ալ, եղբօրմէն ալ զգալի կերպով հոգեպէս բարձր եմ. և այդ գիտակցութիւնը վարմունքիս ազատութիւն մը կուտայ. կարծես իմ շրջանակիս մէջ կը մտնիմ. աղջկան ճնշիչ ազդեցութիւնը անցած է արդէն բոլորովին. ես աւելի ու աւելի վստահութիւն կ'ստանեմ, ձեռքս անփութութիւն մը կը հագնին, և գիշերօթիկի ձախլիկութիւնը կը թափի վրայէս: Հիմա ինծի համար հաւասարապէս ծիծաղելի է օրիորդի վարմունքէն անցն աստիճան վիրաւորելս, այլ և անօր դէմ պատրաստած շէնք-շնորհք պատերազմական յատակադիծս:

Այսօր ամբողջ օրը Տուրկենեակի թարգմանութեան էի տըլած ինքզինքս. գործս չաջող կ'երթայ. միայն ինծի սոսկալի անհանդատութիւն կը պատճառէ պ. Մկրտիչի անվերջ թըթըթըքըք. պարտէզը աթոռ կը շինէ: Արդէն անոր թըթըթըքը երբէք չի վերջանար. մէկ՝ քովի սենեակն է, մէկ՝ պարտէզը, մէկ՝ խօհանոցը. միշտ իր դժոխային մրճովը զինւած: Բայց ի՛նչ մեղադրեմ խեղճը. մարդ կարող է մինչև իրիկուն պարապ նստի. քառասուն տարու ամուրի մը պարապ մինչև իրիկուն. դեռ ան շատ աղէկ վարժված է. ակնթարթ մը ինծի իր տեղը դնելու կը սոսկամ: Ասուած իմ, ի՛նչ կեանքի դադարկութիւն, ի՛նչ աննպատակ գոյութիւն:

Գիշերը անքունութենէ շարչարեւէ վերջը՝ առտուն կանուխ ելիր ու սաղմոս քաղէ. ետքը քանի մը ումպ թէյ խմէ շարունակ

գիշերւան մոծակներէն զանգատելով, ապա թափառէ մէկ սենեակէն միւսը դուրս ելած ջամ մը, խուխտած սունի մը փնդուելով, մինչև որ զան ու ճաշի հրաւիրեն, կուշտ ու կուռ ուտելէդ վերջը՝ զնա սենեակդ ու քնացիր և արթնցիր իրիկունը ուշ ատեն ինքդ ալ չգիտնալով ինչ ընելու համար: Ա՛հ, և այս անվերջ, անդադար, առանց փոփոխութեան, այս տարւընէ զալ տարւանը կրնաս երևականել: Անւերջ, ճիշտ պարզ պարբերական կոտորակի մը պէս, որ օր մըն ալ կը հասնի, երբնոյն թիւը գրելէ ձանձրացած՝ ալ բազմակէտ մը կը դնես կեանքի մեծ բազմակէտը... ու վերջացաւ:

Եւ ասոր կըսեն ապրել. ինչ ոչնչութիւն կեանք առանց գործելու, առանց մաքառման, առանց բորբոքման, առանց կրքերու, առանց անհատնում ծրագիրներու. է, մահը շատ աւելի խորհրդաւոր ու բանաստեղծական չէ:

Յունիս 24.

Երկու օր է Վարդուհին չեմ տեսած: Եւեղծը խարբուխ է եղած ու դուրս չելնէր:

Այս իրիկուն պ. կարապետին հանդիպեցայ, խօսակցութիւնը չէր կապուէր: Քիչ մը պտտելէ վերջը առաջարկեց միասին թէչ խմենք ու սկսաւ յանդիմանել, թէ ինչու մինչև հիմա զեռ տուներին չէի գացած: Ես ալ նոյնը իրեն ըսի. քրոջ հիւանդութիւնը իրեն զէնք ըրաւ, ու ես զինաթափ գտնւեցայ:

Երբ պատշգամին սրահը մտանք՝ մայր ու աղջիկ վեր ցատկեցին թէչի սեղանէն:

—Օ՛, այս ինչ հրաշք, ըսաւ օրիորդը ժպտալով:

—Հրամեցէք, հրամեցէք. կը կրկնէր մայրը:

Նստեցանք: Տիկինը ընտանեկան անհրաժեշտ հարցերու շրջանը լմընցուց: Թեթև ու ոստոստուն խօսակցութիւն մը սկսաւ:

Օրիորդը ուինչ չ՛ուներ. քիչ մը աւելի զերցած երևցաւ աչքիս: Ինքնատեղի դէմը նստած բաժակները կը մտքրէր: Եր գիրգ ու մինչև արմուկը հայեացքիս դէմ անպաշտպան փղոսկրէ դաստակները անդադար կը շարժւէին ինքնատեղին ու բաժակներուն շուրջը: Ես քանի մը զողունի ակնարկներ սպրդեցուցի այդ քնքոյշ ու ողորկ թւերուն վրայէն ու պիտի խառովանեմ՝ չափազանց սիրուն գոտայ:

Դուրսը սիրուն լուսին գիշեր մը:

Այն աստիճան սիրուն, որ չբիմացանք ու թէյը վերջացնելուս պէս դուրս նետուեցանք պատշգամ: Մայրը աղջիկը արգելել ուզեց հարբուխէն վախնալով. սակայն օրիորդը բարակ շալ մը գլխուն նետելով մեզի ընկերացաւ:

Աթոռներուն մէջ ընկղմած՝ երկինք կը դիտէինք: Ի՛նչ խաղաղ գիշեր. տերև մը անգամ չէր զողբղար. ընկնող ասող մը անգամ չի կար, միայն գետն էր, որ ձորէն իր հին երգը կը կրկնէր անտարբեր. լոյս էր՝ ցերեկեան պէս. միայն լուսնի արծաթէ լոյսը, որ ամեն բան աւելի արձանի կը նմանցնէր:

—Տեսէք, տեսէք այդ ամպերը. ի՛նչ սիրուն են. բացականչեց պ. Կարապետը ոգևորւած. ճերմակի ու մութ-կապոյտի ի՛նչ հիանալի խառնուրդ. հասցա այն բարձր-անագի գոյնը ձուլւած գորշին հետ...

Ու կը շարունակէր իր նկարչական դիտողութիւնները գոյներու բաղադրութիւններուն, ծառերու շուքին, շուքերու թանձրութեան, կիսասուերներու նրբութեան վրայ: Կը խօսէր միայն իրեն համար: Մենք լուռ նստած էինք ու հեռուն կը դիտէինք:

Ան վերջացուց. երկար լռութիւն մը յաջորդեց, որ սկսաւ ճնշիչ դռնակ. խօսք կը փնտռէի:

—Բայց ի՛նչ հմայիչ գիշեր է, պ. Երևանդ, ըսաւ յանկարծ օրիորդը ուռսերէն:

—Այո՛, հմայիչ գիշեր է, կրկնեցի ես հայերէն ու դիտմամբ շեշտեցի:

Օրիորդը զարմացած երեսս նայեցաւ:

—Ի՛նչ, օրիորդ. ինչո՞ւ հայերէն չէք խօսիր, քանի որ ամենքրս ալ հայ ենք:

—Որովհետև աղէկ չգիտեմ. վարժուած չեմ. և վերջապէս ի՛նչ նշանակութիւն ունի. հայերէն կամ օտար լեզուով խօսելէն ի՛նչ կեղնէ:

—Բայց ձեր մայրենի լեզուն:

—Մայրենի լեզուն. մայրս ինձի հետ միշտ ուռսերէն է խօսած. եթէ չէք հաւտար՝ կանչե՛՛ իրեն հարցուցէք. պատասխանեց աղջիկը բարձրաձայն ծիծաղելով, ու կէս երգող ձայնով մը «մամա» պուռաց:

Ես վայրկեան մը վարանեցայ: Իմ տեսական հայեացքիս խիստ գործնական պատասխան մը դէմ առեր էր:

—Սիրելիս, այդ ճաշակի խնդիր է, մէջ նետուեցաւ պ. Կարապետը, որ լեզուն որ անուշ, գեղեցիկ ու գունագեղ է՝ այն ալ կը գործածեն. աղոր վրայ ինչ խօսել արժէ:

—Աւրեմն հայերէնը տգեղ է՝ ըսել կ'ուզէք:

—Շիտակը խօսելով, շատ գեղեցիկ չեմ գտներ:

—Սակայն, բարեկամ, կարծեմ ձեր նկարչական նրբաճաշակութիւնը հոս ձեզի օգնելու պիտի չի յաջողի: Նախ՝ որ այս կամ այն լեզուով խօսելը բնաւ ճաշակէ կախած խնդիր չէ. ձեր քոյրը գուցէ աւելի ճիշտ պատասխանը տուաւ: Երկրորդ ալ՝ պահ մը ձեր ըսածը ընդունելով՝ սուրկէ հասկցաք հայերէնի տգեղ լինելը, քանի որ ոչ մեր լեզուն, ոչ ալ մեր գրականութիւնը կը ճանչնաք:

—Է՛, ինչ կայ որ՝ ինչ ճանչնամ. ըսէք տեսնեմ որն է հայերէն բանաստեղծութիւնը, գրականութիւնը, գեղարւեստը. ինչ կայ:

—Հետաքրքիրի համար շատ բան. պատասխանեցի ես՝ զգալով որ սուտ կը խօսեմ: Եւ իսկոյն կարծես մեղքս քաւելու համար աւելցուցի.

—Բայց եթէ նոյն իսկ բան մը չ'ունենք՝ յանցանքը ոչ թէ ձեր «տգեղ» անւանած լեզւինն է, այլ ձերը, պարոն Կարապետ:

—Ե՛ս:

—Այո, ինչո՞ւ գարմացաք, յանցանքը ձերն է. ձերն է ու իմը. մեր երիտասարդութեանը. մեր մէջ դեռ չի կայ ձեռնբերեցութիւն, նախանձ ու ինքնուրոյնութիւն ըսած բաները: Մենք փոխանակ մեր կեանքը ուսումնասիրելու, մեր ուղեղը աշխատցնելու, մեր բնական ունանկութիւններուն հոսանք տալու՝ կը բաւականանք սւրիշներու ստեղծածովը սքանչանալով: Այո. յանցանքը մերն է, որ դեռ չ'ունենք այնքան ազնիւ հպարտութիւն, այնքան նուրբ հպարտաճանաչութիւն մեր սեփական ուժերը գործադրելու, մեր յատուկ ստեղծագործութիւնները ունենալու, մեր կեանքի խճողումը ու մեր մտքի գալարումները վերլուծելու, մեր սրտի յորդումը ու մեր երեւակայութիւն սլածքները արտայայտելու: Երբ տեղը գայ ինքզինքիս ու մեր կեանքը ծաղրել զիտենք. բայց ատկէ անդէն. ոչ ինչ:

Լ. Երցի ու դառնացած սկսայ լուսինը դիտել:

Երբ աչքերս վար առի օրիորդի ակնարկին հանդիպեցայ, որ շալի թեթև ծալքերու մէջէն դէմքիս էր յառած:

— Շիտակը աղէկ չ'ըմբռնեցի՝ ինչ ըսել կ'ուզէք. ըսաւ պարոն Կարապետը վայրկեան մը լուսթեմէ վերջ: Բայց այդ նոյն է. ինդիրը ինծի չի վերաբերիր. ես նկարիչ մարդ. շիտակը ոչ ժամանակ ունիմ, ոչ ալ տրամադրութիւն այդ տեսակ բաներու վրայ խորհելու: Միայն այսքանը ինծի պարզ է, որ մենք հայերս հաստ, կոշտ ժողովուրդ ենք. ճաշակ ըսած բանը մեր մէջը չի կայ. նուրբի, գեղեցկի ընդունակութիւնը չունենք. իսկ երևակայութիւն. բնաւ:

— Բարեկամ, ասոնք պարապ խօսքեր են, քանի որ ոչ մեր ժողովուրդը կը ճանչնաք, ոչ մեր կեանքը: Եւ ճշմարիտ կը զարմանամ. ինչպէս առանց խղճահարելու անիրաւաբար կը պատարակէք ամբողջ ժողովրդի մը ընդունակութիւնները. ժողովուրդի մը՝ որ ձեր մայրն է, և որու երեսն ալ չէք տեսած:

— Ինչո՞ւ պիտի խղճահարիմ, սիրելիս. մարդ պէտք է ազատ մտածէ. պէտք է լայն լինի մեր մտածման հորիզոնը. նեղ, անձուկ, միջնադարեան գաղափարներու ժամանակը անցած է. այս դարը քննադատութեան դար է. Ալթէներու, Չոլաներու ոգին է մեր դարը դարձնողը:

Ես ապուշ-ապուշ երեսը կը նայէի:

— Ազատ, լայն մտածողութիւն, համարձակ կարծիք. կրկնեց ինքնաբաւական ու լուեց:

Չպատասխանեցի. ինչ ըսէի:

Ներս մտաւ աիկինը ու խօսակցութիւնը բոլորովին փոխեց: Ես անհանգիստ էի:

Քիչ մը վերջը ծանր քայլերով տուն կը դառնայի լուսնի լոյսի մէջ թաթխած խոտերու վրայէն: Աէճը վրաս ազդած էր ու շատ գէշ տպաւորութիւն թողուց: Անգամ մը ուրախ եղայ իրենց անփութութիւնը երեսնուն զարկած լինելու համար. մէկ ալ մեղադրեցի ինքզինքս. միթէ վարմունքս յիմարութիւն չէր. ինչ օգուտ. բան մը, որ անոնք ինծի հասկնալ չեն կրնար. մենք տարբեր կեանքով ենք մեծցեր: Չուր տեղը վրաս խնդացնելու առիթը տւի անոնց: Հիմա, ո՞վ գիտէ, ինչ նեղ գաղափարներու տէր կ'անւանեն ինծի, ինչ սեղմ հասկացողութեան մարդ:

Ե՛հ, մտածելը չ՛արժեր:

Յունիս 25.

Իրիկան անուշ օդէն օգտւելով՝ նոր էի նստեր կարգալու, երբ Հոռոբսին եկաւ յայտնեց, թէ օրիորդ Վարդուհին եկեր ինձի կը կանչէ:

Յնցւեցայ ու զարմացայ. ի՞նչ կ'ուզէր և միւսնոյն ատեն ախաւսայ ուրախութիւն մը թափանցեց մէջս:

Օրիորդը իր պզտիկ քրոջը հետ վարը կեցած՝ կը խօսէր մեր տիկնոջ հետ, որ պատշգամէն անդադար կը կրկնէր, որ զոնէ քանի մը վայրկեան վեր ելնէ:

Աղջիկը հազիւ բարևս առաւ, որ ըսաւ:

—Արդեօք ժաման մը չափ կրճք ինձի ընկերանայ. պտտոտ էր ընենք մեծ ճանապարհի վրայ. ձեզի հետ խօսելիք ունիմ:

—Ամենայն սիրով, այս վայրկեանիս. ըսի ես ու սենեակս նետուեցայ:

«Ինձի ըսելիք ունի» կը փսփսայի ինքնիրենս՝ զլիարկս դնելով ու ձեռնափայտս փնտռելով:

Իջայ, օրիորդի ձեռքը թոթւեցի. տիկնոջ ցտեսութիւն ըսինք. ու ճամբայ ելանք:

Արքունի ուղին էր, որու վրայէն կը քալէինք. երկու կողմը ձորի կողերն էին թզուկ ծառերու կրկնօցովը իրենց ուսերու մերկութիւնը փաթթած. վարն ալ միշտ նոյն չարածձի գետակը:

Մենք լուռ իրար քովէ կը քալէինք. տարօրինակ չուզում մը կար մէջս. սաստիկ հետաքրքիր էի իր լսելիքին. իր վարմունքը արտասովոր, յանդուգն ու անսպասելի էր: Ես միշտ լուռ իր խօսելուն կ'ըստատէի: Իսկ աղջիկը յաճախ երեսս կը նայէր ու կը ժրպտէր, սակայն առանց ոչինչ ըսելու:

Անիստ հասանք մինչև այն պզտիկ կամրջակը, որ խճուղին մեր ափէն ձորի միւս ափը կ'անցնէ:

Անցանք կամրջակը. գետն ալ ձախէն աջ անցաւ:

—Կատեն, շրջանակդ չդարձնես, ըսաւ քրոջը ուսին զարնելով: Երբ Կատեն շրջանակի ետևէն վազելով հարթ ճանապարհին վրայ բաւական հեռացաւ՝ օրիորդը առանց այլևայլութեան դարձաւ ինձի:

— Պարոն Վէեան, կ'ուզէի հայերէն սորվեմ. ինծի ի՞նչ խորհուրդ կուտայ:

Քարի պէս անշարժ կանգ առի:

Աղջիկը պահ մը ժպտալով ինծի նայեցաւ ու աւելցուց.

— Ինչո՞ւ կեցայ:

— Բայց...

— Ի՞նչ բայց. առանց բայցի. ինչրեմ հարցէս խոյս չի տայ:

— Ո՛չ. միայն որոշ չեմ հասկնար՝ ինչ ըսել կ'ուզէք:

— Զարմանք, պատասխանեց միշտ ժպտալով. կ'ուզեմ հայերէն սորվեմ. ի՞նչ միջոցներ կրնաք ինծի ցոյց տար:

— Ի՞նչ ըսեմ ձեզի. պէտք է կարգաք ու կարծեմ գէթ սկիզբները օգնականի ալ պէտք ունիք:

— Այդ բոլորը ես ինքս ալ գիտեմ. ուրի՞շ:

— Ուրի՞շ...

Աղջիկը կանգ առաւ ու հովանոցին կոթովը գետինը եռանկիւնի մը գծելով՝ աւելցուց.

— Եթէ ձեզմէ ինչրեմ, որ դուք լինիք այդ օգնականը՝ կը համաձայնիք:

— Ե՞ս, օրիորդ:

— Այո՛, դո՛ւք. պատասխանեցէք, կրկնեց առանց գլուխը բարձրացնելու:

Ես շւարած էի, ուրախ էի, չուզած էի:

— Թրիորդ, ինծի մեծ պատիւ կ'ընէք, միայն մի մոռնաք, որ...

— Ո՛չ, ո՛չ. առանց ձեականութիւններու, կամ այո՛, կամ ո՛չ. ըսաւ արագ՝ աչքերը աչքերուս զամելով:

— Պատրաստ եմ, ու ամենայն սիրով:

— Շնորհակալ եմ. աւէք ձեռքերնիդ:

Ու կրկին պինդ մը սեղմեց ձեռքս, ինչպէս մեր առաջին հանգիստման ատեն:

Ես ալ փոխադարձաբար:

Սկսանք քալել վերստին:

— Արդեօք կարելի՞ է հարցնել, օրիորդ, որ ինչպէս այս յանկարծական որոշման հասանք:

—Այս որոշումը, այնպէս, սիրտս այսպէս ուզեց. բայց ձեզի նիլ ըսաւ, թէ այդ յանկարծական վճիռ է:

—Կը կարծեմ. քանի որ...

—Պարոն, գիտէք, որ այս ամբողջ գիշերը ես այդ խնդրումն էի զբաղւած. խնդրեմ, այնպէս շուտով ուրիշները մի միջադրէք:

Ժպիտը շրթունքներէն սրբւած էր. ու տեսակմը ջղային չուզումով շարունակեց:

—Եւ եթէ այդ յանկարծական որոշում լինէր՝ միթէ կը կարծէք, որ դայի ձեզմէ խնդրէի:

—Ներեցէք, օրիորդ. ըսի ես կամաց՝ զարմանքէս ապշած:

Այս առաջին անգամն էր, որ այդ աստիճան լրջութիւն կը տեսնէի իր ծիծաղկոտ դէմքին վրայ. իր ձայնը երբէք այդ աստիճան կամք արտայայտած չ'ունէր. ընդհանրապէս այսօր բողբոլկին ուրիշ տպաւորութիւն մը կ'ընէր վրաս Վարդուհին. աւելի հասունցած էր կարծես. աւելի ջղուտ ու դիւրագրգիռ:

Իր տպաւորութիւնը մէկէն սկսաւ աչքիս առջևը բարձրանալ:

Մենք լսած էինք. ու նորէն քով քովի կ'երթայինք:

Աղջիկը անհանգիստ էր ու կը մըտածէր:

Ես աչքիս պոռովը կը դիտէի ճերմակ ու նուրբ կիսադէմը, իր փղոսկրէ վզին մէկ մասին հետ, կէս-բաց շրթունքներէն արագ-արագ կը շնչեր. երկայն, բացխրփիկ թերթերունքները շուտ-շուտ կ'ընդհատէին զլուխն ու երեսը փաթթող կապոյտ քողէն. մազի փունջ մը խուսափելով կեռիկներէն եկեր ճակտին անկիւնը խղունջ մը գալարած էր. հապա իր անցող. քալելէն ներքին զբաղումէն ու օդի ազդեցութիւնէն անուշ կարմրութիւն մը առած էր, որ մարմնի ձիւնաթոյր Ֆօնի վրայէն, այն ալ կապոյտ քողին տակ, այն ալ իրիկնամուտի նարնջագոյն ճառագայթներու մէջ թաթխւած՝ դոյներու աչք կաշկանդող խազ մը կ'անաջացնէր: Վարդուհին այդ վայրկեանին անբացատրելի գեղեցիկ էր. ես այդ զգացի ու սրտի ճմլում մը ունեցայ:

—Պարոն շարունակեց յանկարծ. ներեցէք, ես քիչ մը շուտիկ եմ. ըսէք խնդրեմ՝ ինչ գիրք գտնեմ ու կրթ սկսենք. կը տեսնէք որքան շուտ սկսայ ձեզի ձանձրացնել. քանի դեռ ժամանակ է եկէք դուք խօսքերնիդ ես առէք. վերջը ինձի չի մեղադրէք:

Ու աչկի տակովը ժպտուն ինձի կը նայէր:

Շիտակը սիրուն վարպետութիւն է. պատասխանեցի ես նմանակէս ժպտալով. ինձի քաշել թակարդը ձգել, վերջնալ փախչելու իրաւունք տալ: Գալով միւս երկու հարցերուն՝ գրքի մասին հոգ մի ընէք. ես քովս քանի մը կտոր ունիմ՝ բան մը կ'նտրեմ. իսկ սկսելը վաղընէ շուտը չիկայ:

—Շնորհակալութիւնը պզտիկ բան մը լինելուն չեմ ըսեր:

—Կամ շատ խոշոր լինելուն:

—Կատեան, պուռաց քրոջը:

Պզտիկը հասաւ մեզի. ու մենք ետ դարձանք:

Այս բոլոր անցած-դարցածը դեռ աղեկ մը ինձի չեմ կրնար բացաղրեր. ինչպէս արագ ու անակնկալ եղաւ. ու կ'երևակայեր, որ այդ աղջկան այս չափ մտնելու էի, այն ալ այսպէս շուտ. և ինչ տարբերութիւն երեկւան ու այսօրւան ձգած տպաւորութեան մէջ. և երբ կ'զգամ, որ այդ տարբերութեան պատճառը իմ երեկւան ճառս էր: Մինակ այն գաղափարը, թէ իմ խօսքերս այդ սիրուն գլուխը ամբողջ դիշեր մը չարչրեր է՝ ինձի հաճոյք կ'ազդէ, երևի՛ ուժիս գիտակցութեան հաճոյքն է այդ. անշուշտ, ուրիշ ինչ կրնայ լիներ: Բայց գարմանք. ինչպէս ինձի հետ զբաղելու գաղափարը չկացած է. իրեն շատ հաճելի եղած լինելու եմ: Ինչպէս ալ սիրուն է անպիտանը:

(Շարունակելի)

## ՎԵՆԵՏԿԵԱՆԻ ՀԱՅԻԱ (ԱՍԵՂՆԱԳՈՐԾ) <sup>1)</sup>

(Պատմաժողովրդագրական և լեզվագիտական)

Թարգմ. ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ

Հարուստ Վենետիկը, Ադրիատիկի աչք պերճ թագուհին, կամաց-կամաց քուն էր մոնոուն Արքան որ աստղերը երկնքում աւելի էին պաշտառ փայլում, նոյնքան և ճրագները պալատներում ու տներում հեռոճեռ հանգչում էին և հանդիսս մռայլ գիշերը ծածկում էր ողջ քաղաքը թանձր մառախուղով:

Վենետիկից քիչ հեռու, ոչ արհեստական ջրանցքների ափին, այլ բաց ծովի մօտ, որպէս մի մութ բիծ, ձգւած էր մի ձրկնորսական գիւղ: Այստեղ, անսահման ջրային տարածութեան ափին, չնայած խորը գիշերին դարձեալ կեանք էր նկատուում: Ափին սիւռւած են ուռկաններ չորանալու համար. բազմաթիւ մակոյկներ, որպէս թէ փայփայլած ծովից, հանդիսս օրօրւում են խարիսխների կամ հասա պարանների վրա: Ձկնորսների մութ գծագրութիւններն են հէնց նկատուում—կամ նայելու, թէ արդեօք ձուկ է ընկել դրած գործիքներում և կամ ուղղելու ու ժողովելու ուռկանները: Հէնց այն է մակոյկներն են օրօրւում, և մարդիկ, օգտւելով ձկների խաղաղ քնից, անգթաբար որսում են նրանց կառթերով: Ձկնորսները լաւ գիտեն, որ հարկաւոր է օգտւել ծովի խաղաղութիւնից, որ նա անյուսալի է և խաբուսիկ. փորձած ալեւորները իզուր չեն օրօրւում իրենց գլուխները և փոթորիկ գուշակում:

<sup>1)</sup> Ներկայ դարում լրանում է Վենետիկան հաշիպի գիւտի 400-ամեակը:

Դեռ արևելքում հազիւ էր նկատուում վարդապոյն շերտը, երբ ամբողջ գիւղն աղմուկի ու շփոթի մէջ էր: Կանանց ամբողջ դասը դուրս թափւեցաւ խրճիթներից և ամեն տեղ նկատելի են մնաս բարեւի շտապողական տեսարաններ, լսուում են հառաչանքներ, լաց ու համբոյրներ: Այսօր երիտասարդութիւնը գնում է որսի, հարուստ աւարի. պատրաստուում է մի մեծ գործի ձեռնարկելու— հայրենիքից հեռու, կապոյտ, անսահման ծովի մէջ, իրեն կեանքը վտանգի ենթարկելով, բուստ պէտք է ձեռք բերի: Շատերը կը վերադառնան արդեօք և երբ: Այս հարցն է ծագում իւրաքանչիւրի մէջ և դուրս կանչում խոր հառաչանք:

Բոլորն էլ ակամայ կերպով իրենց ուշադրութիւնը կենդրոնացնում են միմեանց գրկած Զովանիի և Բէատրիչէի վրա: Նոքա վաղուց է, որ սիրում են միմեանց և առաջին անգամը՝ բաժանուում միմեանցից: Աղջիկը լալով և իւր փեսացուին համբուրելով, նորա պարանոցովն է փաթաթում իւր գործած նուրբ ցանցը բուստեր որսալու համար:

Զգացած հարևանները, կանգնած սիրահար զոյգի մօտ, մտիթարում են հարսնացուին, բոլորն էլ շատ են գովում նրան գործելում ցոյց տւած իւր յաջողակութեան համար:

Այդ միջոցին արեգակն արդէն ծովի ջեռւեից ցոյց էր տալիս իւր վառ սկաւառակի մի մասը. ուշանալու ժամանակ չէ. պէտք է շտապել: Զինորսները տեղաւորւեցին իրենց մակոյկներում. արձակւած և խարխիսները ժողոված, նոքա դանդաղ կերպով հեռանում են ամից. բոլորն էլ շարժուում են ճանապարհ ընկնելու— ժամանակ է: Զովանին մի անգամ ևս համբուրում է Բէատրիչէին, ճարպիկ կերպով թռչում է մակոյկի մէջ և նրա տւած ընծան սեխմելով իւր կրծքին, հեռանում է:

Շուտով բոլոր ուղեկիցները վերադարձան իրենց տները և իրենց սովորական պարսպմունքն սկսեցին: Բէատրիչէն դեռ երկար կանգնած էր ամիին և նրան թւում էր թէ դեռ ինքը տեսնում է Զովանիին, որ քնքշաբար շարժում է դէպի ինքը այն ցանցը, որն այնչափ դժւարութեամբ և սիրով գործել է ինքը նրա համար...

Յաճախ և երկար նստում է Բէատրիչէն ծովի ափին և միշտ նայում է դէպի այն կողմը, որտեղից պէտք է վերադառնար Ջովանին իւր մօտ: Շատ ժամանակ էր անցել այն օրից, երբ ինքը բաժանւեցաւ նրանից: Ո՛րքան շատ ցանցեր էր գործել և սրպիսի կատարելութեան հասաւ այդ արհեստի մէջ: Ոչ ոք չուէր նորա նման—սարդի ոտայնի պէս նուրբ և միւկնոյն ժամանակ խիտ ու ամուր—ցանցեր:

Նստում է յաճախ իւր գործին և երգում: Երբ որ ծովը խաղաղ է, գեղեցկուհին իւր սիրելիին ողջոյն ու սէր է ուղարկում, մեղմ, քնքոյշ ձայները լսում են կամացուկ և ծովը լսում է, բայց խսկապէս լսում է նոցա. հազիւ հազ լսող ծփանքները համբուրւում են ափերի հետ: Եւ Բէատրիչէին թւում են զոքա ինչ որ համբոյրներ, որոնք իրեն է ուղարկում հեռւից իւր սիրելին: Բայց ահա բարձրանում է մի խիտ փոթորիկ, լսում են հառաչանքներ, ուռնոցներ.— և աղջիկը զողզողում է այդ աղմուկից և նրա երգը կամաց-կամաց բարձրանում է, նա կամենում է լռեցնել հպարտ ծովին և իւր զիլ ձայնով համարձակութիւն ներշնչել այն մարդուն, որին այդքան անհրաժեշտ է նա փոթորկի միջոցին...

Առաջինը Բէատրիչէն նկատեց վերադարձող մակոյկները... Ամբողջ գիւղը կրկին ափը ժողովեցաւ: Ի՛նչ ուրախութեամբ տրոփում էին սրտերը, երբ կարելի եղաւ որոշել, թէ յիրաւի մակոյկները ուղևորեցին դէպի իրենց ափը: Բայց և ինչպիսի յուզումն տիրեց բոլորին, երբ տեսան թէ թւով որքան քիչ ձկնորսներ էին վերադառնում: Բէատրիչէն լարւած կերպով նայում էր և սարսափելով վախում թոյլ տալ իրեն մտածելու անգամ այն, թէ նրանց մէջ չկայ իւր փեսացուն: Նա գիտէր, որ եթէ Ջովանին լինէր մակոյկում, անպատճառ հեռւից իւր ողջոյնը կուղարկէր ցանցի մի շարժումով: Որքան աւելի որոշ են երևում մակոյկներում նստածները, նոյնքան աւելի է գունաթափւում աղջիկը: Այլ ևս կասկած չկայ... Ձկնորսները բոլորն էլ ափ իջան, լսեցին ուրախ ձայներ, սկսեցին գրկախառնութիւններ ու համբոյրներ, իսկ Բէատրիչէի կրծքից դուրս էին թռչում լաց ու յուսահատական աղաղակներ: Մի ձկնորս շտապեց մօտենալ անբաղդ աղջկան: Մնացեալները լռեցին և խմբեցին նորա շուրջը:

—Բէատրիչէ,—ասաց նա և սկսեց ինչ որ բան փնտրել իւր գրապաններում,—Բէատրիչէ, ահա քեզ Զովանիից,—և նա տւեց Բէատրիչէին խնամքով փաթաթած մի բուստ:

Ազջիկը լուռ կերպով նայում էր ձկնորսին, վախենալով լսել սարսափելի լուրը:

—Զովանին կենդանի է,—շարունակեց ձկնորսը,—միայն թէ աւելի է հեռացել, գնաց բուստեր որսալու ուղղահայեաց ժայռերի մէջ, և յանձնարարեց քեզ տալու ահա այս հազւագիւտ իւրը, որ ընկել էր քո ցանցի մէջ:

Եւ ահագին բուստը նուրբ և գալարուն շառաւիղներով աղջկայ ձեռքին էր: Նա զգուշութեամբ համբուրեց բուստը, սեղմեց այն կրծքին և հիացմունքով տարաւ իւր հետ. նա մարդկանցից ուզում էր հեռու փախչել և իւր փեսացուի սիրոյ անխօս նշանի հետ մնալ միայնակ:

Կրկին ընթանում էր կեանքն առաջւայ նման. Բէատրիչէն դարձեալ գործի է նստում ծովի ափին ամբողջ օրերով. հանգստի ժամերին նա լարւած նայում է իրեն ուղարկած ընծային. ինչ հմտութեամբ նա ուսումնասիրում է նորա նկարները:

Մի քանի ամիսներ էլ անցան, երկրորդ խումբն էլ վերադարձաւ, բայց Զովանին նրա մէջ չէ: Նորա ընկեր-ձկնորսը միայն տւեց նրա կողմից Բէատրիչէին նոյնպիսի մեծ ու հազւագիւտ բուստ:

Թշուառ աղջիկն աւելի տխուր, աւելի մտածող դարձաւ. համարեա բոլորովին դադարեց երգելուց, իսկ ընկերուհիները միշտ նրան տեսնում էին կուացած նուրբ ցանցի վրա, և այդ ժամանակ նորա ծնկների վրա ընկած էին լինում իւր բուստերը:

—Գեղեցկուհի, այդ ինչ ես շինում,—հարցնում էին նրան Զովանիի ընկերները:

—Յանց եմ նախշում իմ սիրելի փեսացուի համար,—մեղմաբար ասում էր նա:

—Բիչ կը հանգստանայիր, Բէատրիչէ,—խորհուրդ էին տալիս նրան կարեկցող ձկնորսուհիները:

—Ժամանակ չկայ. ցանկանում եմ նորա զալստեանը ամբողջ

ցանցը բուստերով նախշած ունենալ. թող նա տեսնի, որ ես ոչ մի վայրկեան չեմ կորցրել առանց նորա, —իմ սիրելիի,—վրա մտածելու:

Հարևանները տխրութեամբ օրօրում էին գլուխները և վերջապէս զաղարում էին հարց ու փորձ անելուց. բալորն էլ վարժեցին տեսնելու աղջկայ մշտալուռ դէմքը, որ ուշադրութեամբ նայում էր իւր ծնկների վրա ընկած բուստերին: Վարժեցին տեսնել, որ նրա ասեղը արագ է գործում և երկար թելերը անչայտանում են հրաշալի պտտկերների տակ: Երբեմնակի յաջողում էր նրան յաջող կերպով դուրս բերել բուստի կամակոր մի գալար. այն ժամանակ նա շնորհալի կերպով ժպտում էր և բաղդաւոր ու գոհ դէմքով հրճւում, բաց անելով իւր հանդէպ նախշած նուրբ ցանցը:

—Երևի վշտից տարւել է (рѣхнулся), տխրութեամբ ասում էին ոմանք:

—Ափսոս խեղճ և թշառ որբին, —կրկնում էին միւսները:

—Ի՛նչ սիրուն ու ճարպիկ աղջիկ է: Զովանիին բարի կնիկ կը լինէր...

Բէատրիչէն շարունակում էր գործել. շուտով շուրջկար կազմեցաւ ցանցի շուրջը, նորա շնորհալի ասեղով բուստեր էին գործած զարմանալի նմանողութեամբ:

Տօն էր. հարուստ Վենետիկի ուրախ երիտասարդութիւնը գոյնզգոյն մակոյկներով մօտեցաւ ձկնորսական զիւղին: Հազնւած մետաքս ու թաւիչ և միմեանց գերազանցելու մտքով սրճնւած իրենց հազուստի գեղեցկութեամբ ու հարստութեամբ, նորեկները նստատեցին հանգստանալու շքեղ գորգերի վրա: Գիւղի հետաքրքիր բնակիչները այնտեղ էին ժողովւել, իսկ Բէատրիչէն ըստ սովորականին իւր գործին էր նստած: Այդ օր նրան սովորականից դուրս յաջողել էին կորնթարթ հանգուցները, որոնք զարմանալի նմանողութեամբ յիշեցնում էին բուստերի վրա եղած բարձրութիւնները: Մեծապատիւ հիւրերը նկատեցին նրան, հետաքրքրութեամբ մօտեցան և զարմացան: Բայց պատճառն ի՛նչ էր: Աղջկայ մօլթ բրդեայ շրջազգեստի վրա փռւած էր նուրբ ցանցը, իսկ նորա վրա կորըն-

Թարթ կերպով զուրս էր ընկած Թելով շարած բուստերի փառահեղ պսակը:

—Ի՞նչ, ես շինում... զարմացմամբ հարցնում էին նրանք աղջկան:

—Ցանց եմ նախշում իմ սիրելի Չովանիի համար,—պարզութեամբ պատասխանեց նա:

—Տուր տեսնենք քո հիանալի գործը:

Եւ աղջիկը զոհ նրանով, որ խրախոյս գտաւ իւր գործի համար, պարզեց նրանց նաշխած ցանցը: Պճնասէրները անընդհատաբար Կնում էին այն ցանցը իրենց Թաւշեայ հագուստների վրա, որով և զարմացնում էին այնտեղ ժողոված ձկնորսներին:

—Ծախիր մեզ քո ձեռագործը,—լսեցաւ ամեն կողմից:

—Ծախել Չովանիի ցանցը: Երբէք,—վճռողաբար յայտնեց Բէատրիչէն:

—Ահա քեզ ոսկի!—ասում էին նրան նորեկները:

Աղջիկը վախեցած վեր առաւ ցանցը և, ամուր սեղմելով կրծքին, կրկնեց.

—Երբէք, երբէք!

Այրպիսով հիւրերը դատարկաձեռն վերադարձան: Նրանց դնալուց յետոյ ձկնորսները շրջապատեցին աղջկան: Այժմ նա նրանց այլ ևս ցնորած չէր երևում և նրանք հտաքրքրութեամբ նայում էին նրա ձեռագործին: Միևնոյն ժամանակ Բէատրիչէի շուրջն էին ժողովւել և ձկնորսուհիները և ուշադրութեամբ հետևում էին նրա ասեղին: Աչ միայն շուրջկարը, այլ և միջին մասը բուստերով զարդարեցաւ. գիւղի բնակիչները գնահատեցին նրա գործի գեղեցկութիւնը: Իսկ քաղաքից սկսեցին գալ հետաքրքիրներ և շատ ոսկիներ առաջարկել նրա հրաշալի ցանցի փոխարէն:

Նա նախկին ձեով պատասխանում էր.—Այս իմ սիրելի Չովանիի ցանցն է:

Անցնում էին տարիները—ծանր ու ձիգ տարիներ Բէատրիչէի համար, բայց փեսացուն երբէք չվերադարձաւ: Վերջին խումբը վաղուց վերադարձել էր, իսկ Չովանիի մասին և ոչ մի լուր:

Բոլորն էլ նրան կորած էին համարում, միայն Բէատրիչէն էր, որ անդադար զանազան ձևակերպութիւններով նախշում էր նրա ցանցը և սպասում նրա վերադարձին:

Հարեանները տխրութեամբ նկատում էին, որ վիշտը կը սպանի թշառ աղջկան. նա այլ ևս ոչ ոք չունի խրճիթ վերադառնալու. ցուրտ գիշերները ստիպում էին նրան թուլացած ընկնել աւազի վրա դէպի ծոփն ուղղած իւր տենդային հայեացքով:

—Իմ ձեռագործը վերջացած է,—հազիւ լսելի կերպով ասում էր նա,—այժմ շուտ, շատ շուտ կը տեսնեմ ես իմ Ջովանիի հետ:

Յետոյ նա ոչ ոք էր գործ դնում կանգնելու և միշտ պնդում էր:

—Դուք ասում էք, թէ ես նրան չեմ գտնիլ. բայց ես տեսնում եմ—հեռուում ժայռերի մէջ կանգնած է նրա մակոյցիլը, նա դէմ է առել քարափին, իսկ ևս այս րոպէին կ'ազատեմ նրան: Լսում էք—նա կանչում է ինձ:

Սրտացաւ հարեանները հոգում էին հիւանդ որբին և նրա մօտ գիշերներ էին անցնում:

Բայց ահա մի օր լուսաբացին Բէատրիչէն վերկացաւ և սկսեց կանոնաւորել իւր երկայն ծամերը և ուրախ ասում էր ամենքին, ցոյց տալով նոր բացուող արշալոյսը:

—Տեսնում էք, տեսնում էք! Ջովանին այնտեղ է: Նա ուրախ է և դարթ, ինձ ցանցով կանչում է. ահա նա լողում է դէպի ինձ. քափին նրանից ինձ շնջում է. «Բէատրիչէն»:

Բոլորը լսում էին նրան լուռ կերպով և սրբում արտասուքները:

Նա ոչ ոքի այլ ևս չէր տեսնում. կարճ և ընդհատաբար շնչում էր.

—Ջովանի, իմ սիրելի!—շնջում էր նա—դու Բէատրիչէից գոհ ես. տես,—և նա աշխատում էր պարզել ցանցը, որն արդէն չափազանց ծանր էր նրա արդէն փայտացած ձեռքերի համար:

Գոքա Բէատրիչէի վերջին խօսքերն էին...

Ծովը առաջուց նահան անմխիթար կերպով մնչում էր, իսկ արեգակը պայծառ կերպով լուսաւորում: Բազդի անհաստատութեան զօհը, ծածկած իւր գործած հրաշալի ցանցով, անշունչ ձգւած էր ծովի ափին:

Աղջկայ մահից յետոյ նրա գործը մնաց որպէս ժառանգութիւն

իւր հաչրենի գիւղի և շատ հեռուողներ գտաւ: Լաւ էին վարձատրուում ձկնորսուհիների աշխատութիւնները: Հաշեաները բուստերից՝ թանգ էին գնահատուում: Հարուստ տներ կանգնեցին խրճիթների փոխարէն, և այլ ևս անհրաժեշտութիւն չկար ձկնորսներին իրենց կեանքի գնով բուստեր ձեռք բերելու անհաստատ ծովում: Վենետիկեան հաշիան սկսեց ոսկու ծանրութեամբ գնահատուել: Այն օրից անցել է ուղիղ չորս դար. հաշիան տարածուել է ամբողջ Եւրոպայում: Մանր, անտանելի աշխատութիւն. հաշիացի վրա աչքեր են կուրանում և կարիքի ու վշտի արտասուքներ են թափուում այն ձեւի վրա, որը ձեւակերպում էր մի օր իր սիրով այնքան զօրեղ ձկնորսուհին...

# ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՅԱՌՈՋԱԲԱՆՈՎ Ա. Մ. ՎՐՈՅՐԻ

(Շարունակութիւն 1)

Թիւ 35

30 օգոստ. 1889 թ. Կ. Պոլիս

Սիրելի եղբայր իմ և բարեկամ Ս.

Գիտեմ որ չես կասկածիր, թէ որքան քու ողբդ և արցունքդ արձապանք են դտած իմ սրտիս մէջ և թէ որքան դառնացած եմ դառնութեամբ և վշտացած քո աղէտքով: Այսպիսի պարագաներում իբրև սոսկական մարդ և կամ օտար, չենք կարող միմեանց ոչ մի մխիթարական խօսք ասել, այլ ճշմարիտ է. իբրև մարդ ես էլ ոչինչ չէի ասել քեզ. եթէ մանաւանդ օտար լինէի սրտիդ. խորին վշտիդ առաջ միայն խոնարհեցնէի զլուստ: Բայց եթէ քո բարեկամդ ու եղբայրդ եմ և եթէ դու կը շնորհես ինձ այս տխրոսները, աչն ատեն կը փչեմ որ քրիստոնեալ եմ միանգամայն և փիլիսոփայաբար մի ակնարկ նետելով քեզ և քո վշտաց չեմ կարող մի քանի խօսք չ'ասել իմ եղբոր, իմ լաւագոյն բարեկամիս Սանդրօին՝ որոչ արցունքն ու ժպիտը իմն էլ են լիովին:

Գիտեմ նոյնպէս որ իմ Սանդրօն ունի քիչ շատ վտահուլթիւն իմ տկար խելքին և հմտութեան, եթէ անշուշտ հաւատում է որ պաշտեմ ՚Ստուած, համոզւած լինելով որ աղբիւրն է սիրոյ, արդարութեան, բարւոյ, և ներդաշնակ ճշմարտութեան և օրինաց՝ աչն ատեն անհրաժեշտ կ'ընդունի և կ'ըմբռնէ իմ ասելիք ճշմարտութիւնները, և եթէ լաւ ըմբռնէ նրանց անտարակոյս պէտք է մխիթարելի:

Ահն իմ ասելիքներս.

Քո քոյրը, որ մասամբ իմն էլ է՝ մեռած չէ, որովհետև հօգին կեն.

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 7.—8, 9 և 10:

դանի է, պահպանելով իր ինքնաճանաչութիւնը աւելի որոշ կերպիւ՝ քան թէ մարմնոջ մէջ եղած առեւն:

Մարմնուն ասպականութիւնն է որ վերակենդանացնէ հոգին: Գերեզմանը ճշմարիտ կեանքի օրօրանն է, մարմնական մահը հոգեկան ծնունդ է:

Այս բաները քեզ բացատրողը մի կարծիք որ արթիսթ, եռանդուն բարեկամը է, մի ենթադրիք որ միայն քեզ մխիթարելու փափաքիս վրայ եմ հիմնուած, ո՛չ: Նս, գիտցիր որ տարիներից ՚ի վեր խորհում, կարդում և մշակում եմ այս սուրբ և բարձր գիտութիւնը՝ ուսումնասիրելով Ներսայի հին և նոր փիլիսոփաները, լաւ քննելով և ըմբռնելով Քրիստոսի երկնաՆէր վարդապետութիւնը և մանաւանդ այս վերջի ժամանակներում ներկայ գտնւելով spritisme-ի, հոգեխօսութեան լուրջ նիստերի ներկայ գտնւելով, անձամբ փորձեր անելով, շատերի նման ես էլ արտասուցից աչքերով և երախտագէտ սրտով համոզեցայ և ընդունեցայ ահա անհերքելի Աստուածալին ճշմարտութիւնները՝ որք փոքր առ փոքր տարածւելով պիտի զարգացնեն մարդկութիւնը՝ նրան առ Աստուած բարձրացնելով:

Տարաբաղաբար իմ աղնիւ Սանդրոն ծնած և մեծացած է աջպիսի մի երկրի մէջ, ուր միայն նիւթն է ուսմանց և պաշտամանց առարկայ, ուր ռուբլին ու եսութիւնն է թաղաւորում, և ուր հոգեկան Աստուածալին բարձր փիլիսոփայութեան վրայ գրեթէ զազախոր անգամ չունին, և որ զարմանալին է՝ չեն էլ ուզում ունենալ: Ամենից աւելի գիտուն կարծւածները, որոնք իրանց ուսումը աւարտել են (ուսումը երբէք չաւարտիր) Գերմանիայի մէջ ընդհանրապէս, մի քանի գերմանացի փիլիսոփաների գործերն են կարգացել, որոնք իրանց ծուռ վարպետութեամբ և անձնապատան խելքէ հպարտութեամբը, ցամաքեցրել են մարդու հոգին և իրանց զրքերով մի պատ են հիւսեր ու բարձրացրել մարդկանց աչքին որ չի կարողանան տեսնել զԱստուած... Ախոս, հազար ախոս, որքան մեծ է նոցա պատասխանատուութիւնը առ Աստուած: Սակայն Աստուած իր անսահման բարութեամբը կը տեսնէ մարդուն տառապանքը և դարման կը տալ նորան՝ լուսաւորելով մարդկանց մտքերը, որ ո՛չ միայն նիւթական այլ հոգեկան տեսակէտով քննեն ու ուսումնասիրեն բնութիւնը:

Մարդու հոգւոյն անմահութիւնը, և ամենաբարի, ամենակարող և ամենաարդար մի Աստուծոյ գոյութիւնը հաստատ ապացոյցանելու համար, թողնենք, փոյթ չէ, այն ամենամեծ և անուրանալի փաստերը որ տրւած են մարդկութեան՝ աշխարհիս ստեղծմանէ ի վեր: Թողնենք եթէ կուզէք՝ կուպաշտութեան մոլիւանդ խաւարին մէջ Անմահին Աստուծոյ և անմահութեան հոգւոյ չանկարծ հաւատալով քարոզող Սոկրատն ու Պլատոնը: Թողնենք նաև ժամանակ առ ժամանակ չաչմուած ողիների տւած չաչունութիւնները, Պրահմանների, Պուտտանների, և հնդկաց Փաքիրների Աստուածապաշտ վարդապետութիւնը, չնաչելով որ նոցա գիտութիւնը անհա-

մեմատ բարձր է հիմնական մեր նիւթապաշտների գիտութիւնից. վերջապէս թողնենք այս բոլորը և զանք միմիայն մեր հոգւոյն բնազդմանն ու մտքի տրամաբանօրէն լուրջ դատողութեանը և աչպէս ասենք.

Ամեն հոգեբան և նիւթաբան (Spritualistes, Materialistes) փիլիսոփաներ միահամուռ և միաձայն կը խոտովանեն թէ բնութեան մէջ ամեն ինչ ենթակալ է անփոփոխելի, անխուսափելի, արդար և ներդաշնակ (harmonieux) մի օրէնքի, այն օրէնքը՝ որ բանական է միանգամայն՝ կառուարում է ամեն բան: Մի չնչին խոտի, մի թիթռան, մի կաթիլ ջրոյ գոյութիւնն անգամ ենթակալ են մի նպատակի և ներդաշնակութեան, որ ինչպէս կը տեսնենք իմաստուն է և նախախնամ Ուրեմն աչն Աստուծոյ, ասենք բնութիւնը, որ գիտցեր է մի նպատակ և կարգ և ներդաշնակութիւն զնեւ ամենալետին արարածոյ գոյութեանը, ինչպէս կարող էր աննպատակ և առանց պատճառի, աններդաշնակ վիճակի մէջ զնեւ մարդուս գոյութիւնը, մինչ իսկ նորա վիշտն և ուրախութիւնը՝ որ իւր ստեղծածնների մէջ առաջինն է համարուում անշուշտ:

Միթէ անք էլ, մարդիկս, հաւասարապէս Աստուծոյ որդիքը չինք. միթէ ամենքս էլ միեւնոյն (եթէ ոչ հոգեկան) գոնէ նիւթական պիտոյքներով չինք ծնուում: Ուրեմն ինչից է, որ մէկս զրկուում ենք զոցա վազելքից՝ ալ միւսը ոչ: Ի՞նչն է պատճառը որ մինը ծնուում է զեղեցիկ՝ միւսը տղեղ, մինն աւաղակ՝ միւսը բարեղործ, մէկ ուրիշը մարդասպան և մինն էլ առաքինի, ոմանք հարուստ՝ ոմանք աղքատ. շատերն հիւանդ, կոր, կաղ ի ծնէ և բազումք՝ կալտառ, առողջ և ուժեղ...

Նիւթապաշտք անշուշտ կուրօրէն պիտի ասեն թէ աչդ բոլորը կրթութեան, զարգացման և շրջանի արդիւնքն են, և մինչև անգամ լանդզնուում են ասել դիպածի: Շատ լաւ, զիցուք թէ աչպէս լինի, ուրեմն ի՞նչ է պատճառը որ մինը ծնի լաւ շրջանի մէջ, լաւ զարգանայ, լաւ ապրի, հանգիստ էլ մեռնի. և զէնը գտնուող ընկերը, որ հաւասար եղբայրն է նորա Աստուծոյ առաջ՝ ծնի վատ շրջանի, վատ օրինակաց մէջ, վատ ապրի և վատթար մեռնի: Սա էլ պէտք է ի նկատի ունենալ, որ մարդիկ մեծաւ մասամբ ծնուում են զէմքի գծերի, կամ գանգի ել և էջ ուռուցիների վրայ ունենալով իրանց լաւ կամ վատ չատկութեանց շոշափելի նշանները և որոնց մասին ալ ևս չէ սխալուում գիտութիւնը:

Հիմակ բացատրեն թող ինձ թէ ի՞նչ է լանցանքը վատ ծնող խեղճին և արժանիքը՝ բարի ծնողին: Ինչո՞ւ. առաջինը լինի մարդասպան, խարդախ և բթամիտ՝ և երկրորդը հանճարեղ, բարի կամ տաղանդաւոր: Եթէ երկուան էլ ոչնչից են գալիս, կրկին հոգեպէս էլ ոչնչանալու համար, ի՞նչ անարդար բան է աչդ և ի՞նչ լիմար աններդաշնակութիւն է աչս չափսենական իմաստուն ներդաշնակութեան մէջ:

Ահա սիրելիս աչս մարդկութեան անբաղդատելի և սլլազան վիճա-

կին և բարքին աններդաշնակ դրութիւնն է, որ առ երևոյթս կը տեսնենք և որն մեզ ստիպէ փնտռել նորա արդար և ներդաշնակ պատճառը և նպատակը՝ բնութեան անլեզլի օրինաց մէջ, որն որ անպատճառ պէտք է լինի և որ արդէն չաչտնուում է զանազան հին և նոր իմաստասէրների հետադասութեամբ և spiritisme-ի միջոցով ոգիների տաժ բացատրութեամբը և մանաւանդ բնական և լուրջ գատողութեամբ թէ՛ «մարդս մի անպատճառ չէ որ ծնում է և ապրում, այլ մի քանի անգամներ իւր գործոց և իւր չառաջադիմութեան ջանքին համեմատ, վիճակը դէպի բարին փոփոխելով, կեանքից ի կեանս անցնում, զարգանում և մաքրւում է հոգւով, որպէս զի մերձենալ աչն աղբւրին, որից ըզխած է և որին հէնց իւր առաջին ծննդեանը բնազդմամբ ճանաչում և պաշտում էր «Աստուած» աղաղակելով:

Այն սիրելիս, հոգի փոխութեան վսեմ օրէնքով միայն կարող ենք բացադրել մարդկանց վիճակին հակապատկեր դրութիւնները. մտածելով որ չարը, արդէն նոր է սկսել իւր մարդկալին առաջին գոյութիւնը անասունից: Թշուառը գոժում է իւր երկրորդ կամ առաջին գոյութեան մի շանցանքը: Խելացին, զօրեղը, ուրիշ մի գոյութեան մէջ, բարւոյն շնորհիւ արժանացել է ալք կրկին շնորհաց, որպէս զի իւր նմանները զարգացնէ: Հարուստը կամ փորձելու է ենթարկւած, և կամ այն ստակը որ ունի իւր մէջ անցեալ գոյութեան մէջ գործած բարութեանը պարզէն է, որ իրրն աւանդ տւել է նորան Աստուած, որպէս զի շարունակէ երկրիս վրաց բարին գործի, տառապանք սփոփելու, արցունքներ սրբելու երջանկութիւնը վաշելել: Եւ աչպէս հետզհետէ կեանքը մարդկալին, ոմանց համար քառութիւն է, ալոց՝ իւր նմանին օգնութիւն, և ոմանց զարկացման, փորձանաց և կատարելագործելու միջոց: Այլ երջանկութիւն՝ շատ քիչ անգամ. դորա համար որ, մարդիկք երջանկութիւնը նիւթական հաճուքների մէջ են փնտռում և միշտ զուր է գնում իրանց ջանքը: Հոգեկան ձգտումներ և վաշելքների մէջ կալելի է միայն գտնել ճշմարիտ երջանկութիւնը և որովհետեւ նրան փնտռող և գնահատողները շատ սակաւութիւն են, հէնց դորա համար էլ երջանկութիւնը խափուակ և օտար մի բան է մեր աշխարհին վրաց: Թող փորձեն ասածս. իւր ընկերին բարիք անելով, և երբ ալք բարիքը անելով զգան իրանց սրտի խորքում մի անբացատրելի սուրբ և խաղաղ ուրախութիւն, արդեօք ինչ բացադրութիւն կը տան աչն զգացմունքին. արդեօք կը լանդղենն ասել թէ ալք զգացումը, ալք երջանկութիւնն էլ նիւթից լինի...

Չգիտեմ եղբայր իմ, կարողացա՞լ համառօտ կերպիւ հասկացնել մարդկանց անհաւատար և աններդաշնակ վիճակին և կացութեան ներդաշնակաւոր և արդար նպատակը, որոց իմաստունք հոգեփոխութեան սնունը տան, և որի համար հարիւրաւոր հատորներ կան գրւած՝ անհերքելի վաստերով ստուգելու համար թէ մարդուս հոգին ենթարկւած է

բազում անգամներ մարմին հագնելով, կենաց պաշարին մէջ զտուելու, փորձելու, դարդանալու և մաքրելու նիւթական կրքերից: Սա մի տիեզերական անտերանալի սուրբ ճշմարտութիւն է, ուր արեւի պէս կը փայլի Ստեղծողին անհասանելի, անսահման, հաւասարակշիռ իմաստութիւնը և արդար ու տնխուստիելի սուրբ օրէնքը:

Ամենապետին մի սողունի, մի անբան կենդանուղ կենաց մէջ կարգ, նպատակ և կանոն զնոյ Աստուածը, ինչո՞ւ համար բանական մարդուն նկատմամբ անարդար, անհմուտ և անողորմ լինէր: Նիւթէ լաւ տեսնենք և մտածենք, կը տեսնենք որ մեր շուրջը ամեն ինչ սէր, իմաստութիւն և հալրախնամ գլխութիւն է, ամեն ժպտին մէջ մի արցունք կա՞ ժպտին արժէքը դուրս բերելու համար, ամեն ուրախութեան մէջ մի տխրութիւն: Ինչպէս ամեն սև գրեր մութ չտակի վրայ որոշեն, և ամեն մութ գրեր՝ սպիտակ կամ լուսաւոր չտակի վրայ: օրը գիշերան և գիշերը օրան հակապակերն է, նոյնպէս հողին էլ մարմնուն, զի մարմնը գիշերն է հողուն, իւր բոլոր երկրալին ցած կրքերովն ու ձգտումներովը, և աչք գիշերան խաւարին մէջ, խիղճն ու բանականութիւնը մեզ ջահ են առաջնորդ, որպէս զի հողպէս ճանչնանք զԱստուած, չդատենք նորան մեր աչխարհի վրայ տեսնած անկարկատ և աններդաշնակ դէպքերի վրայ հիմնւելով, ու մեր երկրալին վշտերովն ու կրքերովը: Նւ աչն ժամանակ պիտի դառնենք ու տեսնենք աչն Աստուածը, աչն բնութիւնը, որ արդար, իմաստուն և բարի է՝ և ո՞չ ան խիղճ:

Նորա մեր հոգւոյն պարգևած բարիքները աչքան մեծ են, բազազգելով աչն վշտաց, որ երբեմն կը տաչ մեզ մեր բարելաւութեան, մեր հոգեկան զարգացման համար՝ որ մեզ հարկադրէ երախտեօք սիրել իրան:

Նիւթէ երախտագէտ ենք վիրաբուժէն, որ վէրքերնիս մի անգամ խարէ մշտապէս բուժելու համար. ուրեմն ինչպէս չ'օրհնենք աչն նախախնամ ձեռքը՝ որ մի անգամ հարւածէ լաւիտենապէս բուժելու համար:

Պիտի ասես անշուշտ թէ աչ բոլորը կը վերադարցնէ ինձ իմ վազամեռիկ քօրը. ես էլ կը պատասխանեմ որ եթէ մարմնու աչքերով դու չես կարող նորան տեսնել, բայց նա կը տեսնէ գրեզ իւր հոգւոյ աչքերով միշտ քո մօտն է, հաւատո՞ւ ինձ եղբայր, վերջապէս չէ հեռացեր քոյրդ քեզանից որ վերադառնաչ. միաչն թէ աւարտել է իւր երկրալին կենաց շրջանը և մարմնը տել է ապականութեան, աչ հողին, հաւատացած եմ, անմահութեան մէջ քո մօտդ պիտի հսկէ քո վրայ: Աչ բոլորը գրում եմ քեզ առաւօտուն անկողնիս մէջ, նամակիդ հաղորդած գուժին աղբեցութեան ներքև և իմ միակ նպատակս ու ցանկութիւնս է կատարել իմ բարեկամութեան սուրբ պարտականութիւնը, հաղորդելով սիրելութեանս մի ճշմարտութիւն՝ որի միութարութիւնից գեռ շատերը զուրկ են: Նւ քեզ, որ տել է Աստուած կորովի առողջութիւն և սիրող սիրտ,

քաջութեան և համբերութեան մէջ առաքինի հանդիսանալու չատկութիւններով զարդարել է, կը փափաղի որ իւր տւած բարոյական ոյժին շնորհիւ, որ քիչերն ունին, իւր կամացը գլխակոր անձնատուր լինիս. և երբեմն, մեզ նուստներս էլ իւր անսահման բարեացը գործիք կընէ, չիշեցնելու համար քեզ, և նույնպէս ազնիւ մօրդ, իւր արդար և նախախնամ օրէնքը. իմացնելով ձեզ միանգամա՛ն, որ մէկիդ քուրը, որ միւսին աղջիկը և մէկ ուրիշին հարսն ու կի՛նն է, նախ և առաջ իւր սեպհականութիւնն է. իւր աղջիկը իւր հարս է բուն, և որին դուք ժամանակաւոր աւանդապահն էիք երկրիս վրայ, և առաւ երբոր կամեցաւ. Խոնարհեցնւր ուրեմն, եղբայր իմ, ազնիւ գլուխդ՝ այս արդար և անուրանալի ճշմարտութեանց առաջ, թող Աստուածատուր համբերութիւնը չաղթէ վշտիդ, և համոզէ որ քուրդ երջանիկ է ալժմ իւր հոգեկան վիճակին մէջ. դու որ կենդանի մարմնական վիճակին մէջ նորան երջանկացնել ուզեցիր, և աշխատեցար, և չաշողեցար, բայց ասի քեզ արդէն, որ երջանկութիւնը չէ չալսմ աշխարհի, ուստի, ինչպէ՛ս կարող ես ցաւ և վիշտ զգալ քրոջդ նկութեան մահիցը, երբ որ լաւ համոզւեա թէ՛ Աստուած առաւ նորան, որպէս զի կատարեալ կերպիւ երջանիկ անէ, քո ուզածը, քո փափագածը Աստուած ինքն ուզեց շարունակել կատարեալ կերպիւ: Այսպէս պէտք է հաւատալ, իմ պատական Սանդրօս: Ճշմարիտ է որ մարդ ենք վերջապէս և պէտք է ցաւենք մի սիրելու՞ ն իւթական կորուստը, բայց մխիթարիչ ճշմարտութիւններ կան, որոց ընդունել պարտական ենք:

Կս քեզ դիտական և փելիստոփաշական փաստերով հաղորդել ուզեցի այս ճշմարտութիւնները, որպէս զի քիչ սիրով սիրտդ, արդեօք պիտի արժանանամ հասնել նպատակիս...

Մի մոռնար նույնպէս՝ որ մարդս իրան չէ պատկանում, որ անձնասիրութիւնը մի ռճիր է բնութեան օրինաց դէմ: Եւ դու, որ քս հազագլիտ բնական չատկութիւններով պարտքեր ունիս լրացնելու Աստուծոյդ, մարդկութեան և տղղիւք առաջ, և ունիս մալր, փեսալ և բարեկամներ՝ պէտք չէ որ ցաւուք սաստկութիւնը թուլացնէ քո մէջդ հերոսն ու իւր պարտականութիւնը ճանաչող ազնիւ անձը: Եթէ կան վշտեր ու ցաւեր աշխարհիս վրայ, նույնպէս կան հոգեկան ազնիւ քաւականութիւններ, որ կը զղանք բարին և մեր պարտքը կատարելով: Շարունակէ ուրեմն եղբայր իմ, աղօթել միշտ առ Աստուած, սիրել բարին և կատարել պարտքդ. աչն ժամանակ ոչ միաչն գոհ ալ երջանիկ կը լինիս երկրիս վրայ:

Կը համբուրեմ ճակատդ և անհամբեր կը սպասեմ նամակիդ, որպէս զի գիտնամ թէ սա երկար նամակովս փոխանակ ճանձրացնելու քեզ կարողացել եմ մխիթարել. աչն ժամանակ իմ ուրախութիւնս մեծ պիտի լինի իմ ալժմեան բազմակողմանի տխրութեանս մէջ՝ չորում զօրավիգս Աստուած է, որի քեզ չանձնելով մնամ գրութեանդ ակնկալու եղբայրդ:

Յ. Գ. Պ. Մաղաքեան խումբը պիտի կազմէ՝ բաւց ոչ Տփիսիս գալու նպատակաւ. սիրելի Ղազարիս բարեւ, ազնիւ Բաշինջաղեանին նողնպէս. պատական ժող ձեռքերը համբուրեմ, թող իւր տղան կոչէ զիս և ինքն էլ չմոռնայ զԱստուած և աղօթք՝ որք աղբիւր են մխիթարութեանս.

Թիւ 36

11 հոկտ. 1889 թ.

Սիրելի եղբայր իմ Ս.

Արդորնսք գրում եմ քեզ սա մի քանի տողերը, խնդրելու համար քեզ, որ տեղեկանաս թէ արդեօք Ղազարս կարող է ինձ հետ գալ Բագու՝ ուր ինձ հրաւիրում են 15 ներկայացմանց համար:

Երբ վերջապէս համաձայնեմ կը հեռագրեմ որ եթէ Ղազարս կարող է գալ, թող պատրաստ գտնուի Տփիսիսի կապարանում, եթէ ոչ նորա փոխարէն մի ուրիշին պատրաստիր խնդրեմ ինձ համար: Քող ի սրտէ եղբայր:

Թիւ 37

2 դեկտ. 1889 թ. Կ. Պոլիս

Սիրելի եղբայր Ս.

Բաւականի երկար լուսթիւնից չետոյ երկար ճանապարհից եկած կարճ նամակդ ստացայ:

Բազալ գործը չաջողած չէ...

Մտող թողած իրեղէններս քնչ վիճակի մեջ են, արդեօք վնասուած են խոնաւութիւնից:

Պարոն Ստեփան Մամիկոնեան Տփիսիսում է թէ ոչ: «Տարազ» ի առաջին թերթը ուղարկիր ինձ:

Համբուրեմ քեզ ի սրտէ. քեզ միշտ հաւատարիմ սիրող եղբայրդ:

Թիւ 38

27 դեկտ. 1889 թ. Կ. Պոլիս

Սիրելի բարեկամս Ս.

Շատ ուրախացայ ստանալով նամակդ, որ սկսեր է բաւականի երկարել, չուսամ գալ անգամին աւելի երկար կը լինի, փոխանակ երեք երեսի չորս երես:

Շատ կը զարմանամ որ տակաւին չես ծանօթագրեր աչնպիսի մի ընտիր անձնաւորութեան հետ՝ ինչպիսին է իմ շատ սիրելի բարեկամ պ. Ստեփան Մամիկոնեան: Սա նամակիս միջոցաւ գնա անպատճառ ծանօթացիր նորա հետ, և երբ մի քանի անգամ լաւ պիտես նորան, արի ասա ինձ թէ՛ նորա պէս շատ ունիք Տփիսիսում... առանց հաշիւու անշուշտ քեզ և մեր ամենասիրելի եղբայրն Վէորգ:

Ստուգ է որ պիտի ներկայացնեմ Օթէլլօն ի ներկայութեան Սուլթանին, Ելլուրզլի պալատուն մէջ, բաւց երբ բոլորովին աւուղջանամ, վասն զի մի քանի օրից ի վեր բաւականի տկար եմ:

Վիճակահանութեան տումակը խնդրեմ որ ծախես: Իրեղէններս

չմնասելուն համար ինչ որ կարելի է անել, քեզ իմ բարեկամիս կը չանձնեմ ու խնդրեմ որ անես:

Կը բարեմաղթեմ Ձեզ նոր տարին չուսալիր, բարի և բարեբաստիկ: Քեզ սիրող բարեկամդ:

Յ. Գ. Գնալ ծանօթանալ պ. Մամիկոնեանի հետ:

Թիւ 39

4 փետր. 1890 թ. Կ. Պոլիս

### Սիրելի Ս.

Մինչև հիմա ծածկեցի քեզնից ճշմարտութիւնը, ուս պատճառաւ որ սիրող չի վիրաւորել, բայց ալ ևս չեմ կարող լուել, և կը գրեմ քեզ՝ սրով հետևե երկու ամիս ու կէս է որ չարաչար տառապում եմ անկողնումս, անդամալուծ եղած, զարհուրելի սուր չողացաւերով: Ինչ որ ունէի ոսկեղէն, արծաթեղէն, բոլորը ծախեցի՝ բժշկի, դեղերի ծախքերին համեմու համար. այժմ մի փոքր լաւ եմ գլուս ևս ինձ, սակայն բոլորովին առողջանալու համար գեռ գոնեա երկու ամիս է հարկաւոր ասում են, որ բժիշկն ինձ ինձամէ և ես մի գրոջ անգամ չունեմ քաղաքից մինչև գիւղ բժիշկ բերել տալու, դեղերի և զանազան ծախքերի համեմու: Մինչ արդ չուղեցի ոչ ոքին մի բան ասել, զիմացալ որքան կարողացալ. բայց ալ ևս չեմ կարող համբերել. այստեղ ոչ ոքից չու չունեմ. ուս զիմեմ, հարուստներին, որոնք չորեկանիս ընծաւած պսակին գինը իմ գրպանից առին: Երկտասարդութիւնը աղքատ է:

Քեզ գրում եմ որ տանես նամակս իմ եղբայր և բարեկամ ազնիւ Աղէքսանդր Մելիք-Ազարեանցին, որից աչքան բարիք եմ տեսել. գուցէ այժմ էլ իմանալով իմ այս դժար վիճակս բարեհաճի մի օգնութիւն ուղարկել ինձ, բայց չուտով: Նա գիտէ որ բարիքը չի կորչիր, մանաւանդ որ երբ ընդունողը ապերախս չէ:

Իսկ դու, իմ Սանդրո. չլինի որ քու կողմից ինձ օգնել կամենաս. հաւատն որ այդ գէպքում ինձ կը վրդովես և ինձ տանջանք կը պատճառես, և կը սպաննես իմ առ քեզ ունեցած բարեկամութիւնս ու սէրս:

Շատ կը խնդրեմ որ իմ վիճակի նեղութիւնը բացի մեր բարեկամից՝ պ. Մելիք-Ազարեանցից և քեզնից՝ ոչ ոք չիմանալ:

Ողջուն իմ հարցանողաց:

Ուժ չունիմ շարունակելու. անհամբեր կը սպասեմ պատասխանի:

Քեզ սիրող եղբայրդ:

Թիւ 40

3 մարտ 1890 թ. Կ. Պոլիս

### Սիրելի և պատուական բարեկամ Ս.

17-ին գրած նամակդ այսօր ստացալ և ա՛հ շտապում եմ քեզ պատասխանել, որպէս զի չաւանեմ թէ որքան շնորհակալ եմ քեզանից, չե-

տոյ պատուական Մեկիք-Ազարեանից՝ ինձ տարած հոգերնուդ համար: Բրքան մեծ օգնութիւն պիտի լինի ինձ համար երբ Տփլիսից ստանամ մի գումար:

Սակաջն երեի հիւանդութիւնս լաւ չես հասկացեր սիրելիս, որ ինձ խորհուրդ ես տալիս Չատկին Տփլիս գալու:

Բայց բարեկամս, գիտցիր որ բժիշկս հրաման չէ տալիս տանից անգամ դուրս գալու, հազիւ թէ կարողանում եմ երբեմն անկողնից դուրս գալ, նստել սեղանի մօտ, գրել մեծ նեղութեամբ: Վալով կոկորդիլս, ինձ շատ է տանջում... ուսել է և ցաւում է՝ օրը մի անգամ աչրում են լապիւսով, բարձր ձայնով խօսելու հրաման չիկալ, և եթէ ուզենամ չեմ էլ կարող. անհ իմ վիճակը: Հազիւ թէ ապրիլի սկզբին թող տալ բժիշկը որ դուրս գամ տանից. էլ սուր մնաց Տփլիս գալու ներկայացում տալը. ալստեղ էլ թէ ուզենան երկու երկու ամսից էլ զետոյ չեմ կարող զեռ ներկայացնել, թէ չէ, կարողանալի, միթէ մի վարկեան կը վարանէի գալ Տփլիս: Աղջուհիւր բոլորին և հազարդէ իրենց այս ճշմարտութիւնը:

Գու անչպաղ գրիր ինձ, նամակներդ ինձ մխիթարանք են, և գիտցիր որ օրից օր հիւանդութիւնս մեղմանում է և ես ինձ լաւ եմ զգում:

Այս երեկոյ Վասիլեանն ասել է հօրեղբորս թէ Տփլիսում ինձ համար ուզում են եղիւր կոնցերտ տալ, միթէ ստոյգ է այդ լուրը:

Նամակներուդ հասցէն միշտ այս անգամի պէս գրիր այսինքն.

Турция, Константинополь. Артисту трагичу Адамьяну.

Համբուրելով զքեզ, մնամ քեզ ի սրտէ սրտոդ բարեկամը.

Յ. Վ. Չգրեմ թէ որտեղից խմացել են լրագիրք իմ հիւանդութեան լուրը, որովհետեւ բացի քեզանից, ոչ մի տեղ, ոչ ոքին մի բաւ անգամ չեմ գրած դուրս մասին: Երբ գումարը ստանամ առանձին պիտի գրեմ պ. Մեկիք-Ազարեանիցին իմ շնորհակալութիւնը: Քոյգ.

Թիւ 41

3 մալիսի 1890 թ. Վ. Պոլիս

Ամենասիրելի Ս.

Ինչպէս գրել, նոյնպէս և շատ խօսելն ինձ համար արգելեալ են, ինչպէս մեծապար, հէնց իսկ կոկորդիլս քաթարին պատճառաւ: Բայց մեր պատուական «Մշակ»-ի տրեւեանին գրած ոտանաւորս ուղարկելուց առաջ էլ և զետոյ, սպասում էի քո նամակին մեծ անհամբերութեամբ, և անրտես որ երկու ամիս շարունակ ոչ մի բաւ չի ոտացալ քեզանից. պարզապէս վախեցալ որ հիւանդ չլինես, և այնքան մեծ էր մտատանջութիւնս որ վերջապէս որոշեցի գրել, մինչ չանկարծ երէկ երեկոյ քո չորս նամակները միասին ստացալ Վասիլեանից... որք անչուշտ երկար ժամանակ մնացել էին թղթատնում: Վասիլեանի ծառան փնտում չլինելուն հասար. շատ մեծ եղաւ նեղութիւնս... բայց մխիթարեցալ, ես ինձ զսպեցի, տեսնելով զոնէ նամակներիցդ թէ ողջ ես և առողջ, և շատ ուրախացալ:

Գիտցիր որ չգիտեմ թէ քննչ պիտի կարողանամ փոխարինել քեզ ազգ սիրոյ և անգին բարեկամութեան համար՝ որ ցոյց կը տաս ինձ, ապինքն արդեօք քննչ պիտի կարողանամ անել, նոյն էլ իմ կողմից քեզ գործով չաշունելու համար, բայց հաւատում եմ առ Աստուած և մեծ չոյս ունիմ որ նա պիտի տալ ինձ առիթ: Այդ էլ գիտեմ որ, դու արդէն կը հաւատաս թէ որքան թանկ եմ քեզ գնահատում և ճանաչում եմ, անարատ պահէ և մի վհատիր առաքիճութեան մէջ՝ որ վեր է քան զամենաչն հարստութիւն աշխարհի: Մեր ամեն մէկ համբերութեամբ տարած վիշտը, մի քաչ աւելի է մեզ մօտեցնում Աստուծոյ, և արդէն երանիք քեզ նմաններին...

Աչտուհեան կամ հօրեղբայրս և կամ ես անձամբ պիտի երթանք առնել նամակներս թղթատնից, որ ցարկ տկարութեանս պատճառաւ չէի կարողանում երթալ...

Գրեցի Արծրունուն իմ հււրը մի վեց տուն բանաստեղծութիւն, ուր գրած եմ իմ սէրը և կարծիքը այն մարդու մասին:

Մոսկուայից, Տփլիսից և Բագուից ինձ ուղարկած դրամական օգնութեան միջոցաւ կարողացաւ քիչ պարտքերս հատուցանել, կատարել զանազան ծախքերս, մնացեալ դրամով և մեծ խնաւորութեամբ ստիպւած եմ քրոջս հետ զնալ օգտխոսութեան ի կղզի, մէկ ու կէս ժամ հեռու քաղաքից, մի ամսի չափ: Գորանից չետոյ Աստուած միաչն գիտէ թէ քննչ պիտի տնեմ...

Խօսքը մեր մէջ, եթէ ազգ կոնցերտը կազմուար Թիֆլիզում, գուցէ աչն ժամանակ կարող էի Նւրպապից անցնելով գալ աչնան Թիֆլիս, Նւրպա երթալ ինձ շատ հարկաւոր էր... ինչ որ է, տեսնենք Տէրն քննչ անօրինէ:

Անչապաղ գրիր ինձ...

Քեզ ի սրտէ սիրող և չարդող եղբայրդ.

Թիւ 42

1890 թ. 11 յունիս, Հաւրի, Կ. Պոլիս

Ամենասիրելի Ս.

Մայիս 26 թւականաւ գրւած սիրալիւր նամակդ ստացաչ, դորանից երկու օր էլ չետոյ 22 բուբլի աչն — պատուական երխտասարգների կողմից, որք բարեհաճեր էին դորանով ցոյց տալ ինձ իրաւնց սէրն ու խնամքը: Աչն բարեկամ, ազգ ուղարկւած գումարին մէջ տեսնում ես նոցա աղնիւ հոգին ու սիրտը, և հաւատա որ բառերն անբաւական եմ գտնում չաչտնելու համար աչդ պատուական անձանց իմ անբաւ երախտագիտութիւնս: Տնր Աստուած, որ ժամ առաջ բժշկելով անձամբ կարողանալի գալ, և գործով ցոյց տալ իրենց աչն ամեն բարի զգացումները, որ տածում եմ և տածեր եմ սրտիս խորքում իրենց նկատմամբ: Գու որ ինձ լաւ ես ճանաչում, ինչդրեմ չաչանիր նոցա դու իմ կողմից չնորհակալութիւններս և սիրալիւր ողջոյններս: Գիտցիր բարեկամս, որ ես հաւատալով առ Աստ.

ւած, միշտ աղօթում եմ նոցա բարեխառնութեան և բարեբաատ ապագային համար, ալդ երկրասարդներն են մեր ազգին միակ չղոն ու նեցուկը ամեն բանում:

Քու ես աղօթէ ինձ համար, և ժամ առաջ ես էլ բժշկեմ, որովհետև Հալքի կղզւոյն օդը ուր առ ազժամ բնակուում եմ առողջութեանս համար՝ դեռ ինձ չէ օգնում:

Սիրալիբ ողջուններս մեր պատւական «Մշակ»-ին, ազնիւ մօրդ, սիրեցեալ Գէորգին և ազնիւ փեսիդ, տիկ. Բաշինջաղեանին և բոլոր ինձ հարցնող բարեկամաց:

Ասան ինդրեմ իմ պատւական պ. Տ. Նազարեանցին թէ «Մշակ»-ի չորեկեանի առթիւ ուղարկած ստանաւորիս տպագրութեան մէջ սպրդել են երկու մեծ սխալներ, որ զրեթէ սպաններ են միտքն ու գեղեցկութիւնը: Նախ առաջին տան չորրորդ տողին մէջ փոխանակ տպելու ն ես ս ի բ ո յ ա՝ տպեր են ն ե տ ս ի բ ո յ ա: Երկրորդ. հինգերորդ տան երրորդ տողին չանգը որ դ է զ ա ու դ է զ պիտի լինի հանդէս բառին հետ չանգելու համար՝ սխալմամբ տպեր են տ ե զ ա ո ս ե զ: Շատ ցաւեցաջ երբ կարդացի:

Գրէ ինձ անյապաղ. ընդունէ սիրոջ համբուրս,

Քու եղբայրդ ի սէր:

Թիւ 43

17 օգոստ. 1890 թ. Կ. Պոլիս

Իմ սիրելի բարեկամս Ս.

Վերջի և դարանից առաջ գրած նամակներդ էլ կարգաւ ստացայ, սակաւն գլտիս չկախելու համար գրելուց զգուշանում եմ, որովհետև դեռ շարունակուում է կոկորդիս ցաւը, և ձ ա չ ն ս մ տ բ ա ծ է. պ. Շիշմանեանը գուցէ լաւ տեղեակ չլինելով գրած լինի թէ ընդհանուր մարմնով առողջ եմ, սակաւն դ ժ բ ա զ դ ա բ ա ր ձ ա չ ն ս դ ե ո չ է բացւած... ամենից աւելի ալդ է որ, ալս իմ ձաչնի հիւանդութեան մասնագէտ մի բժիշկ կաջ չոյն, որ ապահով խոստացած է ինձ բժշկել, սակաւն երկու հարիւր բուբլի փող է ուզում, ալսինքն 25 ոսկի օսմանեան, և ալդ գումարը անկարելի եղաւ և պիտի լինի զանելը, ոչ ոք գիտնալ անգամ չէ կամենում, ուստի առանց օգնութեան և դարմանի մնացել եմ չուսահատ...:

Քեզ ի սրտէ սիրող եղբայրդ.

Թիւ 44

28 սեպտ. 1890 թ. Կ. Պոլիս

Իմ ազնիւ և պատւական Ս.

Տկարութեանս պատճառաւ կը դժուարանամ գրիչս ձեռք առնել, և ամիսներով երբեմն չեմ կարող գրել՝ քեզ անգամ՝ հակառակ իմ ցանկութեան:

Սակաչն ապահով եղիր թէ, օր չանցնիր, որ քո մասին չխօսեմ իմ բարեկամաց, աչ, ճշմարիտ է որ օր չանցնիր. Բայց ինչ օգուտ որ քո հիւանդութիւնը շատ տխրեցուց ինձ, թէպէտ գրում ես թէ ալժամ առողջացար, ալ վախենում եմ որ դարձեալ մի որ և է անխոհեմութեամբ կրկին հիւանդանառ ալդ սպերախոտների մէջ, որք աւելի դնահատում են լուսի մէջ տրւած արծաթը, քան քեզ նման գոհարը, որ մթութեան մէջ է վալլում: Եթէ նոքա իմ կէսի չափ ճանաչէին քեզի դու շատ վիշտ չպէտք է ունենաիր. հազար ախոս: Ես էլ ալտանդ քո դարդն եմ քաշում, բայց քեզանով էլ զմալլում եմ... դո՛ւ մի վատիր, իմ քաջ դիւցաղնս, գործիր բարին՝ ի սէր բարւոյն, թէ մարդիկ չտեսնեն Աստուած աւելի լաւ կը տեսնէ... կեանքը ալտանդ չէ վերջանում: Միայն խօստացիր ինձ զգուշանալ առողջութեանդ մասին, առանց դորա ոչինչ կարելի է անել:

Յուսամ, պ. Ծովագետի, բժիշկիս ինձմքով դո՛ւն է մի երեք ամսից կարողանամ վերստին խօսել պալժառ ձա՛նով, բայց մինչ ալժ ժամանակ դեռ շատ վիրաբուժական գործողութիւններ պիտի կատարէ կոկորդիս մէջ՝ որոնք ինձ շատ ցնցում և նեղացնում են: Մինչ այս օրս 20 անդամ ալրեց երկաթով և դեղերով, հիմակ էլ սկսել է մի սուր գործիքով կտրել և պոկել ալրւած աւելորդ մսերը, շատ, շատ եմ տանջուում... բայց ինչ արած, Աստուած ուժ է տալիս, առանց դորան անհնարին է տանել ալժ «օ պ եր ա ց ի ա ն ե ը ը»: Գրամական ստեղծի նեղութիւն եմ կրում. սպտեղ ոչ ոք գիտնալ անգամ չուզեց. կարեորութիւն անգամ չէն տալիս, չեն զգում, մինչև անգամ... անամօթաբար գրում է թէ առողջ եմ, և թէ ինձ պիտի օգնեն... սուտ և սուտ...

Պր. Տօնապետեան ասաց թէ պ. Ջանպէղանովի նամակ են գրել, ես էլ խնդրեցի իրանից որ դրէ սխալ լինելը և թէ բացազրի իմ վիճակը... յորովհետև Տօնապետեանի ասելովը նոքա ուզել են եղել ինձ զրամական մի օգնութիւն ուղարկել ե... նամակից լետող թողուցել են ալժ նոպատակներն... տեսնում ես զժբաղդութիւնը. իրանք ոչինչ չարին, անողին էլ լսալիանում են զխտաւորութիւնը՝ սխալ լուրեր հաղորդելով...

Ինչ որ է, չուտով պատասխանիր ինձ խնդրեմ, որոչ և ստող սեղեկութիւն սուր ինձ առողջութեանդ մասին սիրով կողջունեմ...

Ձքեղ ի սրտէ չարող և սիրող կողարդ.

Թիւ 45

26 հակտ. 1890 թ. Կ. Պոլիս

Սիրելի եղբայր իմ Ս.

Ամեն շաբթու մէջ երկու կամ երեք անգամ իջնում եմ ի քաղաք բժշկիս երթալու համար, ալ վերջին անգամ սորանից երկու օր առաջ երբ կրկին մեքենազ զնելով զինեց կոկորդիս, բացարձակ ասաց թէ՛ ան-

պայման կերպիւ, զեռ շատ ամիսներ չի պիտի կարողանամ ներկայացնել, մինչ իսկ խօսելն արգելում է: Եւ գորանից լետոյ, ժամանակ անցնի, ու կոկորդիս վէրքերը փակեն և ներկայացնել սկսիմ, շատ զգուշ պէտք է լինեմ որ կրկին աւելի ծանր մի հիւանդութիւն չի սկսի կոկորդումս... Ինչպէս որ կը գուշակես, սարսափելի է իմ վիճակը և աննախանձելի: Թնչ պէտք է անեմ բոլոր այս ձմրան մէջ, սրտեղից պիտի ճարեմ պիտոզքներս զլիսատրաբար զեղերի և բժշկի ահագին ծախքերը... Ես, որ գիտես թէ ինչպէս էի սիրում արւեստոս, վարժած էի դորա չուզմունքներին, փասացը և քրտանց, հիմի դատապարտւած եմ առանձին և անընկեր, հիւանդ և մեղամաղձ բնակել մի աննշան գիւղի մէջ, չունենալով աշխատանք, և անհրաժեշտ պիտոզքներս հոգալու նիւթական միջոցներու մտածութիւնը և հոգը օրից օր աւելի և աւելի մաշում են ինձ: Նթէ բժշկիս խնամքները թողուլ կարելի լինէ՞ր՝ գուցէ կը մեկնէի Պոլսից, սակաչն անկարելի է, ուրիշ շատ բժիշկներ էլ վկայում են, որ զեռ երեք ամսի չափ պէտք է որ քնդունեմ նորա խնամքները, և սա էլ աւելորդ չի լինիր ասելը թէ՞ բժիշկս, կոկորդի, ականջի քթի հիւանդութեանց համար Եւրոպայում էլ առաջին պրոֆեսորի համբաւն ունի: Սակաչն այս բոլորը չէի գրել, սիրտդ չի վիրաւորելու համար. բաց անհրաժեշտ մասնաւոր եմ գրում որ ցոյց տաս աչն անձանց՝ որք քիչ շատ լիչելով իմ անցեալը՝ կարեկից լինեն իմ ցաւին, և ներկայումս իմ գրամական մի փոխատուութիւն անեն ինձ, որ քիչ թէ շատ պարտքերս վճարեմ, և կարողանամ սա ձմեռան ծանր եղանակը անցկացնել, էլ ում որ դու չարմար կը գտես ցոյց տուր. լաւ կը լինի եթէ պ. Աղէքսանդր Անլիք-Աղարեանցին, պ. շանպէտանեանին և պ. Փրիդոնեանին էլ ցոյց տաս:

Ներքէ, իմ եղբայր, քեզ սուած նեղութիւնս, բաղդ ձարահատեալ մնացի: Եթէ մինը գտնուի որ իմ գրածների մէջ (պապէս ասած) մի աւելորդ բան գտնէ, կը խնդրեմ նորանից, որ իմ բժշկապետից մանրամասն տեղեկութիւն հարցնէ նախ՝ որ ամեն բան ստուգւի. նորա հասչին նետեալն է.

Constantinople, Péra, Rue Adha-Hamam N° 40, Dr. F. Fotiades.

Վերջին նամակովդ իմացալ որ առողջ ես, և ես հոգով ուրախ եմ, միաչն խնդրեմ որ զգուշանաս այլ ես հիւանդանալուց. ազնիւ մօրկանդ, սիրելի Բաշինջաղեանին տուր իմ բարեներս: Անհամբեր կը սպասեմ նամակիդ. պառւհետե... ուղղակի ինձ գրէ (заказное) КОНСТАНТИНОПОЛЬ, Буюкдере.

Համբուրելով քեզ կարօտով, մնամ աննման սիրելութեանդ եղբայր ի սրտէ:

Թիւ 46

26 նոյեմբ. 1890 թ. Կ. Պոլիս

Սիրելի եղբայր իմ Ս.

Որքան ցաւ է ինձ, որ չնազելով քո նեղութեան և վաս զրութեան,

չարունակ իմ ցաւոյ և հիւանդութեան մասին գրելով՝ քեզ նեղացնում եմ. ներես, ազնիւս, չոյս ունիմ որ երբ լաւանամ, կարող պիտի լինեմ ես ինքս Աստուծով օգնել քեզ նեղ օրերիդ մէջ, և այն ժամանակը հետի չէ. առ ալժմ չուսանք առ Աստուած, հաւատանք և սպասենք աղօթելով...»

Քոյդ եղբայր ի սրտէ.

Թիւ 47

19 չուն. 1891 թ. Կ. Պ. Պէօլիւքտէրէ

Պատուական և սիրելիդ իմ Ս.

Ներքէ ինձ, որ աչքքան ուշ բարեմաղթում եմ քեզ նոր տարին, բաց բաւական է որ ի սրտէ կը ցանկամ քեզ համար լաւագոյն և բարեբաստիկ օրեր. ուրիմն փոքր ինչ ուշանալը չի վնասեր. արդէն դա մի սովորութիւն են արած մարդիկ. միմեանց բարեմաղթութիւններ անել ամեն նոր տարւաչ աւթիւ և այդ բարեմաղթութեանց մէջ աւելի լեզուներն են խօսում՝ քան թէ սրտերը: Ինձ որ մնալ, ոչ թէ միայն կը ցանկամ քեզ համար ամեն նոր տարին բարեբաստիկ, այլ մինչև անգամ կենացդ ամեն նոր օրերը, բերելով քեզ նոր ուրախութիւն և նոր չաջողութիւններ. բաց պիտի ասես թէ դժբաղդաբար այնպէս չէ լինում, սակայն փոյթ չէ. դու քո վշտաց մէջ հաւատն, աւելի սիրելի ես Աստուծոյ. քան շատերը իրանց բուբլիների դէզին մէջ: Մի մուսնար Քրիստոսի սասածը. «ամբարշտաց չաջողեսցի ի վերաջ երկրի»): մի մեծ իտալացի բանաստեղծ փիլիսոփայ Տանթէ Ալիկիէսի, ասում է թէ «հազար հաճուք մի վիշտ չեն արժէր»: Քիչ շատ համբերութեամբ տարւած վիշտը՝ մեզ Աստուծոյ է մօտեցնում: Նոքա որ մեծ վշտեր ունեն, երջանիկ են մի փոքր ուրախութեամբ էլ: Աստուած աւելի որոշ կը տեսնէ նորանց՝ որոնք որ անտես են թողւած մարդիկներին: Սակայն ուկրաինոսի մէջ խրած մարդարիտը, ժառուրի ծոցին մէջ թաղւած ազամանդը՝ ծածկւած են թէպէտ մարդերից, բաց որոշ կը փաշլին Ստեղծողի աչացն չանդիման. ինչպէս դու, իմ թանկագին հերոսս, որ ծածկւած ես աղքատութեանդ համեստ քոզին տակ. բաց չիշէ որ կալ մի աչք քեզ տեսնող և այլ աչքից պիտի ծագէ մի օր հողուղ լոյս և մխիթարութիւն, և աչք իմ ասածները փորձով գիտեմ: Գու ուրախացիր որ ունիս հողուլ և սրտի հարստութիւն, և ցաւէ զոցա վրալ, որք աղքատ են այն կողմից. զի այդ է ճշմարիտ աղքատութիւնը:

Ինչպէս որ երևում է, կոխի դրութիւնը անչաջող են գտնում բժիշկները և դեռ չեն համարձակւում բացարձակ կերպով ներարկել հիւանդներին, որովհետև փոխանակ բժշկելու կամ սպաննում է և կամ մի նոր տարօրինակ հիւանդութիւն է չառաջ բերում. ուստի իմ բժիշկն էլ չէ ուզում իմ վրալ փորձել. դորա փոխարէն տալիս է մի դեղ, որից ընդունում եմ օրը 6 չալի դրալ, մեծ նեղութեամբ, և որի մէջ քրէօզոլ կալ և որ սաստիկ աչրում է կոկորդս և բերանս: Սակայն ինչպէս երևում է, սարա-

նից օգուտ պիտի տեսնեմ, որովհետև վերքը փոքր ինչ մեղմացած է թուում սակալն սաստիկ ձմեռն ու ցուրտը, որ տիրում են այստեղ, դանդաղեցնում է իմ բժշկութիւնը: Նրեակալէ, ես որ սիրում էի նստել, խօսել բարեկամաց ընկերութեան մէջ, այժմ ոչ ընկերութիւն ունիմ մօտս և ոչ ձալն, թէ լեզուս միայն չարժել կամենամ սաստիկ ցաւ կը զգամ, վերջապէս կեանքս անցնում է առանձին, տխուր, միօրինակ, անձալն և անդրամ:

Մեծ է չոյս և հաւատքս առ Աստուած, որով կարողանում եմ դիմանալ իմ այս ցաւալի վիճակին, և չուսալ որ մի օր պիտի կարողանամ զըրկել և համբուրել զքեզ կրկին:

Քոյզ ի սրտէ և ի մտաց.

Թիւ 48

22 փետր. 91 թ. Կ. Պ. Բէրա.

Նշան-թաղ ուսական հիւանդանոց

Իմ անդին բարեկամս Ս.

Քո ձեռամբ ուղարկւած 80 ռ. և չետոյ կրկին ալսօր 162 ռ. գումարները ստացալ ամբողջապէս, էլ իմ շնորհակալութեան չափ չի կաշ. այդ մասին արդէն պիտի գրեմ «Մշակ»-ի մէջ, հէնց որ մի քիչ ուժերս վերադառնան:

Ներէ ինձ, որ ուշ եմ պատասխանում քեզ, սակալն չէի կարող սաստիկ տկարութեանս պատճառով: Հիմալ որ գտնուում եմ ուսուց սուրբ Նիկողոսեան հիւանդանոցում, շատ աւելի լաւ եմ զգում ես ինձ, օրը երեք անգամ ընդունում եմ բժիշկների այցելութիւնը, մանաւանդ բուն իմ մասնագէտ բժիշկս Միխայիլ Օսիպովիչ Պիտկով, լիովին չոյս է տալիս բժշկել ինձ. արդէն ամենօրեալ կատարած վիրաբուժական գործողութիւններից մեղմացել է կոկորդիս ցաւը. փնտք Աստուծոյ:

Հէնց որ մի քիչ ձալնս լուելու չափ կարողանալ գուրս գալ և գորանամ, պատւիրում է ինձ ճանապարհորդել ծովեզերեալ քաղաքներ, մանաւանդ Իտալիայ:

Սրտիդ խռովութիւնը թող ալ ևս հանդարտի. կարծեմ որ պիտի կարողանամ կրկին տեսնել, գրկել զքեզ. քոյզ եղբայր ի սրտէ:

Պ. Տօնապետեան սրտազին ողջունները կուղարկէ քեզ: Նթէ կարելի է օպերալի թարգմանւած լիպրէթից մի հատ ինձ ուղարկիր: Վաղուց է որ չեմ ստացել «Տարազ» և «Աղբիւր»: Քոյզ:

Թիւ 49

4 մարտ 1891 թ.

Русская Николаевская Больница № 7.

Ամենասիրելի բարեկամս Ս.

Քեզ նման ես էլ կարող եմ գանգատել նամակներով չափազանց ուշ հասնելուց: Նրեակալիր, վերջին նամակդ որ գրւած է փետրւար 8-ին ես ստացալ այստեղ 28-ին, չեմ իմանում ինչ բան է այս. արդէն անցեալ

չարթուալ մէջ ուղարկեցի քեզ մի նամակ, ուր լայտնում եմ 80 և 162 ո. գումարներին ստանալս...

Ինձ համար շատ ծանր է աչքան երկար դրել: Վստահ եղիք. չալան-  
ւեցաւ որ կոկորդիս ցաւը հիւժախտ չէ, պէտք չկալ Կոխի և ալին. բժիշկս  
չանձն է առնում ինձ բուժել, բայց որքան լինի **хроническiй гор-  
ловой катаррѣ** թեթեւ բան չէ, շատ թույլ է ձգում ինձ. ալժամ 1000 ո.  
աւել ունիմ հաւաքւած ալտեղ, մի կողմից էլ փառք Աստուծոյ, ուղար-  
կում եմ... տեսնենք չետոյ ամենաբարին Աստուած քնչ ցուց կը տալ:

Համբուրելով քեզ մնամ անզուգական սիրելութեանդ անձնէր կղբալը:

Թիւ 49

19 մարտ, 1891 թ. Կ. Պոլիս

Русская Николаевская больница № 7.

Սիրելի եղբայր իմ Ս.

Անձ մի ամուտայ մէջ սա երրորդ նամակն է որ ուղարկում եմ քեզ,  
երէկ ստացալ քո վերջին նամակը՝ մարտ 2 թնականով, աչսոր 19 մարտի,  
ուստի նամակդ հասել է ինձ 18 օրւան մէջ: Սա ինչ գարմանալի բան է:

Յուսամ առաջին երկու նամակներս արդէն ստացած կը լինես, ուր  
չալանած եմ կրկին և կրկին թէ ստացալ 80—162 և աչս վերջին ուղար-  
կածդ 101 ուրբու գումարները. Ծովկանովների ուղարկած 4 ոսկին նոյն  
պէս ստացել եմ:

Ինձ խնդրում ես ընդհանուր մի շնորհակալութեան չօղւած գրել,  
միթէ կարծում ես որ աչդ բանը վաղուց է ես չեմ խորհում, միթէ աչդ  
իմ սուրբ պարտքն ու պէտքը չէ: Սակայն աչն աստիճան տկար եմ, որ  
քաջ եմ գալիս սենեկի մէջ, և աչսքանը որ քեզ գրում եմ գիտցիր մեծ  
դժուարութեամբ է: Առանց նախելու տկարութեանս, դարձեալ գրած կը լի-  
նէի մինչև հիմա, սրտիս զգացմունքը, որ տպւէր «Մշակ»-ի մէջ, սակայն  
սպասում էի որ Տփլիսի տրւած նպաստս ալ՝ 400 ո., ընդունիմ, որպէս  
զի դորա մասին էլ կարողանամ գրել շնորհակալութիւն: Աչս անգամ նա-  
մակս ուղարկում եմ պ. Զարեհի ձեռամբ:

Յողնեցալ, աչ ևս չեմ կարող շարունակել. ինձ հարցնողաց. Գէորդ-  
գին, ազնիւ մօրկանդ բարեներս. շուտ շուտ պատասխանիր.

Քո կարօտակէզ եղբայրդ:

Թիւ 50

3 ապրիլ, 1891 թ. Բերալ,

հիւանդանոց սուտայ

Իմ անգին Ս.

Վերջին նամակդ ստացալ 22 մարտ թ.: Սաստիկ տկար եմ. անձ  
աչն շնորհակալութեան չօղւածը, որ երեք օրւալ մէջ կարողացալ գրել, և  
որ ուղարկում եմ քեզ՝ խնդրելով որ չանձնես պ. Արծրունուն, որ հրա-  
տարակէ չուսով «Մշակ»-ի մէջ: Խնդրիր պ. Խաչատուրեանից որ ժամ  
առաջ ուղարկէ 350 ո. որովհետև ամսուս 16-ին դուրս կը գամ հիւանդա-  
նոցից Աստուծով. իսկ մալիսի մէկին՝ Պոլսից գէպի Խաչալիա, Վենետիկ:

Շուտ գրիր, Բէթէրպուրկի քոնսէրը քնչ եղաւ: Քուզ եղբայր:

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԼԵԻՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

(Շարունակութիւն 1)

## VII

ԼԵԻՈՆԸ ՍՄԲԱՏԻՆ

„Наставникамъ, хранившимъ нашу младость,  
Не помня зла, за благо воздадимъ“.

Ամեն մի պարտաճանաչ աշակերտ, աւարտելով դպրոցը, կարող է սրտից արտասանել հռչակաւոր բանաստեղծի այս երկտողը: Նա պատրաստ է ներելու իւր ուսուցչին նորա պատճառած վիրաւորանքը, եթէ այդպիսին տեղի է ունեցել, պատրաստ է մոռանալու նոյն իսկ նորա անարդար մի վարմունքը. բայց նա չի մոռանալ այն մեծ բարիքը, որ ստացել է իւր դաստիարակից. մինչև կեանքի վերջը նա երախտապարտ կը մնայ դէպի այն անձինք, որոնք հրեշտակ-պահապանների պէս, խնամել են նորա պատանեկութիւնը, միշտ առաջնորդել դէպի բարին և ճշմարիտը, կրթել նորա միտքը և հոգին: Թրհնեալ լինի նա, որ սաների համար եղել է ուսուցիչ— դաստիարակ բառիս բուն նշանակութեամբ:

Ինչո՞ւ չի սիրտի զուրս բերեն ձեր դպրոցից խեղճ աշակերտները? Ախ, ես հոգոց եմ հանու՛մ, երբ ցանկանում եմ պատասխանել այդ հարցին:

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 1, 2, 3 և 4:

Թողնելով ուսումնարանը, նոքա չպիտի կարողանան ասել. «մենք ցաւով ենք թողնում այս վայրը, ուր անց է կացել մեր ոսկի պատանեկութիւնը»: Ո՛չ, նոքա հրճանքով պիտի դուրս ցատկեն ուսումնարանի դաբպասից, ինչպէս բանտարկեալները, որոնց՝ ազատելով շղթայից և խաւարից, լոյս աշխարհ են հանում: Նոքա լի կրճքով շունչ կը քաշեն և կասեն. «Ս՛, վերջապէս ազատեցինք այս դժոխացի տանջանքից, այս դրակոնի զէմքից, այս ագէտ և նեղսիրտ դահիճներից»!

Ինչպիսի թշնամանք, որքան դառնութիւն, որքան մաղձ պիտի սնուցանեն նոքա իրանց սրտերում զէպի իրանց անգութ և անարդար տանջողները...!

Սիրելի Սմբատ! ներիր, որ ես ոչ մի բանով չեմ կարող քեզ մխիթարել: Ձգիտեմ, եթէ մեր դպրոցի նախանձեղի դրութիւնը շարունակեմ նկարագրել, քեզ ցաւ կը պատճառեմ թէ ուրախութիւն: Մեր ուսումնարանը օրէցօր բարեկարգւում է, և այժմ նա դարձել է պայծառ իդէալների և ոգևորութեան մի տեսակ սրբավայր: Երէկ տօնեցինք մեր ուսումնարանի հիմնադրութեան քսանամեակը <sup>1)</sup>: Հանդէսը աւելի շքեղ դարձնելու համար, աշակերտները մի շաբաթ առաջ արդէն սկսել էին պատրաստութիւններ տեսնել: Ազատ ժամերին—աշխատում էին: Որը—գոյնզգոյն թղթերից շղթաներ էր շինում, որը մոզական լապտերի և ելեքտրական լոյսի վերայ էր աշխատում: Ծախսը հոգացել էին իրանք աշակերտները. իսկ պակասը լրացրեց ինքը դպրոցական վարչութիւնը:

Երեկոյեան ուսումնարանը մի դիւթական տեսարան էր ներկայացնում: Եինութեան առաջնակողմը զարդարած էր զիրլանդներով, գոյնզգոյն լապտերներով և դրօշակներով: Նոյնպէս լուսաւորւած էր և ծառազարդ լայն բակը: Այս ու այն կողմում երբեմն վառւում էր կարմիր և կանաչ բենգալեան հուրը: Երբեմն ճարձատում և թնդում էին փամփուշտները, որոնք բարձրանալով հեռու հեռու, պայթում էին և գոյնզգոյն աստղերի պէս ցած թափւում: Եինութեան տանիքից փայլում էր ելեքտրական լոյսը, որ կարծես արուսեակը լինէր իջած երկնքից մեր հանդէսը շքեղացնելու հա-

<sup>1)</sup> Ես կը նկարագրեմ միայն երեկոյեան հանդէսը:

մար: Մի այլ տեղ ցոյց էին տրւում մոզական լապտերի միջոցով մեր զանազան հասարակական գործիչների պատկերները:

Ուսումնարանի մուտքի առջև, սիւնապատ բարձրութեան վերայ տեղաւորւած էր երգեցիկ խումբը, որ Փիլզ-հարմոնի ձայնակցութեամբ թնդեցնում էր օդը գեղեցիկ կանոնաւոր քառաձայն երգեցողութեամբ...

Այս բոլորը հրաշալի էր և ոգևորիչ!

Ժամի իննին կողմնակի հասարակութիւնը ցրւեց: Մնաց դպրոցական ամբողջ մարմինը: Իսկապէս փառաւոր հանդէսը դեռ յետոյ էր: Կնացիկք հանդիսարան: Մեծ սեղանի շուրջը տեղաւորւեցին սեսուշը, ուսուցիչներս և վերակացուները: Այնտեղ էին և բոլոր սաները:

Այս ժողովը, այս հանդիսարանը, այս երեկոն—անմոռանալի կը մնան մեզ համար: Մեր կեանքի ամենաքաղցր յիշողութիւններից մէկը կը լինի այս օրւայ հանդէսը: Մեզ թուում էր թէ մենք ամենքըս կազմում ենք մի ընտանիք: Տեսուչը կարծես ընտանիքի հայրը լինէր: Մեր դիւին, հանդիսարանի բարձր դմբեթում, կարծես ուրախ-ուրախ ձախրում էին սիրոյ և միաբանութեան հրեշտակները...

Ուսուցիչներից մէկը առաջարկեց տեսչի կենացը: Տեսուչը վերկացաւ և արտասանեց վերին աստիճանի ոգևորիչ, զգացած մի ճառ: Ճառի միտքը այն էր, թէ մեզ բոլորիս այստեղ միացրել է գիտութիւնը և փոխադարձ սէրն ու յարգանքը: Նորա խօսելու ժամանակ շատերի աչքերին ես նկատեցի ցնծութեան արտասուքի փայլուն կաթիլներ: Երբ նա վերջացրեց, հանդիսարանը զզրդած ծափահարութիւնից և կեցցէներից:

—Մի երգ, ասաց ուսցիչներից մէկը, դառնալով սաներին:

—Այն, այն, հարկաւոր է երգել, պատասխանեց երգեցողութեան ուսուցիչը: Ի՞նչ հօ ձանաչում ես նորան, Սմբատ? Ղոնէ լսած ես նորա մասին? Ինչպէս լսած չլինիս նորա անունը. քանի որ ամբողջ Կովկասին յայտնի է նա, քանի որ նա մեր նշանաւոր հայ գործիչներից մէկն է? Ինչպէս Բաֆֆին առաջինը սիրել տւեց հային ընթերցանութիւնը, ինչպէս Ադամեանը առաջինը հիացրեց հայ հասարակութեանը իւր հանձարեղ դերակատարութեամբ, նոյնպէս և սա առաջինը հնչեցրեց հայ ժողովրդի ականջին քառա-

ձ ա չ ն քաղցրիկ երգեցողութիւնը, փոխանակ նախկին միաձայն երգեցողութեան: Մեր քաղաքակրթութեան պատմութեան մէջ նա, ի հարկէ, իւրպատուաւոր տեղը կը բռնէ: Սա այնպիսի մի գիւտ է մեզ համար, որ նորան աչքի յոյսի պէս պիտի պահենք մեր ուսումնարանում: Նա ոչ միայն սովորցնում է երգեցողութիւն և երաժշտութիւն, ոչ միայն ապագայի համար պատրաստում է խմբապետ-ուսուցիչներ, այլ և իւր բոլոր էութեամբ մի մարմնացած ոգևորութիւն լինելով, մեզ ամենքիս պահում է մշտական ոգևորութեան մէջ:

Տեղից վերկենալով, նա գնաց նստեց հանդիսարանի մէջտեղում դրւած դաշնամուրի մօտ (այդ դաշնամուրը նոր է ստացւել. նորան բերել տեց տեսուչը ուսուցչի առաջարկութեամբ): Մի քանի ակկորդներ վերցրեց և ապա թաւաբաշ առիւծի պէս թռաւ տեղիցը և երեսը դարձնելով դէպի աշակերտները, որոնք իսկոյն ոտքի կանգնեցին, տեց տեմպոն: Անմիջապէս հնչեց խորիստ «Թանգիտոտան»-ը: Յետոյ խմբեցին ուսուցիչների, վերակացուների և սաների կենացը: Անն մի կենացին շարժողում էր երգը:

Խօսեցին ճառեր ուսուցիչներից մի քանիսը: Մի քանի խօսք խօսեցի և ես: Ես ասացի, թէ այժմեան սաներից է կազմելու ապագայ երիտասարդութիւնը, որ պիտի գայ և բռնէ մեր ժամանակակից սերնդի տեղը և շարժողութեամբ շարունակէ մեր սկսած գործը: Գործը շարունակելու համար հարկաւոր է աւելի պատրաստութիւն: Այլապէս աներևակայելի է յառաջադիմութիւն ասած բանը: Թող ուրեմն լաւ հասկանան նոքա, որ միայն լուրջ աշխատանքով և ինքնակրթութեամբ հնարաւոր կը լինի ձեռք բերել ցանկալի պատրաստութիւնը և այլն: Սա էր ընդհանրապէս իմ խօսածի միտքը:

Ապա բարձր դասարանի մի աշակերտ կարգաց իւր շարադրութիւնը, որի վերնագիրն էր «Կեանքը կախ է», մի ուրիշը կարգաց իւր դրւածքը «Գիտութեան իշխանութիւնը»: Յետոյ կարգացին մի քանի ոտանաւորներ: Մէկն էլ արտասանեց սեփական բանաստեղծութիւնը «Ազնիւ գործիչին»: Ոտանաւորը բաւականին շարժուած էր պատանի բանաստեղծին: Սա, պէտք է նկատել, ապագայ է խոստանում, և մեր ուսուցիչներից մէկը երբեմն հաւանութիւն է տա-

լիս նորա գրածներին և ուղղումս—Մանուկանդ մեծ տալսորու թիւն թողեց մի ուրիշ աշակերտի կարգացած բանաստեղծութիւնը, որ ինքը յաջող թարգմանել էր ուսերէնից: Երբ նա արտասանեց այս բանաստեղծութեան այն տունը թէ՛

„Друзья! дадимъ другъ другу руки  
И смѣло двинемся впередъ!  
И пусть подъ знаменемъ науки  
Союзъ нашъ крѣпнетъ и растетъ“!

Հանդիսարանը թնդաց բուռն կեցցէներից և երկարատև ծափահարութիւններից...

Այս երեկոն, իւր բազմակողմանի բովանդակութեամբ, այնքան թարմեցուցիչ և ոգևորող էր, որ թէ աշակերտները և թէ մենք, ուսուցիչներս, աշխատելու նոր եռանդ ստացանք: Այնպիսի երեկոներ, երբ ընկերական քէֆը, երգեցողութիւնը, գրական բաժինը միանում են իրար հետ, այնքան օգտակար են դպրոցական կեանքում, որ նոյն իսկ անհրաժեշտ է թւում ինձ կրկնել այդպիսի երեկոներ տարին զոնէ երկու անգամ: Եթէ սաների և դասատուների մէջ հաստատուած են որոշ հոգեկան կապեր, այդպիսի երեկոներն, անշուշտ, աւելի ևս կամրացնեն եղբայրական սիրոյ և յարգանքի այդ կապերը:

Ներքի, սիրելիս, այս երկարաբանութեան համար:

Այժմ գու գրիր ձեր դպրոցի նորութիւններից:

Մնամ նամակիդ սպասող

Քո Լեւոն:

## VIII

### ՍՄԲԱՏԸ ԼԵՒՈՆԻՆ

Անգին բարեկամ! շտապում եմ անա քեզ մի նորութիւն հաղորդել մեր դպրոցական կեանքից: Նորերս ես իմացայ, որ մեր ուսումնարանի աշակերտները սկսել են հրատարակել մի երգիծաբանական շաբաթաթերթ «Սաղայէլի կրթարան»: Ինչպէս երևաց, թերթին աշխատակցում են ամենալուրջ և սրամիտ աշակերտները:

Ծագրի նիւթ-որքան կ'ուզես: Ծիծաղի գլխաւոր մատակարարը մեր դպրոցն է իւր ներկայ կազմութեամբ: Նրակոնի խրատները,

սովորութիւնները, անցեալը, վերակացուների բարք ու վարքը, ուսուցիչների դասաւանդութիւնը և անցեալը, զպրոցի ծառաները, դռնապանը—կարելի է ասել, ոչ մի դէպք, ոչ մի անձնաւորութիւն, ոչինչ չէ խուսափում մեր սրամիտների աչքից:

Այդ թերթի մասին քեզ գաղափար տալու համար ես կը բերեմ վերջին համարից մի քանի նմուշներ:

Առաջնորդողի վերնագիրն է «Թրատներ Սաղայէլի սանիկներին»: «Եթէ ցանկանում ես լինել ազգի և ճնողների արժանի զաւակ, պէտք է կատարես այն բոլոր խրատները, որ մի առ մի բերում է այստեղ յօդաւածագիրը:

Առաջինը, դու պարտական ես սիրել և յարգել քո տեսչին, քո ուսուցիչներին, ընկերներին: Եթէ չես կարող սիրել, պէտք է գոնէ յարգես, եթէ չես կարող յարգել, գոնէ պիտի ցոյց տաս, որ յարգում ես: (Աեղծաւորութիւնը պարտադիր է): Նախ և առաջ դու պարտականութիւններ ունես տեսչիդ վերաբերմամբ: Դու պարտաւոր ես հսկել քո ընկերների վերայ, ահանջ դնել նոցա խօսակցութիւններին, դրակոնին հասցնել այն բոլորը, ինչ որ կատարւում է նորան ընդդէմ. դու պէտք է հազորդես նորան, թէ ով ինչ է ասում նորա մասին, ով երբ և ինչ հակակրօնական կամ հակաբարոյական բառ է արտասանում, լինի նա աւաճ լուրջ թէ կատակով, ով չէ խաչակնքում երեսը աղօթքի ժամանակ, ով է ծիծաղում կամ ձեռքերը մէջքին դնում եկեղեցում: Եթէ ամեն բան չես կարող չիշել, գրի՛ր չիշատակարանիդ մէջ: Լրտեսներին Գրակոնը ընդունում է իւր առանձնասենեակում ժամի 11 մինչև 12 առաւօտեան, իսկ երեկոյեան ժամի 7—8: Եթէ այս խրատը չկատարես, դու անպարտաճանաչ ես:

Երկրորդ, դասի միջոցին պէտք է նստես լուռ, չխօսես, չծիծաղես: Ծիծաղել կարող ես միայն այն դէպքում, երբ ուսուցիչը ինքը ծիծաղում է և ուզում է, որ դասարանն էլ ծիծաղի: Երբ ուսուցիչդ դաս է բացատրում, դու պէտք է աչքերդ նորա աչքերից հեռացնես, դէմքիդ խաղացնես մեղմ ժպիտ, այնպէս որ նա իմանայ, որ դու հիանում ես նորա պատմածի վերայ: Անտեղի հարցեր չպէտք է տաս ուսուցչին, որովհետև նա կարող է կարծել, թէ նորան փորձում ես: Եթէ այս խրատը չկատարես, դու ըմբոսս ես:

Ահա այս ոգով բերւած են և մի քանի ուրիշ խրատներ:

Հիմն տես, սիրելիս, Վաղայէլի կրթարանի մանկավարժներին՝ ոտից մինչև գլուխ: Նոցա իւրաքանչիւրի պատիերը նկարագրւած է բանասիրականի մէջ:

Յարութիւն Մինասեան — դասուանդում է հետևեալ առարկաները. քննաբանութիւն ս. Գրոց, մեկնութիւն ս. Գրոց, համաբանական ասուածաբանութիւն, ասուածաբանական բարոյականութիւն և գտւանաբանութիւն:

Միջնակարգ կրթութիւնը ստացել է Ներսիսեան դպրոցում, մի քանի տարի մնացել է արտասահմանում, որտեղ լսել է ասուածաբանական առարկաները և վերադարձել հայրենիք ասուածաբանութեան դոքտորի աստիճանով: Գորա ապացոյցը կարելի է զտնել նորա այցևոտման վերայ: Առաջ սա մեր դպրոցում ուսուցիչ էր, բայց նախկին տեսուչը, տեսնելով, որ նա չէ համապատասխանում իւր կոչմանը և միայն խլում է սաների ոսկի ժամերը, արձակեց նորան, թէպէտ այդ պարոնը ոչ մի դէպք չէր թողնում, որ չըղոքորթէր տեսչին: Նոր տեսուչը, որի հետ նա բարեկամացաւ, նորից հրաւիրեց ասուածաբանին ի մեծ սուգ և ցաւ բոլոր սաների առանց բացառութեան: Սկզբում այնքան դժգոհ էինք, որ մեզ, կարելի է ասել, քիչ էր մնում ստիկանական միջոցներով քշէին դասարան մեր փիլիսոփային լսելու: Այժմ սովորել ենք, և նորա դասին կամ քնում ենք, կամ զւարճանում նորա խորիմաստ ճառերը լսելով: Յաճախ պատահում է, որ ամբողջ դասը վիճում ենք հետը նորա դասախօսութեան այս կամ այն կէտի նկատմամբ, և ամեն անգամ նա դուրս է դալիս դասարանից՝ երեսը, ձախտը և ականջները կարմրած (պէտք է, սակայն, խոստովանել, որ սա միակն է ուսուցիչներից, որ թոյլ է տալիս վիճել դասի ժամանակ): Առարկայից նա անցնում է շատ շնչին բան և անցածի օգուտը ոչինչ բան է: Խօսում է աշխարհաբար, իսկ գրում է աշխարհաբարի և դրաբարի խառնուրդով: Նորա ամենամեծ արատը — մեծամտութիւնն է: Նա կարծում է թէ ինքը մի չգնահատուած տաղանդ է և այնպիսի զրքեր պիտի տպէ, և այնպիսի բաներ անէ, որ աշխարհը վերան գարմանայ: Ալիշանը և նրա նման հասկաները նորա համար թզուկներ են: Այժմ նա իրան ցոյց է տայ

լիս ամենաջերմ պաշտպան ներկայ տեսչի ուղղութեան և ամենաջերմ հակառակորդ սորա նախորդին:

Ս է թ Տ է ր-Ս տ ե փ ա ն ե ա ն — դասուանդում է կրօն և Հայաստանի աշխարհագրութիւն: Ոչ միջնակարգ, ոչ բարձրագոյն դպրոց չէ աւարտած, բայց երկուսի հօտն էլ աւած է: Ինքը արդէն մօտ է ծերութեան հասակին. մազերը սպիտակում են: Շատ տեսուչներ, շատ ուսուցիչներ, շատ վերակացուներ են փոխել նորա քսանամեայ ծառայութեան միջոցին, շատ մրրիկներ են անցել մեր դպրոցի վերայով և տակն ու վրայ արել նորան, բայց միայն նա է, որ մնացել է անյողողղ, ինչպէս ժայռ, անմնաս, ինչպէս մի ձկուն բոյս, որ չարմարելով հողմի ուղղութեան, հեզ գլուխը թեքել է այս ու այն կողմ և ողջ մնացել, մինչդեռ նորա հարեւան հաստաբուն կաղնիները, դիմադրելով մրրիկի զօրութեանը, չաճախ ճարճատուելով կոտրել ընկնել են գետին: Սորա սոկունութեան գաղտնի կայանում է ոչ թէ նրա կամքի և մեծ խելքի մէջ, այլ այն բանի մէջ, որ կոչւում է չարմարելու արեւստ:

Այդ արեւստն է միայն, որ նա կատարելագործել է ամենայն մանրամասնութեամբ: Այդ արեւստն է միայն, որի շնորհիւ այնքան ամուր, անսասան է դարձել նորա գոյութեան չենարանը: Եթէ տեսուչը սիրում է դիտութիւն, սա իւր սրբազան պարտքը կը համարէ բացականչել բոլորի առաջ.

«Գիտութիւն, պարօններ, դիտութիւն!» Իսկ եթէ տեսուչը այլ բանէ պահանջում, նա ևս այլ կերպ կը բացականչէ: Բայց ինչ դրութեան մէջ էլ լինի դպրոցի կարգապահութիւնը, նա միշտ դժգոհ է, միշտ գանգատաւոր. մշտական տրտունջ և տրտունջ: «Աշակերտները ծուլացել են! աշակերտները անուշադիր են! աշակերտները իրանց պահել չգիտեն! այս ինչ սարսափելի դրութիւն է!» այսպիսի բացականչութիւններով է նա դուրս գալիս դասարանից, այսպիսի յօսահատ բացականչութիւններով է մտնում ուսուցչական սենեակը և ցուցակը շարտելով սեղանի վրայ՝ ձեռքը զրպանում՝ անց ու դարձ անում այնտեղ: Մի կամ երկու փաստից նա պատրաստ է ընդհանուր եզրակացութիւն անելու: Բաւական է եթէ երկու աշակերտ խօսեցին կամ ծիծաղեցին դասի միջոցին—աշակերտները իրանց պահել չգիտեն! բաւական է, որ մի աշակերտ

դասը սովորած չլինելով, հրաժարեց պատասխանելուց—աշակերտները—ծուլացել են! Ահա այսպիսի տարօրինակ մի պատուղ է մեր Սէթը: Ընդհանրապէս, աշակերտի հոգու փոքր ինչ ազատ արտայայտութիւնը հակառակ է նորա ամբողջ էութեանը, և նա մի անմեղ դէպքը այնպիսի յուսահատական ձայնով, այնպիսի սարսափելի գոյներով կը նկարագրէ, որ լսողը կը կարծէ, թէ դպրոցը փլեւելումս է: Բայց չպէտք է մոռանալ, որ նա պարտաճանաչ ուսուցիչ է, հեշտ հեշտ դաս չի թողնիլ, դասին միշտ աշալուրջ է և արթուն, իսկ դասը պատմում է այնքան բարձր, որ նրա ձայնը լսելի է լինում նոյն իսկ փողոցում:

Նա մարդուն ոչ սիրում է, ոչ ատում. գուցէ այդ է պատճառը, որ մենք ևս ոչ սիրում ենք նորան, ոչ ատում: Անտարբերութիւն երկու կողմից էլ:

ձիշտ է, նորա յուսահատական բացականչութիւնները երբեմն առիթ են տալիս Գրականին փալասի նման փողոց շարտելու աշակերտին, բայց շատ բան նորան ներում է, որովհետև նորա պատճառած վնասը առաջ է գալիս աւելի միամտութիւնից, քան թէ չար զիտաւորութիւններից:

Մ ու շ ե ղ Գ Ր Ի զ Օ Ր Ե ԱՆ—դասաւանդում է մանկավարժութիւն, հոգեբանութիւն, տրամաբանութիւն, բարոյագիտութիւն: Անայելով որ սա պարտաճանաչ ուսուցիչ է, նւիրած իւր գործին. շնայելով, որ յաճախ մեզ հաղորդում է բաւականին հետաքրքրական տեղեկութիւններ, մենք, այնու ամենայնիւ, չսիրեցինք ոչ նորա անձնաւորութիւնը, ոչ նորա առարկաները:

Պատճառն այն է, որ նա ունի մի քանի խոշոր պակասութիւններ, որ դարձնում են նորան վերին աստիճանի անհամակրելի, նոյն իսկ ատելի:

Առաջինը, նա չըխտէ ինչ աւել է յարգել աշակերտին, երկրորդ, անխնայ է յանցաւոր կամ այդպէս կարծւած աշակերտի վերաբերմամբ:

Վայ այն աշակերտին, որ իրան թոյլ տւեց համաձայն չլինել նորա մի մտքի հետ:

—Նստի՛ր, կը հրամայէ նա. եթէ ուսուցիչը դու ես, դու արի պատմի՛ր:

—Պարոն ուսուցիչ...

—Փիլիսոփայութեան ժամանակ չէ՛ մի՛ խանգարիլ:

Այդպիսին նորա աչքում ըմբոսա է և անպատկառ: Նա կարծում է թէ յարգել և սիրել աշակերտներին նշանակում է երես տալ նոցա: Չտեսնելով սանիկի հոգու մէջ բարոյականութեան առողջ սերմեր, նա հաւատացած է, որ աշակերտներին պէտք է սանձած պահել, ինչպէս ձիուն, և նոցա կարգ ու կանոն սովորցնելու միակ միջոցն է—երկիւղը և պատիժը: Ահա ինչու, երբ մէկին արտաքսելու առիթ է պատահում, ասում են, մանկավարժական ժողում նա անողոք է դառնում և բռունցքը սեղանին խփելով պահանջում է, որ յանցաւորը հեռացւի ուսումնարանից: Սորա բռունցքը որոշում է մեղապարտ սաների վիճակը:

Համբարձում Մակարեան: Արտեղ է ստացել իւր կըրթութիւնը, երբ է սկսել ուսուցչութիւնը—ուշինչ յայտնի չէ: Դասաւանդում է Փրանսերէն, հայոց պատմութիւն և թւաբանութիւն! Տոյլ և անպարտաճանաչ—վերին աստիճանի: Ամեն շաբաթ մի քանի դաս պիտի թողնէ, պատճառ բերելով տկարութիւնը:

Եթէ տրամադրութիւնը ուրախ է, քէֆը տեղումը, գլուխը տաքացած, նա կը սկսէ խօսել դէսից դէնից: Կը պատմէ իւր ընտանիքից, կը գովէ իւր աղջկայ գեղեցկութիւնը, կասէ թէ որտեղ անցկացրեց երէկ զիշեր և այլն: Մէկ էլ տեսար, աչքը ընկաւ մի աշակերտի կօշիկի վերայ, որի տակը դուրս է եկած. նա կը նկատէ աշակերտին, թէ ինքը, ահա մի տարի և կէս է բանեցնում է իւր կօշիկը (այդ բոպէին բարձրացնում է ոտը կօշիկը ցոյց տալու), դեռ մի կէս տարի էլ քաշ կը տայ և այլն: Իսկ եթէ բարկացած մտաւ դասարան, վայ մեր օրին! Բաւական է այդ ժամանակ մի չնչին առիթ, օրինակ, մի անտեղի ծիծաղ, որ նա կատաղի: Եւ ինչպէս է կատաղում մեր Համբարձումը! Ասուած ազատէ! Ոտները գետնին է տալիս, թակարդ ընկած մկան պէս, վազվզում անկիւնից անկիւն, գոռում և խօսում այնքան արագ, որ թուքը, հողմախառն անձրևի նման, տալիս է դասարանի պատերով: Եւ ինչեր չեն զալիս նորա բերանը այդ միջոցին. « Խնդ, իշի մարգարէ, ապուշ, չիմար, անզգամ... »: Այդ բոպէին նա խփում է ըմբոստին ինչ ձեռն է ընկ-

նում—մատիտ, գրիչ, գիրք... Այս բոլորը, սակայն, մեզ զւարճութիւն է պատճառում:

Ոսկան Քասպարեան—սա պատկանում է հին սխոլաստիկների սերնդին:

Հայերէնի դասատուն է սկսած երկրորդ դասարանից մինչև վեցերորդը:

—Կարդա՛, հրամայում է աշակերտին:

Աշակերտը կարդում է:

—«Յայնժամ մատեան առ Յիսուս՝ որ յԵրուսաղեմէ փարիսեցիքն և դպիրք՝ և ասեն. ընդէր աշակենտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցնս:

—Վերլուծիր

—Մատեան—բայ, փարիսեցիքն և դպիրք—ենթակայ, ասեն —ստորագեալ...

—Ինչ ժամանակ է մատեան?

—Վատարեալ:

—Ապրես: Խոնարհիր ներկան:

—Աշակերտը խոնարհում է:

—Ապրես, ապրես: Ինչ հոլով է դպիրք?

—Աշակերտը պատասխանում է:

—Ապրես: Նստիր: Պետրոսեան, շարունակիր:

Պետրոսեանը շարունակում է նոյն ոգով:

Նոյն ոգով շարունակում ենք և մենք հինգ երկար տարիներ: Նոյն հարց ու փորձը, չնչին փոփոխութիւններով, կրկնում է շաբաթը չորս ժամ, ամիսը տասն և վեց ժամ, մի տարւայ մէջ աւելի քան հարիւր ժամ, մինչև դպրոցը աւարտելը հարիւրաւոր ժամեր: Եւ այսպէս մենք աւարտում ենք, մեծ ատելութիւն և զզւանք դուրս բերելով մեզ հետ դէպի ամենայն փարիսեցիք, և դպիրք, և ենթակայ, և ստորագեալ իրանց բոլոր պարագաներով:

Այսքանն էլ բաւական չէ, որ դու տեղեկութիւն կազմես մեր խմբի մասին? Այժմ հերթը քոնն է, սիրելիս: Ի՞նչ երբ պիտի ծանօթացնես ինձ քո պաշտօնակիցների հետ? Սպասում եմ:

## Ս Ա Ս ՈՒ Ն

(Իմ յիշատակարանից)

### Ս Է Յ Լ Ա Ն Ի

(Շարունակութիւն 1)

#### Ա Ի Ա Ն Դ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հայաստանի բոլոր ժողովուրդը ունի զանազան աւանդութիւններ, կան որ պատմում են իբրև հէքիաթ, նաև կան որ պատմում են իբրև իրողութիւն:

Առաջին տեսակին են պատկանում Դաւիթ-Մհեր և այլն, երկրորդ տեսակին վերաբերում են մեր հէնց այս յօդաւածում մէջ բերածները, որոնք չէր կարելի առանձին էջով հիւսել, խառնել Սասնեայց պատմութեան, կամ բոլորովին զուրս թողնել...

Այս ներածութեան ճակատը պակտղ ժողովրդական քերթածի հատուածը բանալի էր երբեմն վերջին տարւայ մի տխուր պատմութեան, աւաղ որ լիովին չկարողացայ ձեռք բերել, միայն սասնցի Միր-Գիտօ այդքանն կարողացաւ ինձ աւանդել:

Մինչև այժմ տպագրւած Ազգ. պատմութեան վերաբերեալ գրքերը, հնախօսութիւնները, գէթ որոնք տեսած եմ, լուռութիւն են պահում իշխանութեան անկումից յետոյ, նախարարական տների, ժողովրդի որպիսի եղանակաւ վերջանալու, կամ սպառւելու մասին և հարկաւ լռելու էին, քանի որ ոչինչ չկար:

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 10:

Սակաջն ինչպէս միջին, նոյնպէս վերջին զարերի պատմութիւնն ունենք եղել. մի ծերունի արքեպիսկոպոս գրել է այդ ամենը՝ ըստ սենեղների վիպութեան՝ արտասուելով գրել է նման Լաստիվէրացու:

Սասնցի արժ. Ղազարոս վ. Մարտիրոսեանց, Սուրբ Աղբերաց այժմեան վանահայրը, տեսել է և մի մասը կարգացել է Սղերզում նոյնտեղացի տէր-Չաքարիա քահանայի մօտ՝ 1300—1600 թւերի պատմութիւնը. Օհան արքեպիսկոպոսի հեղինակութիւնը մի աշխատասիրութիւն, որի մէջ մանրամասնաբար պատմել է մասենագիրը շատ աղէտներ, պատմել է և Հայաստանի հարստահարիչ քրդերի ով լինելը:

Ահաւասիկ Ղազար վարդապետի ինձ պատմածը. — «Երբեմն դռա՛ Ռշկոցիք (Ռշաունի), Մանըզցիք (Մամիկոնեան), Սլիւանցիք (Սլիւնի), Բագրանցիք (Բագրատունի), Փնճնացիք (Փնճիկ իշխանի սերունդն), Խորոմանցիք (Խորխոռունիք), պճնազարդ ուղեկցում էին հայոց մեծաց թագաւորին. կարծես այդ ընկած փառքի չիշատակը անջինջ պահելու համար՝ տակաւին հայոց ասպետական սովորութիւնքը, աստիճանքը պահում են նորա»:

«Տակաւին քուրդ ցեղեր Բագրանցոց Մալէ-պատրիկ (տուն պատրիկի), միր (իշխան), մանըզցոց կարիճ, քաջ, Ռշկոցոց մալէ-թուուն (պղնձական տուն) տիազոսներով են պատուում»:

Մանաւանդ Խորոմանցիք, թւով 250,000, յայտնապէս քրդի, թուրքի և հայի առաջ խոստովանում են իրենց հայութիւնը, նրանց ասածը հաստատում է քրդերէնի մէջ սուգած իրենց խօսած հայ լեզուի նշխարքը: Գրիգոր Լուսաւորիչ, Տրդատ, Ներսէս այժմ իսկ պաշտում են խորոմանցի քրդուհիներին: Հայ եկեղեցին, հայ ազգը ն իրական են նոյա համար, մինչդեռ անասելի լուսանքով ողորում են մուհամմէդն ու իւր զուրանը: Սոքա են այն ցեղը, որ երէկ, 1870—1872 թւերին, կամեցան հայանալ, թո՛թափել դիմակը, միանալ ազգին. (այս մասին մի գրրածք ունի Խորէն Նար-պէյ), ի մեծ ցաւ մեզ, կառավարութիւնն արգելեց: Սակաջն նոյնն է խորոմանցին, փոխւած է:

Գոքա Գուզուզանի, Տիւրքի (Տորոս) լեռների երկայնքով, Եր-

զընկալից (Յրիզա) մինչև Կեսարիա, Բիրուդ ու Ձէյթուն բռնածեն իբրև բնավայր ու հայրենիք:

Քաւրդ, տաճիկ նոցա սահմանից սարսափով են անցնում, որովհետև՝ կողոպտել, նեղել, սպանել ու քերթել չեն զլանում խորոմանցիք, որովհետև դոքա են խորոմանցու հայրենիաց ու կրօնի թշնամիները, բայց հայը ազատ է, ազատ մուտք ու ելք ունի Գուզիզանում և այլ կողմերում, թէև Գուզիզանը երկու ցեղերի ձեռքն է, խորոմանցու և զարագոյունչու, որ այժմ կրում են զլլպաշ, թուրքմէն, չրափիւֆ (կրակ մարող) անուանները, սակայն զխաւորապէս աչքի է ընկնում խորոմանցին, թրքական անուանով, հայացի սրտով:

«Յրբ հիւր գնաց մի որ և իցէ հայ, դեռ գիւղը չմտած դիմաւորում են հիւրնընկալ ծերեր. մինն առնում է անցորդի դաւազանը, առաջնորդում նորան իւր տունը... գաւազանը դնում է մի պատուոյ տեղ և հրամցնում հիւրին օճաղի գլուխը բազմելու»:

Վարդապետի այս պատմական հայեացքը արդարացնում է Հ. Հ. Ինձիճեան, Քաջունի հնախօսների կարծիքը: Ինչպէս կարող ենք մենք ժխտել թէ դոքա հայից չեն, եթէ այդ օտարներն իրենք են վկայում:

«Մեր Տիգրան Բ. որդի համանուն Տիգրանի իշխանութեան ներքոյ ապրեցան Կորդիք անկախ, անցած դարեր կորդիք եղան քուրդ, հազարացոց արշաւանքի ատեն, Կորդիք ընդունեցին մահմեդականութիւն: Ահա այսքան քրդերին միացան և ուրացեալ հայ նախարարներ»: Այս է աւանդել Օհան եպիսկոպոս և այն է աւանդում սասնցի հայը: Նոյն իսկ բազրանցիք մինչև այսօր չեն ուրանում իրենց հայ ծագումը, մինչև այսօր բէկերը իրենց գաւակներին անւանում են Բազրօ (Բազրադ), Համզօ, Համօ, Սմբօ (Սմբատ) և այլ անունների ազաւազաւածները, որոնք շատուկ էին մեր նախարարական ընտանիքներին: Ես իսկ տեսած եմ բազրանցի Համզօ բէկի մօտ մի սուր, որ կրում է իւր պապերի հնութեան դրօշը. Ասուածածնի, Առաւորչի պատկերքը և մի տուն Սաղմոսից ոսկէտառ, ափսոս որ սորա մի մասը կտրւած և փոփոխած էր, ապա թէ ոչ պիտի զանէինք և տիրոջ անունը: Սորա մօտ կան մի քանի խիստ հին ձեւագրեր, Աւետարան, Ճառքնախր, Սաղմոս և

այլն. մի առ մի քրքրեցի, բացի չիշատակարաններից ոչինչ չունէին, որոց օրինակները յանձնած եմ այդ ճիւղը ուսումնասիրող արժ. Աւոնդ վ. Փիրղալէմեանին:

Վերտողեալ հակիրճ տեսութեան մասին իմ կարծիքը յայտնելուց յետոյ, շարունակում եմ Ղազ. վ. Մարտիրոսեանի ցուցումները, որ ինք քաղած է Օհան եպիսկոպոսից, որ և ստուգած եմ ժողովրդի ծերերից:

«Հայ նախարարներից առաջին ուրացողը չէ լինում Բագրատ Պատրիկ Բագրատունի, եղբայր Սմբատ Խոստովանողի, որի մասին երկար գրում է Քովմա Արծրունին. նորանից առաջ կան եղել և ուրիշներ: Զէնք Բագրատունի հարատութեան, որովհետև զրւած էին Հայաստանի նշանաւոր վայրերը, մնում էին նախարարաց սուէրները, մանրիկ իշխաններ, Արծրունի, Գնունի, Մամիկոնեան և այլն, հեռւհեռէ և սոքա կորչում են մահմեդականութեան խորքը, պանդխտութեան մէջ. այսպիսով Ժե. դարի վերջերը ջնջւում են Հայաստանից բոլոր փայլուն անունները, որոց վերջինների եղբրական պատմութիւնը պիտի զետեղեմ այստեղ, ըստ պատմութեան Ղազ. վ. Մարտիրոսեանի և Ալի Էֆէնդի նաձաշի:

Մինչև 1540—60 թւերը Պուլանըքի (Հարքայ), Բաղէշի, Սասնոյ, Մշու վրա իշխում էին հայ նախարարներ իբրև բէյեր իրենց գաւառների մէջ, թէև մահմեդականով խառն էին:

Բացում է մի ընտանի պատերազմ երեք նախարարների մէջ: Մշու Մամիկոնեան, Մուշեղ-Նաձաշ իշխան, տէր Գրոնից և Ստոգաբերդի (Ստողկայ բերդ), Հարքայ իշխանի դուստր Գիւլիգարին կնութեան է խնդրում. երբ մերժում են՝ ուզում է բռնի յափշտակել, որ նշանւած է եղել Բաղէշի Փնջիկ իշխանի որդու հետ:

Երբ տարածւում է առևանգի դիտաւորութեան համբաւը, Փնջիկը իւր հարսնացուին պաշտպանելու համար դուրս է գալիս կուրի:

Ռահուացի զաշոր, ս. բանակի տեղը, ուր ընկաւ Մամիկոնեան Տիգրան, հաղարացոց սրով, նորա վերջին իշխան շառաւիղը տանում է փառաւոր յաղթութիւն, Փնջիկի զօրքն ի սուր և ի փախուստ մատնելով:

Փնջիկ ճարհատած ուրանում է իւր կրօնը, խնդրում է օգնութիւն Տուրուբերանի Աղձնեաց և Բարձր Հայոց ընդհանուր իշխան

Մահէ-ամիրայից (նախահայր Մուսա-բէկի), որ բուն քուրդ էր, գտնուեալ է իւր ցանկացածին չափ վարձկան քուրդ զօրքեր և Մահէի եղբօր հետ միասին իջնում ասպարէզ: Մուշեղ-Նաճաշ Մամիկոնեան երկնէլով Փնճիկի մեծաքանակ զօրքից, սարսափից ինքն ևս հետեւում է Փնճիկի օրինակին, օգնութիւն ստանալով Տիգրանակերտի իշխան, Շուղէք ամրոցի ամիրայից, սուլարաթիւ զօրքով վերստին գալիս է աահուաց Խոսրովի մեծ խանին, մօտ Մոխր գիւղի. մօտերը լինում է առաջին մեծ կռիւը, ապա՝ Պէշասէլի գիւղի մէջ, Գայլ-Վահանի քաջագործութեան վայրերը ողողում է վնճիկեանների արիւնով: Յաղթութիւնից յետոյ պատգամաւոր ուղարկելով Պուլանըք, պահանջում է իւր սիրուհին Գիւլիզարը, որի սիրով խելագարած էր:

Գիւլիզար և իւր ազնիւ հայրը իրողութիւնը լսելով սուգ են առնում, արտասուում և պատգամաւորներին անպատելով յետ ուղարկում ասելով,—ամենք քրդի հետ գործ չունենք:

Հարքայ իշխանը, որի անունը չկայ,—որ շատ իրաւունք ունենք կարծելու Երան-Հայկազը, կամ մին նորա յաջորդներից, որովհետև այս աւանդութեան մի քանի մասերը նման են նորա աւանդական պատմութեան,—իսկոյն հաւաքում է իւր բոլոր զօրութիւնը, ամրացնում է իւր ամրաշէն ամրոցը, զօրքի մի մասն առած իւր զօրավարութեան ներքոյ դիմաւորում է անթիւ թշնամի զօրաց Կոփ գիւղին առաջ:

Պատգամաւորներից լսելով Մուշեղ-Նաճաշ իւր խնդիրը մերժեալ, հաշտուում է Փնճիկի հետ, որ կիսովին փոխած էր իւր անունը, փոխանակ Փնճիկի՝ Փնճնար և որ այսօր այդ անունն է կրում իւր ելուզակ ցեղը. ուստի մի խոշոր բանակի զլուխն անցած արշաւում են դէպի Պուլանըք, Կոփի առաջ մղում կռիւ: Սոսկալի կոտորածին մէջ ընկնում է Կոփայ իշխանը իբրև հալ-նահատակ անտէրունջ թողնելով իւր Գիւլիզարն ու երեք մատաղասի մանուկներ:

Սկսում են յաղթականք աւերել գաւառը:

Ասպատակ են սփռում հայոց գիւղերն այրելու, կողոպտելու, ուրացնելու, ջարդելու, բերդի պաշարման ժամանակ մեռնում է և Գիւլիզար սուրը ձեռին իբրև իւր հօր արժանի զուակ անվախ կռւելով:

Իշխանի երեք մանուկներն ընկնում են գերի: Նորաբերդն ոչն-

չանում է իսպառ և այս կուլի մէջ մեռնում են հայոց նախարարութեանց անունները:

Մանկիկները յանձնում են Հասարան—Օթովաշ մոլլային, դատարարակում են իբրև մահմեդական:

Քրիստոնեայ հերոս հօր որդիքը դառնում են մեծամեծ քուրդ ցեղերի նախահայրեր: Իրենց բնիկ հայրենեաց մէջ զարգանում են հասարանցի, հայտարանցի և ճիւղրանցի ցեղերը, իբրև ժառանգներ Հասարան մոլլային:

Այս աւանդութիւն գրած է Օհան, պատմած է ինձ Ղազ. վ. Մարտիրոսեան և վկայած հէնց Նաճաշի հարազատ յաջորդներից Ալի էֆէնդի Նաճաշ-օղլի, ծառայող Մշու սերայում: Այս պատմեց ինձ պարծանքով, հպարտանալով իւր վաղեմի իշխանութեան վրայ. նկատելով իմ զարմանքը, այլայլելը, հարցույ ժպտելով.

— Ի՞նչ եղար:

— Աչինչ չկայ,— իսկոյն ուշադրութիւնս հաւաքելով, մի սիկար էլ իրեն տալով, հարցրի,— ուրիշ ի՞նչ գիտէք ձեր ընտանիքի անցեալից:

— Շատ բան գիտեմ,— հառաջեց, իւր սիրուն դէմքի վերայ ծալքեր յօրինելով,— ես չեմ պատմում ուրիշի, բայց քեզ սիրեցի ու ինձ շատ պատուեցիր այս երկու ամսում:

— Խնդրեմ մանրամասն պատմել:

— Որքան կարող եմ,— մրմնաց ժպտելով և յարեց,— Տերունի պապս թւում է իմ հայ-պապերից. Մամիկոնեան Մուշեղ, Նաճաշ, Մեծն Մուշեղ, Վարդան պատրիկ, Մուշ-Սէրասքէր (սպարապետ) իմ նախնեաց մէջ նշանաւոր են եղել, մենք երկնացին թագին արժանացած ենք, մեր սուրն օրհնած է ձեր ջարձիղ (լուսաւորիչ) փեղէմպերը, մեզ իշխան ճանաչած է ձեր այն ժամանակի թագաւորը: Մուշեղ-Նաճաշ թէև ուրանում է իւր կրօնը և ընդունում ուղղափառութիւնն (թրքութիւն), բայց՝ Մշու մէջ, իւր ասն մէջ ծածուկ է պահում մի փոքրիկ թէքքէ (մատուռ), նորան ծառայում է ինքն մինչև մահը և աւանդում է իւր որդւոցը, հասնում է մինչև իմ պապին և ինձ: Մատրան մէջ կան խաչքարներ, սեղան, որի մօտ կայ և մի երկաթ դանակով պահարան: Պահարանում պահւած է մի արծաթեայ գլան՝ կէս արշին երկարու-

Թեամբ, ձեռիս հաստուԹեամբ, սակայն խողովակ է և դատարկ. նորա մէջն է զետեղւած մի անգին գանձ: Նորա մէջն է ջիրճիզ-փեղէմպէրին և ձեր Թագաւորի կնքած Ֆէրմէնը (հրովարտակ). յայտնի չէ նորա բերանը, լեհեմւած է (?) երկու կողմերից, միայն վրան ունի երեք տառեր. . Այդ Ֆէրմէնով իմ մեծ պապին են աւել Սլիվան, Սասուն և Մուշ: Ես դիտմամբ սովորեցայ հայերէն, բայց անկարող եղայ կարդալ, չէ նմանում հայ գրի:

—Յոյց տւէք ուրիշի, օրինակի համար ինձ՝ ես կարող եմ կարդալ: Կարդամ, պատմեմ ձեզ, որովհետև, ասացի, մենք մի քանի տեսակ գրեր ունենք, նոքա լինելու են նոյնպէս գրեր,— ցոյց տւի նորան մի ամենահին «խորհրդատետր», որը այս րոպէիս մօտ է, ապա զանազան հին գրեր:

—Այո, նորանց նման են,—մրմուաց պատանի Նաճաշ-օղլին, վեց-երորդ-եօթերորդ դարում՝ գրւած մագաղաթները քննելով: Աշխատեցայ գոնէ դոցա մէջ այն գրերի նմանները որոշել տալ, չյաջողեցանք:

Շատ Թախանձեղի Ալիին զնալ միասին, տեսնել մտտուռը, սուսիլը, կարդալ նորա վերայի գրերը, անհնար եղաւ:

—Անկարելի է. էֆէնդի,—ժխտեց ազնւասիրտ Ալին,—Թէև իմ հետաքրքրութիւնն պիտի չագեցնէի ձեր կարդալով, սակայն՝ անկարելի է. որդոց որդի նզովքով պատուիրած է Մուշեղ-Նաճաշ, երբէք չբանալ, ցոյց չտալ հայի կամ տաճկի, որովհետև՝ այդ սրբազան աւանդ մի տեսակ Թալիսման է, դա պիտի բերէ, ապագային մեզ մեր նախկին մեծութիւնը, իշխանութիւնը. երբ քաֆրը, Փլայը (հայ) վերատին տիրէ իւր բնիկներին, այն ժամանակ կը բացւի ճէրճիզի գիրը:

Սեղմեցի նորա խոշոր ձեռքը իմ փոքր ձեռով:

—Տաճիկներ, —յարեց նա յուզւելով,—մի քանի անգամ հրովարտակը խելու, մեր տան օղթարանն, հայ մտտուռն ոչնչացնելու նպատակով փորձեր փորձել են յանկարծ պաշարելով, բայց մեր քաջակորով պապերը դիմադրաւել են սրով, պաշտպանել են սրբութիւնքը կորագլուխ յետ մղելով սրբութեան Թշնամիներին:

—Ուրեմն գիտեն... գիտեն մոլլաները:

—Ինչպէս չէ... գիտեն, բոլոր Թուրքերը, կառավարութիւնը, մինչև այսօր էլ մեզ քաֆր օղլի են ասում... Թող ասին:

Հառաչելով վերջ տւեց պատմութեան, ձեռս սեղմեց ու հեռացաւ աւելի սրտաբեկ քան ուրախ:

Այս անգամ աւելի գորովալի աչքով սկսեցի չափել յաղթահասակ, գեղանի, 18-ամեայ պատանին, մտաբերելով անմահանուն Վարդանը: Աճապարելով ծաղեցի յիշատակարանս՝ որի մէջ սղագրում էի նորա պատմութիւնը, ստուգել ու զեղու տենչով տոչորւած դուրս ելայ:

Յուզւած էի և ուրախ: Ձգիտեմ ինչպէս անցայ Մշու փողոցներով, կեղոտ Ձորու թաղից, ինքզինքս գտայ Միաց. ընկ. կենտրոնական վարժարանում: Պատմելի: Ուսուցչական խումբը զարմացմամբ և թերահաւատութեամբ ունկնդրեց:

Երկրորդ օրը Միաց. ընկ. բոլոր վարժարանաց տեսայ փոխ-սեսուչ և առաջին ուսուցիչ Կենտ. Վարժարանի Միհրան էֆ. Տամատեան, ուսուցիչներից պ. պ. Հայրապետ Ճանիկեան՝ Վանեցի, Վահան Ամատունի՝ Մշեցի, Գէորգ՝ Ձէյթնցի. այս պարոններով գնացինք Կարնեցի պ. Սիմօն Հայրապետեանի կրպակը, ուր միշտ գլխում էի Ալիքն: Բացի մեզանից կային և մի քանի փոքր իշատէ հասկացող երիտասարդ վաճառականներ: Ալին այնտեղ էր: Խնդրեցի կրկնել ինձ պատմածները իբրև գրածիս սխալները ու զեղու: Նա պատմեց նոյնութեամբ, աւելի սիրուն ոճով: Երբ տեսաւ ոմանց տարակուսելը՝

—Տեսէք, հայեր, —ասաց նա, լուսամտից ցոյց տալով Մամիկոնեանց բերդը, Մուշեղի ամրոցը, որ կոնաձև բլրի գագաթին մի քանի կիսաւեր պատեր, որ մեր տակաւին թողած էր տաճիկ ճիրանը:—Սն, այստեղ աւերակ, հարիւրաւոր տարիներ իմ քաջ նախնեաց վեհարանն է եղել, այս բերդի մէջ մի ժամանակ կալուում էր երկնից իջած Մամիկոնէից խոյազլուխ սաղաւարտը, քաֆրի իշխանական ծերունին, խաչագլուխ ականակու թուրը... Էհ, քանի որ զժւար է հային հաւատալ տաճկի խօսքին, ձեզ տամ հայ վիպեր, հէնց ձեզանից, նոքա իմ հարազատ ազգականքն են: Մուշեղ-նաճաչի եղբայր, Վահան-նաճաչ իշխանի ցեղը ձեր մէջն է, նոքա հայ են, աղօթք են անում ձեզ հետ... Այժմ հայ-նաճաչեանք ազքատ են, սակայն գիտեն իրենց ով լինելը, ինձ հաւասար է սիրում նորանց իմ պապը: Կանչեցէք նոցանից մինը:

Ներկայ եղող շէջիք զլսով հաստատեցին և աւելացրին թէ նիւթապէս և բարոյապէս օգնում են իրենց հայ ազգականներին...

—Ձէ կարելի հրովարտակը տեսնել,—հարցուց պ. Հ. Ճանիկեան:

—Ձի, Պապօ,—պատասխանեց հայերէն,—զէն սուրբ գինանք, զէն սալթ քափրի, հայ քափրի թագաւորի ձեռք տի բանան, շփեն ընուր էրծաթ լուլէն (խողովակ) ու ինք կարտա ջեր ճիզի գիրն:

Կանչեցինք—Վահան-Նաճաշի ցեղից մի հասակաւոր մարդ, նա ևս նոյն բանը պատմեց մասնաւոր փոփոխութեամբ:

Սոցա դասակիցն է և սանցի-քո ղըը, Սլիվան ցեղը, իբրև նախարար կամ թոռուն իշխում են նոքա ցեղէ ցեղ, Ձէյնալին հաղորդած է այժմ նորա որդին, բոլոր ցեղին իշխանը, որոց ձեռքն է բուն Սասունը, Քաղքիկը:

Մանաւանդ բալաքցիք՝ որ բնակւում են Խոյթի Բաղարենց սահմաններում, անունով՝ քուրդ, լեզուով, սովորութիւններով, ի բաց առեալ շունեցած կրօնները, բոլորովին հայ են:

Շատ ժամանակ չէ սոցա օտարանալ: Իրենք պատմում են մի տխուր անցք: Վերջին քահանայի վաշխառութենից զգլած, սպանում են նորան և մնում 40 տարի անհովիւ, անինամ, ապա Բալաք անունով մի շէյխի թախանձանօք և քաղաքական անմխիթար կռիւներից ձանձրացած՝ քուրդ անունն են առնում, ոչ Մահմէդ և ոչ Քրիստոս ձաւաճելու պայմանով: Այսօր էլ նոյնն են:

Այսպէս ուրեմն՝ Բագրատունեաց անկումից յետոյ, շատ հայեր օտարացան, երկիր անտէր, արեան և հարստահարութեան բեմ ազատւում էր ուրացողը, մնացողը...

Ոմանք Մահմեդի դրօշը կրելով էլ չազատեցան, անունով մահմեդական պէտք չէր, ուրացողք չէին կարող սրտովին փարել զուրանին, երկրպագել Մահմեդին. երկրպագուք էլ նեղում էին, ուստի բարձրացան սարերը, խօսեցան քրդի լեզուն, հազան նորա զգեստը, խլեցին կորդուււացու ձողաչափ նիզակը, մահեկաձև սուրը, եղան հարստահարիչ աւազակներ: Հոլովեցան դարեր, փոխեցան սերունդներ, մարեցան զլացմունքներ, աճեցին ու զարգացան ցած սկզբունքներ, քաջքաջեցաւ հայ-քաղաքակրթութեան բարձրագոյն շէնքը,

խորտակեցաւ հպարտ փառքը. հայութիւնից օտարացած, հարստահարիչ, Կահրիճ եղան հողի հաւասար հարազատներին:

\*  
\* \*

Գալով Օհան եպիսկոպոսի մատենագրութեան, սրտի ցաւով յայտնում ենք նորա կորած լինելը: Այս զիրք, որի բարձրութիւնը, զիրքը կայ եղել Ասուածաշնչի չափ, կամ մի քիչ փոքր, տէր-Չաքար իւր հեան է շրջեցնում ամեն տեղ: 1885—86 թւերին քահանան գնում է Կիլիկիա, հրամանաւ տ. Մկրտիչ կաթողիկոսի, իբրև քահանայ պաշտօնավարում այն կողմերում և վախճանում է Ատանայի մէջ:

Այս մանրամաստութիւնքն լսելով մինչև Ատանա գնացի, խնդրեցի Մկրտիչ կաթողիկոսից օգնել ինձ իմ խուզարկութեանց մէջ. ոչ միայն զլացաւ, այլ և պատիրեց ժամ առաջ հեռանալ Կիլիկիոյ սահմաններից:

Մասամբ մխիթարեաժ հեռացայ: Պր. Լուծիլիկ Պոյաձեանի վկայութեան նայելով, տէր-Չաքարին թաղում է կաթողիկոսական փոխանորդ գեր. Տ. Պետրոս եպիսկոպոս և նորա զրքերը անձամբ յանձնում ամեն. Տ. Մկրտիչ կաթողիկոսին: Հեռաւապէս կարծում ենք թէ՛ այդ կարևոր ձեռագիրը մնում է այժմ Կիլիկիոյ կաթողիկոսարանում. եթէ տակաւին իտալական փաշլուն ոսկիներ զայն թռուցած չեն ի Վենետիկ:

#### ԳՐԸՐՅԻՔ ԿԱՄ ԱԼԷՔՆՅԻՔ

Ձէթիհ-Սուլթան-Մէմէտ աիրում է Կ. Պօլսին. նորա յաղթական անունը իւր զօրքից առաջ հասնում է Հայաստան: Մանրիկ զղեակներին, բերդերի հայ-իշխանք սարսափում են լսելով ահաւոր Բիւզանդիոնի անկումը և տեսնում մի մեծ դաշնակից դարևոր ոսոխին, պարսկին դէմ: Սկսում է իրարանցում, որոշում են շատեր կամաւ անձնատուր լինել, հպատակել Բիւզանդիոնը խորտակողին:

Մանաւանդ Բրուսացի Յովակիմ Արքեպիսկոպոսի Պատրիարք անւանեւելը, Սուլթանի հայասիրութիւնը փութացրին այս որոշում: Հայք պատրաստ էին ուրեմն կամաւ անձնատուր լինել և այսպէս էլ եղաւ Հայաստանի մի մասին աիրելիս:

Յաղթական սուլթանը Կ. Պօլիս արհիվից յետոյ արշաւում է Պօնտոս, (տես պատմութիւն Պօնտոսի). սարսափելի կոտորածով տիրում է արծաձև. բերդին և բոլոր ամուրներին: Պօնտոսի կայսեր ծառայութեան մէջն էր մի հայ—նախարար, որի որդիքը անւանում են Հօլօ:

Սա իւր կայսեր հրամանաւ պաշտպանում էր Կիւղէլի-սարայը, երբ լսում է այն անեղ կոտորածը որ լինում է վերին բերդի մէջ. Մայր եկեղեցոյ առաջ Հօլօ զայրացած դուրս է գալիս սարայից, մի խումբ հայ քաջերով ձևում է տաճիկ բանակը և անվնաս հասնում իւր հայրենիքն Կարին:

Կարինն արդէն տաճիկ Սմիրայի ձեռքին էր:

Մինչդեռ Կ. Պօլիս, Պոնտոս գրաւում էին տաճիկներ, վաղուց Հայաստանը տիրոջները սկսում էին ծանր տուրքերով, հարստահարութիւնով, անտանելի բռնութիւններով, չտեսնւած ոճիրներով դողացնել իրենց ենթակայ երկիրները: Մահմետական ժողովուրդը նմանում է ահագին վիշապի, եթէ տատը շարժի, իմանում է իսկոյն հեռաւոր գլուխը, անմիջապէս յարձակում է միևնոյն կետին վրա: Երբ տաճիկը գործում է մի բան Կարնոյ մէջ, իսկոյն արձագանգ է տալիս Տիգրանակերտը: Ֆէթիհ-Մէհմետ-Ղուլի գրաւում է Պոլիսը, կոտորում է Յոյներին, իսկոյն Կարնոյ ամիրան սկսում է խողխողել իւր յոյն հպատակները, հայերին երեսանց յարգում. վասն զի Յովակիմ պատրիարք սիրելի է Սուլթան-Երզրմի հարազատին:

200 ընտանիք հայ—հուռոմներ բնակւում էին Կարնոյ մէջ, 15-20 գիւղեր էլ նահանգում, սոցանից շատեր կոտորւում են Կ. Պօլսոյ գրաւման ատեն, իսկ մնացածները, Աբանյեցիք, Եփակցիք, Նէրտիւէնցիք, Հայիմանցիք և այլք, 1829 թւին, Կարնոյ հայ գաղթականների հետ, Կարապետ արքիպիս. Բագրատունու առաջնորդութեամբ գաղթում են նախ՝ Տարոց աշխարհը, անդի Զաւախքի և Մալկայի կողմերը, այժմ էլ բնակւում են վերջինի Գէշ-տաշ, Երփակ, Զինիս, Գալաքէօյ և այլն գիւղերում:

Հօլօ՝ այս տխուր անցքերի ականատեսը, որ մի քաջ նախարար է եղել Տրապիզոնի կայսեր ծառայութեան մէջ, կայսեր անկման ժամանակ վերադառնում է Կարին, բնակւում իւր հայրա-

կան տունը, Ալէքսան Թաղում, որին համար էլ իւր ցեղը կըրում է Ալէքնայի անունը: Սա նկատելով բոլոր խառնաշփոթութիւնները, ժողովրդի ստրկական վիճակը, մի քանի անգամ խրախոյս կը տայ ոտքի կանգնելու... սակայն՝ մեռած էր քաջութիւնը, մեռած էր բարոյական արժանապատուութիւնը նորա մէջ, մանաւանդ առաջնորդ եպիսկոպոսը ժողովրդին յայտնելով Յովակիմի պատրիարքութիւնը, շլացուցիչ խոստումներով չորսորում է չանսալ Հօլօին, չգրգռել Իսլամի կատաղութիւնը և մեծ-Սուլթանը հաշտ աչքով էր նայում հայի վերայ: Ժողովուրդը բանաւոր գտնելով հոգևոր հովիի յառաջադրութիւնը, չէ լսում արեան ծարաւի Հօլօի ձայնը:

Մինչդեռ Հօլօ այսպիսի դաղափարներով ուզում էր Բարձր—Հայքը շարժել, զիւղէ զիւղ, աւանէ աւան Թափառելով գրգռում ժողովուրդը, իւր քրոջ անօրինակ գեղեցկութեան համբաւն առնելով տաճիկ Ծախիներ (կարդացող, ուսող) մի օր յանկարծ արձակում է նորա տան վերայ բռնութեամբ յափշտակելու գեղանի հայուհին: Հօլօի եղբայրները քաջաբար դիմագրաւելով, ծեծելով պաշտպանում են իրենց քոյրը և լուր ուզարկելով Հօլօին կանչում են էրզրում:

Ծախիներ բարկութեամբ լեցած դիմում են ամիրային, իրենց ահագին փաթթոցները գետին զարնելով բողբոսում ամիթէ վերացաւ իսլամութիւնը, իսլամական պատիւը—ասում են նոքա,—միթէ ներելի է Իսլամին ծեծել քաֆրի (հայ) ձեռքով և այլն: Ամիրան հանդարտեցնում է նրանց կատաղութիւնը և իրողութիւնը լսում մանրամասնաբար: Ապա հրաման է տալիս 'նրանց' իրագործելու իրենց որոշումը ամեն միջոց գործածելով...:

Ծախիները Հօլօյեանց սովորութեան քաջածանօթ, որոշում են պաշարել Ս. Ստեփանոս եկեղեցու (այժմ Ռշի ճամի) դուռը, կտորել նորան բոլոր ազգականներով ու բարեկամներով, ստացւածքը յարքունիս գրաւել և տիրանալ գեղանի հայուհուն:

Մի տաճիկ, որի կեանքը փրկած է եղել Հօլօ, ծածկապէս ազդարարում է եկեղեցի չերթալ, զգուշութեամբ հեռանալ Խորդալքաղաքից ընտանիքով ու բարեկամներով:

Հօլօ հրաման կոսյ իւր քաջերին, զուրս չե՛նել, զինւած սպասել իւր ապարանին մէջ:

Մի հինգշաբթի երեկոյ աճապարում է Հօլօ իւր զինւած քաջերով սրահարել այն թէ՛քկէջի զուռը, ուր իւր բոլոր խշնամիները հաւաքւած մասնակցում էին զիբրի արատողութեան իբրև անմեղ, արդար միւս իւլմաններ:

Հարիւրաւոր Ֆախիներ, մոլլիկներ ու շէյխեր նոյն իսկ Քէքկէյի մէջ կոտորւում են Հօլօյեանց ձեռով: Պարզւում է ապստամբութեան գրօշը, բայց՝ ժողովուրդը անօգնական է թողնում նորան:

Հօլօ նախատեսած էր արդէն այդ հանգամանքը, բնազդումը ասել էր նրան լքւած մնալը: Հետևապէս՝ վազուց, մի օր առաջ, իւր և բարեկամների ընտանիքները հեռացուցած էր Երզրումից, ուղարկած էր Հասան-գալէի գծով զէպի 'ի Բասեն: Ուստի ցաւով սրտի հրաժեշտ տալով իւր սիրած հայրենիքին, անիծելով իւր ձեռնարկի արգելքները հեռանում է Ֆախիւրն կոտորած երսկոն իսկ:

Հօլօի հետևորդները մինչև վերջը չեն մասնակցում նորա արկածներին, Բասենի գաւառում՝ միմեանցից բաժանւելով գնում են այլ և այլ կողմեր: Այժմէն Հօլօյեանք՝ չգիտեն իրենց ազգականների ուր գնալները: Սակայն Հօլօ ասպատակութեամբ շատ ամիրաների կեանքեր զրկելով՝ իւր եղբայրների և որդիների հետ ապաստանում է Սասուն, որի բնակիչների կեանքը խիստ գառն ու անտանելի է եղել իւր ժամանած առեն:

Հօլօի սերունդը բազմանում է, իւր ծերութեան վերջին օրերը բաժանւելով իւր երկու եղբայրները գնում են ձղիր-բօթանի կողմերը, որոց չաջորդները այժմ կազմած 5-600 ընտանիք և ազգականութեան չիշատակը չը ջնջելու համար մինչև այսօր մտերիմ չարաբերութիւն ունին Սասնցիների հետ, քաջ են նորա նման, արժանի սերունդ Հօլօյին. սակայն նորա բազմաթիւ արկածները մնում են քօղի տակ: Մնացած չորս եղբայրները խիստ հեռաւոր երկիրներ գաղթելով կորած են նորա ցեղերը: Իսկ Հօլօ իւր ութ որդիներով, թուններով բնակւում է իւր գրաւած Հաւկոնք կամ Հաւկանք զիւղը:

Հօլօ ծերանում է ապրելով 120 տարի, ապա իւր աւագութեան իշխանութիւնը յանձնում անդրանիկ որդոյն, Գորգէին, որը ոչ միայն քաջ, այլ և խելացի էր: Մինչև այսօր Հօլօի դեղը պահւում է իւր

հերոսս պապի վերջին աւանդութիւնը. հայրը որդւոջն ուսուցանելով:  
 « Գորգէ,—աւանդել է զառամեալ հերոսը իւր անդրանկին՝ մահ-  
 « ւան անկողնին մէջ,—միշտ քաջ եղիր, մի՛ երկնչիլ մահից, ան-  
 « վախ մտիր կուէի դաշտ... խաչակնքեր երեսդ ու շարժիր թու-  
 « ըշդ... երբէք, մի՛ հնազանդիր օտարին, մի՛ խաբւիր սուա խոս-  
 « տումներից, արեան տեղ արիւն թափելով փառաւորին այն սե-  
 « ղունդը՝ որի իշխանն ու մեծն ես, փառաւորիւր այն ազգի  
 « պատիւը որի տոհմիկներից մինն ես... այդ քո պապերը մեծ  
 « անուն ունէին նոյն իսկ հայոց թագաւորութեան ժամանակ»

Այս ամենը ասում են քաջ Սասնեայք, սակայն չեն կարող  
 չիշել չօլօի տոհմանունը, որպէս զի դիտենալինք թէ մեր նախա-  
 րարաց որ կարգին են պատկանում. իրենց ասածով, մեծ նախա-  
 րարական ցեղից են...:

#### ԳՈՐԳԷՆ ԱՄԻՐԱ

Չօլօի մահից յետոջ՝ Հաւկունքը անբաւական է լինում այն  
 ցեղից, որ զարմանալի արագութեամբ աճում, բազմանում և զօ-  
 րանում էր ամեն օր կուելով, սպաննելով, սպանւելով հանդերձ:  
 Աւստի Գորգէ առաջարկում է քաշուել, դաղթել մի այնպիսի ըն-  
 դարձակ անկիւն, որ իրենց ազատ պահէ մի ժամանակ արեան հե-  
 ղումից: Դաւօ, Գորգէի փոքր եղբայրը, չէ հաւանում մեծի խոր-  
 հրդին, զիմարում է, խնդրում է չհեռանալ հայրենի կալածքից,  
 Չօլօի գերեզմանից. երբ չէ համոզում Գորգէ, Դաւօ ինքն միայն  
 իւր ընտանիքով մնում է Հաւկոնք իբրև պահապան Չօլօի գերեզ-  
 մանին:

Տակաւին կայ Դաւօի սերունդը. զարմանալի իրողութիւն, գա-  
 լիս են օտարներ Հաւկոնք՝ զարդարելու և մշակելու Դաւօի կալած-  
 ները, աճում, բազմանում, մի քանի անգամ զաղթում դէս ու  
 դէն, բայց՝ իւր սերունդը ո՛չ աճում է և ո՛չ բազմանում, դարեր  
 անցել են, միշտ մի տանն է մնացել Դաւօի տունը, այսօր էլ մի  
 տուն է:

Գորգէ վեր առնելով իւր միւս եղբայրները, նոցա որդիքը, ազ-  
 գականները գնում է Խուլճ գաւառակը, հաստատում մի հին աւե-  
 րակի, Գաբով—արաի (թփով—արտ) մէջ: Ըստ ոմանց աւանդելուն

(ձեռնպահութեամբ եմ գրում այս երկու նախադասութիւնները) շինութեան ժամանակ Գորգէ գտնում է մի խոշոր գուժար: Բազմանում է նորա ցեղը, քրչական զիւղեր աւար աւեր արկանելով ահարկու է դառնում նա շրջապատող օտարներին, սիրելի ու փայփայելի հային ու ասորուն:

Ամիրաներ տեսնելով Գորգէի փայլուն քաջութիւնքն ու յաջողութիւնը, հարստութիւնը, որ տէր էր հազարաւոր անասնոց, անւանում են նորան «Միր»: Այնուհետև նրա բոլոր յաջորդները կրում են այդ տիտղոսը:

Գորգէի անւան հռչակը հասնում է մինչև Տիգրանակերտի կողմերը, գլուխ են ծառում հայ-Միրին Բագրանցի և Ռշկոցի ցեղեր, բայց՝ քրդաց ամենամեծ իշխանը, Շուղէք բերդի Աւալ-Բէկ ամիրան փորձում է փշրել այդ հսկայն իւր օրրանին մէջ, Գորգէն՝ որ յանդիմանում էր ահարկու անուն, հռչակ հանել տաճիկ աշխարհին մէջ: Աւալ աններելի մեղք է համարում մի Ֆլայի ճանաչել «Ամիրա»:

Ուղարկելով զօրք ու խիստ հարկահաններ՝ բռնանում է և պահանջում Գորգէից մի ահագին գուժար իբրև տուրք. Գորգէ աշխատում է ողբելով, սպառնալով յետ դարձնել նրանց. երբ անհնար է լինում, հրամայում է կոտորել բռնաւորներին: Կատարում է Միրի հրամանը:

Աւալ-Բէկ-Ամիրա չէ յուսահատում, մի քանի անգամ ուղարկում է հարկահաններ, բոլորն էլ զոհ են դնում բարձրահասակ Գորգէի սրին: Ապա Բէկը իւր բոլոր զօրութեամբ յարձակում է Գաբով-Արտ:

Գորգէ իսկոյն կազմելով պատերազմի յատակագիծը, յանձնում է Հէպօ, Շաւէ եղբորորդոցը իւր տեղի բաղլը և ինքը անձամբ ընդառաջ դնում Բէկ-Ամիրային, որի անթիւ զօրքը չէ ահաբեկում քաջասիրտ զօրավարին: Սակայն՝ խոհեմութեամբ՝ Գորգէ մտնելով է Բէկ-Ամիրային, ողջունելով նորան իբրև աւագ իշխան «բարի և կար» ասելուց յետոյ՝ ներումն է խնդրում ասելով:

—Բէկ-Ամիրան, մենք քաջ և ազատ պայազապաններ, Հայոց մի «մեծ նախարարական տան շառաւիղ լինելով, մենք, ազնիւ Բէկ, «վարժւած չենք օտարին ճանաչել... երբէք չենք կարող որևիցէ

« Թագաւորի, տոհմիկ-իշխանի հարկ վճարել, քանի որ գիտենք մեռ-  
 « նելու և մեռցնելու եղանակը: Ամիրն, մահը գերադաս է ինձ  
 մօտ սորկութիւնից... Ես իմ օրինաւոր Թագաւորիս կարող էի  
 հնազանդիլ՝ եթէ լիներ...: Այս այսպէս ասելով հանդերձ, դուք իմ  
 հիւրն էք, իջէք կը խօսինք « - Ինչո՞ւ ջարդեցիք զօրքս, հարկա-  
 հաններս, —ասում է Աւտալ-Բէկ նկատելով Գորգէի ջանդգնութիւնը,  
 քաջութիւնը, նորա խօսածից վախենալով թէ մի գուցէ իւր նա-  
 խարարութեամբն՝ ապստամբեցնէ, ոտքի հանէ բոլոր Սաւունը, —ա-  
 սն, Միր—Գորգէ, ինչո՞ւ սպաննեցիր հարկահաններս. թող այդպէս  
 քաջի խօսքով պատասխանէիր...:

—Եթէ ինձ մօտ ներկայանային, —ասում է Գորգէ, —բայց  
 իմ ցեղս, ծառաներս, արիւնը ու շո հովիւներս այդքան բան չը  
 գիտեն, նոքա գաղափար չունին օտար իշխանի, Թագաւորի մասին,  
 նոքա ինձ են ճանաչում... Երբ պահանջում են հարկ, բորբոքում  
 են նոքա... սպանում են զիմադրողին:

—Ուրեմն՝ փորձենք թէ այդպէս է, — ժպտելով ասում է Բէկը:

—Փորձենք...:

Աւտալ-Բէկ իւր թիկնապահներով ու զօրքով իջնում է Գորգէի  
 տունը՝ երգմամբ հաւաստելով թէ՛ չունի որեւիցէ շար նպատակ:  
 Գորգէ խիղջն հաց է ուղիս մի քանի հազար արգերի, արժանա-  
 պէս հիւրասիրում Ամիրային:

Աւտալ-Բէկ՝ ճաշից յետոյ, փորձի համար հրամայում է լեցնել  
 երկու պնակ սև շամիչ խառն սև պոլոճներով (մի տեսակ զեռուն  
 որ ապրում է ազբի մէջ) և դնում Գորգէի հովիւների առաջ  
 ուտելու:

—Ըճօ՞, ճղիք, —ասում է Գորգէ դաւը հասկանալով, —զոտ-  
 ւուր կիրիք չփախչին, միկլնիր միրն ծառէն (ծառան) ին, հն...  
 հըջրան իմ ձի, չփախցուք, կիրիք հըմիննըլ...:

Սասնեայք խիղջն ըմբռնելով Ամիրաների նպատակը, ամեն սյն  
 ախորժակով, զիտակցաբար, իբրև անբան, ուտում են նախ՝ զե-  
 ռունները, ապա՝ սև շամիչը իբրև վայրենի:

Աւտալ-Բէկ համոզւելով Գորգէի ասածին, ուրախութեամբ  
 սեղմում է նորա ձեռքը, անւանում քաջ, իւր երկրորդը և բա-  
 րեկամբ. յետոյ տալով նորան մի հրովարտակ հեռանում է Սասու-

նից: Ահաւասիկ նորա պատճէնը, որ պահուում է Գալէ-Կուզանցի  
 ուէս-Պետոսի մօտ, թէև քրքրած մաշած, մի քանի կտորներ եղած...

«Մահմեդական և ոչ մահմեդական բէկերին, ամիրաներին մի-  
 » բերին և բոլոր ժողովրդեան Աւալ-Բէկ-Ամիրան Տիրանալիերոսի,  
 « Ճզիր-Նօթանի, Բշերիկի, Սասնոց և այլ զաւառների, մեծագոյն  
 « իշխան Քիւրդիստանի (Հայաստանի) Տէր-Շուղէքի հրաշագեղ բեր-  
 « դին յանուն մեծ մարգարէին, Ասուածսուաք Մուհամմէտի, հրա-  
 « մայում եմ և նզովքով պատուիրում ներկայ և ապագայ լինե-  
 « լի իշխաններին, ազաններին, թուռուններին, քաջ քրդերին և  
 « մանաւանդ ի՛մ սերնդին, որ այսուհետև իբրև արև անմեքձենալի  
 « նկատելով, իւրաքանչիւր անհատ, որ կրում է Իսլամ անունը,  
 « կամ ճանաչում Աստուծոց ահաւորութիւնը, Գաբով-Արտցի հայ-  
 « իշխան քաջազան Հօլօի որդի, հին իշխանազան Գորգէ ամիրայից,  
 « որդիներից և թէ իւր բոլոր հպատակներից այժմ և յաւիտեան  
 « հարկ չպահանջեն, ամեն տուրքերից ազատագրելով, ես որ յաղ-  
 « թող եմ աշխարհի, ողջ Անասօլում՝ ես որ իշխում եմ իբրև  
 « մեծ և քաջ, ես որ իմ սրով ահաբեկած եմ պարսիկն ու գարա-  
 « գոյունըն, ջախջախած ազգոջանըն շնորհիւ Աստուծոց և նորա  
 « մեծ մարգարէին, ՚ի պատիւ Հօլօյեան տոհմի իշխանական ընտիր  
 « արեան, Գորգէ Ամիրաի անպարտելի քաջութեան և անվախ ցեղին,  
 « կնքում եմ իմ իշխանական կնքով յանուն մեծ Մարգարէին»:

1013 թ. Հիսան Ծ.

(կնիք)

Շուղէքի բերդ.

(Թարգ. Արապ. Բագէշեցի Վ. 2. 1)

Այս հրովարտակ չարգւեց Յամ. կառավարութիւնից մինչև  
 1857 թւական, երբ հանգուցեալ Սուլթան-Ապտիւլ Մէճիտ լեւտ-  
 աի Հիւմայունս (հրովարտակ) հանելով ջնջեց հարստահարիչ քր-  
 դերի մի տեսակ աւատական իշխանութիւնը, ազատագրեց (°) քրիս-  
 տոնեացն, հաւասարութիւն քարոզեց բոլոր ժողովրդին, ամբողջը  
 հարկատու կաշսեր հռչակելով:

Հօլօյեանց հրովարտակը իւր ոյժն ու զօրութիւնը կորուց:

1) Դիտմամբ դնում եմ միայն թարգմանչի անւան սկզբնատուերը:  
 Ծանօթութ. Հեղ.

Մանաւանդ Խան-Մահմուտի անկումից յետոյ՝ կառավարութիւնը իսպառ մերժեց Սասնիաց խնդիրը, ոչինչ համարելով Աւտալ-բէկի նորովքը:

Կարծես Հօլօ եղած էր Աբրահամ նահապետը, նորա քաջ սերնդով լցւեցան Սասնոյ սարերն ու ձորերը: Տարոն, Խիանք, Խուլփի և այլն կողմեր տարածւեցան, կազմելով մի հսկայական ընտանիք հայ ազգի մէջ, որի թիւը այժմ հազարներով կարելի է նշանակել:

Խոստովանում եմ թէ չկարողացայ ցեղի պատմութիւնը լիովին արձանագրել՝ որովհետև մոռացւած են մեծ մասամբ, մոռացւած են հարիւրաւոր պատերազմներ, արկածներ, թւականներ և այլ կարևոր հանգամանքներ, միայն մնացած է յաջորդների շարքը անմոռաց:

Ամեն Հօլօյեան սրբազան պարտք է համարում գիտենալ իւր պատերի անցեալը. ահա այս սկզբան եմ պարտում իմ գրւածքը:— Հերոս Գորպէի գործերը մոռացւած են, մեր գրածը պատերազմից յետոյ աւելացնում է Սասնիկը.

«Ըննւր (Գորպէի) աւայ, ճօպօ մինք շունինք մկայ, ընուր որ միկ գործ հիսպինք, հըմէնը մոռացուկի...»: Միայն այժմ մարմնացած է սա յանձին իւր համանուն թողնիկին հերոսական բոլոր վայելչութեամբ, որի գործերը աւանձին հատորով լոյս պիտի տեսնեն իբրև իրավէպ, Գորպէ խորագրով:

Գորպէի սերունդը Գաբով-Արաը շինում է ահագին գիւղ, նորա մահից յետոյ Միր է լինում նորա անդրանիկը, Միր-Մարտօն, որ կառավարում է 47 տարի: Սորա արկածները ևս անչայտ են: Մարտօին յաջորդում է անդրանիկ որդին Միր-Հէպօ (Համբարձում):

(Շարունակելի)

# ԱՆՑԵԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԸ

ԵՐՈՒԱՆԴ ԴԱԶԱՐԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

Բազարովի հետ ծանօթանալով և ուսումնասիրելով նրա բնաւորութիւնը, կարդալով նրա վերաբերութեամբ գրւած շատ քննական տղւածներ, շատ պոլեմիկական նկատողութիւններ ու կարծիքներ, մենք միջոց ունեցանք մի ամբողջ նոր աշխարհացոցողութիւն կազմել մեզ համար: Այդ աշխարհացոցողութիւնը շատ ընդհանուր կէտեր ունէր ուսաց 60-ական թւականների երիտասարդութեան հաշւացքների ու ձգտումների հետ. իսկ չափնի է, որ 60-ական թւականների մարդիկ, որքան էլ որ աշխատում էին իրանց «ուէալիստ» ձեացնել, դարձեալ մինչև վերջը մնացին ամենամոլեւանդ եղէալիստներ: Պիտարելին, — այդ ըստերևութիւն սառը և ամեն տեսակ վերացականութեան թշնամի և իբր թէ ոտքից մինչև գլուխ ուէալիստ Պիտարելին՝ վերջին ուս գրողները «բանաստեղծական տաղանդ» են անւանում... Եւ մենք ամենաթունդ հետևողներ էինք Պիտարելի: Ինձ համար կատարեալ տօն էր լինում, երբ ընկերներիցս, կամ ծանօթներիցս մէկը պատահմամբ ցոյց էր տալիս ինձ «Современникъ», կամ «Русское слово» ամսագրերի հին համարները, ուր ես տեսնում էի Д. Писаревъ ստորագրութիւնը: Ես անպատճառ պիտի խնդրէի, աղաչէի և վերջապէս մի կերպ ստնէի այդ գիրքը և աշուճեալ ինչպիսի հոգեկան զմաչլութեամբ պիտի կարդայի իմ ֆաւորիտ — գրողի տղւածը: Արանից լետոյ այդ գիրքը, կամ տղւածը, որպէս մի թանգագին գանձ՝ ձեռքից ձեռք կանցնէր և այդ առիթով վէճերին և խօսակցութիւններին վերջ չկար մեր ընկերական — աշակերտական շրջանների մէջ: Կ'նչպիսի քաղ-

<sup>1)</sup> Տես «Աուրծ» 1894 թ., № 10.

ցըր օրեր էին այդ օրերը... Մ. Նալբանդեանը իր մանկութեան օրերը երջանիկ է համարում, իսկ իմ կարծիքով, մարդու երջանկութիւնը իր գազաթնակեալին է համարում այն հասակի մէջ, երբ նրա միտքը զեռ նոր է բացում գիտութիւն և ճշմարտութիւն ընդունելու համար, Նոր ստացած գիտութեան, ճշմարտութեան կամ գազափարի պատճառած հոգեկան քաւականութիւնը ոչ մի ուրիշ բաւականութեան հետ չի կարող համեմատել: Իսկ գալով անձնագէտ լինձ, ես, հակառակ Նալբանդեանի, պիտի ասեմ, որ իմ «մանկութեան օրերը»—անորոշ, խուլ, մութ և լի նախապաշարմունքներով իմ այդ հասակը անհամեմատ աւելի դժբաղդ էր, քան իմ պատանութեան հասակը, երբ ես այնքան միամիտ և անկեղծ սրտով գրաւում և ողորում էի Նալբանդեանի գեղեցիկ ոտանաւորներով ու հրաշալի չօղածներով:

Ներկան անցեալի հետեանքն է, իսկ անցեալի սխալները և թիրութիւնները ուզե՞նալ ճանաչել՝ նշանակումէ գնահատել ներկան, ցանկանալ հեռու մնալ ներկալում այն մոլորութիւններէ, որոնք անխուսափելի էին անցեալում: Կեանքի փորձից զուրս բերած այս պատմական իրողութիւնը երբէք չպէտքէ մոռանար: Որքան որ գեղեցիկ և փալլուն էր մեր անցեալ պատանեական կեանքը, որքան որ նա լի էր չղսերով, ցանկութիւններով ու ձգտումներով՝ նոյնքան էլ անմխիթար, անգոյն և աննպատակ է մեր այժմեան հասակաւոր, կամ երիտասարդական կեանքը: Մենք ղեռ երիտասարդներ ենք, 25—30 տարեկան հասակի մէջ, և այդ ծաղիկ հասակում մենք արդէն ծերացել ենք հոգեպէս, կեանքի մասն—մուկ հոգսերը և դրազմունքները ամբողջովին կլանել են մեր ուշքն ու միտքը, էլ չէ մնացել մեր մէջ ո՛չ առաջւան հաւատը, ո՛չ առաջւան ձգտումներն ու եռանդը, և ոչ առաջւան խիզախ ու լանդուզն ողին...

Վեանքի իրականութիւնը անդադար ծակում է մեր աչքը, մենք տեսնում ենք ամեն օր կեանքի ովկիանոսը իր ամբողջ պրոզայով հանդերձ, իր անպաճուճ, ցինիկական կեղտով, ապականութիւնով ու սնբարոյականութիւնով,— և այդ իրողութիւնը երբեմն վրդովում, երբեմն զալք ցնում, երբեմն անտարբեր լուսահատութեան է հասցնում միգ: Մենք չենք կարողանում հասկանալ այդ կեանքը, մենք չենք համարձակում մտնել նրան, մասնակցել նրա սովորական, աւօրեայ երևութիւններին, սրովհետև ներկալումս մեր աչքի տու՛յլ բացած այդ իրականութիւնը բուրբուրիւն նման չէ մեր առաջւան երեակալած ու փալիալած «ապագային»:

Վսեմ սկզբունքների, ոգևորիչ թէօրիւմների և վիպատանական պատկերների աղղեցութեան տակ դատարարակամ ու զարդացած՝ մենք պատանեական հասակից սովորել ենք իղէալականացնել կեանքը, նախել իրականութեան վրալ, ինչպէս ասում են, վարդազոյն ակնոցներով: Գրականական մեր դատարարները և ուսուցիչները, որոնք մեր պատանի-

ութեան հասակում աչնքան դրավում, ոգևորում և բարձրացնում էին մեզ, նրանք զրանով մեր ճաշակը նրբացրին վերին աստիճանի, մեր երեակաչուութիւնը հարստացրին բազմաթիւ շլացուցիչ պատկերներով և իդէալական նկարագրութիւններով (միտս են դալիս այժմ Բաֆֆիի «Ենթի») երազը, Չերնիշեվսկու Վերա Պավլովնայի երազները, վերջապէս Բէլլամիի ֆանտաստիկական — սոցիալական ըրմանը), մեր սիրտը վառեցին հազար տեսակ անիրագործելի, բարձր ցանկութիւններով: Կա՛ն որ ամենից զլիաւորն է, նրանք մեզ խորը հաւատ ներշնչեցին դէպի «դեղեցիկ և փալուճ» ապագան, նրանք մեզ հաւատացրին, որ իրանց քարոզած մտքերը և համոզմունքները ընդհանուր մարդկային են, որ մարդիկ ամեն տեղ և ամեն երկրում ձգտում են և ձգտելու են աչդ վսեմ դադափարներին, որ աչդ դադափարները ինքն ըստ ինքեան բարձրացնում, կատարելագործում են մարդուն, զարձնում են նրան արժանի իր իսկական մարդկային կոչմանը... նրանք մեզ հաւատացրել էին, որ ամօթ է մարդու համար չկանգնել իր ժամանակի մտաւոր — բարոյական զարգացման ամենաբարձր աստիճանի վրայ, ամօթ է չլինիլ ազնիւ, չլինել հասարակական ինստիտուտների ու վսեմ նպատակների, իդէալների տէր մարդ, ամօթ է մտածել իր սեփական ողորմելի կեանքի ապահովութեան վրայ, որ, իբր թէ, կատարեալ մարդը չի կարող սահմանափակել իր անձի կամ իր ընտանիքի չնչին շահերի միջնորոտով: Եւ մենք կարդում էինք անդադար, կարդում էինք, ոգևորում էինք մեր կարդացածով, հաւատում էինք մեր կարդացածին: Հաւատում էինք, որովհետև նրանքէլ էին հաւատում իրանց գրածին, նրանք էլ էին համոզւած, որ ապագան իրանցն է, կեանքը իրանցն է, պատմութեան և հասարակական կարծիքի դատաստանը անշուշտ կը ճանաչէ ազնիւ, զարգացած իդէալիստ մարդոց արժանիքը, կը վարձատրէ նրանց ըստ արժանւոյն... այո, մենքէլ հաւատում էինք, հաւատում էինք, որ մարդու իսկական արժանաւորութիւնը նրա բարոյական ուժն է, նրա ազնիւ ու զարգացած խելքն է, նրա ընդունակութիւնն է՝ դուրս գալ իր անձնական նեղ շահերից ու պիտոյքներից, մտնել ուրիշի դրութեան մէջ, հասկանալ ուրիշի կարիքը, օգնել ուրիշին՝ մոռանալով նոյնիսկ ինքն իրան: Մարդուն պէտք է գնահատել ոչ թէ նրա ունեցած արտաքին առաւելութիւններով — հարստութիւնով, պաշտօնով, դիրքով և այլն. — մարդուն պէտք է գնահատել նրա ազնուութիւնով, բարձր ընդհանուր մարդկային, կամ հասարակական ձգտումներով, նրա զարգացած և բարդ սոցիալական խնդիրներ ըմբռնող խելքով: Եւ որովհետև մարդու իսկական գնահատութիւնը դրա մէջն է, ուստի հասարակութիւնը ամեն կերպ պիտի աշխատի կրթել, դաստիարակել աչտեսակ անհատներ. հասարակութիւնը պիտի հոգս տանի իր զաւակների ոչ թէ նիւթական կեանքի ապահովութեան վրայ, ալ նա պիտի աշխատի տալ իր զաւակներին, որպէս ժառանգու-

թիւն՝ ժամանակակից դիտութեան և բարոյականութեան ամենանոր հետեանքները, ամենավերջին խօսքը...

Ահա, ընդհանուր առմամբ, մեր պատանիական հասակի «ցնորքնե-րը», եթէ միայն այդ ամենը կարելի է ցնորք անւանել:

Անցյան պատանիական երջանիկ օրերը, — գիրք կարդալու, տաք — տաք վիճելու և ողորելու օրերը, անցաւ սոն հասակը, երբ մենք բաւա-կանանում էինք միայն հաւատալով և երեւկալելով ապագալի գրաւիչ տեսարանները... Յկաւ «կեանքի» շրջանը, և մենք այլես չբաւականալով կարդալուց, պէտքէ մտնէինք գործնականութեան մէջ, պէտքէ իրակա-նացնէինք մեր պատանիական երազները: Այստեղ արդէն, ինչպէս ռուս-ներն ստում են, *Коса нашла на камень!*

Ամենից շուտ, բոլորովին անսպասելի կերպով, դուրս եկաւ ու բար-ձրացաւ մեր առաջ ապրուստի խնդիրը: Առաջին անգամից սա բոլորովին չսկսեցրեց մեզ. չդիտէինք՝ հաշուել զրա հետ, թէ կուեւ զրա դէմ: Ինչպէս, մենք, որ սովոր ենք միշտ վսեմ ու բարձր բաների վրայ մտածել, որ այնքան ժամանակ վարժուած էինք ընդհանուր մարդկալին, դիտնական, բարոյական խնդիրներ լուծելու մէջ, այսօր չանկարծ պիտի ցած գանք այդ կախարդական բարձրութիւնից, պիտի ստորանանք այն-քան, որ ապրուստի վրայ մտածենք: — Այս միտքը ծանր քարի նման կախեց մեր շնքից... Մեր գրութիւնը կրիտիկական էր. նախ որ մենք ոչ մի միջոց չունէինք ապրուստի, և երկրորդ որ երբէք չէինք էլ մտա-ծած այդ մասին: Մեր պատանիական հասակի առաջնորդները և վարդա-պետները այդ չէին մեղ սովորեցրել. մենք սովորել էինք ամեն բան անել ուրիշի համար — ուրիշի համար մտածել, զգալ, ողորել, ուրիշի համար չանձնառու լինել ամեն տեսակ ծանր աշխատանք կատարել, և հարկաւոր դէպքում զոհել ամեն բան, — նոյն իսկ իր անձը — այն ամենը հասկանալի էր մեզ համար: Իսկ մտածել, հոգ տանել, ժամանակ փչացնել այն մա-սին, որ սահպանենք մեր գոյութիւնը, որ ապրենք, — այդ միանգամայն դուրս էր մեր իդէալիստական ծրագրից: Մենք մինչև անգամ ամօթ էինք համարում՝ մեր ապրուստի վրայ մտածելը, Բաց ապրուստի խնդիրը, ի հար-կէ, ամօթ բան չի ընդունում. ամօթ է, թէ ամօթ չէ, միայն ուտել հար-կաւոր է, հաղուստ, ընակարան և այլն հարկաւոր բաներ են, առանց որոց մարդ չի կարող ապրել: Թէօրէտիկական գործողութիւնների սովոր մեր ուղիղը, առաջին գործնական խնդրի հետ պատահելով՝ իսկողն զգաց իր անգործութիւնը: Որքան էլ ստոր, անհաճոյ բան էր ապրուստի վրայ մտածելը, բաց դարձեալ մենք ստիպւած էինք զիջանել, ստիպւած էինք հաշուել այն մտքի հետ, որ «ապրուստի խաթեր» մարդ շատ անգամ պի-տի կատարէ իր սրտին դուր չեկած գործ, շատ անգամ նոյն իսկ բոլոր-ովին անօգուտ, անմիտ գործ, իր համոզմունքներին ու գաղափարներին չհամապատասխանող ամենեկին:

Այն առաջին դիջումը, որ մենք արեցինք, ապրուստի խնդրի առաջ գլուխ իջեցնելով, շատ թանգ նստեց մեր վրայ... Ի հարկէ այդ դիջումը, որքան էլ որ շատ բարոյական նեղութիւն էր պատճառում մեզ, դարձեալ չէր կարող վճռական նշանակութիւն ունենալ մեզ համար. ապրուստի վրայ մտածել մենք «բարեհաճում էինք» աչն պայմանով միայն, որ մնացած ժամանակը աւելի մեծ եռանդով ու անձնւիրաբար ծառայենք մեր իղէալներին. այստեղ ևս մենք սխալւեցանք, որովհետեւ անհատի նիւթական ապահովութեան խնդրով մենք չէինք հետաքրքրուում, ուստի մեզ թւում էր, թէ այդ խնդիրը, ինքն ըստ ինքեան, մի շատ դուրին բան է. մեզ թւում էր թէ բաւական է մեզ դոնէ մի քիչ զբաղուել ապրուստի խնդրով, և ահա իսկոյն ամեն բան պատրաստ կը լինի մեզ համար... Բայց որքան մեծ էր մեր վիշտը և զայրույթը, երբ մի շարք կենսական փորձերից համոզեցանք, որ այդ ապրուստ ասած բանը, որի վրայ մենք ծիծաղում ու հեղձում էինք մի ժամանակ—շատ լուրջ և դժւարին մի հանդամանք է եղած: Մանաւանդ մեզ համար, որ ոչ մի պատրաստականութիւն չունէինք դրա նկատմամբ: Հարկաւոր էր ոչ միայն «մի քիչ» զբաղուել ապրուստի խնդրով, այլ ահագին ուժ և ժամանակ գործ դնել, ահագին եռանդ, տրամադրութիւն, ձիրք, շնորհք ունենալ դրա համար: Մէկ խօսքով՝ ապրուստի խնդիր ասած բանը մի բոլորովին նոր աշխարհ, նոր մթնոլորտ բաց արեց մեր առաջ, որտեղ «հազարք-հազարաց» և «բիւրք-բիւրուց» մարդիկ են ապրում, որտեղ կաչ և՛ կեանք, և՛ ուրախութիւն, և՛ տանջանք և՛ լաց... Կիցուք թէ այդ բանը մասամբ առաջ էլ մենք գիտէինք. գիտէինք, օրինակ, որ մարդկութեան մեծամասնութիւնը իր եսական խնդիրներով է զբաղւած, գիտէինք, որ իղէալիստները, ուրիշներ թշառութեան, պիտոյքներ ի վրայ մտածողները, իրանց ապրուստի խնդրով չհետաքրքրողները հազազիւտ բացառութիւններ են ամբողջ մարդկութեան մէջ.— այդ գիտէինք, դոնէ տեսական, վերացական կերպով: Բայց չգիտէինք մի ուրիշ, մի աւելի կարեւոր բան. մենք չգիտէինք, թէ ի՞նչ նշանակութիւն ունի կեանքի մէջ ապրուստի խնդիրը: Մենք առաջ կարծում էինք թէ այդ հարկաւոր է մարդուն միայն իր կեանքը պահպանելու համար, միայն իր ֆիզիկական պահանջներին բաւականութիւն տալու համար.—մենք որտեղից կարող էինք իմանալ, որ ապրուստի, կամ, որ միևնույն է, հարստութեան, փողի հետ կապւած է մարդու ոչ միայն զուտ կենսական, զուտ անասնական կեանքը, այլ և նրա բարոյական, մարդկալին, հոգեկան կեանքը. մենք չգիտէինք, որ մարդու հարստութեան կամ աղքատութեան հետ կապւած է նաև նրա բարոյական նշանակութիւնը հասարակութեան մէջ: Նթէ մարդ հարուստ է, լաւ ապրուստ ունի, լաւ է ուտում, լաւ է իմում, լաւ տններ ի մէջ է բնակուում,—այդ մարդուն էլ աշխարհի մէջ չարգում, պատուում և բարձրացնում են, իսկ, ընդհակա-

ուակ, աղքատ մարդը ոչ մի տեղ, ոչ չարգ ունի, ոչ պատիւ ունի և ոչ մի որ և է բարձրութիւն: Այս բանը մենք չգիտէինք առաջ, ինչպէս հարկն է: Մենք փոքր հասակից սովոր էինք նաչել մարդու վրայ զուտ բարոյական տեսակէտից, մենք, շատ գրքերի աղղկցութեան տակ, սովորել էինք կարծել, որ չարգի, պատւի ու բարձրութեան հասնելու համար, պէտք է բարոյական ուժ, հոգեկան վսեմ չատկութիւններ, հասարակական օգտաւէտ գործունէութիւն, մտաւոր զարգացում, աղնութիւն, մարդասիրութիւն և այլն: Այս բոլոր զուտ հոգեկան արժանաւորութեանց վրայ մենք նայում էինք, որպէս մի ուղիղ ճանապարհի, որ տանում է մարդուն դէպի պատիւ, փառք, չարգանք, ընդհանուր սէր, ընդհանուր համակրութիւն: Բայց իսկապէս դուրս եկաւ, որ պատիւ, համակրութիւն ձեռք բերելու համար միայն մի բան է հարկաւոր—հարստութիւն, փող,—աչն, ինչ որ մենք չունէինք, ինչ որ մենք արհամարհում էինք... Այս գիտակցութիւնը սաստիկ վիրաւորական էր մեր համար: Բայց այդ վիրաւորանքը մենք ստիպւած էինք ամեն օր տանել, ամեն օր համբերել: Այդ ղեռ քիչ է. մենք շուտով, շատ շուտով, առիթ սնեցանք համոզելու, որ ազնուութիւնը, խելքը, գիտութիւնը, զարգացումը, մարդասիրութիւնը, ինչով որ մենք երդւում էինք, ինչով որ մենք հպարտանում էինք, ոչ միայն չեն տաճում մարդուն դէպի պատիւ, չարգանք, սէր, այլ և կատարեալ մի պատուհաս են մարդու համար: Մեր հասարակութիւնը, որ սովոր է գնահատել մարդոց նրանց հարստութիւնով, զիրքով ու տիրոջսով, սաստիկ ասում է աչն մարդոց, որոնք չունին այդ արտօնութիւնները, որոնք, զբա փոխարէն, զինւած են մտաւոր, հոգեկան գեղեցիկ արժանաւորութիւններով: Բայց այդ գեղեցիկ արժանաւորութիւնները միայն խանգարում են մարդուն, ապրուստի միջոց ձեռք բերելու գործում, որովհետեւ հարստութիւն, լաւ պաշտօն, լաւ զիրք ստանալու համար մարդուն հարկաւոր են բոլորովին ուրիշ ընդունակութիւններ, որոնք նման չեն վերոյիշեալ «գեղեցիկ արժանաւորութիւններին»: Աեանքի մէջ իր պուտութիւնը պահպանելու, ապրուստի միջոց ձեռք բերելու համար պէտք է մարդ գիտենալ «վարել» ուրիշների հետ, պէտք է գիտենալ չարմարել, հավակերպել, հաճուցանալ մարդոց ամենաստոր, կսական, անբարոյական հակումներին... Այս աչն մարդը, ով որ լաւ գիտէ չարմարել ու հաճուցանալ՝ նա էլ լառաջ է գնում ապրուստի ճանապարհի վրայով, նա էլ ստանում է աշխարհիս փառքն ու պատիւը: Այս է պատճառը, որ կեանքի մէջ՝ չարմարելու և հաճուցանալու ընդունակութիւնը ամենից շատ է գնահատուում, մարդու բոլոր արժանաւորութիւններից ու ձիրքերից ամենից բարձր է դասուում: Իսկ այդ չարմարելու և հաճուցանալու ընդունակութիւնը մեր կարծիքով ստորութիւն է, և աչն մարդը որ կեանքի մէջ այդ զէնքով է առաջնորդում, մեր իդէալական տեսակէտից, նա շողոքորթ է, ստոր է:

Այսպիսով՝ կեանքի իրականութեան հետ ծանօթանալուց մենք ընկանք երկու ծայրաչեղ հակասութիւնների մէջ. մի կողմ գրքերի, վերացական գաղափարների իդէալական աշխարհը, որտեղ կեանքը զարդարւած է ամեն տեսակ բարոյական արժանաւորութիւններով, առաքինութիւններով, վսեմ ձգտումներով ու նպատակներով,—միւս կողմ՝ դառն իրականութիւնը, իր ամեն սգեղ ու կոպիտ հակումներով, անողորմ, անխիղճ ու անզգալ հակամարդկային ինտոյնկտներով: Եւ մենք մի կատարեալ խաղալիք դառանք այդ երկու հակասութիւնների մէջ. խաղալիք՝ մեր սեփական ցանկութիւնների, զգացմունքների ու գաղափարների ձեռին. խաղալիք՝ կեանքի պահանջների, ապրուստի գործնական միջոցների ձեռին: Ի՞նչ էինք մտածում մենք,—ի՞նչ էր դուրս գալիս կեանքի մէջ, ի՞նչ զգացմունքներով ու ձգտումներով էինք մենք ապրում, ինչպիսի չնչին կըրքերի ու անասնական բնազդումների հանդիպեցանք: Մենք դեռ ոչինչ չարած, ոչ մի գործի մէջ չցուց տւած մեր ընդունակութիւնները, մեր ուղղութիւնը՝ արդէն մեզ զգում էինք «պատերազմի դաշտում», արդէն կարողացել էինք զարթեցնել մեր դէմ ատելութիւն, զալրույթ, հալածանք.— և ո՞ւմ կողմից,—մեր շրջապատողների կողմից, մեր բարեկամների, մեր ծնողների կողմից... Հին սերունդը երբէք չէր կամենում ներել մեզ մեր ունեցած ինչ որ «անասունական» գաղափարները, մեր անհնազանդութեան, ինքնուրոյնութեան չաւախութիւնները: Մեր հովական կեանքը իր աւանդական սովորութիւններով, զիրքերով ու աղաթներով՝ ամենօրեալ կենդանի բողոք էր մեր դէմ: Եւ մենք, նոյն իսկ շնորհիւ այն հանգամանքնի, որ մեր մտքերով ու հասկացողութիւններով տարբերում էինք միջին մեծամասնութիւնից, որ մենք մեր սեփական հասկացողութիւններով ու դաւանած ճշմարտութիւնների համաձայն ցանկանում էինք «նստել ու վերկենալ» — հէնց այդ պատճառով՝ զինեցինք մեր դէմ համարեա ըլոր մեր շրջապատողներին, սկսեալ հարազատ ծնողներից ու ազգականներից, մինչև հեռաւոր ծանօթներն ու բարեկամները: Այս ըլորը հեշտ է խօսքերով պատմելը. բայց սրբան չարչարանք, սրբան չուզմունք և հոգեկան ալեկոծութիւններ են պատճառել մեզ այդ չարաբերութիւնները:

—Ի՞նչ էր պահանջում մեզանից կեանքը. շատ հեշտ ու հասկանալի մի բան.—ընդունել իր ժամանակակից լոգիկան, հաշուել մեծամասնութեան հետ—այսինքն, ժողովրդական կոպիտ խօսքերով արտաչափած՝ «թքածը լիղել»: Զարմանալին այն է թէ սրբան հակառակ են լինում շատ անգամ կեանքի պահանջները: Մեր, հպերիս մէջ, որպէս ամենաէական, կարևորագոյն պահանջ՝ հատարակութիւնը արտաչափում է ուսման կարօտութիւն և ամեն կերպ աշխատում է, որ իր զաւակները անպատճառ ուսում առնեն: Թէ իր բաց արած և պահպանած բազմաթիւ ուսումնարաններով, և թէ օտար երկիր ուղարկած ուսման կարօտ երիտասարդների

մեծ թեով՝ մեր հաչ հասարակութիւնը, ըստ երեւոյթին, ցոյց է տալիս, որ ինքը հասկացել է ուսման, լուսաւորութեան նշանակութիւնը: Եւ աչն հասարակութիւնը, որ ոչինչ չի խնայում իր որդոց ուսմանը, որ սկզբում՝ գովելի հոգացողութեամբ՝ մղում, զրդում է մատաղ սերունդը զէպի ուսման, գիտութեան տաճարները, —ապլ նոչն հասարակութիւնը, զուցէ աւելի մեծ եռանդով ու կատաղութեամբ՝ սկսումէ շտոյ հալածել իր զաւակներին՝ նրանց ստացած ուսման, գիտութեան համար, նրանց իւրացրած նոր զազափարներին, նոր աշխարհալեցողութեան համար: Աչն եթէ ալդ տեսակ հակառութիւններ չլինէին կեանքի մէջ, առաջադիմութեան գործը անհամեմատ հեշտացած կը լինէր:

Բոկլը իր «Ֆազաքակրթութեան պատմութեան» մէջ մի աչպիտի զրութիւն ունի. «Տղիտութիւնը որքան աւելի անկեղծ է, նոչնքան աւելի վնասակար է»: Այն բերութեամբ մեր հասարակութեան՝ պէտք է ասել, որ նա ես բոլորովին անկեղծ սիրուց զրդած՝ անխնահ հալածում է իր մէջ գոլութիւն ունեցած ամեն տեսակ լուսաւոր երեւոյթ:

«Ուսում», «գիտութիւն» ասելով՝ մեր հասարակութիւնը բոլորովին աչն չի հասկանում, ինչ որ նշանակում են ալդ խօսքերը: Խսկական ուսում, իսկական լուսաւորութիւն մեր հասարակութիւնը երբէք չէ ցանկացած իր զաւակների համար: Հաչ վաճառականը, կամ աստիճանաւորը, աչնքան նախանձախնդիր է իր որդոց կրթութեան, ուսման գործին՝ ոչ թէ նրանց բարոյական-մտաւոր շահերը աչքի առաջ ունենալով, ալ ակնկալելով աչն արտօնութիւնները, որ տալիս է մարդուն միջնակարգ, կամ բարձր ուսումը՝ կեանքի մէջ: Ուսումը, հաչի համար, ոչ ալ ինչ է, եթէ ոչ՝ իրաւունք և արտօնութիւն ձեռք բերելու ամենահիմնաւոր միջոց: Աչն է պատճառը, որ ունեւոր հաչը պատրաստ է ամենախոշոր ծախսի մէջ ընկնել՝ իր որդուն ուսման տալու նպատակով: Նա գիտէ, նա համոզւած է, որ ալդ իր ծախսերը ժամանակին տոկոսներով վերադառնալու են էլի իրան, իր ծերութեան հասակում, որդու ստացած խոշոր ռոճիկի, կամ, առհասարակ, աշխատած փողի կերպարանքով: Հալը չի խնայում իր որդոց ուսման համար փող, որովհետեւ նա սպասում է, որ ուսում աւնելուց չետոյ՝ իր որդիքը կը դառնան՝ մէկը բժիշկ, միւսը ճարտարապետ, երրորդը փաստաբան և ալն, — իսկ ալդ պարապմունքները, արդէն ինքն ըստ ինքեան, ամեն բան անխոփում են իրանց մէջ՝ — հարստութիւն, պատիւ, փառք, կրջանկութիւն. . . Աչնպէս որ, իր շահադիտական տեսակէտից, հալը երբէք չի սխալում իր որդուն ուսման տալով, բաց ուսումը, գիտութիւնը մի տեսակ երկսաչրի սուր է, որ կարող և՛ ալ կտրել և ձախ: Ուսումը մէկի համար կարող է լինել «կթան կով», միւսի համար սրբութիւն, աստաճութիւն: Սրանից է առաջ գալիս և բոլոր թիւրիմացութիւնը. հաչ վաճառականը, ցանկանալով տալ

իր որդուն բարձր ուսում՝ նա մտածում է, որ այդ «ունիվերսիտետ» ասած բանը մի աշխարհի հիմնարկութիւն է, ուր մարդոց բազմ են բաժանում, ուրեմն և իր որդին, մտնելով համալսարան, պիտի դուրս բերէ աշխարհից աշխարհիս երջանկութեան, բազդաւորութեան գաղտնիքը: Եւ շատ անգամ այդպէս էլ լինում է. դժբաղդաբար մեր ուսում անուող պատանիներից ու երիտասարդներից շատերը, թէ ուսման ընթացքում և թէ մանաւանդ ուսումը վերջացնելուց չետոջ՝ իրանց բոլոր գիտութեան, ուսման վրայ նայում են, որպէս արհեստաւորը նայում է իր փեշակի վրայ. դիւնական ճշմարտութիւններ, թեօրիաներ և փաստեր անթիւ քանակութեամբ սովորում, անգիր են անում նրանք, պահպանելով կատարեալ սառնութիւն, անտարբերութիւն դէպի այդ սովորածը և ուսումնասիրածը: Գիտութիւնը չի ազդում նրանց մտքի, գաղափարների վրայ, գիտութիւնը չի ներդրում նրանց զգացմունքների վրայ, չի առաջացնում նրանց մէջ հոգեկան որ և է խորը տղմունք, էմոցիա: Եւ այդ պատճառով, դրանք, ուսման դասընթացը անցնում, քննութիւն տալիս, վերջացնում են ամբողջ գիտութեան ճիւղեր՝ պահպանելով միևնոյն ժամանակ՝ իրանց առաջւան մտքերը, առաջւան հասկացողութիւնները, նախապաշարմունքները: Նրանք սովորում են այդ գիտութիւնը որոշ նպատակի, որոշ գործադրութեան համար. նրանք շատ լաւ գիտեն իրանց մասնագիտութիւնը, իրանց փէշակը—բայց չգիտեն թէ ինչ կրթող, ազնւացնող ու դաստիարակող ոյժ ունի այդ նրանց սովորած գիտութիւնը, չգիտեն թէ՛ ինչ նոր աշխարհացողութիւն է բաց անում գիտութիւնը մարդոց առաջ—նրանք չգիտեն գիտութեան զարգացնող, բարոյականացնող նշանակութիւնը: Եւ այդ պատճառով՝ ուսումը աւարտելուց չետոջ՝ այդ երիտասարդները մնում են՝ իրանց բարոյական-գաղափարական շատկութեանց կողմից՝ էլի նոյն կոպիտ, գոեհիկ հասկացողութիւնների, զգացմունքների տէր մարդիկ, էլի նոյն շատկութիւններով ու աշխարհացողութիւններով, ինչպէս որ են և նրանց ծնողները, ազգականները, բարեկամները: Առաւելութիւնը միայն արտաքին, քաղաքակիրթ հասարակութեան մէջ ընդունւած ձևերի ու վարմունքների մէջ է լինում. բայց իրանց մտքերի, համոզմունքների արմատական շատկութիւններով՝ էլի մնում են նոյնը, էլի մնում են անփոփոխ: Չգտնելով իրանց և «հին սերնդի» մէջ մի առանձին բարոյական-գաղափարական տարբերութիւն, այդ երիտասարդները շատ հեշտութեամբ կարողանում են մեքու ել հասարակութեան հետ, հիմնելով իրանց կեանքի բարգաւաճումը հասարակութեան սօցիոլոգիան, ասիական հասկացողութիւնների սովորութիւնների վրայ... Իսկ հասարակութիւնը, իր կողմից ընդունում, դովում, պահպանում է այդպիսիներին, որովհետև նրանց մէջ տեսնում է աչն, ինչ որ ցանկանում էր տեսնել, ինչ որ հաճելի էր իրան: Այդպէս չէինք մենք: Ուսումը մեզ համար ապրուստի, շահախնդրու-

Թեան առարկալ չէր: Մենք միշտ խորը արհամարանք, զզւանք էինք տածում դէպի աչն պատանիները, որոնք նուրիսկ իրանց մատաղ հասակից արտապայտումէին մի տեսակ վաճառականական ոգի, որոնք դեռ ուսումնարանի նստարանների վրայ՝ երազում էին ապագայ նիւթական բարելաւութեանց մասին: Մենք դրանց ողորմելի, խեղճ արարածներ էինք անւանում: (Բայց հիմա, երևի, նրանք են մեզ խղճում...): Ուսումը մեզ համար մի կատարեալ երջանկութիւն էր. — նոյն ինքը ուսումը, զիտութիւնը, որ մենք սովորում էինք ուսումնարանում, որ մենք կարդում էինք գրքերի մէջ, որ մենք զիտում, ուսումնասիրում էինք փորձով, հետազոտութիւնով: Ամեն մի նոր բան ամեն մի նոր զիտնական օրէնք, Ֆակտ, կամ ճշմարտութիւն՝ կարծես թէ մի նոր լապտեր էր վառում մեր մտքի մէջ, կարծես մի ամբողջ նոր աշխարհ էր բաց անում մեր առաջ: Եւ մենք ամեն ինչ, որ վերաբերում էր ուսման, զիտութեան՝ կլանում էինք ագահութեամբ և այդ մի կենդանարար բալասան էր մեր ուսումնատենչ մտքի համար... մենք աչնքան բարձր, աչնքան մաքուր, իդէալական սէր էինք տածում դէպի ուսումը, ու մինչև անգամ սրբապղծութիւն էինք համարում մտածել, որ այդ ուսումը կարելի է ժամանակին շահագործել: Միակ գործադրութիւնը, որ մենք մտադրում էինք անել մեր բոլոր սովորածից և կարդացածից, միակ արժանավալել գործադրութիւնը՝ այդ զիտութեան, ուսման ժողովրդականացնելն էր, որի մասին մենք երազում էինք, որպէս ապագայ երջանիկ և փալլուն մի նպատակի: Գիտեցածք հազորդել ուրիշին, մասնակից անել «տգէտ ու խաւար» ամբոխը քո նոր գաղափարներին, նոր համոզմունքներին ու դաւանութեանցը. — այդ մի բարձր սրբազան երազ էր, որ իրականութեան մէջ միշտ գրաւում էր մեզ, միշտ կախարդում, փառփառում ու զրուստում էր մեզ: — Այս իմ խօսքերը չափազանցութիւն չեն. ես կարիք չունիմ չափազանցութիւններ անելու: Հասարակական ինստիտուտը շատ վաղուց զարթնել էր մեր մէջ՝ և գրանով մենք պարտական էինք դարձեալ մեզ առաջնորդող հեղինակներին, Բաֆֆիի «Ոսկի Աքաղաղը» անագին տպաւորութիւն էր անում մեր վրայ: մենք կարդում և չէինք կշտանում այդ վէպիկից: Առհասարակ՝ Բաֆֆիի գրածքները ունին մի առանձին, սպեցիֆիկական չափութիւն. նրա բոլոր հեղինակութիւնները՝ սկսեալ ամենամեծերից, մինչև նրա փոքրիկ չօղւածները, սոցորւած են մի տեսակ ազնիւ ոգևորութիւնով: Այդ ոգևորութիւնը նրա տաղանդի, անկեղծութեան, հոգեկան թարմութեան արտապայտութիւնն է: Նրա ոգևորւած ոճը մարդու վրա ազդում է ինչպէս զինւորական երաժշտութիւն, թուլացած, լողնած, հիասթափւած մարդը՝ կարգաւով Բաֆֆիին՝ թարմանում, նորոգում է բոլորովին, նեարդերի մէջ զգում է մի նոր էլեքտրական ուժ, արեան շրջանառութիւնը արագանում է, կինսական ընդհանուր գործունէութիւնը եռում, բարձրա-

նում է... Բաֆֆիի գրելու առանձնապատկութիւնն է՝ նրա ունեցած ահագին աջողութեան պատճառը:

«Ոսկի աքաղաղը» Բաֆֆիի միւս վէպերի մէջ՝ ամենից շատ համապատասխանողն էր մեր պատանեական ձգտումներին, — իսկ վտոյ՝ «Ապօծերը»: Մենք չէինք սիրում Բաֆֆիի այն վէպերը, որտեղ նա մեծ սեղ էր տալիս քնքոյշ սեռի նկարագրութեանը, իսկ ընդհակառակ, մեծ չափազանցեալ կարգում էինք նրա, այսպէս ասած, «գաղափարական» վէպերը և գրույցները: Եւ առհասարակ՝ օտար գրականութեան մէջ էլ՝ մենք նոյն ուղղութիւնով էինք առաջ գնում:

Մենք ծիծաղում էինք մեր այն ընկերների վրայ, որոնք կարդուս էին օրինակ Տուրգենևի ДУРЯНСКОЕ ГНѢДО, Պուշկինի ЕВГЕНИЙ ОВѢГЯНЪ, Капитанская дочка, Բաֆֆիի Հարէմը, Պոստեանի Սոս և Վարթիթերը և այլն: Դրամատիկական գրածքների մէջ Ադամեանի բեպերտուարը բոլորովին համակրելի չէր մեզ համար: Շէքսպիրի ողբերգութիւնները թէև նրանցում էին մեզ, բայց մենք դարձեալ դադափար չէինք գտնում նրանց մէջ... գեղարուեստական բարձր արժանաւորութիւն ունեցող գրածքները, ինքն ըստ ինքեան, մեզ չէին հետաքրքրում, եթէ այդ գրածքների մէջ չլինէր մեր սիրած գաղափարը, մեր ուզած ուղղութիւնը և ոգին: Բաֆֆիի գրածքների մէջ՝ նրա «Փոռնշերը», օրինակի համար, իբրև գեղարուեստական ստեղծագործութիւններ, շատ մեծ արժանաւորութիւններ ունին. այնտեղ թէ պատմութիւնների նիւթը մեզ ժամանակակից է, և թէ կեանքը շատ ճիշտ, անփոփոխ է արտապաշտում, առանց չափազանցութեան, իդէալականացման: Բայց այդ կեանքի պատկերները մեզ այնքան չէին հետաքրքրում, որքան հետաքրքրում և գրաւում էին նրա միւս գրածքները—օր. «Ապօծեր», «Չալալէղդին», «Պաղ—փուշ», «Պարոյր հալկազն», «Փենթ» — որոնց մէջ իրականութիւնը կաղաւթ է գաղափարականի հետ և կեանքը տողորած է իդէալին հասնելու բարձր ձգտումներով... Ես շատ լաւ լիչում եմ թէ՛ Բոնչպէս էր նալում «Մեղու Հալաստանի» լրագիրը՝ մեր մեծ վիպասանի այդ իդէալիստական ուղղութեան վերայ: Յիշեալ լրագրի իբր թէ «կրիտիկոս» Հալկունին, որի գրականական ճարպիկութիւնը անհամեմատ աւելի շատ էր, քան թէ նրա մտաւոր զարգացումը և պատրաստականութիւնը, — ես լիչում եմ, — սաստիկ վիրաւորական խօսքերով ու նկատողութիւններով՝ աշխատում էր վայր գցել Բաֆֆիի նշանակութիւնը միամիտ վիճարկների աչքում... Եւ այդ ճարպիկ կրիտիկոսի բոլոր հաջողական ջողուածների միակ հիմքը այն էր, որ Բաֆֆին, իր վէպերի մէջ, իբր թէ՛ կեանքը չի դուրս բերում իր հարազատ գոյներով, իբր թէ նա վերաշրջում, աղաւաղում է կեանքը:

Եւ մեր «Խիկար իմաստուններն» էլ հաւատում էին այդ ճարպիկ մարդու խօսքերին, — նրան խելացի, սրամիտ էին անւանում: Այնինչ Բաֆֆիի

մեղքը, որ և նրա փառքն է կազմում, կազանում էր նրա մէջ, որ նա իբրև մարդ և իբրև վիպասան, թէ իր խելքով և թէ զարգացումով՝ շատ քարձր էր իր ժամանակի մարդկանցից, որ նա իր այդ մտաւոր բարձրութիւնից՝ տեսնում էր մեր կեանքի հեռաւոր հորիզոնը և նկատում էր անպիսի բաներ, ինչ որ Հազկունիի նմանները, իրանց «Մեղուի» փեթակի մէջ նստած, մեղրակերութիւնով զբաղւած՝ իհարկէ չէին կարող նկատել: Անկասկած՝ ով որ կեանքի մէջ «մեղրի համը առել է և բերանը քաղցրացրել է» — նա չի կարող հասկանալ և սիրել Բաֆֆիի նման մարդոց... «Մեղուն» և նրա արբանեակները Բաֆֆիի գրւածքները չէ քրթիւթելին անւանում, իսկ իրան Բաֆֆիին՝ հէքիաթաբան, «փահլեւան» և այլ վիրաւորիչ անուններով: Պատճառ որ Բաֆֆին իր վէպերի մէջ չէր բաւականանում լոկ իրականութիւնը նկարագրելով, ինչ որ պահանջում էր նրանից «Մեղու»-ի «կրիտիկոսը» այլ միշտ աշխատում էր այդ իրականութեան մէջ լուսաւոր շաւիղներ գտնել, որ տանում են մարդոց դէպի գիտակցութիւն, ինքնաճանաչութիւն. իսկ խաւարի բնակիչների համար ստելի է ցերեկաւ լուսը, նրանք սովոր են մթութեան և չեն տանում լուսոյ ճառագայթները:—Ահա թէ ինչո՞ւ նրանք այդպէս կատաղաբար հալածում էին Բաֆֆիին: Եւ մենք, մեր պատանեական այդ անփորձ, դեռահաս ժամանակ՝ հասկանում էինք այդ ամենը: Մեզ վրալ արդարանում էին Յիսուսի այն խօսքերը թէ «ինչ որ ծածկւած է իմաստուններից և ծերերից՝ չալտնի է մանուկներին»: Եւ իրաւ, կեանքի մէջ կան շատ բաներ, որոնք հասկանալու, լմբոնելու համար պէտք է ունենալ միայն մի բան — անարատ սիրտ: Իսկ մենք այդ կողմից հպարտանալ կարող էինք: Գեռ մինչև հիմալ էլ ես շատ լաւ չիշում եմ այն բուն զայրութիւն և ատելութիւնը, որ զարթեցրին մեր պատանեկան շարքերում Հազկունիի լողածները՝ «Ապօծերի» առիթով գրւած... Աչն ժամանակ, երբ «Ապօծերի» I հատորը շտեմնւած ու չլսւած մեր մէջ չափշտակութեամբ կարդացւում էր ամեն տեղ, երբ Բաֆֆին իր հայրենասիրական ոգով մարմնացած իղէալ էր դռել մեզ համար, — չանկարձ՝ «Մեղու Հալաստանին» կարծես ուզում էր մեր այդ ազնիւ սգեորութեան վրալ ջուր ածել, կարծես նա ուզում էր մեզ վետ պահել այն բարձր, ազնիւ գաղափարներից ու ձգտումներից, որոնք կապում էին մեզ Բաֆֆիի և նրա ստեղծած «Ապօծերի» հետ: Այդ շատ մի նշանաւոր մոմենտ էր մեր մտաւոր կեանքի զարգացման պատմութեան մէջ: «Մեղու Հալաստանի» լրագիրը չալտնի էր մեզ, որպէս մի վախոտ, շրջանաչեաց, պահպանողական, հնասէր ու հնապաշտ մի թերթ: Նրա մէջ տարած լողածներից մի տեսակ հնութեան, «բորբոսի» հոտ էր գալիս... «Մեղուի» այդ բնորոշ ատկութիւնը ամենքին չալտնի էր և այդ պատճառով նրա չալտնած պահպանողական կարծիքները և դատողութիւնները մեզ չէին հետաքրքրում՝ էլ ո՛ւր մնաց, որ զայրացնէին, կամ վիրա-

տրէին: Բայց Հակոբնի յօրածները «Մեղուի» մէջ բոլորովին ուրիշ բնատրութիւն ունէին. այնտեղ էր նկատուում սովորական «զգուշութեան», «չըջահայեցողութեան» տարրը, որ չատուկ էր այդ լրագրին. — այնտեղ, ընդհակառակ՝ Հակոբնին, մոռացած ամեն տեսակ զգուշութիւն և պատկառանք, հրապարակաւ, տպագրական խօսքերով՝ ոչ թէ քննում, այլ ուղղակի խաչատուակում էր մեր հայկական ոգու ամենաբարձր և սրբազան արտապայտութիւնը՝ — Գաֆֆիի գրած քերէրը...

(Շարունակելի):

## Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԶՈՊԱՆԵԱՆ, ԱՐՇԱԿ.—Պետրոս Գուրեան: Կենսագրական և քննադատական ուսումնասիրութիւն, Հրատ. Թիֆլ. Հրատ. ընկ. փոքրագիր. 195 էջ: Թիֆլիս, տպ. վրաց հրատ. ընկ. գինն է 50 կոպ.

Ռուսահայերը, շատ սակաւ բացառութեամբ, ծանօթ չեն Գուրեանի աչն երկերին, որոնց վերայ հիմնւած է նորա փառքը,—քնարական բանաստեղծութիւններին: Ճիշդ է, Կովկասում ներկայացրել են նրա մի քանի դրամաները. օրինակ, «Սև հողերը», բայց դո՛նանով գրեթէ սահմանափակել է մեր ընթերցող հասարակութեան անմիջական ծանօթութիւնը այդ բանաստեղծի հետ:

Սորա պատճառը, ի հարկէ, ընթերցող հասարակութեան անտարբերութիւնը չէ, այլ աչն հանդամանքը, որ Գուրեանի ոտանաւորների ժողովածուներից շատ սակաւ թւով կարելի է գտնել մեր մէջ:

Մեր Հրատարակչական ընկերութիւնը, լուս ընծայելով պ. Չոպանեանի կենսագրական քննադատական ուսումնասիրութիւնը Գուրեանի մասին, գեղեցիկ գործ կատարած կը լինէր, եթէ նոյն ժաման հրատարակէր և այս բանաստեղծի տաղերը:

Աչն ժամանակ շատ ի դէպ կը լինէր և պ. Չոպանեանի աշխատութեան հրատարակութիւնը:

Հայ բանաստեղծի կամ տահասարակ հայ հեղինակի այսքան մանրամասն ուսումնասիրութիւն, որպիսին ներկայացնում է պ. Չոպանեանի գրքոյկը, եթէ չենք սխալւում, առաջինն է մեր նորագոյն գրակնութեան մէջ: Նոր և խրախուսելի երևոյթ:

Հաճութեամբ կարելի է կարդալ այս մեծագրութիւնը: Շարագրութիւնը կրում է իւր վերայ պոլսեցուն լատուկ արագ գրչի, սահուն և պատկերաւոր ոճի և տաք զգացմունքի գրոջմը: Ճշմարիտ քննադատի տպաւորութիւն են գործում նաև ուսումնասիրութեան եղանակը և գործածած ձևերը: Բանաստեղծի ընտանեկան կեանքը, դպրոցը, դասարանական ընկերները, կեանքի բարեկամները, ժամանակակից հասարակութիւնը և միջնադարը,—այս

բոլորը աշխատել է քննադատը պարզ  
և լրիւ նկարագրել ընթերցողի  
առջև:

Ազալիսով, աչն ամենը, ինչ վե-  
րաբերում է բանաստեղծի կենսա-  
գրութեան, գեղեցիկ է և փալկեցնում  
է պ. Չոպանեանի ուսումնասիրելու  
շնորհք:

Բալց սակաչն դրքուկը չէ փալ-  
կեցնում նաև Գուրեանի տաղանդը,  
մի բան, որ անշուշտ, նպատակ է  
գրել իւր համար և ինքը ուսումնա-  
սիրողը:

Առեմ աւելի որոշ. պ. Չոպանեանի  
աշխատութեան երկրորդ մասը հա-  
մեմատարար աւելի թուլ է առաջ  
նից: Այդ քննադատական մասը  
կարդալուց չես՝ մենք չկարողացանք  
համոզւել, որ Գուրեանը եղած լինի  
խսկապէս «մեր ամենէն ճշմարտ  
բանաստեղծը և աշխարհարար բա-  
նաստեղծութեան հայրը»: Մեզ հա-  
մար անհասկանալի է նոյն իսկ թէ  
ինչ բան բանաստեղծի ոտանաւոր-  
ների մէջ աչնքան արտասովոր է և  
զրաւիչ, որ կարողացել է մինչ աչն  
աստիճան ոգևորել պ. քննադատին,  
թէ ինչու նա աջ ու ձախ շուալում  
է աչնպիսի ածականներ, որոնց  
քննադատը պիտի պահէր Բալրընի  
նման հանճարների համար, Գուրեա-  
նի երգերից բերած քաղածքներից,  
որ, անկասկած, լաւազոյնները պի-  
տի լինեն, բոլորովին չէ կարելի ա-  
նել աչն եզրակացութիւնները, որ  
անում է պ. քննադատը բռնի կեր-  
պով:

Ահա օրինակ.

Աստղերն թնչ են, որ եթէ ոչ ամբիծ  
Եւ թշառ հոգւոց անէծք ողբազին,

Որք թըռին ալրել ճակատն երկնքին:  
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ  
շունչ

Հոս մառախուղի մէջ համր անշունջ,  
Աչժմէն թող որ շանթ մ'ըլլամ դալ-  
կահար,  
Պլլըլիմ անուանդ, մոռնչիմ ան-  
դադար,

Թող անէծք մ'ըլլամ քու կոշտ խըրիմ,  
Թող չորջորջեմ քեզ «Աստուած սխե-  
րիմ»:  
...Փրփրի ներքս գըժոխքի մ'հան-  
գոչն:

...Ո՛հ, կաչծ տըւէք ինձ, կաչծ տը-  
ւէք ապրիմ.  
Ի՛նչ, հերազէ վերջ գրկել ցուրտ չի-  
րիմ:  
...Նրկնքի աստղեր, հոգւոյս մէջ  
ընկէք:

Ինչ ասել կուզէ, որ ալս տողերը  
զգացւած են և զօրեղ. բալց նոցա  
մէջ պ. Չոպանեանը տեսնում է  
«կրակէ բառեր, արեհավառ պատկեր  
ներ, տենդասարսուռ բացատրու-  
թիւններ անհուն չուզման մը հրա-  
բխալին ժալթքումին մէջ»:

Կամ մի ուրիշ օրինակ.

Որտացին խոկմանցս ամպեր,  
Կաչծակնահար ըրին հոգին.  
Մոխիր դարձան երազներս զիս.  
ձակատագիրս խնձղաց ի վեր.  
Խորշ մը կար, որ զիս չէր ծաղրէր,  
Աչն լուռ փոսն էր գերեզմանիս:

Պր. Չոպանեանը, հիացած ալս  
տողերի վերայ, բացականչում է. «և  
ո՛վ, կեանքի վերքերէն՝ փախչելու  
համար, գերեզմանին ապաստանա-  
բանն աչնչափ ուժով երգած է»: Եւ  
ահա աչնպիսի չափազանցութիւններ  
ամեն մի քալում:

Կալ ալս երկրորդ մասում ուշա-  
գրութեան արժանի մի խնդիր, որ  
բաւականաչափ պարզած չէ իւր հա-  
մար ինքը քննադատը, և ալդ իսկ  
պատճառով խճճուում է հակասու-  
թիւնների մի ցանց, որից դուրս  
զալը գժարանում է: Խնդիրը վե-  
րաբերում է ոչ միայն Գուրեանին,  
ալ ունի և ընդհանուր քննադատա-  
կան նշանակութիւն: Գա քնարական  
բանաստեղծի ընթերցումների աս-  
տիճանը որոշելն է, իսկ, գալով մաս-  
նաւորին, Գուրեանի ընթերցումների  
չափը, գրականական դաստիարա-  
կութիւնը:

Մի կողմից պ. Չոպանեանը աչն  
կարծիքն է լատնում, թէ քնարա-  
կան բանաստեղծին վնասում են  
բազմաթիւ ընթերցումները, որով-  
հետեւ իբր թէ նորա «մտքի թար-  
մութիւնը, ներշնչման ինքնուրոյնու-  
թիւնը կը խամբին»: Քնարական  
բանաստեղծութիւնը, ասում է նա,  
«թուլի, միամտութեան, հաւատքի  
պէտք ունի. բազմաթիւ ըն-  
թերցումները կը սպանեն  
ասոնք»: Այժմ Գուրեանի վերա-  
բերմամբ. «իսկ եթէ տգէտ եղած է  
Գուրեան գրագիտութեան մէջ, ա-  
ւելի լաւ. իր մեծագոյն արժանիքն  
է ո և է կանոն, ո և է հոգետրտութիւն  
չիչեցնել, լուզումն ուղղակի բղխած  
ըլլալ, փոխանակ գրքերէ ծնած ըլ-  
լալ»: Մի իստքով քնարերգի տա-  
ղերը պիտի նման լինեն բնութեան  
հնչիւններին. բարկութիւնը պիտի  
նմանի որսաման, զիչըր—հողմի հեծ-  
ծանքին, ուրախութիւնը—թռչնի  
գեղղեղանքին: Եւ ահա չնորձիւ աչն  
հանգամանքի, որ Գուրեանը զերծ է

մնացել բազմաթիւ ընթերցումնե-  
րից, նորա երգերն էլ ալդ պատճա-  
ռով ինքնուրոյն են, թարմ են, բնա-  
կան են. «ասիկա մանուկի ճիչ մըն  
է աչն ցաւին տակ, զոր կեանք տւած  
է իրեն, բնական ձայն մը, գրեթէ  
բնագոյական»:

Չնայելով աչս բոլորին, պ. Չո-  
պանեանը միևնոյն ժամանակ աշխա-  
տում է փաստաբանել Գուրեանի  
ընթերցասիրութիւնը և ուսմանտիկ  
գրականութեան արած ազդեցու-  
թիւնը նորա տաղերի վերայ և կու-  
տակում է իրար վերայ աչնպիսի  
փաստեր, որոնցից ընթերցողը պի-  
տի եզրակացնէ, թէ Գուրեանը ոչ  
միայն տգէտ չէր, ալ շատ կարդա-  
ցած մի պատանի էր.—«Եղիչէ վ.  
Գուրեան կըսէ թէ Պետրոս (բանա-  
ստեղծը) չաճախ գինքը կը զրկէր  
ընթերցասիրաց ընկերութեան գրա-  
դարանը և ցանկը բերել տալով  
10—15 գիրք կ'ընտրէր, կը կարդար  
և նորէն ետ կը գարձնէր»: Գարձեալ  
«Գուրեանի մահէն յետոյ երկու սըն-  
դուկ գիրք ելաւ տունէն»: Յետոյ,  
«անշուշտ բոլոր գրականութեանց  
չրջանը բրած չէ, և շատ հուռ առ-  
կից. բալց կարդացած է ամենէն  
փափուկ, ամենէն տաք հեղինակներն  
աչն գրականութեան, որ ամենէն  
տաքն է բոլոր գրականութեանց,  
գլխաւոր ուսմանտիկ բանաստեղծնե-  
րը, Հիւգօն (բանաստեղծութեանց  
առաջին մասը, Թշուառները և թա-  
սերգութիւնները), Լամարտինը  
(բանաստեղծութիւնները, Ժողէնը,  
Ռաֆայէլը), Գլուման (վէպերը և  
թատերգութիւնները), թերևս Բալ-  
րընէն ալ քանի մը թարգմանու-

թիւն կարդացած է, և Գեթի Վէր-  
թէրին վրայ զաղափար ունեցած ը-  
լա: Աւելացրէք ալստեղ, հաչ հեղի-  
նակներինց, Ալիշան, Խրիմեան, Բագ-  
րատունի (դասական թարգմանու-  
թիւնները ու Հալիը) և ամեն ինչ,  
որ իր ժամանակը կը հրատարակէր:  
Աւելացրէք դարձեալ, որ «սպահն-  
վապէս ալս փշած անուններէն զատ  
ուրիշներն ալ ճանչցած է, բայց  
զժբադտութիւն մըն է, որ իր բա-  
րեկամները չեն փշեր անոր կարդա-  
ցած գրքերը»:

Չկարծէք սակաւն, որ պ. Չոպա-  
նեանը ոչինչ նշանակութիւն չէ տա-  
լիս ընթերցանութեանը. «բացա-  
տրութիւնները նոր, նուրբ և հիւս-  
ւած, ինչ որ մարդ ընթերցումներու  
միաջն կրնայ պարտիլ, նմանութիւն-  
ներ, ձեւեր կան, որոնք ռոմանտիկ  
գրածներու սովորական տարազին  
համեմատ չօրինւած են»: Գեռ աւե-  
լին է ասում, «փորձառութիւնը և  
և ընթերցումները կը սրբա-  
գրեն ճաշակի թերութիւն-  
ները», ալսինքն. «բացատրութեան  
անհաւասարութիւններ, որոնք կը  
կաղացնեն բանաստեղծութեան գը-  
նացքը, կրկնութիւններ, որոնք գա-  
ղափարը կը սկարացնեն, բացադու-  
թեան անորոշութիւններ և նմանու-  
թեան անճշտութիւններ ու մանա-  
ւանդ տաղաչափութեան մէջ աններ  
դաշնակութիւններ»:

Ուրեմն ալժմ ինչպէս վճռենք գր-  
ւած խնդիրը. քնարական բանա-  
ստեղծը օգուտ քաղում է ընթեր-  
ցումներինց թէ վնասում է? Շատ  
պիտի կարդայ թէ քիչ? Գուրեանը  
չատ է եղել կարդացած թէ սակաւ,

օգուտ է ընթերցանութիւնից թէ  
վնասուել? Եթէ մենք ցանկանալինք  
բերւած նախադրութիւններից եզ-  
րակացութիւններ հանել, մենք պի-  
տի շարէինք ալստեղ կամ միաջն հա-  
կասական եզրակացութիւններ կամ  
անհեթեթ եզրակացութիւններ. օրի-  
նակ, եթէ շատ կարդայ քնար-  
երգը—վնաս է, եթէ քիչ կարդայ—  
օգուտ է:

Երկար ու բարակ պատէ պատ  
ընկնելուց չետո՛ւ պ. Չոպանեանը մի  
եւք է գտնում հակասութիւններից  
դուրս գալու համար և չափոնում է  
վերջապէս. «աւելի ճիշտ է միակող-  
մանի միտք մը կոչել Գուրեան, քան  
տգէտ»: Այ՛ն, մենք ես ալսպէս ենք  
կարծում: Եւ բաւական է, որ պ. Չո-  
պանեանը սկզբից արդէն ալս տեսա-  
կետից էլ նաչէր Գուրեանի վերայ:

Այդ գէպքում աւելորդ կը լինէին  
գրքի այն գլուխները, որոնց մէջ  
քննադատը խօսում է քնարական բա-  
նաստեղծի «գրականական դաստի-  
արակութեան» մասին:

Ինչ վերաբերում է մեզ, մենք  
կարծում ենք, որ կանոնաւոր ըն-  
թերցումները, որքան էլ բազմաթիւ  
լինին նոքա, ոչոքի վնասել կարող  
չեն: Ընդհակառակը, կանոնաւոր ըն-  
թերցանութիւնից միաջն օգուտ քա-  
ղել կարող են թէ քնարական բա-  
նաստեղծը, թէ վիպասանը թէ ոչ-  
բերգակը: Եթէ քնարերգը ունի ալս  
կամ այն թերութիւնները, ալս թե-  
րութիւնները չամենաչն դէպս չէ  
կարելի վերադրել բազմաթիւ ընթեր-  
ցումներին, ալս ուրիշ հանգամանք-  
ներին: Միթէ Բալբնի, Արմանտովի,  
Հալիսի և ուրիշ շատ շատերի քնա-

րական բանաստեղծութեան զգացմունքը աւելի խորը, աւելի թարմ, աւելի ինքնուրոյն, աւելի անկեղծ կը լինէր, եթէ նոքա սակաւ գրքեր կարդայած լինէին?

Այսպիսով պ. Չոպանեանի գրքի արժէքը կաշանում է աւելի առաջին մասի մէջ, որ շատ հարուստ է մանրազնին կենսագրական տեղեկութիւններով: Նրկրորդ մասը, զուտ քննադատականը, տրդինք է ոչ աչքան լուրջ և կշաղատող գրչի, որքան անզուսպ ոգևորութեան, թէպէս ազատեղ ևս, շնորանանք աւելացնել, քննադատը երբեմն չալտ-

նում է ճիշտ գիտողութիւններ, օրացն, ինչ վերաբերում է դրամաների գնահատութեանը:

Հասարակութիւնը շնորհակալ կը լինի, եթէ պ. Չոպանեանը շարունակէ կազմել նաև Պեշիկթաշեանի, Պարոնեանի և ուրիշների կենսագրութիւնները, որ մեր Հրատարակչական ընկերութիւնը, չուտով ենք, ամենաչնչ պատրաստակաճութեամբ կը շտապէ լուս ընծայել: Նամանականոց շնորհակալ և երախտագէտ կը լինին մեր նորագոյն գրականութեան ապագալ պատմաբանները:

Լ. Ս.

АМИЕЛЬ.— „Изъ дневника Амиеля“, переводъ съ французскаго М. Л. Толстой, подъ редакціей и съ предисловіемъ Л. Н. Толстого. Изданіе „Посредника“ для интеллигентныхъ читателей. С.-Петербургъ 1894 г. ԱՄԻԷԼ.— «Ամիէլի յիշատակարանից» թարգմանեց Մ. Լ. Տոլստոյա. լամբագրութեամբ և չառաջաբանով Լ. Ն. Տոլստոյի: Հրատարակեց «Պարեղնիկ» ինտելիգենտ ընթերցողների համար. Ս.-Պետերբուրգ, 1894 թ.

Его (պօլնըն' Ամիէլի) дневникъ остается навсегда живою, нужною для людей и плодотворно дѣйствующею на нихъ книгою“.

Լ. Ն. Տոլստոյ:

Չարմանալի առաջադիմութեամբ հարստանում է վերջին ժամանակներս ռուս գրականութիւնը ընտիրընալի գրքերով: Հետաքրքիր և օգտաւէտ գրքերի թիւը օրէցօր շտատունւմ է. քաղաքիս դրավաճառանոց-

ների պատուհանների վրայ օրէցօր չադունում են նոր և նոր գրքեր՝ գիտնական, գրականական, տնտեսական, կրօնական աշխարհներից: Ամեն դասակարգի դրամաճքներ կան աղ բազմաթիւ գրքերի մէջ. ամեն

ոք՝ փոքրից մինչև մեծը, կրթած ինտելիգենտից մինչև հասարակ ժողովուրդը—կարող է առատ կերակուր գտնել աշտեղ իր մտաւոր ու բարոյական զարգացմանը: Աշխատութիւնների մի մասն ինքնուրոյն է, իսկ միւս մասն—թարգմանած: Այդ նախանձելի երևութիւն ուրախարար է առհասարակ, և նամանաւանդ մեզ, հայերիս: Ժողովուրդը մեզանում, ի հարկէ ինտելիգենտ ժողովուրդը, (հասակի մասին խօսք էլ չի կարող լինել), գրեթէ զուրկ է եւրոպական լեզուներից: միմիայն մի քան ի սն երը լաւ ծանօթ են աչք լեզուներին. մի քան ի սն երից էլ շատ չնչին  $\frac{0}{10}$ -ն է պարագում թարգմանութիւններով: Ռուսերէնն է, որ գրեթէ մեր ինտելիգենտ, մասամբ էլ հասարակ ժողովուրդը: Ուրեմն՝ որքան հարուստ է, բազմակողմանի հարուստ, աչք ուսու դրականութիւնը, աչքքան էլ նիւթ կալ հալ ընթերցող հասարակութեանը կրթելու, զարգանալու և հարստացնելու իր գրականութիւնը թարգմանութիւններով նրանց համար, որոնք ուսերէնն էլ չգիտեն: Մինչդեռ մենք մի տեսակ անտարբեր դրութեան մէջ ենք նընջում: Թարգմանութիւնները մեր գրականութեան մէջ շատ սակաւ են: Մեր նորեկ գրականագէտը չի վրստահանում թարգմանել աչք և աչք գրածք, հմուտ, փորձութիւնների մէջ ձեռացածը—իր անունին անարժան է համարում թարգմանութիւններով պարագելը: Բացի այդ մեր լրագրութիւնն էլ շատ անտարբեր է. հազարից մի անգամ, այդ էլ հազիւ, միմիայն կարելի է կարդալ որ

և է քննադատութիւն՝ գրախօսական բաժնում՝ աչք և աչք լուրջ ուշադրութեան արժան գրածքի մասին: որ լուս է տեսել ուսերէն. «Մուրճ» ամսագիրն է եղել միմիայն, որ միշտ՝ կարողացածին չափ՝ իր էջերում գրել է հալ ընթերցող ժողովուրդի տաջ զանազան քննադատութիւններ, գրախօսական լուրածներ:—Ես էլ ինձ նպատակ դրեցի կրեմնապէս, որքան կը ների ժամանակս, մասնակցել «Մուրճ»-ի խրախուսական աչք գործին:

Ալժմ մտադիր եմ ծանօթացնել հալ ընթերցող ժողովուրդին Henri Amiel-ի (Հենրի Ամիէլ) և նրա Fragments d'un journal intime-ի («Հատուածներ հոգեբուզիս լիշատակարանից») հետ, աւելի որոշ ասեմ՝ ես մտադիր եմ խօսել «ИЗЪ ДНЕВНИКА Амиеля» (Ամիէլի լիշատակարանից) գրքի մասին, որ լուս է տեսել Լև Ն. Տոլստոյի դասեր, Մ. Ն.-ի, թարգմանութեամբ: Կորա համար մտածելով՝ ես աւելի լարմար համարեցի թարգմանել—չնչի ն կրճատութեամբ—«ИЗЪ ДНЕВНИКА Амиеля» գրքի աւաջարանը, որ գրել է Լև Տոլստոյ. աշտեղ մեր ժողովուրդը կը ծանօթանալ և՛ Amiel-ի ու նրա «Յիշատակարանի» հետ, և՛ Լև Տոլստոյի գրելու եղանակի հետ:

Երեսնն տարի շարունակ Amiel անխոնջ ուսումնասիրել է իր սեպհական անձն, հետեւ իւր հոգու ամեն մի քալլափոխին... Fragments d'un journal intime—նրա կեանքի վերջին երեսնամեակի մտաւոր և բարոյական հաշիւն է:

Henri Amiel, —գրում է Լև Տոլ-

ստոյ,—ծնւել է 1721 թ. Ժենեւում, նա շատ շուտ զրկւում է ծնողներէրէց, Աւարտելով աշնտեղ բարձր ուսման ընթացքը, Ամիէլ արտասահման է գնում և մի քանի տարի անց է կացնում Հէյլելբերգի և Բերլինի համալսարաններում: 1849 թ. վերադառնալով հայրենիք, նա, արդէն 28 տ. երիտասարդ, ընդունում է դեղեցկագիրտութեան (эстетика), իսկ չնայած փիլիսոփայական ամբիոնը, այդ պաշտօնի մէջ նա մնում է մինչև մահ:

«Բոլոր իր կեանքը Ամիէլ անցկացրեց Ժենեւում, որտեղ և մեռ. աւ 1881 թ. ոչնչով չզանազանւելով հասարակ պրոֆէսորներից...»

«Թէ գիտնական և թէ գրականական ասպարիզներում Ամիէլ աջողութիւն չի ունեցել: Մերութեանը մտանալով՝ նա գրում է իր մասին՝

«Ի՞նչ դուրս բերեցի ևս այն բոլոր ընդունակութիւններից, որ շնորհւած էր ինձ, իմ 50-ամեայ կեանքի տեսակարար պայմաններից: Ի՞նչ դուրս բերեցի ևս իմ գոյութիւնից:»

Մթթէ իմ թուղթ մրտաւելը, իմ չիշատակարանը, հազարաւոր հոգեբու շէն անգլիս աչգ թեթեւրն, իմ դասախօսութիւնները, իմ յօդուածները, ոտանաւորներու, տեսակտեսակ նկատողութիւններս,—միթէ այդ ամենը չոր թերթեր չեն միմիայն: Ո՞ւմ եմ ես պէտք եղել երբ և իցէ: Եւ անուսն միթէ ապրելու է գոնէ մի օր ինձնից աւելի և որ և է նշանակութիւն ունենալու է որմի՛նի համար: Անօգուտ, ունայն կեանք: Vie nulle»:

«Ամիէլի և «Հատուածներ հոգեբանի չիշատակարանից» աշխատու-

թեան մասին՝ նրա մահից չնայ՝ գրել են երկու Ֆրանսիացի անւանի քերթողներ. է. Շերեր կրիտիկոսը, Ամիէլի ընկերն, և Կարո փիլիսոփան»:

«Նրա չիշատակարանը,—ասում է Լև Տոլստոյ,—լի է կենդանութեամբ, սփոփանքով և հրահանգութեամբ, և միշտ կ'ապրի, ինչպէս այն լաւագոյն գրքերից մէկը, որ պատահմամբ թողել են մեզ Մարկ Աւրելիոսի, Պասկալի, Էպիկտետի պէս մարդիկ»:

«Քերթողը թանկ է մեզ,—գրում է Լև Տոլստոյ,—և հարկաւոր այնքան, որքան նա բացում է մեր առաջ իր հոգու ներքին գործերն, ի հարկ է, եթէ այդ գործը նոր է, և մի ուրիշն արդէն չի աւարտել նրան: Ինչ որ էլ նա գրի՝ դրամա, գիտնական շարադրութիւն, վէպ, փիլիսոփայական քննադատութիւն, քնարական-ուսանաւոր, կրիտիկական յօդուածներ, երգիծաբանութիւն՝—մեզ թանկ է քերթողի գրած քներում նրա հոգու այդ ներքին գործերն միմիայն, բայց ոչ թէ այն ճարտարապետական շինութիւնը, որտեղ նա տեղաւորում է իր մտքերն ու զգացմունքները, համարեա միշտ անճոռնացնելով նրանց»:

Մի քանի տող չնայ նա շարունակում է՝

«Պատկալ ասում է՝

«Երեք տեսակ մարդիկ կան. մէկ՝ նրանք, որոնք գտել են Աստուծոն ու ծառայում նրան, ապա՝ նրանք, որոնք չեն գտել նրան, բայց որոնում են, և ապա՝ նրանք, որոնք չեն գտել նրան ու չեն էլ որոնում:

«Առաջինները ուշեղ են և երջանիկ, վերջինները անբախտ ու անմիտ, իսկ միջակները՝ անբախտ

են, բաց ուշեղ՞:

«Աս կարծում եմ, թէ ւա՛ն զանա զանութիւնը, ուր դնում է Պասկալ առաջինների ու միջակների մէջ... ոչ թէ անպէս մեծ է, ինչպէս մտածում էր նա, այլ ամենեին չկա՛յ: Եւ կարծում եմ, թէ նրանք, որոնք բոլոր սրտով ու տանջելով (en gémissant, ինչպէս ասում է Պասկալ) որոնում են Աստուծո՛ւն, — արդէն ծառայում են նրան: Ծառայում անպէս, որ իրանց չարչարանքներով ուրիշների առաջ ճանապարհ են բացում դէպի Ամենակալն, ինչպէս և այդ արաւ ինքը Պասկալ իր «Մտքերում», ինչպէս և Ամիէլ անում էր Նոցն իր չիչատակարանի մէջ:

«Ամիէլի կեանքն, ինչպէս հանդիսանում է նա մեզ «Յիշատակարանի» մէջ, լի է Աստուծո՛ւն որոնելովը այդ արտաքին, տանջանք—առատ որոնելովը... Ամիէլ չի ասում—ո՛չ իրան, ո՛չ էլ ուրիշին՝ «այժմ ես գիտեմ ճշմարտութիւնը, — լուարձք»։ Ընդհակառակն, նա կարծում է, — ինչպէս և այդ շատուկ է ամեն մէկին, որ մտերմաբար է որոնում ճշմարտութիւնը, — նա կարծում է, թէ՛ որքան շատ է իմանում, անքան էլ աւելի հարկաւոր է իմանալ նրան, և, չդադարելով, ամեն ինչ անում է նա կարողացածին պէս, աւելի և աւելի ճանաչելու ճշմարտութիւնը, ինչու և միշտ զգում է իր տգիտութիւնն. նրա չիչատակարանը սողորած է քրիստոնէական խոր զգացմունքների արտապատութիւններով: Եւ այդ արտապատութիւններն ազդում են ընթերցողի վրա՝ գլխաւորապէս իրանց անգիտակող-

թեամբ և անկեղծութեամբ: Նա խօսում է ինքն իրան հետ, չմտածելով, թէ նրան լսում են, չաշխատելով իրան համոզած ձևացնել անտեղ, որտեղ համոզած չէ, չթաքցնելով իր տանջանքներն և որոնելը:

«Կարծես ներկա՛ց ես՝ առանց տանտիրոջ թուլտութեան՝ նրա հոգու ներքին գործելուն՝ ծածուկ, խոր և ջերմաջերմ, օտարի աչքից առհասարակ միջնորմած:

«Այդ պատճառով էլ կարելի է— կարելի է քրիստոնէական երկիւղածութեամբ զգացմունքների անթիւ արտապատութիւններ գտնել՝ աւելի կանոնաւորած, քաղցրազրուցիկ, քան Ամիէլի կրօնական զգացմունքների արտապատութիւններն, — բաց զժւար է գտնել աւելի հոգեբուղի և սերտ կոտցահարող: Մահից մի փոքր առաջ, գիտենալով, որ իր հիւանդութիւնը օրհասական է և կարող է ամեն օր խեղդամահ անել, նա գրում է՝

«Ներք որ չես մտածում, թէ առաջդ տասնեակ տարիներ, կամ մի տարի, մի ամիս ունես ազատ, երբ որ հաչում ես արդէն տասնեակ ժամերը, և զալուց գիշերն բերում է իր հետ անիմանալի սպառնալիքը, պարզ է, որ հրժարում ես գիտութիւնից, գեղարեստականութիւնից, քաղաքականութիւնից ու բաւականանում անձիդ հետ զրուց անելով իսկ այդ միշտ կարելի է: Միմիա՛ն ներքին զրուցն է, որ մնում է մահւան դատապարտածին, որի գլխատումը ետաձգած է: Նա (դատապարտածը) սուզում է ինքն իր մէջ: Նա այլ ես չի ճառագայթում,

ալլ միմիայն զրուցում է իր հոգու հետ՝ Նա ալլ ևս չի գործում, ալլ գիտում, գննում է (созерпаеть). նա պատասկի պէս—նա վերադառնում է իր բնակարանն՝ աչնտեղ մեռնելու, և ալլ բնակարանը նրա խղճմբասանքն է, նրա միտքը: Քանի որ նա կարող է իր ձեռքին գրիչ պահել և մի բոպէ առանձնանալ, նա կենդրոնանում է ինքն իր առաջ ու զրուցում Աստուծոյ հետ:

«Պարուպական հետազոտութիւն չէ դա, ոչ զղլումն ոչ էլ ճշութեան, հնազանդութեան «ամէն»-ն է դա:

«Պանկիկ իմ, տուր ինձ քո սիրտը»:

«Պարտարումն և համաձայնութիւնը ինձ համար պակաս գուարէքան ուրիշներին, որովհետև ես ոչինչ չեմ փափագում: Ես կը դանկալի միմիայն շտանջել: Քրիստոս էլ Գեթսեմանի պարտիզում խնդրում էր նոյնը: Վարեկնք և մեք աչնպէս, ինչպէս նա: «Սակաչն թող քո կամքը լինի և ոչ իմ»— և կը սպասենք»:

«Ալլպէս ևնք գանում Ամիէլին մահից մի փոքր առաջ: Նա ոչ պակաս լուրջ, անկեղծ է իր վիշատա-

կարանի էջերում... Երեսուն տարի շարունակ վարելով իր վիշատակարանը՝ նա զգում էր աչն, ինչ որ մեք ջերմեանդութեամբ մտանում ենք. նա զգում էր, թէ մեք ամենքըս մահան ենք դատապարտած և թէ մեր գլխատղւը ետաձգում են միմիայն: Հէնց ալլ պատճառով էլ աչնքան անկեղծ, լուրջ և արգիւնաւոր է նրա զիրքը»:

P. S. Ես մտաղիւր եմ մի քանի խօսք աւելացնել. Ամիէլի վիշատակարանում արտալաւտած մտքերից մի մասն, անշուշտ, նոր չեն. նրանք միշտ կրկնուել են և կրկնուում են ալժմ: Մի քանիսն են էր նրանցից, կրելով իրանց վրաչ փիլիսոփաչ պրոֆեսորի մտածելու ինքնուրոյն կնիքը, և դանակը, — ծալրալեղութեան են հասնում և զրգում ընթերցողի շարած հարցականութիւնը <sup>1)</sup>:

Յովհաննէս Գնաբի:

<sup>1)</sup> Նկատենք, որ ալլ իսկ երեւութիւնները վերադրելի են և Նև Տուտուլի փիլիսոփալական շարագրութիւններին:

# Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎԻ «ԴԵԻ» ԱՐԵԻԵԼԵԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

(ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՑՕԴԻԱԾ)

## ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ԳՆՈՒՆՈՒ

«Դև» վիպասանութիւնը:—Դևի անձնաւորութիւնը:—Թամարի սէրը:—Նոր սիրոյ առաջին աղբիւրները:—Նոր սէրը Մ. Լերմոնտովի միւս գրած քննարկում:—Պօէմալի կենսագրական նշանակութիւնը:—Վիպասանութեան ազդեցութիւնը բանաստեղծի բոլոր ուրիշ գրած քննարկ վրայ:—Պօէմալի գեղարեստական նշանակութիւնը:

«Դև»ը Լերմոնտովի չանգաւոր գրած քննարկ պսակն է: Ինքը բանաստեղծն էլ շատ էր սիրում այդ պօէման. մօտ տասնհմէկ տարի (1829—1840), ուրեմն՝ իր գրականական, համարեա, ամբողջ կեանքը, նա անխոնջ աշխատել է նրա վրայ, փոփոխութիւնների ենթարկել, մշակել: Այստեղ նա ամփոփել է հսկայ տաղանդի բոլոր չափակութիւնները, ամփոփել է նորնպէս իր կեանքի մի մասը:

Դևի բնաւորութեան մէջ բանաստեղծը միացրել է այն ամենն, ինչից կազմւել էր իր պատանեկութիւնը. 'ինչպէս դեք' նա էլ դեռ մանուկ հասակին մէջ (1825 թ., երբ 11-դ. էր), այցելելով Կովկասը. սերտ սիրով կապվում է նրա հետ: Այդ երկրի բնութեան հրաշալիքները նրան էլ են կախարդում: 1841 թ. Լերմոնտով այդպէս է դիմում Կովկասին՝

Я сердцемъ твой, всегда и всюду твой! (id. 42)

Ինչպէս Դևը՝ բանաստեղծն էլ ցնորում էր սիրոյ և բախտաւորութեան մասին, միշտ գերում կանացի գեղեցկութեամբ. ասում այն հասարակութիւնը, որով շրջապատւած էր. նրա պատանի հողին էլ «բաջազօր», «պոռոզ» էր: 1830 թ. վիպասանութեան «Второй очеркъ»-ից լետով Լերմոնտով գրում է՝

Какъ демонъ мой, я зла избранникъ,

Какъ демонъ съ гордою душой,

Я межъ людей безпечный странникъ,

Для міра и небесъ чужой,  
Прочтя мою съ его судьбою  
Воспоминавіемъ сравни,  
И върѣ безжалостной душою,  
Что мы на свѣтѣ съ нимъ одни (id. 118)

Իսկ 1831 թ. վրպասանութեան «Կուէր»-ի մէջ ասում է՝  
Какъ демонъ хладный и суровый,  
Я въ мірѣ веселился зломъ;  
Обманы были мнѣ не ковы,  
И ядъ былъ на сердцахъ моемъ.  
Теперь, какъ мрачный этотъ геній,  
Я близъ тебя опять воскресъ  
Для непорочныхъ наслажденій,  
И для надеждъ и для небесъ (id. 252)

Մարդ միանգամայն զարմանում է զրչի աչն ազդեցիկ ուժին, ֆանտազիայի աչն լաջնատարած սահմաններին, որոնց Լերմոնտովն է վաչելում: Երիտասարդ հասակը, գործունէութեան կարճատև տարիները (1828—1841) կարողանան ստեղծել այդպիսի մեծ տաղանդ.— դա հանձնար է, կատարեալ հանձնար:

«Վե» վրպասանութիւնը ամեն մի ընթերցողի համար չէ. միմիայն հմուտ գիտողը կարող է ճիշտ հասկանալ նրան: Առաջին տպագրութիւնից աչդ վրպասանութիւնը շատ հասարակ գրւածք է, «հրաշքներով» հարուստ ֆանտազիայի մի դործ. մինչդեռ նա բացում է մեր առաջ հոգեբանական խմբողջ մի աշխարհ, «անարատ հոգու» արագիկական մի կեանք: Պոէմայի շատ կան իշ մասը Թամարի սէրն է. աչդ սէրի մէջ էլ պէտք է որոնել բանաստեղծի հմտութիւնը, «հիւնարը», մեր ժողովրդի լեզուի: Մենք պատեղ ծանօթանում ենք մի նոր սիրու հետ:

Պերունի հօր հսկողութեան ներքոյ էր անցնում Թամարի դժբախտ, միատեսակ կեանքը: Իրաւ որ՝ մարդական քնքոչ վաւիպանքներից, քրոջ, եղբոր սրտակից մտերմութիւնից զրկւած կեանքը դժբախտ կեանք է: Իր մօրը Թամարը դեռ երեխայ ժամանակն էր թաղել <sup>1)</sup> իսկ իր քրոջը, եղբորը չէր էլ տեսել: Փակւած չորս պատերի մէջ, ասիական աչդ տգեղ սփորութիւնից ճնշւած՝ նա ազատութիւն է փափագում. հայրական օջախի կրակով երկած կերակուրը դառն է նրա համար: Նրա միակ չօսը «Սինօզալու տիրոջ» վրայ է, որի հետ արդէն նշանել է և շուտով պիտի միանաչ անուսնական կապով: Թէ ինչ զւարճութիւն է պատճառում աչդ նշանելը Թամարին, բանաստեղծն անձնամենլի նկարագրում է, բացելով ընթեր-

<sup>1)</sup> Տե՛ս. վրպասանութեան «Второй очеркъ»ը

ցողի առաջ վրացունու «մանկական բերկրութեամբ լցւած»<sup>2)</sup> տրամադրութիւնը խնջուքի ժամանակ:

Եւ մատաղ հարսը իւր դափն է առնում,

Ու գըլխի վերայ պըտուտ բերելով,

Թըռչունից թեթև վեր վայր է ոստնում.

Կամ լանկարծ կանգնում,

Չորս կողմ է նայում,

Եւ նախանձալոզ արտիանց սակից

Արտօսրով թըրջած աչքերն են փալլում.

Մերթ շրջեցնում է իր սե լոնքերը

Եւ մերթ դէպի վայր փորանում է նա,

Եւ չընաշխարհիկ նորա ոտները

Սահում, սլանում են աչն փորգի վերայ,

Եւ մի մանկական բերկրութեամբ լցւած

Ծիծաղում է նա:

Սակաչն դողդոջուն ջըրի երեսին

Լուսնի նըշուրը խաղալով հեզիկ,

Հազիւ կարող է աչն նորա ժըպտին

Լինել հուասար, աչնպէս զեղեցիկ.

Կեանքի պէս ժիր էր

Քաղցըր ժըպտան աչն,

Առուզ ու զարթ էր

Մանկութեան նըման: (id. 9—10)

Քալց ճանապարհին՝ «հարսանեաց խնջուք գնալիս» (id. 12)՝ փեռ սալի վրայ աւազակներ են լարձակում... Արինաթաթախ, կիսամեռ նա ինքն է բերում իր մահւան լուրը անհամբեր սպասող հարսին... Անմխիթար ողբում է Հուդալի տունը... Խորտակեցին թշառ հարսի ծաղիկ լուսերը, խեղդեցին նրա մատաղ սրտի մէջ երջանկութեան անմեղ ձըգտումները:

«Կիսաշունչ ընկած անկողնու վրայ» (id. 18) նա թափում է իր աչքերից «առատ արտօսը» (id. 18). նրա

«Կուրձքը շընչում է ծանըր և երկար» (id. 18)...

Սակաչն տեղական վիշտը կամ ուրախութիւնը շատ շուտ են ձանձրացնում մեզ. աչ դրութիւնից պրծնելու համար մենք հնարում ենք պէսպէս հանդամանքներ, միջոցներ. մենք պահանջում ենք մխիթարք, հասգըտութիւն: Նոչնը պահանջում էր և թամարի թուղ կազմւածքը: Քնութիւնից զարգացած նրա երեակալութիւնը շատ շուտ է կարողանում

<sup>2)</sup> «Կև» արեւելեան վիպասանութիւն. թարգ. Մ. Սաղաթեանց. էջ 10.

ստեղծել մի էակ, որի «հրաշալի նոր բարբառը» տալիս է նրան մխիթարանք, իսկ չեսոզ և կորցրած սէրի փոխարէնը:

Բայց զարմանալի բան. ինչո՞ւ այդպէս մի մեծ դեր կատարելու համար թամարը դեմին է ընտրուում. ինչո՞ւ նրա մատաղ երեակապատժիւնը չի հրապուրում Վրաստանի գեղեցիկ, բարի երիտասարդներով: Որովհետեւ, կը պատասխանեմ ես, այն վաղեմի խտտաբարոյ կեանքը, որի մէջ մեծացել էր հերոսուհին, պահանջում էր այդ: Պարզե՞նք, Լեոնապատ «խաւար տան» (id. 9) մէջ որ

«Միշտ քարածալու ծալրից դէպի ձոր

Նայում էր լըռիկ» (id. 9)

վարելով իր փակւած օրերը, չէր կարող դիտենալ թամարը, ամենեին չկրթւած, չլուսաւորւած, թէ ինչպէս են ապրում մարդիկ աշխարհիս միւս անկիւններում, ինչ բնաւորութեան տէր են նրանք, և այլն: Նա ճանաչում է միմիայն իր հօրը, այն խրոխտ Հաղուլին, որից այնքան «սպառնալիք» (id. 22), «լանդիմանութիւն» (ibid) է լսել: Եթէ մենք այստեղ աւագակների չար վարմունքն էլ չիչենք,—այն ժամանակ պատկերի կոլորիտը գրեթէ կը լրանայ: Մարդու հպիացքները կեանքի այս և այն քալի վրայ ստանում են որոշ ձև, մշակում են չրջապատող պայմաններից. այդ հաշեացքները այն հասարակութեան, այն չրջանի արձագանքն են, որտեղ մեծացել է մարդը: Չէր կարող թամարի երեակապատժիւնը իր սիրույ առարկան ստեղծել մի քնքուշ սիրալիր արարած, քանի որ իր շուրջը նա չէր տեսնում այդպիսի «քնքուշ սիրալիր արարածներ»:

Մենք արդէն ասացինք, թէ թամարի թոյլ կազմւածքը կորցրած սիրույ փոխարէն է սպասում և մխիթարանք է պահանջում: Պօէտ սրտով—նա մարմնացնում է այդ պահանջմունքը:

Եւ ահա, կարծես, լսում է բարձրից

Մի ձայն դիւթական և այդպէս բարբառ» (id. 18)

«կարծես»... որովհետեւ խօսում է ոչ թէ մի դրական անձն, այլ երեակապատժեամբ ստեղծած, անմարմին մի էակ. աւելի պարզ՝ խօսում է օրիորդի վառ, տպաւորուն բանականութիւնը, ասես կրկնելով անմարմին էակի թելադրածը:

Մի լար, իմ մանկիկ, մի լար դու իզուր,

Մի թափիր ցողերն <sup>1)</sup> քո պարզ աչքերի,

Դիակի վերայ անբարբառ ու լուռ

Նրբէք չեն ընկել նոքա կենդանի:

<sup>1)</sup> Ես գրում եմ «ցողերն» և ոչ «ցողերը», ինչպէս «Գեւի» հրատարակութեան մէջ է: Դրա մասին տես իմ լօղւածը «Մուրճ» ի մարտ ամսի համարում 1894 թ.

Նոքա պարզ աչքեր մըթնացնում են,  
 կուսական աչտեր միայն այրում են,  
 իսկ որի համար աչժըմ լալիս ես,  
 նա չատ հեռի է, նա չէ լսում քեզ.  
 Նորա անմարմին զարթ աչքերը  
 Երկնային լույսն է աչժըմ փաղաքշում.  
 Եւ եղեմական անուշ երգերը  
 Նուրբ լըսելիքն են ըզմալեցընում:  
 Ի՞նչ է մեր կեանքի ունալնութիւնը,  
 Ի՞նչ է և բոլոր վաղանցիկն աշխարհ,  
 Ի՞նչ է մի կուսի ողբն ու արտօսը  
 Եղեմաչ կողմի բընակչի համար:  
 Ո՛չ, իմ երկնային չըքնաղ հըրեշտակ,  
 Հաւատան ինձ դու, որ չի արժանի  
 Քո անգին վըշտի ըոպէին միակ,  
 Դառնն վիճակը մահկանացուի:  
 Անկալմ եւ անղեկ երկնային ծովում  
 Բարեկարգ դասերն լուսաւորների

Հանդարտ ճեմում են.

Եւ երկնի անբաւ դաշտերի միջում  
 Ամպերի կոչտեր անըմբըռնելի

Անհետ ճեմում են.

Տեսութեան ժամը չէ նոցա խընդում,  
 Բաժանման ժամը տըրտում չէ նոցա,  
 Ո՛չ ապագայում ունին ցանկութիւն,  
 Եւ ոչ անցածն են ափսոսում նոքա:  
 Քո դըժբաղդութեան տագնապիչ օրը  
 Նորանց միմիայն մըաքումըդ վիշիբ,  
 Եւ նոնպէս դէպի ողջ հողեղէնը  
 Եղիր դու անհոգ եւ անուշաղիր: (id. 18—19)

Մեր ընթերցողը, երևի, նկատեց, որ այդ հատուածի եղանակը քա-  
 նի գնում սաստկանում է: Դա մի հոգեբանական կանոն է: Մարդու զգա-  
 յարանական թելերը այնպէս են շինած, որ որքան սաստիկ է լինում որ  
 և է գրգռում, որ և է հրապուրում, այնքան աճում բազմանում է նրանց  
 ջերմութիւնը, կրքոտ ջերմութիւնը: Երբ քերթողը նստում է գրելու և  
 երբ՝ մի քանի ժամանակից լիովին լսիչսակում է իր իրէպոլ, ինչ  
 բուռն ձգտումով այն ժամանակ նա առաջ է շտապում... Ինչ արագու-  
 թեամբ այն ժամանակ լցւում են սպիտակ թերթի էջերը... Երբ պատմու-  
 թեան ուսուցիչը, ասենք, խօսում է իր սանիկների հետ մի հետաքրքիր

գարազլիս մասին և երբ խօսակցութեան ժամանակ գերում է իր առարկայից, տեսէք, նա որչափ առաջ է վազում. նա լալտնում է իր ունկընդիրներին աջնպիսի դատադուլթիւններ, մտքեր, որոնք աւելորդ են, անգամ արգելած, գիմնագիտութիւն—Փամարի երեակալութենը աչնպէս է հրապուրում իր «անմարմին էակով», որ թող է տալիս նրան շատ առաջ վազել:

Գէպի ողջ հողեղէնը

Եղիր դու անհոգ և անուշաղիր (id. 19),—

ահա ինչ ձև է ստանում բանի ընթացքը: Այդ խօսքերը ստիպում են Փամարին մի առժամանակ կանգ առնել ու մտածել: Ինչպէս... լինել «անհոգ և անտարբեր» ու մոռանալ, ուրեմն, փեսային, որ մահւան տագնապի մէջ անգամ

«ձեպեց ձիւնթաց հարսանեաց խընջուք» (id. 17)

ինչպէս... լինել «անհոգ և անտարբեր դէպի ողջ հողեղէնը» (ibid), երբ «հողեղէնը» աչնքան գեղեցիկ, աչնքան քաղցր և հրապուրիչ է: Փամարը տարակուսում է. նա աննախանձելի դրութեան մէջ է՝

Ելաւ աղջիկը, չորս կողմ նայեցաւ,

Աչնպէս վըրդովմունք ակրել էր կուրծքին,

Որ անն ու վիշտը, ցընծութիւն անբաւ

Նորա առաջը ոչինչ բան էին:

Եւ քուր նորա սաստիկ ախտերը <sup>1)</sup>

Միատեղ չանկարծ հռացին սըրտում,

Հոգին կոտորում էր իր շըղթաները,

Երակները մէջ կըրակ էր հոսում (id. 20)

Ամբողջ գիշերը զբաղած էր Փամարն իր «անմարմին էակի» խորհրդաւոր անչարութեամբ. ով է նա... որտեղից,—այդ հասկանալ զեռես չէր կարող անցեալի ու ներկայի անակնկալութիւններից մթնացած նրա բանակահնութիւնը: Վերջապէս

Առաւօտուն ցանկալի քունը

Յոգնած աչքերը փակեց առ ժամաչն.

Բազց զարմանալի երազով մի նոր

Այդ քունը նորան չիտթեց սաստիկ,

Երեկցաւ անա մի լուռ եկաւոր

Մուլթ երեսութով, բազց շատ գեղեցիկ.

Մօտեցաւ բարձին և աչնպէս սիրով,

Եւ աչնպէս արբտում վերան նայում էր,

<sup>1)</sup> Բնագրում «чувство» բառն է. սխալ է հասկացել Մ. Սաղաթեանցն այդ տողը. «ախտ» նշանակում է «не добрыя, нечистыя чувства», իսկ Փամարի զգացմունքները մաքուր և բարի էին:

Որ կարծես խեղճը սաստիկ շարժւած էր (id. 20—21)

Քուներ կազդուրեց թամարին: Նա նորից քննում է հարցը և հասկանում, որ իր հոգու հանգստութիւն խանգարողը երազն էր, որովհետեւ «մութ երեւութով, լուռ եկաւորը» (id. 20—21)

Չէր հրրեչտակ մի երկնաբընակ,

Սուրբ պահապանը Աստուծոյ կարգած,

Նորա գանգուրը չունէր մի պըսակ

Պերճ ծրածանի շողերից հիւսած (id. 21),—

միևնույն ժամանակ

Չէր նա անհաւատ հոգին դըժոխքի,

Աչն նահատակը անարդ և վատթար,

Ազլ նա նըման էր պարզ երեկոյի...

Ո՛չ օր, ո՛չ գիշեր, ո՛չ լուս, ո՛չ խաւար...

ալսինքն—նա ոչինչ էր՝ ցնորք, իդէալ: Իսկ երազը մէջ տեսած պատկերը, լսած ձայնը ուշադրական չէին, այլ միայն թւում էին ազդեցիկ:

Ցնորքները թամարի ամենաքաղցր դրազմունքներից մէկն է: Նրանք ազատում են նրան զոնէ մի քանի լուսէ իրականութեան մուսլ աշխարհից և սլացնում ֆանտազիայի պարզ, հրաշալի եթերքի մէջ: Մինչդեռ իրականութիւնը զգուցնում է նրան, ֆանտազիան, ընդհակառակն, նոր ոյժ է ներշնչում նրա կազմւածքին: Թամարը փափագում էր սիրել և սիրուել... Բայց փեսան մեռնում է՝ հէնց հարսանիքի օրը, և նրա սրտում սիրույ իղձը աւելի բոցիչ կալծով է վառւում: Ազդեցն է իթէ մինք ձեռք ենք բերում մի անհրաժեշտ բան և իսկույն կորցնում, մի ստանձին եռանդով ալն ժամանակ սկսում ենք սրտնել կորցրածը... Ազաւոր վրացուհին էլ որոնեց, բայց որովհետեւ իր շուրջը, իրականութեան աշխարհում, ոչ ոքի չտեսաւ, ուստի հոգւով-սրտով տեղափոխւեց մի սուրիչ աշխարհ: Ահա ինչու երազեց նրան չնաշխարհիկ գեղեցկութեամբ «եկաւորը», և երազեց՝ թեքւած նրա գլխին... Գրաւեց լեռնաբնակի անփորձ սիրտը սող «եկաւորի» սիրալույզ գէմբով, սիրալիր աչքերով և «հրաշալի նոր բարբառով»: Հաշտեց թամարն իր հետ: Նա ալժմ չաղթում է կասկածը, նա հնազանդում է իր անփորձ սրտի, սիրալին արկածներից թմբած-արբեցած իր բանականութեան ձայնին, նա սիրահարւում է իր երեւակալութեամբ ստեղծած անմարմին էակի վրայ և սիրահարւում աչնպէս, որ միշտ—ե՛րազի մէջ, ե՛րարթուն ժամանակ—օր ու գիշեր—«եկաւորի» պատկերը անբաժան է նրանից: Ահա ինչ սաստիճան, արգոյ ընթերցող, կարող են եռալ բորբոքել մի օրիորդի կրքեր:

«Տըխրագին Գեր, արտաքսած հոգին» (id. 1),

որ իր «երկրաբնակ հպատակների խորագանն» (id. 32) է, «բնութեան շարք» (ibid):

Որի հալեացքը չուս է կործանում,  
 Երբ որ աչն չուսը դեռ նոր ծաղկում է,  
 Որ մինչև ցալսոր ոչ ոք չէ սիրում,  
 Որ բոլոր աշխարհ անխժանում է (ibid),—

այդ դեռ կարողանում է գրաւել Թամարի սիրտը:

Թամարը գիտէ, թէ աչն խորամանկ հոգին է, որ «վատ ցնորքներով աղբուկ և շիտթ է պատրաստում» (id. 22) իրան. գիտէ, որ իր սալագալ ամուսնու մահւան պատճառն էլ այդ «նենգաւոր դէն» (id. 14) է եղել, որովհետև նա «չար ցնորքներով նրա մտքի մէջ շիտթ է ձգել ու հեռացրել մատաղ փեսային նախահալքերի սովորութիւններից» (ibid),—այդ ամենը գիտէ Թամարն,—ալուամենաչնիւ բոլոր հոգով չանձնւում է իր «անկարծ ընկերին»: Ահա ուր կարող են տանել մատաղ ու միկնոյն ժամ գրգռւած կրքերը: Մեծ է այդ կրքերի զօրութիւնը. աչնպէս անխնայ, աչն պէս ճարտար մտեկնում են նրանք մեզ, որ ընդդիմանալ նրանց դժւար թէ ով կարող է: Մեղադրել Թամարին աչն պատճառով, որ նա չանձնւում է «նենգաւոր» ողուն,—միտք չունի. պնդել, թէ Թամարն մեղանչում է—անկարելի է. Թամարը չի մեղանչում, ոչ. նա միայն հնազանդում է աչն պահանջմունքին, որ զարգացել էր նրա կազմւածքի մէջ կեանքի անդերծ հանգամանքներից: Իսկ աչն, թէ այդ պահանջմունքը մաքուր էր, կարծեմ, պարզ է: Սիրել ու սիրել էր փափագում Թամարն,—ուրիշ ոչինչ. և փափագում էր նա ոչ թէ անասնական ցանկութեամբ լարւած,—երբէք. նրա փափագը կուսական անմեղ սրտի արձագանք էր: Որպէս հուր, անբիծ է Թամարի սէրն, որովհետև այդ «սիրոյ համար, հրեշտակի խօսքերով, բացւում է Լիդիոյ» (id. 53): Բայց ով կը փտահանալ պատերազմել անբիծ սիրոյ զգացմունքների դէմ,—և եթէ փտահանալ էլ, միթէ չի չաղթւել: Բայց մի քանիսն են կարող են և աչնպէս մտածել՝ Թամարը չլուսաւորւած, չզարգացած լեռնաբնակ մի աղջիկ էր. ի հարկէ, դժւար չէր խաբել մուտրել նրան: Բարւոք է. լինէնք Չացկիին. նա ով է. չէ որ արև մտեան Եւրոպացում կրթւած, այդ Եւրոպայի լուսաւոր մտքերով զարգացած մի խելօք երիտասարդ: Բայց տեսէք, նա էլ չի կարողանում սանձահարել իր անկեղծ սիրոյ զգացմունքները, բուռն ձգտումները դէպի Սօֆիան, այդ թեթևամիտ, ստոր և բարոյապէս տղէտ արարածը. նա գերւում է... Ոչ. ընթերցող, աչն կրքերը, որոնց չանձնեց Թամար, թէպէտև, իրաւ է, արբեցած բանականութեան արգասիք են, աչնուամենաչնիւ նրանք բղիսել են մի կոչսի անարատ հոգուց և բղիսել են բարի նպատակով սիրել ու սիրել...

Մենք ասացինք արդէն, թէ Թամարը բոլոր հոգով չանձնւում է իր «անկարծ ընկերին», իր «ցնորքին», իր երեսակալութեամբ ստեղծած անմարմին էակին: Սակաւն նա չի բաւականանում այդ «անխոցելի» ցնոր-

քով, այլ կամենում է այդ ցնորքը իրականացնել: Ազդպէս աղքատը, ցնորելով հարստութեան և շքեղ կեանքի մասին, աւելի է զգում իր չքաւորութիւնը. քաղցածը, ցնորելով համեղ կերակրների մասին, աւելի քաղցենում... ազդպէս բանդարկեալն, իր սենեակի վանդակապատ լուսամուտից նայելով ազատ անց ու գարց անողներին, աւելի է զգում իր անբախտ կեանքի թշառութիւնը... ազդպէս մարդի սրտում կրկնապատկում է սիրելու և սիրւելու փափագը, երբ այդ վերջինը գրգռւում է ուրեք սիրալին արկածներով:—Քամարն էլ է սիրում, սիրում իր Փանտազլիայի սակզածին, բայց ինչպէս... նա սիրում է «կաթոզնի, անմահ մաքի և երեակաւութեան բոլոր զօրութեամբ»: Արքան արտասովոր է նրա սիրոյ ստարկան, աչքան էլ արտասովոր և նոր է նրա սէրը: Առանց իր սիրելիի պատկերը նա աչքմ մի բողբ էլ չի կարող խաղաղ ապրել: Բայց չէ որ այդ պատկերը ցնորք, երազ է, ինչպէս կարելի է, ուրեմն, ապրել ցնորքի հետ: Եւ թամարը սկսում է ամենել...

Արդէն վաղուց է նա տանջւում է,  
 Բայց ինչու արդեօք չզիտէ ինքր.  
 Երբ որ սուրբերին աղօթել կամէր,  
 Սիրաը նորան էր աղօթքով զառնում:  
 Երբ որ վաստակած անկողին չկրնինէր,  
 Բարձր ալրում էր՝ տալով նեղութիւն.  
 Տիրում էր նորան սարսափ անազին,  
 Քուչում էր տեղից, սաստիկ զոզում էր,  
 Կուրծքն և ուսերը բորբոքում էին,  
 Ուժը հասնում էր, չնչելը ծանր էր,  
 Մթանում էր աչքը, խանդակաթ գիրկը  
 Անցորդ էր խնդրում,  
 Եւ հալում էին ջերմ համբոյրները

Նորա շրթութենքում... (id. 26—27)

Ահա ազդպիսի մի ժամանակ, երբ թամարի բոլոր հոգեկան ուժերը սաստիկ լարւած էին, երբ այդ լարումը ծալրապէղութեան էր հասել, երբ ժարմինը նեղ էր հոգու համար, երբ խանդաբլի էր կազմւածքի մասների հաւասարակշռութիւնը, — չալտնւում է նա. (այն, նա չալտնում է, բայց միմիայն և միմիայն թամարին, իսկ մեղ նա կարծես թէ չալտնում է: Այդ «կարծես»-ը անպատճառ պէտք է աչքի առաջ ունենալ զրամալի բոլոր վերջին գործողութիւնների ժամանակ ևս)... երջանիկ է թշառուհին... նա ընկնում է նրա գիրկը, փաթաթում նրա վզովը... նա իր կուսական անմեղ շրթունքները սեղմում է կախարդ «եկաւորի» տաք շրթունքին: Բազըր թամարի ուժերից վեր էր. նրա սրտի «կենդանի լարերը» չեն զիմանում և պատուում են: «Մահարեր թոյնը, խորասուղ-

ելով թամարի կարծիքը» (id. 46), դադարեցնում է նրա անտանելի-  
 ւորագրիկական կեանքի անիւրը: Թամարը զոհ է դնում իր բազումաբան  
 թեան, իր իգէալին, իր դեին... Թամարը զոհ է գնում իր անփորձ  
 սրտի անմեղ կրքերին...

Թամարի տարածամ մահով հէնց բանաստեղծը կարող էր աւարտել  
 իր արագրիկական վիպասանութիւնը: Սակայն վաճակաճ «պահապանը» իր  
 վրդովեցուցիչ կարծիքներով մաքուր և անարատ հերոսուհու մասին՝ ստի,  
 պում է շարունակել: Այդ վաճակաճ պահապանների թիւը, գգրախտաբար,  
 շատ մեծ է—ամբողջ մի բազմութիւն: Շոտայ եզրակարութիւնների անող-  
 միակողմանի քննող այդ ծերունու անձնաւորութեան մէջ բանաստեղծը  
 ամբոխի վարքաբարքը, հաշեացքներն է ամփոփել: Բայց թող այդ  
 ամբոխը դառն իրա միտքը պարզելու համար նախ կուտի դազաղին:

Իբրև մի քնած սիրուն հըրեշտակ,  
 Կայսր դազաղում հանդարտ պառկած էր...

(և այլն. id. 47)

Վերջաբանից (որ սկսվում է ժՆ սարոֆալից) մենք խմանում ենք,  
 որ Թամարի հոգին միակը չէր. նա այն բազմութեան թւից էր, որոնց  
 կենդանի լարերը ստեղծել է Աստուած «լաւազուն օղից» (id. 53), որոնց  
 քնակարանը երկնքումն է, ոչ թէ երկրում:

Իմացիր, գոսօղ, (ատում է հըրեշտակը դեին)  
 որ մենք վաղուց է,

Սպասում էինք սրա գալտեան:

Եւ սորա հոգին նոցանից մինն է,

Որոնց կեանքըն է մի բոպէ միաչն

Աչն անտանելի չարչարանքների,

Անհասանելի մխիթարութեան:

Նոցա լարերը Արարիչն արդար

Լաւագուն օղից հիւսել, կազմել է,

Բայց ոչ նոքա են աշխարհի համար

Եւ ոչ աշխարհը նոցա համար է.

Շատ սատտիկ դնով Թամարի հոգին

Մոլորութիւնից փրկեց իր անձը...

Տանջանքներ կը բերեց, սիրեց կաթոգին

Եւ սիրուց համար բացաւ եզեմը: (id. 52—53)

Այդ արդէն բաւական է համոզելու, որ բանաստեղծը մտադիր էր  
 նկարագրել ոչ թէ մի մասնաւոր անձնաւորութիւն, այլ ամբողջ տիպար:  
 Թէ ինչպէս է նկարագրել նա Թամարի անձնաւորութիւնը, մասամբ տե-  
 ասնք մենք: Իրանից բարձր, դրանից աւելի պօէտիկական, աւելի կատա-  
 բեալ գեղարւեստական ստեղծագործութիւն երեակալել անգամ դժար է:

Շեքսպիր, այդ երևելի սրտագէտ զեղարեւտի արքան, եթէ մտածէր ստեղծել թամարին, երևի, զրանից լաւ չէր կարող գրել: Ինչպէս տիպ էլ թամարը պակաս չէ անգլիական բանաստեղծի, աւելի ազատ, համամարդկային աջող տիպերից: Ամենազատկանիչը թամարի մէջ նրա սէրն է,—արդէն ասացինք մենք: Ասում են առհասարակ, թէ Շեքսպիրի Ռօմէօ և Ջիւլիետտա այդ սիրոյ նախատիպարն են: Սակայն այդ այդպէս չէ: Ռօմէօ և Ջիւլիետտա մի կողմից և թամար միւս կողմից—երկու սիրալին կերպարանքի ներկայացուցիչներ են: Ռօմէօի և Ջիւլիետտի սէրը աչնքան հոգեկան չէ, որքան ցանկասէր, մարմնական, մինչդեռ թամարի սէրը միմիայն անմարմին սէր է. նա աչնքան մաքուր է, որ «նրա առաջ բացում են եղեմի գոները» (id. 53): Քանի որ չի վերանալ աշխարհից այդ անմարմին սէրը, կ'ապրի աշխարհի հետ անշուշտ և թամարի տիպարը: Լերմոնտով բնազգամբ շոշափել էր նորան և, հասկանալով նրա վսեմութիւնը, մեծ եռանդով նկարագրել է իր վիպասանութեան մէջ: Գրանով նա ընդմիշտ անմահացրել է իր անունը ազնիւ մարդկութեան չիշտակարանի մէջ:—

Մ. Լերմոնտովի բանաստեղծութիւնների մէջ էլ նշմարելի է այդ նոր սէրը: Գեռ տանուեց տարեկան հասակում, Լերմոնտով գրում է *Первая любовь* ստանաւորը... բանաստեղծն իր ամբողջ կեանքում հաւատարիմ մնաց այդ սէրին. այդ ապացուցանում է *Первое января* ստանաւորը, որ գրած է 1840 թ.... հետեւեալ ստանաւորը, որ գրած է 1841 թ. Լերմոնտով կրկին վիշում է իր՝ «къ безплотному видѣнью»<sup>1)</sup> սածած սէրը և առաջ է բերում այն հանգամանքները, որոնց չնորհիւ ծնւել է նա.

Изъ подъ таинственной, холодной полумаски  
Звучала мнѣ голосъ твой, отрадный, какъ мечта,  
Свѣтили мнѣ твои плѣнительные глазки,  
И улыбалися лукавые уста.  
Сквозь дымку легкую замѣтилъ я невольню  
И дѣвственныхъ занять и шеи бѣлизну.  
Счастливецъ! видѣлъ я локонъ своевольный,  
Родвыхъ кудрей покинувшій волну...  
И создалъ я тогда въ моемъ воображеньѣ  
По легкимъ признакамъ красавицу мою,  
И съ той поры безплотное видѣнье  
Ношу въ душѣ моей, ласкаю и люблю (id. 62).

Գեռ ևս շատ օրինակներ կարելի է բերել Լերմոնտովի գրածքներից, որտեղ նա խոսում է իւր սիրոյ մասին, բայց այդ էլ բաւական է՝ եզրափակելու, թէ բանաստեղծն այն պատճառով աչնքան ճիշտ և լրացած է

<sup>1)</sup> Собран. Сочин. М. Ю. Лермонтова т. I էջ՝ 62.

Նկարագրել այդ սէրը իր վիպասանութեան մէջ, որ ինքը ևս գտնւել է նրա հպատակութեան ներքով և ապրել՝ առաջնորդւած նրա կօշտերով:

Սակաջն Լերմոնտովը առաջինը չէ, որ զգացել է այդ սէրը: Թէպէտ և այդ սէրը նոր անւանեցինք, բայց նա հին է, ինչպէս մարդկութիւնը, ինչպէս և հասարակ սէրը: Նոր նա կարող է կոչւել այն մտքով, ինչ մտքով Ամերիկան նոր—երկիր է կոչուում: Նոր սէրն առաջին զգացողը Պիգմալիոնն է, Կիպրոսի արքան, եթէ ճիշտ է, ՚ի հարկէ ալն, ինչ որ հասել է մեզ նրա մասին: Այդ արքան հմուտ անգրիպոյրժ էր: Չգըտնելով իր սէրութեան կանանցից մէկը, որին կարողանար շնորհակալ սերտ սիրով, նա մի իդէալական գեղեցկութեամբ կնոջ արձան է շինում և սիրահարւում նրա վրայ: Գրականական պատմութեան XV III դարու զարադրուիւիւթ թերթիւով մենք կը տեսնենք, որ ժան-ժակ Ռուսօն էլ զգացել է այդ սէրը: Նա ինքն է նկարագրում այդ իր «Խոստովանանքի» մէջ:

«Գե» վիպասանութիւնը սնի նոյնպէս և կենսագրական շշմարտութիւն: Շատ սակաւ և խառն սոցիակութիւններ են հասել մեզ Լերմոնտովի կեանքից: Գատեւ բանաստեղծի մասին, հիմնւելով այդ սոցիակութիւնների վրայ, անկարելի է, որովհետեւ նա երբէք չէր բացում իր սիրտը «անմիտ ամբոխին»: Իր մահից մի քանի օր առաջ՝ 1841 թ.՝ նա ասում է՝

Я не хочу, чтобъ свѣтъ узналъ  
Мою таинственную повѣсть,  
Какъ я любилъ, за что страдалъ;  
Тому судья лишь Богъ да совѣсть. (id. 61)

Սակաջն մենք ձեռքի տակ ունենք նրա գրածքները, սրտեղ, ինչպէս հաչելու մէջ, նշմարելի է բանաստեղծի կեանքը 13 տարեկան հասակից (1827 թ.) մինչև մահը (1841 թ.): Բոլոր այդ գրածքները թափանցած են ծանր, թունաւոր զգացմունքով, ինչու և հարկադրում էին նրան ասել իր ստանաւորների մասին՝

Я ихъ отъ сердца отрываю,  
Чтобъ муки съ ними оторвать (id. 266).

Այդ «մաղձատ ստանաւորների մէջ», համարեա միշտ, աչքի է ընկնում սովորական մի նուազ,—սոյն է՝ անդարձ գնացած մանկական օրերի չիշդութիւնն,

Նրբ նա երջանիկ և երանելի —  
Նախածին էակն ստեղծագործութեան—  
Ունէր սուրբ հաւատ և սէր գորովի,  
Չգիտէր կասկած, ոչ սխ չարութեան.  
Ունաջն գարերի շարունակութիւն

Չէր նորա միտքը սարսափեցնում... <sup>1)</sup>

Շրջապատած սառնասիրտ հասարակութիւնով, զգած նրա ունայն կեանքից՝ Լերմոնտովը հանում է «homme de monde» ի զգեստը և առանձնանում... Այդ ժամանակ (1831 թ.) նա գրում է՝

Я любилъ

Всѣ обольщенія свѣта, но не свѣтъ,  
Въ которомъ я минутаи лишь жилъ;  
И тѣ мгновенія были мукъ полны... <sup>2)</sup>

Այդ մենակութեան տանջանքներն էին՝ Մենք չենք պատահիլ աչժով պոէտի գրած քննարկում ոչ մի խօսք մտերիմ ընկերութեան մասին. ուսանող ընկերակիցները հետաքրքրական չեն նրա համար: Հետաքրքրական չէ նրա համար և ամբոխը իր «պապական հաղեացքներով», ժամանակակից կեանքը: Որ կողմ էլ նայէր, — ամեն ինչ օտար, ամեն ինչ մոռալ: Նա ստիպւած էր ապրել մենակ, մենակ լալ, մենակ խնդալ, ինքն իրան մխիթարել:

Ի՛նչպէս դառն է (բացականչում է նա չևտոյ Գեի բերանով)  
և ի՛նչ տառապանք,

Բոլոր կեանքումս անսահման դարեր

Մ'և զւարճանալ, և՛ կրել տանջանք.

Չարութեան համար դովասանք չառնել,

Բարեաց փոխարէն վարձը չտոանալ,

Միայն իր համար կեանքը վայելել,

Եւ ինքն իւրեանից անվերջ ձանձրանալ,

Եւ պատերազմով ալպէս անվախճան

Անլախթ և անհաշտ, անփոփոխ մընալ,

Մըշտօրէն խըղճալ առանց ցանկութեան,

Ամեն բան զխտել, տեսանել, ըզգալ,

Ամեն բան ստել ընդդէմ իր կեանքի

Անարգել բոլոր էակն աշխարհի... <sup>3)</sup>

«Homme de monde»-ի զգեստը հանելը, իրաւ է, վերջ է դնում նրա երկտասարդ զւարճութիւններ փափագելուն, սակայն չի տալիս նրան հոդեկան նեցուկ, հանգստութիւն, բաւականութիւն: Նա հրաժարւում է հառարակութիւնից, որովհետեւ ալը հասարակութեան խօսքի և գործի մէջ չի տեսնում ներդաշնակութիւն, հրաժարւում է առօրեայ կեանքից և «լչտա-

<sup>1)</sup> «Գե». թարգ. Մ. Սատաթեանց. էջ 1.

<sup>2)</sup> Пнлн. Собр. Сочин. М. Ю. Лермонтова т. I էջ՝ 214.

<sup>3)</sup> «Գե». թարգ. Մ. Սատաթեանցի. էջ՝ 35

հար հոգւով» տեղափոխուած է Կովկաս՝ դէպի իր մանկութեան ընկերը, որով աչնքան հրապարուած էր և որին աչնքան սիրում.

Прекрасенъ ты, суровый край свободы!...  
 Какъ я любилъ, Кавказъ мой величавый,  
 Твоихъ синовъ воинственные нравы,  
 Твоихъ небесъ прозрачную лазурь,  
 И чудный вой мгновенныхъ громкихъ бурь... <sup>1)</sup>

Կովկասեան լեռների մէջ է հիւսել Լերմոնտով և իր Քամարին անթաւամելի մի պոսակ, աչք երկիրն է ընտրել իր «Դե» պոէմալի գործողութեան տեղը: «Դեի» առաջին նմուշները բանաստեղծն գրել է 1829 թ. «Նէթր»-ի մէջ արտազատուած է նրա հոգու նսեմութիւնը, խաւար լարերը. նա ստում է՝

Нѣжныхъ и веселыхъ пѣсней,

Мой другъ, не требуй отъ меня...

Я умеръ. Свѣтлыхъ вдохновеній

Забыта мною сторона

Давно. Какъ скученъ день осенній,

Такъ жизнь моя была скучна;

Такъ впечатленій неприятныхъ

Душа всегда была полна (id. 47)

Ազգէս է նա նկարագրում և իր դեին.

Душой измученною боленъ,

Ни чѣмъ не могъ онъ быть доволенъ,

Все горько сдѣлалось ему;

И все на свѣтѣ презирая,

Онъ жилъ, не вѣря ничему

И ничего не признавая <sup>2)</sup> (id. 48—49)

Վրպաասնութիւնը ենթարկել է շատ փոփոխութիւնների և միայն 1840 թ. տաղել է իր կատարեալ ձևը:

«Դե»-ը մեծ ազդեցութիւն է ունեցել բանաստեղծի բոլոր ուրիշ գրածքների վրայ: Աչն հարցը, որ դրել էր իրան Լերմոնտով աչք արեւելեան պոէմալում, հալածում էր նրան բոլոր ուրիշ գրածքների մէջ: Նրա երիտասարդ, հոգր հոգին հրապարվում է «տխրադէմ» հանճարի դէմոնական ուժով: «Վտուզ» Դեը բարեբախտիկ արտազատիչ է հանդիսանում

1) Собр. Сочин. М. Ю. Лермонтова, т. II, 12՝ 161/162.

2) Տես «Второй очеркъ»

բանաստեղծի ալեկոծ, անդրդեղի, կուսասէր հոգու համար: «Քաջագոր ազդու ոգին» չի գտնում իրան հաշտութիւն. խորտակելով ուրիշների հանգիստ բաղդը, ինքն աւելի ևս տանջւում է.—ազդպէս, ահա, և պոէտը բոլոր իր կեանքում չէր գտել մի արարած, որի կուրծքի վրայ կարողանար «թմբել ու քներ»: Հանդստութիւն ու հաշտութիւն հալածող, չար ճակատագրի ազդ կնիքով դրոշմած են Վերմոնտովի գրեթէ բոլոր հերոսները: Նրանք դեռ են՝ մարդկային կերպարանքով միաջն: Չանազան հասակում, զանազան անունների տակ և զանազան երկիրներում,—նրանք բնաւորութեամբ մեծ նմանութիւն ունեն իրար հետ. նրանց մէջ ապրում է «քաջագոր ազդու ոգին», տարրական մի ուժ, որ մանկութիւնից նրանց մղում է դէպի մարտնչելն, դէպի՝ թէպէտ իրար, անօգուտ՝ գործելն: Ամենքին օտար, ամենքին ատուղ, «եսականներ», փառասէր, հպարտ և ցուրտ վրէժխնդրողներ, նրանք միշտ տանջւում են անվճարելի սարակուսանքով, վշտով, լուսաբեկութեամբ, մուսցումն փափագելով: Անընդհատ դործող՝ նրանք չգիտեն, թէ ինչ են կամենում. դէպի ո՛ր ձգտում. տէր չեն իրանց կրքերին, զբացմունքներին: Վերմոնտով, անկասկած, չէր կարող գտնել այդպիսի դէմոնական անձնաւորութիւններ ժամանակակից «տկար, ուժաթափ եղած» հասարակութեան մէջ. այդ անձնաւորութիւնները նա գիտում էր լեռնային բնակիչների մէջ, որոնք իրանց եւանդով, անվախ, հաստատ բնաւորութեամբ և կենդանի ուժերով գրաւում էին ամեն մի ճշմարիտ բանաստեղծական սիրտ: Բացի Герой нашего времени վէպից, սրանի լեռնացին արդէն երկրորդական դեր է խաղում, Վերմոնտովի բոլոր աչքի ընկնող գրեածքների հերոսները կամ լեռնացիներ են և կամ թէ անցածից առած անձնաւորութիւններ: Գործողութեան տեղն անգամ բանաստեղծը միշտ ընտրում է ձրնապատ Ատլկասը, որի վնաս բնութիւնը մօտ համապատասխանում է այդ հերոսների «անամբող» ուժերին և նրանց հզոր ու ընդարձակ զբօսանքին. աչտեղ կեանքը միշտ արթուն է, միշտ պատրաստ կուելու պէսպէս արդեւքների հետ, բայց ոչ թէ քնած, թմրութեան մէջ ընկղմած, ինչպէս բանաստեղծին ժամանակակից հասարակութիւնը:

Печально я гляжу на наше пок-лѣнье!

Его грядущее—иль пусто, иль темн ;

Межь тѣмъ подѣ бременемъ познавья и сомнѣнья,

Въ бездѣйствіи состарится оно. (id. т. I. էջ՝ 20)

Բացի այդ— «Գե»-ը ունի դեղարեւոտական նշանակութիւն: Բանաստեղծի ֆանտազիան աչտեղ, կարծես, չունի սահմաններ: Նկարագրում է նա Ատլկասի բնութեան զեղեցկութիւնները, նկարագրում Արատտանի

հրաշալի հովիտները, Հուզալ ծերունուն, որրացած ամբողջը, հին մենաստանը,— նրա գրիչը միշտ տիրապետող է հանդիսանում: Աչտեղ մենք առաջինն իմանում ենք, թե որքան հարուստ է Լերմոնտովի բնույթը բանաստեղծական ոգևորիչ տեսարաններով, և ճանաչում է նրա պատկեր նկարելու ինքնուրույն եղանակը: Լերմոնտովի շնորհիւ եւրոպացին կարողացաւ մօտ շօշափել Կովկասի թովչութիւնները, իրանց առաջ պատկերացած տեսնել՝ պօէտրիական հրաշալի ելեէջներում՝ հեռաւոր Կովկասի գեղը, բնութեան շքեղութիւնը... Եւ Կովկասը ՚ի շնորհակալութիւն մարդկութեան առաջնակարգ քանքարին՝ Հիւսիսի հետ միահամուռ ոլթերով՝ կանգնել է նրան Պետրիպոլսկ քաղաքում մի արձան, «որ զարէ զար պիտի մնալ անկործան»:

## ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԿՈՅՆ ԶԱՐԿԱՅՈՒԾԸ

Այն սոսկալի կոտորածները, որոնք անդի ունեցան Սասունի մէջ և որոնց այնքան զգացած նկարագիրը մեր ընթերցողները կարդացին «Մուրճ»-ի հոկտեմբերի համարում, թէև ուշ, բայց և այնպէս իրանց արժանի արձագանքները գտան ամբողջ լուսաւոր աշխարհում: Ինչպէս չաչանի է, Սասունի կոտորածի մասին լուրերը հասան Եւրոպայի մամուլին միայն նոյեմբեր ամսում, և ընդհանրապէս այն տպաւորութիւնը գործեցին թէ իբր այդ եղելութիւնները կտտարւած են նոյեմբերին կամ հոկտեմբերի վերջերքը: «Մուրճ»-ում տպած թղթակցութիւնից, սակայն, մեզ համար պարզեց որ այդ դէպքերը կտտարւած են ամառուայ ամիսներին. այժմ այդ բանը հաստատ է:

Եւրոպայում գտած արձագանքները, սակայն, պակաս զօրեղ չեղան, չնայած Թիւրքիայի գործադրած բոլոր միջոցներին՝ կտտարւած արիւնհեղութեան հետքերը ծածկելու: Եւ երբ եւրոպական մամուլը սկսեց առաջին լուրերը տպել, տաճիկ կառավարութիւնը շարժման մէջ դրեց իւր բոլոր դիպլոմատիական ներկայացուցիչներին՝ դեսպաններին և հիւպատոսներին, լրագիրներում հերքման թղթեր գրելու և տպել տալու համար: Ասելով՝ «Եւրոպական մամուլ», պէտք է ամենից առաջ այս դէպքում հասկանալ անգլիական մամուլը, իսկ անգլիական մամուլի մէջ՝ ամենից առաջ լիբերալների գլխաւոր օրգան Daily News (Դէյլի Նիւս) օրաթերթը, այն թերթը, որը անմոռանալի պատմական դեր կտտարեց նաև մեզնից տասն և ութ տարի առաջ, երբ առաջինը և զօրեղագոյն կերպով բացեց բոլգարացիների կոտորածի գաղանիքը Եւրոպայի աչքին:

Եւ ահա սկսեց տածիկ զիպլոմասների մի անվերջանալի շարք  
 ապաշտօնական հերքումների՝ Սասունի կոտորածի առիթով: Ստորև  
 դնում ենք Պետերբուրգի Թրքական դեսպանի մի գրութիւնը, որով  
 մի փորձն էր փորձուում կատարւած իրողութիւնները հերքելու:

Առ պ. Խմբագրապետ «Նովոստի» Թերթի:

«Նովոստին» իւր՝ սույն տարւաչ նուեմբ. 3-ի համար ւմ «Daily News»  
 թերթից առած Սասունի գեպքերին վերաբերող մի լօղւած լրագրեմ  
 լամ լինելով, թրքական դեսպանութիւնը խնդրում է ձեզ, պ. Խմբագրա-  
 պետ, հերքել ալդ սխալ տեղեկութիւնները նեաեեալ պաշտօնական փաս-  
 տերի հիման վրայ:

«Հայ աւազակները զինւած արտասահմանից ստացած զէնքերով, միա-  
 ցած են քիւրդ ապստամբների հետ չափշտակութիւններ գործելու համար,  
 հրդեհած և աւերած են ալդ տեղերում գտնւող մահմեդականների զիւղերը:  
 Հայ աւազակալին խմբերի կատարած բարբարոսութիւնների մասին մի  
 գաղափար տալու համար բաւական է աւելացնել, որ նրանք ի թիւս ալլ  
 չարագործութիւնների՝ ողջ-ողջ աչրած են մի մահմեդական, փորի մէջ  
 զիւրաւառ նիւթեր լեցնելով: Գործողութեան վալըրը ուղարկւած են կա-  
 նոնաւոր զօրք ըրի գնդեր, որոնց հրամաււած էր հարստահարւած խաղաղ  
 ժողովրդին պաշտպանութեան տակ առնել. հակառակ ալդ զինւորական  
 արշաւանքի վերաբերմամբ արտաշաւուած մեղադրանքներին, կաշերա-  
 կան զօրքը ոչ միայն իրանց պաշտպանութեան տակ առին խաղաղ ժո-  
 ղովրդին, մասնաւորապէս կանանց ու երեխաներին, ալլ և օրինական  
 ձանապարհով կատարելով իրանց պարտականութիւնը, հաստատած են  
 կարգն ու խաղաղութիւնը ի գոհութիւն ընդհանուր բնակիչներին:

Այսամենում էին հաւատացնել նմանապէս, թէ քիւրդերը չափշտակած  
 են փախստական հալերի գոչքերը, ստացւածքն և անասունները: Ալդ  
 տեսակ բան տեղի ունեցած չէ. իրանք աւազակներն են, որ ապստամբու-  
 թիւնից առաջ անասուններին իրանց հետ քշած են լեռը և գոչքերը  
 չանձնած իրանց օգնական քիւրդերին ի պահպանութիւն:

«Հայ բազմաթիւ կանանց առեանգումը քիւրդերի կողմից նմանապէս  
 ճիշդ չէ. ալդ ընտանիքները միևնույն հաչ աւազակալին խմբերի կանաչքն  
 են, որոնք իրանց կամքով գնացած են ապստամբ քիւրդերի մօտ: Իսկ  
 ինչ վերաբերում է աչն հաչ գիւղերին, որոնք իբր թէ աւերւած են, հա-  
 չերը իրանք են միմիայն որ, աւազակութեան դուրս գալուց առաջ, ամեն  
 բան ժողոված տարած են իրանց հետ:

«Պնդում են նմանապէս, թէ հաչերը հարստահարւած ու ճնշւած են  
 Բակրով քիւրդ ցեղի կողմից: ալդ սա զլխովին մտացածին բան է, և որ  
 աւելին է, հաչերի ձեռքով սաստիկ տանջանքների մէջ սպանւած մահ-  
 մեղականն ևս պատկանում էր ալդ միևնույն ցեղին»:

Մենք այդ «հերքումը» առաջ բերինք միմիայն իրր նմուշ տաճկական հերքումների, որ տեղացին մէկը միւսի ետևից եւրոպական թերթերում: Գետպաններից յետ չուզեցան մնալ նաև հիւսպատաները, մանաւանդ Թիֆլիսի թիւրքական հիւսպատուրը, որը տեղական օրագրերում միմեանց ետևից նման «հերքումներ» տպագրեց:

Այդպիսի հերքումներին, սակայն, վաղուց է որ Եւրոպան սովոր էր և գիտէր նոցա բուն արժէքը: Կէպի նոցա կասկածոտ եղան ոչ միայն բացարձակ հայասէրները, այլ նոյն իսկ այնպիսի թերթերը, ինչպիսին է իշխ. Մեշկերսկու Գրաժդանին (քաղաքացի) օրագիրը, որը ահա ինչպիսի հեղնութեամբ խօսեց վերը առաջ բերած դետպանի հերքման առիթով, իւր համարում առ 12 նոյեմբ.

«Չար մարդիկ հնարել են, լրագիրները տարածել են, վրդովել են հասարակական կարծիքը և բռնկել է փոթորիկը: Հիմա դուրս է գալիս, որ փոքր-Ասիայում իրանք հալւին են, որ կոտորում են իրանց: Սուտ է, զրպարտութիւն է իբր թէ թիւրքաց զօրքերը բռնաբարել են նրանց: Թիւրքաց կառավարութիւնը զանազան ճանապարհներով, իր դետպանութիւնների և կամ ուզղակի լրագիրներին արած հաղորդութիւնների միջոցով, հերքում է բոլոր այն լուրերը, որոնք երևացին գլխաւորապէս անգլիական մամուլի մէջ և առաջ բերին, ինչպէս լատնի է ընթերցողներին, ոչ միայն Լոնդոնի հաշտեմասիրական ընկերութեան գլխումը արտաքին գործերի մինիստր լորդ Կլիֆերլէյն, այլ և անգլիական կառավարութեան ուզղակի Բ. Գրան արած պաշտօնական առաջարկութիւնները:

Audiatur et altera pars. Մեր լրագրում փոքր Ասիայում կատարւած արիւնահեղ դէպքերը մենք հաղորդել էինք անգլիական և ֆրանսիական աղբիւրների հիման վրա: Ահա ինչ է տպագրում «հայկական գաղանութիւնների» մասին «Berliner Tageblatt» լրագիրը, փակագծերի մէջ նշանակելով «թրքական աղբիւրներին նաչելով»:

«Гражданинъ»-ը բերում է լրագրի յօդւածը, որ միևնոյն է, ինչ որ Պետերբուրգի թիւրքաց դետպանի հերքումը և ապա աւելացնում է.

«Յանկալի էր քննել և ստուգել այդ փոխադարձ մեղադրութիւնները, որոնց մէջ անկողմնակի կերպով խառնում են Ռուսաստանին: Ազգպէս և Պարիզի թիւրքաց դետպանութիւնը հաղորդում է լրագիրներին, թէ «անգլիական մամուլը լեզաչըջել է Սասունի դէպքերը. օտարերկրեալ հայերը միացել են ապստամբ քիւրդերի հետ և նրանց հետ միասին աչրել և կողոպտել են մտնեղական գիւղերը. թիւրքաց զօրքը կատարել է իւր պարտքը»:

«Արդեօք տեղական ռուս հիւպատոսը չի օգնի իր անդլիացի պաշտօնակիցին ստուգելու, թէ ով է աղտեղ գալը, ով գառը»:

„Виржевыя Вѣдомости“, բողոքելով այս պաշտօնական հերքումների դէմ, որ թիւրքաց կառավարութիւնը տպագրում էր զանազան լրագիրներում, ասաց.

«Յունաստանի և Բուլղարիայի փորձից թիւրքաց կառավարութիւնը գիտէ, որ եւրոպական քրիստոնեակ աշխարհի հասարակաց կարծիքը վրդոված է աչն կարգերի դէմ, որ տիրում են թիւրքիալում, և աչգ վրդովմունքը մի-մի անգամ արդէն հասնում է օտար միջամտութեան թիւրքիայի ներքին գործերում: Եւ ա՛հա, աչգ տեսակ նոր դժգոհութեան առաջն առնելու համար թիւրքաց կառավարութիւնը շտապում է ներքել աչն տեսակ լուրերը, որոնք կարող են վիրաւորել մեծ ազգերի մարդասիրական զգացմունքները: Սակաչն աչգ ազգերը վաղուց արդէն կասկածանքով են նայում Բ. Գռան աչգ տեսակ հաղորդութիւնների վրայ, և ինքը Գռուը շատ լաւ գիտէ աչգ»:

Նոչն անհաւատութիւնը դէպի թիւրքիան արտայայտեց նաև «Санктъ-Петербургекия Вѣдомости»: Նկարագրելով Հայաստանում կատարուող սարսփները, Պետերբուրգի չիչեալ թերթը խիստ գոչներով դուրս է բերում թիւրքաց դատարանի դրութիւնը, չիչեցնելով Մուսա-Բէյի յայտնի դէպքը 1890—91 թւին.

«Աչգ բռնարարոչն ու աւազակը, ասաց նա, աչրեց մի քանի հազարներ, ուղջ-ողջ կրակի մէջ խորովեց բազմաթիւ խաղաղ հալեր, բռնաբարեց կանաք և կտրեց բարոքական մխիոնարների քթերն ու ականջները: Եւրոպական դեսպանների պահանջմամբ նրան դատի մատնեցին և Պոլսում: Բաւց փոխանակ դատապարտելու և պատժելու, փաղիշահի արքունիքում նրան մեծ պատիւներով ընդունեցին և պարգևներ ու շքանշաններ շնորհեցին»:

Եւ, դառնալով դէպի թիւրքաց կառավարութեան հերքումները՝

«Ա՛հա թէ ինչու թիւրքաց կառավարութեան բոլոր հաւատացումները ոչ մի ուշադրութեան արժանի չեն, և եւրոպական դիպլոմատիան պէտք է որ միջամտէր ի պաշտպանութիւն խաղաղ բնակիչների, որոնք զո՛հ են դարձած թիւրքաց բաշիրուզուկների գաղանութիւններին և բարբարոսութիւններին:

Ինքը օամանեան. կառավարութիւնը հրատարակեց մի «պաշտօնական զեկուցում»՝ Սասունի դէպքերի մասին, որի իմաստով շրջաբերականներ զրկեց եւրոպական պետութիւններին: Նկատեցէք, որ այդտեղ ևս զործը ներկայացրած է անմեղ ձեռով և խօսուում է

«մի քանի հաչ աւազակներին» մասին, որոնք անվայել ընթացքի մէջ են գտնւած», թէ «քիւրդերը այդ ինչքում միջամտութիւն գործած չեն» և թէ «խռովութիւնը զսպելու համար պէտք եղած թւով զինուոր զրկւեց», և որ «հանդարտութիւնը վերահաստատուած լինելով՝ զինուորներն էլ ետ են զրկւել իրանց տեղերը»:

Ահա Օսմանեան կառավարութեան հրատարակածը.

«Պաշտօնական զեկուցում: Վերջերս Եւրոպայի լրագիրներէն մէկ քանիսները հրատարակեցին ճշմարտութեան հակառակ լուր մը Սասունի մէջ օսմանեան զօրքերուն կողմէ քանի մը հաչ գիւղերու քանդւած և այլ միջոցին ալ մարդու սպանութիւն կատարած ըլլալը: Անոնցմէ ոմանք ալ այս լուրը մեծցնելով ըսած են թէ ասոր մինչև հիմա Եւրոպա չիմացւած ըլլալը առաջ եկած է Սասունէն մեկնիլ սկզող ճամբորդներու դէմ դրւած արգելքէն:

«Սասուն բնակող կաւերական հպտակները, առաջւան պէս կատարեալ խաղաղութեան և հանդարտութեան մէջ ըլլալով, գործերովէն զրադած են, և ակներև է թէ ճամբորդները կատարեալ ապահովութեամբ ուզած տեղերին կ'երթեկեհեն: Միայն թէ որովհետև կարգ մը հաչ աւազակներ, խաբւելով խռովարարներուն թելադրութեանէն, անցեալները Թալրիի և անոր մերձակայ տեղերուն մէջ համարձակած էին մարդ սպանել, աւար առնել, կողոպտել, թալլել, ճամբաչ խափանել և այլ հարգի ապահովութիւն և հանդարտութիւնը վերցնող աւազակային գործեր ընել, կառավարութիւնը այս խռովութիւնը զսպելու համար բնականաբար ձեռք առու հարկ եղած միջոցները, չորրորդ զօրաբանակէն պէտք եղած թւով զինուոր զրկւեց և այսպէս խռովութեան առաջին առնւեց: Հանդարտութիւնը վերահաստատուած ըլլալով, զինուորներն ալ ետ զրկւել են իրանց տեղերը:

«Չորրորդ զօրաբանակին միւշիւրին և Պիթիւսի կուսակալին կողմէ ծանուցած է թէ քիւրդերը այս առթիւ միջամտութիւն մը գործած չեն և թէ, ինչպէս վերը ըսեց, մէկ քանի հաչ աւազակներ անվայել ընթացքի մէջ գտնւած են:

«Որպէս զի քննութիւն մը կատարելի վերոյիշեալ աւազակներու այս ասպատակութեանց վրա, կազմւած է մասնախումբ մը զոր կը կազմեն կաւերական թիկնապահ Ֆէրիզ Ապտուլլահ փաշա, Պոլսոյ էննիէ ա Սանսըզիի սնօրէն Էօմէր-բէչ, ներքին գործոց նախարարութեան թղթակցութեան զիւանին առաջին քաղտուղար Մէճիա էֆէնդի և կաւերական անձնական սպառակոտին Միրլիւա Հաֆըզ Թէֆիզ փաշա: Այս մասնախումբը այս շաբթեան մէջ ճանբաչ ելլելիք չողենաւով պիտի մեկնի:

«Կառավարութիւնը իր արդարութեան և գթութեան հովանիին տակ հատարաբար պաշտպանած հպտակներուն նկատմամբ բնաւ երբէք

պատշաճ չի կրնար դանել վերալիշեալ լրագիրներուն հրատարակածին նման զէպիքի և ճշմարտութիւնը աչպէս չաւանելով, կը ներքէ ալլ հրատարակութիւնները»:

Այլ ողով անդեկութիւններ և յօդածներ խմբագրւած էին նաև Պոլսում հրատարակող թիւրք լրագիրներում: Անհետաքրքրական չէ աչտակ առաջ բերել նաև թէ ինչպէս վերաբերեց զէպի խնդիրը Ռուսաստանում, Արիմի Բախչեսարայ քաղաքում կէս թրքերէն և կէս ռուսերէն հրատարակող «Փարքւանիչ» (Переводчикъ) շաբաթաթերթը, որի խմբագիրն է Իսմայիլ Գասպարինսկի: Վերջինս տպեց «Իսմայիլ» ստորագրութեամբ մի առաջնոր դող, որի մէջ,

«Թիւրք խմբագիրն աշխատում է պաշտպանել թրքական կառավարութիւնը, ցոյց տալով, որ խիսապէս թրքահաչերը ոչինչ չունեն գանդաակը, որ Բ. Գուռը հարց համար առանձին կառավարիչներ չունի նշանակած, նետաբար հաչերը «միննոչն բարիքներն ու արածութիւններն» են վաչելում, ինչ որ թուրքերը, քիւրդերը, չոչները, վրացիները, բալց ոչ ոք չէ գանդատում, և եթէ հաչերը ապստամբում են, զժողո՛ւն և ալլն, ալլ ամենը շինովի, գրսից եղած զրդումիցն է և անգլիական քաղաքակրտութեան հետեանք: Հաչեր կան, որոնք թուրքերի հետ հաւասար պաշտոններ են վարում, մինչև անգամ մինիստրներ են, ռուսի թրքական կառավարութիւնը կարելի է թուրք-հաչական կառավարութիւն անւանել և թրքա-հաչերին՝ բաղղաւոր»:

Բայց հասարակաց կարծիքը մանաւանդ Անգլիացում արթուն էր. նա մտաւ խնդրի խորքերը: Կառավարութիւնը ստանում էր անդեկութիւններ Պոլսի իւր ղեսպանից, իսկ վերջինս Տաճկա-Հայաստանի քաղաքներում եղող անգլիական հիւպատոսներից, որոնցից մինին Օսմանեան կառավարութիւնը նոյն իսկ ամբաստանեց թէ նա եղել է զրգռող հաչերի: Սակայն օսմ. կառավարութիւնը յետոյ ստիպեց իւր խօսքը ետ առնել: Մանաւանդ արթուն գործունէութիւն ցոյց տեց Աոնդոնի Անգլո-Հայկական Ընկերութիւնը:

Անգլիացի արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբերլէյջի ստացած անդեկութիւններից քաղելով՝ եւրոպական լրագիրները տպագրեցին Տաճկա-Հայաստանում կատարւած սոսիալի կոտորածների նկարագիրը. աչպիսին մէկը տպեց նաև Պարիզի «Temps» օրագիրը, ուր գործը ներկայացրած էր այս կերպ.

Կեռ սեպտեմբերի (?) վերջերում քրդերի մի աւաղակալին խումը չար-

ձակեց հալ զիւղերի վրալ և քշեց նրանց տաւարը: Հալերը աւազակների ետեից ընկան և նրանց ձեռք խեցին տաւարը: Այս ընդհարումն պատճառ եղաւ սոսկալի վրէժխնդրութեան: Բիթլիս տաճկական զօրքեր ուղարկեցին: Նրանց հրամանատար փաշային հրամայած էր վերջնականապէս կոտորել բոլոր հալերին: Տաճիկ զինւորները վեց հազարից մինչև տասն հազար քրիստոնեակ հալեր կոտորեցին: Մի գաւառում չորս հարիւր կին և միւս գաւառում երկու հարիւրի մաս-մաս կտրուեցին՝ ամենածանր լլկանքների ենթարկելուց չեսող: Մանուկներին շամիրում էին սելիների ծալը և չեսող գլուխները կտրուում: 600 հալ օրիորդներ փակեցին եկեղեցու մէջ, տաճիկները կտրեցին դռները և եկեղեցի մտնելով ենթակեցին օրիորդներին ամենասոսկ ալի լլկանքների և չեսող բոլորին կոտորեցին: Արիւնը հոտում էր եկեղեցու դռներից Ստար հիւպատոսները քննութիւն են կատարում: Տաճկաց զինւորներից շատերն իրանք են խոտովանում որ ամեն մէկը մինչև վառեն հալ կին է սպանել: Զինւորները հալերի տների վրալ նաւթ էին սծում և ալրում: Թշաւ գիւղացիք ալրում էին իրանց աղքատիկ ունեցածի հետ միասին:

Մասունի կոտորածի մասին լուրերը մեծ ջուզումն ցառաջ բերին նաև Ամերիկայում: և նոյեմբերի 26-ին Բոստոնի «Ֆէնուել-Հոլ» կոչւած շինութեան մէջ կայացաւ ժողով «Հայոց Միացեալ բարեկամների», մի ընկերութիւն, որը կազմւած է 1893-ին Բոստոն քաղաքում: Ժողովի ատենապետն էր պ. Պարրուզ, «Քրիստն Ռէճաթըր» թերթի խմբագիրը, իսկ նախագահ եղաւ Թիկին Ճիւլիա Հաու, որը ամերիկացի հանրաժանութ մի դրագիտուհի է: Խօսեցին պ. Պարրուզ, Թիկ. Հաու, պ. Բլաքուէլ, մի հայ վաճառական, պ. Թիֆոնի, Մասսաչուզեցի նահանգապետ Կրինհոլմ:

Գնենք այստեղ խօսեցած ճառերից հետեւեալ կտորները:

Պարրուզ.—«Հալերը, ասաց, ըստ աւանդութեան տապանը ունէին Արարատի վրա, մենք Ֆէնուել սրահը ունինք Բոստոնի մէջ, այդ տապանով օգնենք մեր տարաբաղ ընկերներին... Այսօր մենք՝ կրօնական պաշտաման համար չենք հաւաքել, այլ եկած ենք բողոքելու մարդկալին սրտին ու խղձին: Գիտցէք, հալ բարեկամներ, մենք ամերիկացիներս սրտանց համակրում են ձեզ, այստեղ դալիս ենք մեր զգացումները և զպրոպթը չալունելու»:

Տիկ. Հաու.—«Ժողովիս նպատակն է մի նւիրական պարտաւորութիւն կատարել, ալսինքն բողոքել Արեւելքի մի պատմական մասին մէջ ի գործ դրած անլուր բռնաբարութեանց դէմ, որոնց եթէ կարելի լինէր պատմել՝ ապառաճներն իսկ պիտի շարժէին: Յաւիտենական ամօթ պիտի քտոմնելի սճրի հեղինակներին: Մեզ հետ են քաղաքակրթութեան

ողին, քրիստոնէութեան ձալնը, մարդկութեան սիրտը, ամենքն էլ արդարութիւն ազդակում են, իրաւունք ընդդէմ ալն զրկանքների, որոնց զժբազդ զոհներն ոն անպաշտպան մարդիկ, անմեղ կանաչ ու մանկունք: Մենք կոչումն ենք անում մարդկութեան ազնւագոյն երարձրագոյն կարողութեանց, ընդդէմ ալն անասնական բնազդներին, որոնց մէջ դեռ ապրում է գազանը»:

Պր. Բլաքուէլ — սպիտակահեր ատենախօսը, մասնագէտի հմտութեամբ, մանրամասն կերպով նկարագրեց նոր ղէպքերը, բացատրեց նոցա չարաբերութիւնը թիւրքահալոց անցեալ մի քանի տարւած վիճակի հետ, բաղդադեց նրանց կացութիւնը բուլկարների հետ, խօսեց առճասարակ թիւրքաց քաղաքական վիճակի վրա, բաղդադութիւն արաւ նաև իշխողի և հպատակի միջև. «Բաղաքակիրթ քրիստոնեան աչնտեղ ներկայացնում է ընտանիքն ու օճախը, կառավարութիւնը ներկայացնում է հարէմը և սուրի կրօնը. մենք պիտի գիտնէք ոչ թէ միայն մեր, այլ Եւրոպայի կառավարութեանց՝ ազդեակն միջամտել ի նպաստ ալս արժանաւոր ժողովրդի արդար իրաւանց»:

Պր. Թիֆտնի պատմեց Ալթիրիպի ծովահէնների ղէպքը և Միացեալ Նահանգների ալն ժամանակ ձեռք առած ազդու միջոցներով շտաջ բերած արդիւնքը. նոն եղանակով միայն կարելի է խօսք հասկցնել ալն ծովահէնների ազգակիցներին, որով և եթ կարելի է կարգադրել ալս հրատապ խնդիրը: Յիշեց Ղամակոսի 10,000 քրիստոնեաների ջարդը, որ առիթ տւեց Ֆրանսիական միջատութեան:

Երբ ներս մտաւ Մասաչուզէտի Նահանգապետ Կրինհոլմ, հուրրաները և ծափահարութիւնները թնդեցրին սրահը: Ատենասեռը ներկայացրեց ժողովին Ամերիկայի ամենից լուսաւորեալ Նահանգի կառավարչին, բաղդատեց նորան Բիթլիսի աւազակաբարոյ կառավարիչ փաշայի հետ: «Այժմ, ասաց նա, պիտի լսենք քաղաքակրթութեան աւաջնորդներից մէկի ձայնը՝ ընդդէմ զրկանքների և բարբարոսութիւնների: Նահանգապետը խօսեց այսպէս՝

«Ֆանուլի» նւիրական սրահին մէջ քնչպէս կարելի է Մասաչուսեցի մի քաղաքացուն լուել, երբ զրկանք և անիրաւութիւն ի գործ են դրում աշխարհիս վրա. լանուն երկնքի, քնչպէս կարող է Ամերիկայի ալս լուսաւոր Նահանգը տեսնել անիրաւութիւն ու անգթութիւն և նոն ժամանակ անզգալ և անտարբեր մնալ (ծափահարութիւն): Երբ անիրաւ գործ է կատարում և դու լուռ ականատես ես մնում, դու ինքդ ես մեղանշում աշխարհի դէմ, արդարութիւնը քեզ պատասխանատու է ճանաչում: Մեր պարաքն է բողոքել ալդ հարստահարութեանց դէմ և, լանդն մարդկութեան, քաղաքակրթութեան և քրիստոնէութեան պահանջել, որ, քննութիւն կատարելով, խնդիրը պարտ ու պատշաճ կարգադրելու:

Ապա ատենապետը կարգաց հետեւեալ որոշումները, որոնք միաձայն հաւանութեամբ ընդունուեցին:

«Քանի որ օրաթերթերի զրկւած հնագրաւուրները, ինչպէս նաև Հաշատանից եկած անձնական նամակները տեղեկագրում են հազարաւոր հազ քրիստոնէից, կանանց և մանկանց սոսկալի ջարդը թուրքական զինուորներով, Բիթլիսի կառավարչի հրամանով:

«Քանի որ Ամերիկալի մը Կանադայի կառարած քննութիւնն էր, որ Վրացստանին համոզեց բուլղարական ջարդերի ստույգ լինելը:

«Վասն որոյ, մենք Ամերիկալի քողաքացիներս, հաւաքւած Բոստոնի Ֆէնուիլ սրահի մէջ, 26 նոյեմբերի 1894-ին, խնդրում ենք Նորին վեստութիւն Գրովըր Ալիվընտից, Ամերիկալի Միացեալ Նահանգներու նախագահից, քննել այս խնդիրը, կամ լարմար դատած առանձին ներկայացուցիչներ զրկելով, կամ Եւրոպալի միացեալ կառավարութեանց որոշած Կանադայի մը հետ միասին:

«Բողոքում ենք մենք սուլթանի ընտրած քննիչ Կանադայի ղեմ իբր անարժան վստահութեան, և Եւրոպալի կառավարութեանց պարտքն ենք համարում անկախ քննութիւն կատարել և իրողութիւնները պարզել քաղաքակրթեալ աշխարհի առջև և այդ հարստահարիչ ազգի զրկանքները լաւանել ամենին:

«Գիտումն ենք անում նաև Բերլինի դաշնակցող պետութեանց Բերլինի դաշնագրութեան 61 լոյ չօրւածի անմիջական զործագրութիւնը խնդրելով, քանի որ խոստացած բարեկարգութիւնները ի գործ չզրկելուց վերջ, ընդհակառակը թիւրքիսոյ հալոց վիճակը աւելի վատթարացած է: Թիւրք կառավարութիւնը ինքզինք ամբողջովին անկարող և զժկամակ է ցոյց տւած նոյա պաշտպանելու, որով լիշեալ պետութեանց անտարբերութեամբ անպաշտպան ժողովրդի վրա ի գործ դրւած հարստահարութիւնները քաջալերութիւն են գտնում:

«Բողոքում ենք մասնաւորապէս ժողովրդին Մեծն Բրիտանիոյ, որ Ալալոսը իբր աւանդ ընդունած է թիւրքիալի քրիստոնէալ ժողովրդոց պաշտպանութիւնը երաշխաւորելու, որպէս զի առանց ժամանակ կորցնելու ի գործ դրին դաշնագրութեան արտագրութիւնները:

«Որոշում ենք որ այս բողոքի օրինակները զրկելին Եւրոպական պետութիւններին»:

Ժողովի մէջ ազգու բողոք կարգաց նաև Ամերիկալի սևամորթների ազատութեան գործում գլուցագնական գերեր կատարած Գերիսընի որդին, ժողովը որոշեց այդ բողոքի օրինակները հրատարակել տալ Անգլիալի լրագիրների մէջ:

Ապա ուղարկեց Daily News-ին հետեւեալ նամակը:

Տէր.—Մենք չենք մոռանում այն «իսպառն ծառայութիւնը», ինչպէս պ. Վլադստոնը արժանապէս կոչում է, — որ «Daily News» ք, մատուց բուլղարական անդթութիւնների ժամանակ, և որ իրաւունք տւեց պատկառելի պաշտօնակալին ասելու՝ «չստ կարելի է, որ եթէ չլինէր այս միակ լրագրի արխութիւնը, հաստատակամութիւնն ու կարողութիւնը, մենք մինչև այժմ մնացած կը լինէինք միանգամայն անգէտ, և Բուլղարիայի վատթար վիճակը ներկայ սիրուն ու պայծառ յուր չէր ունենալու։ Հետևաբար վստահութեամբ դիմում ենք «Daily News»-ին մեր ճաշը լսեցնել տալու համար։ Հայոց խնդրի մասին։ Հալաստանում եղած ամերիկացի քաղաքացիներից ստացած նամակների համաձայն Բիթլիսի նահանգապետի թիւղարութեամբ կատարւած կոտորածները լիջեցնում են Բուլղարիայի սոսկալի գազանութիւնները 1876-ին։ Երկուշաբթի իրիկուն, Նոյեմբերի 26-ին, մի ժողովրդալին միտինգ տեղի ունեցաւ Փանիւլ Հոլ-ի մէջ, Faneil-Hall, Բոստոնում, բողոքելու համար ոչ միայն սրածութիւնների դէմ, այլ հայերի անընդհատ հալածանքի դէմ թուրքերից։ Ստորագրողներս պատիւ ունեցանք ընտրելու միտինգի նախագահ և քարտուղար, պատասխանատուութիւն լանձն առնելով հազորդելու անդլիական ազգին այս ժողովի միաձայն որոշումը։ Ճառեր խօսեցին. վսեմ. Ֆրեդրիկ Ք. Արնոլդ՝ Մասաչուզեցի նահանգապետ, Միսիս Զուլիս Ուորդ Հաու, դոկտոր Հենրի Բլակուէլ, Ուիլիամ Վ. Կարրիսըն, և ուրիշները, սրանց թւում Բոստոնի հոչակաւոր եկեղեցականներ, խմբադիրներ և առևտրական անձեր։

Ինչ որ մեր կառավարութիւնը կարող է անել, այդ այն է որ նա օգնէ ճնշւած հայերի դրութիւնը աշխարհի առաջ դնելու և բարոյական ազդեցութիւն գործ դնէ ազատութեան համար։ Բնայ մենք հաւատում ենք, որ անդլիական կառավարութիւնը, իրեն նեցուկ ունենալով անդլիական ազգի բուստոր խիղճը և անուղղորդ կամքը, կարող է աւելի բան անել, պահանջելով որ թիւրքիան կատարէ իւր վաղուց արած խոստումները։ Այս կոտորածից ջուկ, հալ ազգի դրութիւնն արժանի է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրութեանը։ Վստահելով, որ այս կոչը տեղ կը գտնի ձեր կշեռում մնում ենք խոն. ծառաներ՝

Վամուէլ Զ. Բարրոն՝ ասեճապետ, Ուիլիամ Վ. Կարրիսըն՝ ասեճապետ, Բոստոն, դեկ. 6; 1894 թ.

Միաժամանակ Փանիւլ-Հոլի միտինգը որոշեց զիմել անդլիական ազգին հետեւեալ կոչով.

«Վիմում ենք ձեզ թիւրքիայի ձեռքի սակ հեծող հայերի համար։ Վերջին կոտորածները մարդկանց և կանանց, որոնց թիւը հազարների է հասնում, և որոնք համայն հին և նոր աշխարհների խիղճը զարհուրեցրին, միայն մի պրակ էր այն շարունակ բարբարոսութիւնների, որոնք

պահանջում են քրիստոնէութեան արդար վրէժխնդրութեամբ լի բողոքը: Մենք դիմում ենք ձեզ, որովհետև վեց ստորագրող պետութիւններից Անգլիան պարտք ունի հսկելու դաշնագրի իրագործութեանը: Եւ որպէս գրաւական նրա խնամակալութեան այս ժողովուրդների վրայ, Անգլիան իւր ձեռքին ունի կարող կղզին: Սակայն նրանք չունին, պրոֆեսոր Բրաչի ասելով, «բացարձակապէս ոչ կեանքի, ոչ գոյքի և ոչ էլ պատելի ապահովութիւն»: Դժբաղդ հպերը կստորում են մոլեռանդ թուրքերի ձեռքով, այսպէս առած, կառավարութեան ձեռնուղծութեամբ, բանտարկւում են առանց քննութեան, նրանց արգելւում է իրենց հարեմիքի անունն արտասանել, նրանք զրկւած են իրենց կապերից, նրանց կանաչք ուժով տարւում են հարեմները և ենթարկւում աջակցի քոնաբառութիւնների, որ մահից վատ են: Մինչդեռ նրանց արգելւած է զէնք կրել ինքնապաշտպանութեան համար, նրանք ազատ են թողնւած բարբարոս սազակաբարոյ քրտորի առաջ, որոնք սուլթանից «նամիզիէ զօրաբանակի» տխրոսն են ստացել: Մենք համարձակօրէն դիմում ենք ձեզ և խնդրում, որ օգնէք չարիքն ուղղելու, դիմելու նրանց որոնց համակրութիւնը անցնելով ազգային պատնէշներից՝ զրկում է ճնշւած մարդկութիւնն ամենուրէք: Հասարակաց կարծիքի ուժը Մեծ Բրիտանիայում անմիջական ազդեցութիւն կարող է ունենալ կառավարչական քաղաքականութեան վրայ, պահանջելու որ Թուրքիան իւր խոստումները կատարէ, և մենք չորդորում ենք ձեզ, որ զօրացնէք հասարակաց կարծիքը»:

Լոնդոնի Հայկական Ընկերութիւնը, որի անդամները մեծամասնաբար անգլիացիք են, սկսեց եռանդուն գործունէութիւն, դիմումներ անելով Քերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին: Ընկերութիւնը սկսեց պատրաստութիւններ տեսնել մի մեծ միտինգ կազմակերպելու համար, որոշելով օրը 5 դեկտ. (նոր տոմարով 17 դեկտեմբերի): Այդ բանի համար Պարիզ պատգամաւոր գնաց Լոնդոնից՝ զրդիլու, որ այնտեղի հայերն ևս մասնակցեն այդ միտինգին: Անգլիացի արտաքին գործերի մինիստր յորդ կիմբերլէյ ընդունեց Հայկական Ընկերութեան նախագահ՝ պարլամենտի անդամ Ստեւենսոնին, որի հետ երկար խօսեց հայոց գործերի մասին: Ստեւենսոնը նոյեմբերի մօտ 25-ին հայոց գործերի համար ազդէս մատուցեց պետութիւնների ներկայացուցիչներին՝ միջնորդելով պաշտպան հանդիսանալ թիւրքաց հայերին:

Առ հասարակ Անգլիայում նկատելի եղաւ մեծ համերաշխութիւն հայկական խնդրի նկատմամբ: Times օրագիրը չայտնեց, որ քրիստանական կառավարութիւնը վճռել է եռանդուն կերպով գոր-

Ծել հայկական խնդրում և որ նա, Անգլիան, կ'առաջարկի պետութիւններին միաբան դործել և ստիպել որ իրագործւի Բերլինի դաշնագիրը: Նոյն թերթը տպագրեց իւր էջերում անգլիական, Ֆրանսիական և այլ լրագիրների հաղորդած տեղեկութիւնները Հայաստանից: Այդ լրագիրը իւր կողմից կարծիք յայտնեց, որ Անգլիան պէտք է միջամտի և որ միւս պետութիւնները պարտաւոր են բողոքել կատարած գազանութիւնների դէմ, սպառնալով Հայաստան ուղարկել մի արշաւանք, նման 1860 թւականի սիրիական արշաւանքին.

„Daily Telegraph“ լրագիրը, հրատարակելով Տաճկա-Հայաստանում կատարած գազանութիւնների մասին տեղեկութիւնները՝ հրաւիրեց անգլիական կառավարութեան՝ համաձայութիւն կայացնել ռուսաց կառավարութեան հետ և միասին պաշտպանել թիւրքաց հայերին: Դիմելով անգլիական կառավարութեան, յիշեալ թերթը, որը հայասերի համբաւը շունի, աւելացրեց՝ «Անգլիան պէտք է ազատէ թիւրքաց հայերին, ինչպէս Ռուսաստանը ազատեց Բոլգարիան»:

Այդ ձայների մէջ լսուում էին նաև կարծիքներ յօգուտ Հայաստանի գրաւման Ռուսաստանի կողմից: Այսպէս, Լոնդոնի Observer թերթը ասաց, թէ ընդհայ պայմաններում հայերին իրանց անել դրութիւնից հանելու միակ ճանապարհը այն է, որ Ռուսիան գերիշխան դառնայ Հայաստանին, կամ Հայաստանն ուղղակի միացնւի Ռուսիային: Իսկ Լաբուշէրը իւր Truth թերթում, ըստ ընդմիջե Վրեմիայի-ի մի հեռագրի, յայտնեց՝ թէ Ռուսիան կարող էր բարեւաւել հայերի դրութիւնը, գրաւելով Փոքր-Ասիայի այն գաւառները, ուր միլիոնաւոր քրիստոնեաներ հեծում են թուրքաց բռնակալութեան տակ, և մարդասիրութիւնը զոհ է բերում անգլիական շահերին: Եթէ անգլիացիք չեն համաձայնիլ իրանց շահերը զոհել մարդասիրութեան զգացման, այն ժամանակ նրանց բոլոր բողոքները թուրքաց գազանութիւնների դէմ ոչ այլ ինչ են, եթէ ոչ լոկ կեղծաւորութիւն»:

Նոյն ժամանակ՝ Լոնդոնի քաղաքական շրջաններում ցանկութիւն յայտնեց, որ Ռուսաստանը յայտնէ թէ ինչ է պահանջում ինքը՝ հայոց խնդրում համաձայնութիւն կայացնելու համար:

Սկսեցին խօսել անգլօ-ուսական բարեկամութեան մասին հայկական խնդրի առիթով: Times-ը, չայնելով որ Անգլիան պէտք է խառնուի հայոց դործերում չայնեց նաև, թէ Անգլիան պէտք է այդպէս անէ «յենելով Ռուսաստանի բարեկամութեան վրայ: Այդ միտքը, որի ամենաջերմ պաշտպանը նոյնպէս Daily News-ն էր, թէև այդ նոյն թերթը մեծ յոյս չէր չափում դէպի այդ դաշնակցութեան իրականացումը, ջերմ ընդունելութիւն չգտաւ Պետերբուրգում, և ուստի մաքաբազաբի մամուլի նշանաւոր մասը զնալով աւելի ու աւելի դառն լեզու բանեցրեց: Դեռ ևս նոյեմբերի 26 ին „Новости“ մի առաջնորդով խօսեց անգլօ-ուսական բարեկամութեան դէմ, ասելով թէ բաւական է, ինչ Ռուսաստանը անցեալում անձնէր քաջագործութիւններ կատարեց յօգուտ Անգլիայի և Ասորիայի. ժամանակ է մտածել և իւր մասին: «Հայերը, ասում էր այդ օրագիրը, Քիւրքիայի բաժան-բաժան լինելու ժամանակ, կը ստանան իրանց մասը և կ'ապրեն ինքնուրոյն կեանքով. ուրեմն ինչպէս ընթացքը շտապեցնելու կարիք չկայ: Ենչու Ռուսաստանը պէտք է միջամտի հայկական խնդրում, երբ ոչ Բոլղարիայում, ոչ Կարգանէլում, ոչ Եգիպտոսում չարաբերութիւնները չբարւոքեցին ոչ յօգուտ Ռուսաստանի, ոչ յօգուտ Յրանսիայի»:

Նոյն թերթի Պոլսի թղթակիցը հետեւեալն էր գրել. «Չնայելով հայերի, անընդհատ յուզմունքներին, օսմանեան կառավարութիւնը աւտանովիական վարչութիւն չի մտցնիլ ասիական նահանգներում. այդ պատճառով Սասունում տեղի ունեցած ապստամբութեան նման յուզմունքները անպտուղ են: Եթէ այդ շարժումը նախապատրաստած է արտասահմանի հայերի ձեռքով, նրանք պէտք է ընդհատեն կորստաբեր փորձերը: Հայաստանը դոյութիւն չունի. դա Բոլղարիա չէ երեք միլիոն խիտ ազգաբնակչութեամբ: Ոչ Անգլիան և ոչ Ռուսաստանը զիտաւորութիւն չունեն աշխատելու, որ մի յատուկ կառավարութիւն մտցնելի Հայաստանում, որը չեն կարող պաշտպանել իրանք Հայերը, որովհետև ցրւած են և թոյլ»:

Կորանով, սակայն, «Նոյոստի»-ն չէր մտածում կատարեալ անտարբերութիւն քարոզել. մի այլ յօդուածում չայնեց թէ «Ռու-

սաստանը չի կարող անտարբեր մնալ, քանի որ նա միշտ հոգս է տարել Քիւրքիացում ապրող քրիստոնէաների վրայ, ու մարդասիրութեան զգացմունքը պահանջում է, որ Ռուսաստանը պաշտպանէ թիւրքաց հայերին մահմետական լիանտոիկոսութեան դէմ:»

Պէտք է խօստովանած, որ այդ խօսքերը մոլթին են և ոչ մի դրական առաջարկութիւն չեն պարունակում:

Լաւագոյն յոյսեր չէր տալիս նաև „Новое Время“ մեծ օրաթերթը, որը զայրոյթ յայտնեց այն բանի մասին, որ Անդլիայում իբր թէ ուռցրել են հայկական խնդիրը արևատական միջոցներով: Մենք արժան համարեցինք այդ յօդածը, որը մեծ ուշադրութիւն դարձրեց իւր վրայ, ամբողջապէս առաջ բերել այստեղ: Ահա այդ յօդածը («Новое Время» № 6738).

«Ի նկատի ունենալով այն աղմուկը, որ բարձրացրին Լոնդոնի լրագիրները տաճկական Հալաստանում տեղի ունեցած անկարգութիւնների առթիւ, օրտակար ենք համարում պատմաբանօրէն մի քիչ լուս ձգել պատահած դէպքերի վրայ:

Հալերը, ինչպէս լալանի է, ցրած են Եւրոպայի արեւելեան մասի բոլոր կողմերում: Եւրոպական Տաճկաստանում, զլիաւորապէս Կ. Պոլսում, նրանց թիւը հաշւուում է 200 հազար (Տաճկաստանի հալերի թիւն է, նոյն իսկ տաճկական աղբիւրներով, 2<sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն): Իսկ նրանց գլխաւոր ընտելութեան տեղերը Անդրկովկասումն է և Փոքր-Ասիայի հիւսիսային մասում: Այդ երկրի մեծ մասը (Քուռ գետի ջրաբաշխը մինչև Արաքս) հետզհետէ, մի շարք պատերազմներից չետոյ, տաճկական իշխանութեան ձեռքից անցաւ ռուսաց իշխանութեան տակ, իսկ տաճկական իշխանութեան տակ մնաց Եփրատի գետաբերանի շուրջը գտնուող երկիրը և վանալ լճի շրջակայ հողերը: Առաջ այդ բոլորը մտնում էր ալպէս անւանւած վանալ վիլայէթի շրջանը <sup>1</sup>), իսկ այժմ, ինչպէս երևում է տաճկական հիւպատոսարանի հաղորդած տեղեկութիւններից, վանի սանջակը միացրած է Բիթլիսի վիլայէթին:

Այդպիսով վանի հայկական բնակավայրերը մի տեսակ օւաղիսի կերպարանք են ստանում, սրովհետև ինչպէս վանում, նոյնպէս և նրան սօսիկ Մուշում թաւ աւելի են քրդերը, որոնք վաղուց լալանի են իբրև պատերազմատէր և ժանաւանդ կողոպտար ընդունակ ցեղ: Այդ խռովարար ցեղը մի ինչ որ Արդուլլայի առաջնորդութեամբ դեռ 1879 թւին մեծ անկարգութիւններ առաջացրեց պարսկական հողում և մտադիր էր մինչև անգամ Թաւրիզին տիրել: Անդրկասպեան երկրից այդ ժամանակ կանչեց զններալ Տէր-Ղուկասովը, որ և նշանակեց պարսկական սահմանի վրայ՝ ռուսական երկիրները պաշտպանելու համար:

Մինչև վերջին տաճկական պատերազմը քրդերի վրայ գանդառուով էին գլխաւորապէս Վանի հալերը: Անշուշտ պատերազմի ժամանակ հալերի վարկն ընկաւ տաճիկ կառավարութեան աչքում: Քրդերը Մուխտար փաշայի հրամանով իրանց միջից անկանոն զօրքի բաճակ կազմեցին, իսկ հալերը ոչ միայն ոչինչ չէին անում, այլ և արտաչալտում էին իրանց ատելութիւնը մահմեդականների դէմ զանազան արարմունքներով, օրինակ՝ ամեն տեղ գոհացողական մաղթանքներ էին տալիս ռուսաց ինտենդանտութեան, ի հարկէ աչն տեղերում, ուր տիրապետում էր ռուսաց զօրքը: 1877 թվին երբ իշխան Տիր-Ղուկասովը Դէլի Բաբայի կուրից չեսուլ չես էր գալիս Սրեանեան նահանգը, նրա ետեւից զաղթեցին եկան հազարաւոր հալ ընտանիքներ, որոնք ազատուել էին տաճկական վրէժխնդրութիւնից:

Տաճկական պատերազմից չեսուլ թէ Թիֆլիսի և թէ Ա. Պուլսի հալ ինտելիգենցիան տագորեց նոչն չուերով: Ապասում էին, որ Փոքր-Ասիայի հալերին կը շնորհեն աչն բարենորոգումները, ինչ որ շնորհեցին Րումիլիայի բողարճերին: Այդ ինտելիգենցիան տագորած աչնալիս քաղաքական ցնորքներով, որոնց հետքն անգամ ամենին չկալին հասարակ ժողովրդի մէջ, սկսեց մտածել Հալաստանի ինքնավարութեան մասին: Առտանդնուպոլսում մինչև անգամ պատրաստում էին այդ աղագալ Հալաստանի քարտէզը (!), որի մէջ մտնում էին ոչ միայն վերև լիշած երկիր ները, այսինքն Գանձակի, Սրեանի նահանգները, Թիֆլիզի նահանգի մի մասը, Էրզրումի վիլայէթը, այլ և Ազրբէյջանը, Քրդստանը և Միջագետքը: Գրա հետ միաժամանակ սկսեցին աւելի լաճախ եւրոպական լրագիրների էջերում տեղեկութիւններ երեւալ քրդերի անգթութեանց մասին Վանի գաւառում: Տաճիկների դէմ ազիտացիան մեծ ոգով պաշտպանում էին տաճկա-Հալաստանի մանաւանդ Էրզրումի հարուստ հալերը:

Վերջին դէպքերը Վանում չանկարծ կարգից զուրս կերպարանք ստացան: Աչս անգամ անկարգութիւնները ոչ թէ իբր անմիջական հետեանք տաճկական իշխանութեան ճնշման, կամ քրդական կողուպուտների, այլ արտաքին գրգռմամբ: Աչս աչնան Սասունի, Տալուրիկի և այլ տեղերի բնակիչները երկու անգամ ապստամբեցին զէնքը ձեռներին, ինչպէս երևում է տաճկական աղբիւրներից, այդ ապստամբութիւնը կազմակերպել է մի ոմն Համբարձում և ուրիշները, որոնք զրոյց էին եկած:

Այդ անձերը չաջողեցրել են լեռներում զինուորած աւազակալին խմբեր կազմել: Աչս տեղեկութիւնները չեն հերքում և ոչ-տաճկական աղբիւրներից: Գրանից ետոյ շարդէն սկսում են փոխադարձաբար միմեանց մեղադրել անգթութեանց մէջ.—Պուրքերը պնդում են թէ ապստամբները իրանց բարկութիւնը թափել են մահմեդական գիւղերի վրայ է գործել են, ինչպէս Պետերբուրգի դեսպանատունն է ստում, «սոսկալի

անդթութիւններ, իսկ հալերն իրանց կողմից մեղադրում են Չաքիփաշալի կանոնաւոր զօրագնդին, թէ աներևակալելի անդթութիւններ է կատարել: Անգլիացիների խօսքերին նաչելով՝ մինչև 15,000 հալ է կոտորւած, մի ամբողջ քաղաք — Հաջն — մինչև 1200 տուն ամբողջովին մատնւած է սրի և կրակի:

Անգլիացիք, ինչպէս երևում է հեռագիրներուց, աներևակալելի աղմուկ են բարձրացրել տաճկական անգթութեանց առիթով: Հոգևորականութիւնն ալ բանի վրայ խօսում է եկեղեցիներում, նախարարները և պալատների անդամները խօսել են կլուրներում, միախնդներ եր կազմել: Հալերը Վարնալում զճուղի են նաև պատգամաւորներ ուղարկել Բերլինի դաշնագիրն ստորագրող բոլոր պետութեանց նեմկալացուցիչներին:

Անգլիական լրագիրներն ասում են թէ անգթութիւնները կատարել են ոչ թէ բաշխուողները, ալ կանոնաւոր զօրքերը սուլթանի բարեհաճութեամբ և ալ պառիթով առաջ են բերում Վլադստոնի տւած վկայութիւնը տաճիկների բացառիկ բարբարոսութեան մասին: Մէկ մէկի ետեւից նոր նոր առաջարկութիւններ են լինում: Ալապէս, օրինակ, առաջարկում է ի միջի ալոց որ անգլիացիք և ռուսները (?) միասին գրաւեն տաճկական Հալաստանը և միևնույն ժամանակ ցաւ և զարմանք են արտայայտում որ Ռուսաստանը չես է կանգնում ալ մաքից:

Անգլիական աղբիւրներին նաչելով պատահարների տեղը զնալու համար նշանակում է խառն չանձնաժողով, որի մէջ տաճիկ կառավարութեան հրաւերով կը մասնակցի նաև ամերիկական հիւպատոսը: Հիւպատոսների գեկուցումները և քննութիւնները, երեւի, կը պարզեն գործի իսկական դրութիւնը: Ոչ մի կառկած չկալ թէ Ռուսաստանը, որ մինչև ալժամ ամենքից աւելի ճշտութեամբ է պահպանել Բերլինի դաշնագիրը, կը կարեկցի թշուա հալերի դրութեանը, թէ քրիստոնէական կարեկցութեան զգայմամբ և թէ ալն պատճառով, որ Ռուսաստանը մի միլիոն հալ նպատակներ ունի. բալց ի հարկէ Ռուսաստանի մասնակցութիւնը երբէք ալն չի լինի, որ նա Անգլիալի հետ միասին գրաւի Հալաստանը: Անգլիական կառավարութիւնը ամենքից աւելի քիչ իրաւունք ունի աղաղակել և գոռգոռալ պատահած դէպքերի առթիւ: Բաւական է չիչել սիպալների խաղաղացնելը, որ կատարուեց անսանձ խստութեամբ: Անցեալ պատերազմի ժամանակ որ ձեռնարկւած էր քրիստոնեաների աղատութեան նպատակով, Անգլիան բոլոր ժամանակ իբրև պահապան հսկում էր որ Տաճկաստանն անձեռն միւսելի մնալ: Երգրումի և Վանի գաւառի մի մասի Ռուսաստանի հետ միանալու հարցին իր ժամանակին ամենագորեղ կերպով հակառակեց Անգլիան:

Առ հասարակ, քրիստոնեաներին ճնշող մահմետականների հետ մեր ունեցած մրցման ընթացքում, Անգլիան գրեթէ միշտ կիսալուծանի կողմն է եղել: Իսկ ալժամ ինչո՞ւ է նա այգպէս փրփրել: Այդ վարմունքն արգեօք միայն աչն փորձնական կուածաղկի զնտակներէց չէ, որ Անգլիան վերջին ժամանակներս շարունակ զլորում է, որպէս զի ինքը ազատի գժւար դրութիւնից և հեռուօր Արեւելքում աղատ գործելու իրաւունք ձեռք բերի: Հէնց նոր էր սկսել կօրէալ: պատերազմը և Անգլիան առաջարկեց միջամտել, ի նարկէ, իւր առաջնորդութեամբ. զրան կից գործեր էին կատարում Մաղակասկարում, լետոյ անտեղի և անապատելի խօսք ընկաւ մէջ տեղ որ տաճկական նեղուցները բացին բոլոր ազգերի վիճարական նաւերի համար: Իսկ ալժամ լուծւում է անգլիացիների սիրած «գրաւուն» (Окупация) խօսքը:

Իսկ մենք հատուտ համոզւած ենք, որ գործը զրաւման և աչն էլ միասին գրաւման չի համիր: Մենք հաւատացած ենք որ Ռուսաստանի ազդեցութիւնը Տաճկաստանի վրաչ աչնքան ուժեղ է, որ մեր զիպլոմատիալի եռանդուն պահանջները, պատահարների տեղը քննիչներ ուղարկելու հետ միասին բաւական է հակադրելու համար Տաճկաստանին, որ վերջապէս նա անսալթար պահպանի Բերլինի դաշնագրի 61-րդ լօղածը: Այս տեսակ միջոցներից մինչև գրաւումն զեռ շատ հեռի է և մենք հաւատացած ենք որ անգլիացիներին չի լաջողիլ ալչ հարցն աչնքան ուղեցնել որ նա միջազգային դառնալ:

Նոյնաժամանակ Պետերբուրգի «Правительственный Вѣстникъ» (Կառավարչական սուրհանդակ) թերթը տպեց հետևեալը.

Վոնդոնից հաղորդում են, որ հակական հարցը չարուցւած է Անգլիալում նոչն իսկ եկեղեցիների ամբիօծներից: Անցեալ կիրակի, Վոնդոնի միքանի եկեղեցիներում քորոզիչները խիստ և ողորած խօսքերով դատապարտում էին թիւրքաց կառավարութիւնը: Նրանք ապացուցանում էին, որ թուրքերը անընդունակ են բէֆօրմներ մտցնելու և չարմում էին իրանց զալրութը աչն «համբերողութեան» դէմ, որ ցուց են տալիս քրիստոնեալ պետութիւնները դէպի թիւրքերը:

«Հեռագիրները հաղորդում են, որ հակական խնդիրը Անգլիալում կլանում է ընդհանուրի ուշադրութիւնը: Ասկաչն մամուլը փոխել է լօղւածների ստոնը և քննադատում է հակական գործերը աւելի հանդարտ կերպով:

«Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների մէջ, ինչպէս հաղորդում են հեռագիրները, զեռ ոչ մի համաձայնութիւն չէ կապեղ աչն գործողութեան վերաբերութեամբ, որին պէտք է հեռեհն: Անգլիական կառավարչական շրջաններում մտադրութիւն կալ չանձնել էրզրումի անգլիական, ֆրանսիական և ռուսական հիւպատոններին քննութիւն

կատարել թիւրքաց Հաչաստանում, իրերի վիճակը պարզելու նպատակով:

«Միւս կողմից նուազրում են, որ իբր թէ սուլթանը համաձայնութիւն է չպահել ինքնարկել եւրոպական զեապանների կոտորելին այն հաշիւը, որ կը ներկայացնի Բիթլիսի վիլայեթի Սասուն գաւառի մէջ տեղի ունեցած անկարգութիւնները քննող թիւրքական լանձնաժողովը»:

Ինչ վերաբերում է մեր տեղական ուսական «ԽԱՅԿԱՅՆ» լրագրին, խնդրի սկզբներում, մի բանասիրականի մէջ «Սասուն և Սասունցիներ» վերնագրով, նա վստահացաւ Սասունի կոտորածը համեմատել Աովլասեան գաւառներից մի քանիսում վերջերքս կատարած աւազակութիւնների հետ, այսինքն՝ զրկած քաղաքական որ և է կարևորութիւնից, և յայտնեց որ դրութիւնը կը բարւոքի ինքն ըստ ինքեան, երբ քրդերի մէջ քաղաքակրթութիւն կը մացնելի: Չնայած այդ հայեացքին խնդրի վրայ, «Վաւկաղա-ը դեկտ. 1-ին սուրբ մի թղթակցութիւն Տրապիզոնից, որ թղթակիցը հաստատում է այն բոլորը, ինչ որ մինչև այդ ժամանակ արդէն ուրիշները հաղորդած էին Սասունի սոսկալի դէպքերի մասին»:

Ռուսաստանի վերաբերմունքը բնորոշելու համար նիւթ կարող են ծառայել նաև Լոնդոնի «Վեստմինստերեան լրագրի» մէջ տպւած ա. Օչլգա Նովիկովայի մի յօդւածը, ապա «Իէլլի Նիւսի» մի նկատողութիւնը: Տիկ. Նովիկովա իւր յիշեալ յօդւածում բացառապէս Անգլիայի վրայ է ձգում այն արխանահեղ անցքերի պատասխանատուութիւնը, որոնց զոհ են եղել թրքահայերը:

Ո՞վ է եղել, եթէ ոչ Անգլիան, որ քանզի է Սան-Ստեփանոյի զաշնագրով տրուող իրական ապահովութիւնները և դրանց տեղ դրել է Բերլինի զաշնագրի և Վիպրոսի պայմանագրի օղակին սրտչումները: Ուստի Ռուսիան ամենևին չի ցանկանում, որ ինքը միջամտէ այդ գործերին, բայց բոլոր մեծ պետութիւնների խնդիրքով նա կը համաձայնէր նրանց ներկայացուցիչը լինելու այդ ինչրում»:

«Wesiminister Gazette»-ը միանում է ա. Նովիկայի այս վերջին մտքին և ասում է, որ «Ռուսիայի մասնակցութիւնից զուրս հայերը փրկութիւն չունին»:

Աատսխանելով ա. Նովիկովայի այդ յօդւածին, Morning Post լրագիրը յայտնեց, որ Սան-Ստեփանոյի զաշնագրին վերադառնալը դեռ ևս բաւական ապահովութիւն չէր լինիլ Թիւրքիայի հայ հպատակների անվտանգ կենցաղավարութեան համար: «Էտք է

սահմանել, որ Հայաստանին վերաբերեալ յօդածները վերաբերեն բոլոր հայաբնակ գաւառներին:

Ռուսաց կառավարութեան դիրքը դէպի խնդիրը կարելի է բնորոշել նաև Standartին Բերլինից հեռագրած այս տեղեկութիւնով թէ Ռուսաց կառավարութիւնը ձգտումն է ցոյց տալիս մասնակցելու միւս պետութիւնների հետ հայոց զործերի առթիւ լինելիք քննութեանը, բայց միևնոյն ժամանակ նա յայտարարել է թէ չի թոյլ տալ որ Բերլինի գաշնագրի Հայաստանին վերաբերեալ յօդածների մէջ որ և է փոփոխութիւն մտցնել:

Իսկ «Ղէյլի Նիւսը» նկատում էր թէ՛

«Ռուսիան հրաժարել է միջամտել այս (հայոց) գործին և շատ լաւ է արել: Նրա դիմումները կարող էին կասկած չարուցանել, թէ փառասիրական ինտրիգներ է ուզում սարքել: Իրերի զրութիւնը խիստ փափուկ է, որպէս զի ռուսաց կաշտութիւնը հնարաւորութիւն ունենար խառնելու հայոց գործերին: Բայց հէնց այդ հանգամանքը պէտք է միւս պետութիւնների վրալ աւելի ևս մեծ պարտաւորութիւն դնի միջամտելու այս խնդրին, ահն էլ կարելո՞ն չափ մեծ եռանդով: Բացի զրանից, Ռուսիայի երկար համբերութիւնն էլ չի կարող չաւտենական լինել»:

Սակայն սրբազ էր, որ ներկայ խնդրում Մեզլիայի նախաձեռնութիւնը կարող էր յաջող ելք ունենալ, եթէ նա հիմնւած լինէր Ռուսաստանի պաշտպանութեան վրայ: Պետերբուրգի «Вопросы Вѣдомости», համակրութեամբ լի յօդած նւիրելով հայկական խնդրին, յայտնեց. «Հայերը, պէտք է ենթադրել, վերջապէս կը համոզուեն այժմ, որ Մեծ-Բրիտանիայի միացնակ միջամտութեան շնորհիւ նրա՛ք չոն կարող ազատել քիւրդ-թուրքական ճնշումներից: Միւս կողմից պետութիւնների կասկածոտութիւնը Ռուսաստանի արևելեան քաղաքականութեան վերաբերմամբ ներկայումս այնքան թուլացել է, որ շատ կարելի է իրանց զանդաաներով և միջնորդութիւններով բոլոր պետութիւններին, մանաւանդ հաւատակից և հարևան Ռուսաստանին, հայերը աւելի յաջողութեամբ կարող կը լինէին հասնել իրանց ամենաօրինաւոր ձգտումների նպատակին»: Իսկ «Новости»-ն, որը յայտնում էր, թէ «փոքր Ասիայի հայոց բոլոր ազիտացիան (վրդովմուկը) Լոնդոնի մասնաժողովների գործն է», գալով անգլո-ռուսական համաձայնութեան՝ յայտնեց թէ «Ռուսիան միացն այն ժամանակ կարող է Մեզլիայի համաձայնու-

Թեամբ գործել և դաշնակցութեան մէջ մտնել, երբ Ռուսիայի և Ֆրանսիայի օգտին Անգլիայի շարաքերութիւնները փոփոխութեան կ'ենթարկեն»:

«Русскія Вѣдомости» Մոսկւայի յայտնի յառաջադիմական Թերթը հայկական հարցին նւիրած յօււածներում, որոնցից մէկը առաջնորդող և միւսը պրոֆեսոր Կոմարովսկու ստորագրութեամբ, այն միտքը յայտնեց որ մեծ պետութիւնները, թէ դաշնադիրների հիման վրա և թէ մարդասիրութեան բարձր սկզբունքներով, պարտաւոր են օգնութիւն հասցնել թիւրքաց հայերին և կտրական կերպով պահանջել Բ. Գոնից, որ նա վերջապէս յարգէ հայերին, ինչպէս մարդկանց, որոնք, որպէս մարդիկ, իրաւունք ունին անձնական և կայքի ասպնոլութեան վրայ:

Անգլիայում լորդ Կիմբերլէյ յայտնեց թիւրքաց դեսպանին թէ անհրաժեշտ է լաւ կառավարութիւն հաստատել Հայաստանում և մի յանձնաժողով կազմել՝ անկողմնապահ կերպով քննելու թիւրքերի ձեռքով կատարած հայերի կոտորածի հանգամանքները:

Քննող յանձնաժողովի խնդիրը երևան էր եկած: Ինքը Թիւրքիան սկզբից յայտնել էր թէ մի յանձնաժողով է կազմել կատարւածը քննել տալու համար: Բայց Թիւրքիայի այդ յայտարարութիւնը նրա համար էր որ գործը քնեցնի, քանի որ ոչ ոք չհաւատաց թէ Թիւրքիան ինքը կարող լինի մի անաշու քննութիւն կատարելու: Լոնդոնում տեղի ունեցաւ մի միտինգ, նոյեմբերի վերջը, ուր այն կարծիքն յայտնւեց որ «նչինչ նշանակութիւն չունի սուլթանի կողմից ուղարկած յանձնաժողովը, քանի որ այդ բոլոր անդթութիւնները և սպանութիւնները թիւրք կառավարութեան գիտութեամբ են տեղի ունեցել»:

Քննիչ յանձնաժողով կազմութեան խնդիրը այդպիսով իւր ընթացքն ստացաւ: Սուլթանը չհամաձայնեց որ կամ եւրոպական դեսպանութիւնների ներկայացուցիչները քննութիւն կատարեն և կամ եւրոպական հիւպատոսներից մի մասնաժողով կազմելի՝ դէպքերը քննելու համար: Յետոյ իմացւեց որ սուլթանը դիմել էր Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Գրովէր Կլիվլէնդին՝ մի սլատգամաւոր նշանակել Հայաստան ուղարկող քննիչ յանձնաժողովին մասնակցելու համար, բայց Կլիվլէնդը մերժել

էր այդ կերպ մասնակցութիւնը, հաճողած լինելով որ, զբախց միակ ներկայացուցիչը լինելով մի թրքական յանձնաժողովում, կանոնաւոր քննութիւն անհնարին կը լինէր կատարել: Կլիվլէնդը պահանջում էր իւր ներկայացուցչի համար որ սա քննութիւն կատարէ բոլորովին անկախ որ և է այլ յանձնաժողովից, նոյն իսկ եթէ այդ մասնաժողովին մասնակցէին այլ պետութիւններն ներկայացուցիչներ: Կլիվլէնդի այդ պահանջը մեկնում է նաև նրանով, որ՝ միւս պետութիւններին հետ միասին գործելով՝ Հիւս. Ամերիկան կը կապէր ընդհանուրի որոշումների հետ, մինչդեռ Հիւս. Ամերիկան հետևում է իւր հնաւանդ քաղաքականութեան՝ յմիջամտել Եւրոպայի գործերին: Այն ժամանակ սուլթանը առաջարկել էր որ յանձնաժողովին մասնակցի մի անգլիացի ղեկեզաա՝ Փոքր-Ասիայի բրիտանական հիւպատոսներից:

Գործը ահա այդ զրութեան մէջ էր, երբ նոյեմբերի 31-ից հետևեալ պաղեցնող հեռագիրը ստացեց.

«Պարիզ, 30 նոյեմբ. Հայոց խնդիրը բարձրած է հերթական խնդիրների շարքից: Կառավարութիւնները երբևում են, չգիտեն թէ այդ խնդրի վերաբերմամբ ինչ կերպ գործեն և տրամադիր չեն այլ ևս միջոցներ ձեռք առնելու, մինչև որ նախապէս նոր տեղեկութիւններ չստանան»:

Սակայն, որքան պաղեցնող էր այս հեռագիրը, նոյնքան էլ անհատաւի էր թւում, որ Անգլիայի այնքան բուռն միջամտութիւնը կարող լինէր այդպէս շուտ փիասիօի հասնել: Լորդ Կիմբերլէյ, այսպէս կոչւած «Սթաւոնական կլուբ»-ում հին տոմարով 25 նոյեմբերին մի ճառ էր խօսել, որի մէջ նա յայտարարել էր թէ անգլիական կառավարութիւնը նոյն սարսափն է զգում Հայաստանում կատարած անգթութիւնների աւթիւ, ինչ որ ուրիշ տեղերում, և թէ նա լուրջ կերպով քննել է գործը ու անաչառ կերպով հետևելու համար ձեռք առնելիք միջոցների խնդիրը: «Իւր պարտականութեանը, ասաց Կիմբերլէյ, Անգլիան չի դաւաճանիր»:

Եւ Անգլիան նամանաւանդ կարող էր յուսալ միայնակ չմնալ հայկական խնդրում, որ այդ բանում նա խրախուսանք էր ստանում հարևան Գրանախից: Աղբեցիկ և կառավարութեան մօտ

«Temps» Ֆրանսիական լրագիրը գրում էր.

«Յայտնի է, որ Անգլիան Բ. Գրան հետ կապել է, այսպէս կոչուած, Կիպրոսի գաշնագիրը, որի զօրութեամբը նա ոչ թէ միայն բռնած է Կիպրոսը, այլ և իրաւունք ունի, և մինչև անգամ պարտաւոր է, վերահսկել թուրք իշխանութեան գործողութիւններին Հայաստանում: Յայտնի է նոյնպէս, որ Ֆերլինի գաշնագրի 61-րդ յօդուածը ստորագրող պետութիւններին կոնտրոլի իրաւունք է տալիս Հայաստանում: Աշինչ աջնքան ցաւալի չէր կարող լինել երեք տեսակէտից ևս Բ. Գրան, իրնաց հաչերի և պետութիւնների միացման համար,—ինչպէս որ և է պետութեան չէզոքացած գործողութիւնը, որ հիմնուած է ուրիշ ինչ-որ բանի, այլ ոչ թէ Ֆերլինի գաշնագրի վրայ:

Ֆրանսիական «Temps» լրագիրը, սակայն, հարկ է համարում հանգստացնել թիւրքիային եւրոպական միջամտութեան նկատմամբ, ասելով որ՝

«Եւրոպան սուլթանին չի կարող անհանգստութիւն պատճառել: Նրան յայտնի է, որ այդ ահագին մարմինը բաւական ծանր է, և թէ նա չի կարող ձգտել այնպիսի գործերի, որոնք հակառակ են միջազգային իրաւունքին և գաշնագրերին: Կատարելապէս հանդիստ լինելով միջամտութեան վերաբերեալ՝ Ֆերլինի գաշնագրի 61-րդ յօդուածի մէջ նախատեսուած շարժառիթների մասին, Արդուլ-Համիդը չի կարող ոչ մի պատճառ ունենալ թոյլ չտալու, որ խառն յանձնաժողովը անպայման անաչառ քննութիւն կատարի, որը կարող է նախապատրաստել վերացնելու միլիոնաւոր աշխատասէր և խաղաղ բնակիչների տրտունջները, որոնք—այդ բնակիչները—ցանկանում են միայն կեանքի ու գոյքի տարրական ապահովութիւն ունենալ ուղղափառների պետի զայիսոնի տակ»:

Անգլիան իւր Լուանդուն գետպան Կերրիի միջոցով գիմումներ արաւ Բ. Գրան: Լոնդոնից ստացւած տեղեկութիւնների համաձայն՝ թիւրքիային Անգլիայի կողմից արած գիմումներին խիստ զգոյշ կերպով աջակցել են Ռուսիան և Ֆրանսիան. իսկ Գերմանիան և Աւստրիա-Ունգարիան իբր թէ հակառակն են խօսել. Բուսլիան անվրձնականութիւն է ցոյց տւել: Բ. Գոււրը, Գերմանիայի ազդեցութեան տակ, պահանջել է որ բոլոր պետութիւնները ուղարկեն իրանց

հաւատարմատարները թուրքաց յանձնաժողովի քննութեանը մասնակցելու համար:

Անգլիացի դիմուհիների ինչ լինելը կարելի էր գուշակել նորանից, որ ղեկավարների սկզբներին Թուրքիան առաջարկեց մեծ պետութիւններին՝ իրանց կողմից ներկայացուցիչներ ուղարկել Հայաստան, հսկելու այնտեղ մացուցիք բարեփոխութիւնների վրայ:

Մինչ այժմ խնդիրը միայն Սասունի ղեկավարի քննելու մէջն էր, իսկ այժմ, ինչպէս տեսնում ենք, խնդիրը աւելի ընդարձակեց և դարձաւ Հայաստանում մացուցիք բարեփոխութիւնների խնդիր:

Գորանով խնդիրը մտնում էր արդէն մի նոր Ֆազիսի մէջ:

Մեծ կարևորութիւն է ներկայացնում ներկայ խնդրում Գլադստոնի միջամտութիւնը, այն Գլադստոնի, որը իւր խորը ծերութեան պատճառով ետ քաշւած լինելով քաղաքական անմիջապէս գործող ղերից՝ այնուամենայնիւ գլուխ է ճանաչւած անգլիական լիբերալ կուսակցութեան: Եւ մասնաւորապէս հայկական խնդրում Գլադստոնը ունի մի յայտնի անցեալ: Եւ ղեպի նա եղան դիմուհիները խնդրի սկզբում Ամերիկայի հայասերների կողմից: Գլադստոնը արդարացրեց ամենամեծ ակնկալութիւնները, թերևս գերազանցրեց զոցա: Նախ, ղեկավարների սկզբներում, նա մի գրութիւն հրատարակեց, որի մէջ նա ասում է թէ «Անգլիան չի հանդարտւիլ մինչև որ Սասունի գործերի վերաբերութեամբ տեղի չի ունենալ ամենահանգամանօրէն քննութիւն: Իսկ յետոյ, որպէս կը տեսնենք, Գլադստոնը բռնեց կայծակնահարի պիտքը և սպանալիքներով պահանջեց հայկական խնդրին վերաբերել որպէս նա արժանի է:

Քննիչ յանձնաժողովի կազմութեան խնդիրը լուծուց շատ բանակցութիւններից յետոյ: Համաւերոպական մի քննութեան առաջարկը շնորհուրեց ոչ միայն Թիւրքիայի, այլ և գլխաւորապէս երբեակ դաշնակցութեան (Գերմանիայի, Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի) ընդդիմադրութեան պատճառով: Որպէս պարզեց, երբեակ դաշնակցութեան պետութիւնները վճռել էին համակիրպէլ այն որոշումներին, որ կ'ընդունեն Անգլիան և Ռուսաստանը: Այսպէս, Daily Chronicle Լոնդոնի լրագիրը տպագրեց Վիեննայից

Ի հեռագիր թէ՛ «Հոսի, Վիեննայի և Բերլինի կաբինետները կտրական կերպով այն միտքը չստանեցին թէ Ռուսաստանի և Անգլիայի մէջ պէտք է նոր համաձայնութիւն կայանայ հաջոց խնդրի վերաբերմամբ և որ իրանք պատրաստ են մասնակցել Ռուսաստանի և Անգլիայի միաբան գործունէութեանը և կը պաշտպանեն նոցա բոլոր պահանջները: Կասկածելի է միայն որ Ռուսաստանը համաձայն լինի միաբան գործել Անգլիայի հետ: Բ. Ռուսը, սակայն, պետութիւնների ճնշման տակ ստիպեց ընդունել քննութեան մի նոր ձև, այն է որ յանձնաժողովին մասնակցեն երեք պետութիւնների, այն է՝ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի Երզրումի հիւպատոսները: Այդ առիթով Կոնյոնից գեկտեմբերի 3-ից տևած մի հեռագիր ասում էր. «Կառավարչական շրջաններում շատ զոհ են նրանից, որ Բ. Ռուսը ընդունեց, իսկ երբեալ զաշնակցութեան պետութիւնները համաձայնեցին, որ յանձնաժողովը նոր պլանով քննի Հայաստանի անցքերը՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի Երզրումի հիւպատոսների մասնակցութեամբ»: Որ Անգլիան զոհութիւն չաչանեց այդ բանին, բնական էր. Politische Correspondenz աւտորիական թերթը գորանից առաջ հաղորդել էր, որ Մեծ-Բրիտանիան ուղարկեց մեծ պետութիւններին մի յայտագիր, և բրիտանական դեսպան սըր Ֆիլիպ Կերրի հաղորդեց այդ յայտագրի բովանդակութիւնը օսմանեան կառավարութեան. թէ հաջոց աղբիւրից ստացւած տեղեկութիւնների համեմատ՝ օտար պետութիւնների վեց ներկայացուցիչները յանձնեցին Բ. Իրան այդ յայտագիրը, և սր գերմանական դեսպանը, բացի այդ, ներկայացրել է էլի մի առանձին յայտագիր: Այդ յայտագրի մասին Կ. Պոլսից տեղեկութիւն տրւեց, որ բրիտանական կառավարութեան յայտագրի մէջ ասւած էր, թէ անհրաժեշտ է ամենամակողմնապահ քննութիւն կատարել և առաջարկում էր յանձնել այդ քննութեան կատարումը երեք օտար հիւպատոսներին, որոնք ասորում են այն տեղերի մօտ, ուր կատարել են Հայաստանի անցքերը: Յայտագրի մէջ մասնացոյց արւած երեք հիւպատոսներն էին՝ Ֆրանսիական, ռուսաց և անգլիական հիւպատոսները: Իսկ Standard'ի տեղեկութեան համաձայն՝ «Բրիտանական կառավարութիւնը պահանջեց Բ. Իրանից, որ օտար պետութիւնների ներկայացուցիչներից մէկը ներ-

կաջ լինի թիւրքաց քննիչ յանձնաժողովի նիստերին Սասունում, որպէս զի հարաւորութիւն ունենայ մի ատանձին զեկուցում ներկայացնել այդ գործի աւիթով. իսկ սուլթանը իւր սեպհական նախաձեռնութեամբ առաջարկեց Քերլինի գաշնագիրը ստորագրող պետութիւններին նշանակել իրանց ներկայացուցիչներին քննիչ յանձնաժողովում:

Երեք պետութիւնների մասնակցութիւնը յանձնաժողովի քննութեան գործում սակայն ընդունեց սուլթանի կողմից: Այդ աւիթով Պոլսից «Ռէչտերի» գործակալութեան հեռագրածին նայելով «հեռեանքը կարելի է նշանաւոր համարել նաև բարձր քաղաքականութեան օրովհետև հայոց վերաբերմամբ վերոյշիւղ (Սնդլիա, Յրանսիա, Ռուսաստան) երեք պետութիւնների մէջ տեղի ունեցած համաձայնութիւնը զուշակել է տալիս, որ պետութիւնների նոր համախմբումներ կր լինեն արևելեան խնդրում»:

Մենք անսանք արդէն, որ Սասունի կոտորածի մասին քննութիւն անելու խնդիրը տեղիք տւեց մտածելու առհասարակ տաճկահայկական նահանգներում բարեփոխութիւններ մտցնելու խնդրին, և որ Սնդլիայի զիմումները այդ սուլթանի ընդարձակ բնաւորութիւնն էին կրում: Կորա հեռեանքը պիտի համարել անշուշտ Պոլսի կիսապաշտօնական «Փարիք» թերթի հաղորդածը, թէ, «բացի Հայաստան ուղարկւած քննիչ յանձնաժողովից, մի ուրիշ յանձնաժողով ևս նշանակուած է, որ զբաղւելու է հայոց խնդիրներով և նիստեր է ունենալու Ելզըղ-Քեօշի պալատում, և որ այդ ատանձին յանձնաժողովը կազմւած կը լինի նախկին մեծ վեզիրներ Քեամիլ և Սաիդ փաշաներից և մարշայ Շաքիր փաշայից»:

Չնայած որ հայկական խնդիրը նպաստաւոր լուծման ընթացքի մէջ էր գրւած, զէթ ըստ երևութիւն, Լոնդոնի «Սնդլո-հայկական միութիւնը կաշաղրեց իւր նախապարաստած միտինդը: Սնդլո-հայկական միութեան զլիաւոր մասնաժողովը մեծ կարևորութիւն ստացաւ ներկայ խնդրում, որովհետև նա, ինչպէս գեկա. Չ-ին հեռագրել էին Нов. Врѣмѣ-ին, շարունակ և մանրամասն տեղեկութիւններ էր ստանում Հայաստանի, շարունակ նիստեր էր կաշացնում, պատգամաւորութիւններ էր ընդունում և Սնդլիայում, ինչպէս նաև ևսրոպական պետութիւնների մէջ հայերի օգտին

եղած « գիտացիաների ընթացքի մասին զեկուցումներ էր տալիս, լրագիրներին նիւթեր էր մտտակարարում՝ հաչերի դրութեան մասին և այլն:

Ստորև դնում ենք նկարագիրը Լոնդոնում կաշարած մեծ միտինգի.

Երեկոցեան նոր տոմարով զեկտեմբերի 17-ին <sup>հօշ</sup> (նոր տոմարով 5-ին), մի բաղձամբոյս միտինգ տեղի ունեցաւ St. Martins Town-Hall-ում, որին ներկայ էին նաև զանազան կրօնների եկեղեցականներ: Միտինգը, չոր կաղմեց Անգլո-Հալկական միութեան նախաձեռնութեամբ, նպատակ ունէր բողոքելու ալն կոտորածի դէմ, որ թուրք զօրքերը կատարել են հալերի վրայ և պահանջում է բրիտանական կառավարութեան միջամտութիւնը՝ եւրոպական միւս պետութիւնների համաձայնութեամբ: Նախ քան դռների բացելը տիկիճնների և պարոնների մի մեծ բազմութիւն էր սպասում մուտքի առաջ: Պատգորմի վրայ մի լալն ժպտաւէնի վրայ գրած էր՝ «Հաչերն ուզում են խաղաղ ապրել իրանց հաչրենիքում», և միւս կողմը խոշոր տառերով տպագրւած էր Բերլինի դաշնագրութեան 61-րդ չօղւածը:

Պր. Ֆ. Ստեհնսն, անդամ պարլամենտի, ատենապետ Անգլո-Հալկական միութեան՝ դրասած էր նախագահի աթոռը: Ներկաներից չիչնք՝ պր. Ալբերտ Սպալսեր, անդ. պարլամենտի, Մալթիլ Գոդ՝ անդ. պարմենտի, արթ. Ռայլթ, սըր Ս. Լէլիման, պրոֆ. Ազար Բիթ, տիկին Նովիկով, արթ. Պարոնեան և այլն, և այլն:

Պատուաւոր ատենագիր՝ պրոֆ. Ատկին կարդաց հետեւեալ նամակը Գլազգոտընից:

«Հաչատտանի մասին սոսկալի տեղեկութիւնները լարել են աշխարհի ուշադրութիւնը, և ես սրտագինս ցանկանում եմ, որ Ձեր և ուրիշների ջանքերը ճշմարտութիւնը երևան հանելու համար աջողութիւն գտնի: Եթէ այս լուրը կը ճշմարտեին, քաղաքակիրթ աշխարհը նորից պիտի հարցնէ. մինչև երբ պիտի համբերել: Ես չեմ ուզում կանխել քննութեան արդիւնքների մասին, բայց անուամենայնիւ բոլորովին վստահ եմ, որ (մեր) կառավարութիւնը զաղար չպիտի առնի, մինչև որ ամենակատարեալ քննութիւն՝ չկատարելի (հալոց) գործերի մասին, որի նկատմամբ մենք, կիպրոսի դաշնագրութեան համաձայն, խորին և ցաւալի շահեկանութիւն ունինք. (լսէ, լսէ): Իմ պտրաքս է լուսալ, որ օսմանեան կառավարութիւնը իւր իսկ պատուի համար սրտանց պիտի աջակցի հետախուզող քննութեանը» (ծախ):

Պր. Ջ. Ստանսֆելդը զրկել էր հետեւեալ նամակը:

«Մեծապէս և անկեղծօրէն ցաւում եմ, որ ամսիս 17-ին Ձեզ հետ լինել չեմ կարող: Ես ոչ մի տարակուս չունիմ թուրք կառավարութեան անկարգութեան և չարագործութիւնների նկատմամբ Հաչատտանում:

Մթթէ ամօթ և լանցանք չէ, որ քաղաքակիրթ Եւրոպան, իւր աճագին գինւորական պատրաստութեամբ կանգնած է անօգուտ: Համաձայն եմ, թէ եւրոպացիները պարտաւոր են նախ և առաջ իրողութիւնները ստուգել: Բայց այդ անմիջապէս պիտի անւի. և երկրորդ՝ ես չափնում եմ, որ մենք պարտաւոր ենք պահանջել և, եթէ պէտք լինի, գործել: (ժափ.):

Կարգինալ Վոհան (Vaughan) իւր նամակի մէջ ասում է, որ եթէ պէտք լինի, անգլ. կառավարութիւնը պարտաւոր է գործել մենակ: Նա չի կարող փախուստ տալ իւր պարտիքներին, որ մինչև այժմ զանց է արել կատարելու:

Աւստրիացիները, Արշակի դուքսը, Քենտրբերիի արքեպիսկոպոսը, Լոնդոնի եպիսկոպոսը, Մանչեստրի եպիսկոպոսը, պարլամենտի բազմաթիւ անդամներ և ուրիշ նշանաւոր անձեր ու քարոզիչներ դրկել էին համակրական նամակներ:

Ատենապետը, որ ընդունեց ծափահարութեամբ՝ ասաց.

«Այս հետաքրքրական նամակները և համակրութեան արտայայտութիւններն ամբողջ աշխարհին ցոյց են տալիս, թէ որչափ խորր և լայնածաւալ է այն սոսկումը, որ պատճառել են Սասունում կատարւած դադանութիւնները: Թէև մենք ուրախ ենք, որ մի միջազգային քննիչ լանձնաժողով է կազմւած, բայց ամենքս էլ գիտենք թէ սրբան քիչ արդիւնք կարելի է սպասել այդպիսի մի լանձնաժողովից, հիմուելով մեր անցեալ փորձերի վրայ: Մենք գիտենք թէ ինչպէս թուրքը գիտէ խուսափել անհաճօ վկայութիւններից և թէ ինչպէս մօտ քսան տարի առաջ նույնը պատահեց մի գաւառի նկատմամբ, որ ամբողջապէս բնաջինջ էր արած: Թագաւորապէս մենք մասնաւոր և կէս պաշտօնական աղբիւրներից քաւարար չափով տեղեկութիւններ ունինք, որոնք հաստատում են, որ Սասունի դեպքերը չիրաւի կատարել են: Պիտի չիչել, որ այս կոտորածը, որքան էլ դա անուելի է, միակը չէ. նույնպիսի կոտորածներ տեղի են ունեցել Մուշի, Էրզրումի գաւառներում և երկրի ուրիշ մասերում: Եւրոպական պետութիւնները պարտաւոր են պաշտպանել հայերին՝ թուրքերի արարքների դէմ, և քրիստոնեաներն իրաւունք ունեն պահանջելու իրենց հուսափ պատուի, կեանքի և ստացւածքի ապահովութիւնը»:

Կանոնիկոս Մաքքոլ զօրեղապէս խօսեց հայոց օգտին և տեղացից, որ ոչ միայն հայերը, այլ նաև հրէաները և պարսիկները հալածուած են թուրքիւղում, այն զանազանութեամբ որ նրանց թիւը քիչ է հազարից և Գուռը նրանցից այնքան երկիւղ չունի:

Պրոֆեսոր Էզար Բիթ ասաց, որ հայոց լինելը կը լուծվի առանց մի կաթիլ արիւն թափելու, եթէ նրանց չճորհել այն, ինչ որ Լիբանանին չճորհել է, այն է՝ քրիստոնեայ կառավարիչ եւրոպական պետութիւններից նշանակւած: Հալատանը պիտի ունենալ դատարաններ, որովհետև ներ-

կաջումս քրիստոնեաների համար ոչ մի արդարադատութիւն չկալ: Հաշկական զաւաւր պարտաւոր է հարկ ու տուրք տալ Բ. Դրանը, բայց նա ազաա պիտի լինի աուրքը ինքը ժողովելու և իւր բնական աղբիւրները շահագործելու:

Ար. Չանինդ, անգամ պարբնետի, աւաջարկեց մի բանաձև, որով ընկերութիւնը պիտի աշխատի մի անկախ քննութիւն կատարել Հաշատանում կատարածների մասին: «Մենք միաջն ուղումենք,—ասաց նա,— գործադրել տալ ալնպիսի ռեֆորմներ, որոնք բարիք կը բերեն թուրքերին և Խիւրքիալին, խաղաղութիւն կը տան Արեւելքին և կը նպաստեն հաջոց ապագային»:

Արժ. Կորը գովեց հալ ազգի բարձր աւաքինութիւնները: Արժ. Հորաըն խօսեց զգացւած կերպով: Ի միջի աչոց նա ասաց. «Բոլոր անգլիացիները, աւանց կուսակցութիւնների տարբերութեան, պարտաւոր են հասկացնել Բ. Դրանը, որ այս սոսկալի անցքերը պարտաւոր են զաղարելը»:

Աջնուհետև խօսեց պր. Իսկենդեր, Նիւման Հոլ, պ. Սպալսեր, Թուժալեան և ուրիշները»:

Այս միտինգի որոշումների մասին կանխօրէն ինդրել էր անգլիական ներկայ մինիստրութեան պետ Ռոգբերին, որ նոքա հաղորդւեն արտաքին գործերի մինիստր Կիմբերլէյին:

Դորանից արդէն պարզ երևում է թէ ինչ կարեորութիւն էր ստացել Անգլո-հայկական ընկերութիւնը Անգլիայում. և ընտլոյե Վրեմիային՝ Լոնդոնից ուղարկած մի հեռագրում ասւած էր. «Անգլիական հասարակութիւնը խիստ զարմացած է այն նշանակութեան վրայ, որ ստացել է հաջոց մասնաժողովը, և այն հովանաւորութեան վրայ, որ ցոյց է տալիս նրան կաւալարութիւնը»:

Մենք տեսանք, որ Սասունի կոտորածի խնդիրը մանաւանդ Անգլիայում յարուցեց տաճկա-հայկական խնդիրը աւահասարակ: Հետևապէս Անգլիայում արամադիր չէին քննիչ յանձնաժողով կազմելու խնդիրը վերջացնելով հայկական խնդիրը վերջացրած համարել: Հրապարակ էր եկել Տաճկա-Հայաստանում բարեփոխութիւններ մտցնելու խնդիրը և մենք վերը արդէն մասամբ տեսանք թէ այդ աւելի ընդարձակ խնդրի մասին ինչ պիւրք էին բանել զանազան պետութիւնները: Daily News-ը յայտնեց, որ Ռ. Դոււը այլ ևս իրաւունք չունի վայելելու անգլիացոց հովանաւորութիւնը. նա այդ իրաւունքը կորցրեց: Այդ պաշտպանութիւնը պոյմանու-

ւորում է Կիզրոսի դաշնագրով, բայց այժմ ոչինչ չի սահմանափակում Ռուսաստանի գործունէութեան ազատութիւնը: Հայաստանը ռուսաց սեփականութիւն կը դառնայ, եթէ Թիւրքիան ինքնավար նահանգ չդարձնէ Հայաստանը քրիստոնեայ նահանգապետով: Daily News-ը, որ անգլիական մինիստրութեան մերձաւոր օրգանն է, կարծում էր որ այդ խնդրում Ռուսաստանի աջակցութիւնը կարևոր է, այնպէս որ այդ թերթը մի յօդուածով վիճեց այն սառնասրտութեան և կասկածոտութեան դէմ, որով ռուսաց մամուլը վերաբերւում է անգլո-ռուսական համաձայնութեան խնդրին, իսկ ապա ուրախութեամբ արձանագրեց, թէ ռուսաց լրագիրներն ստացած տեղեկութիւններէ կարելի է եզրակացնել, որ ռուսաց մամուլը սկզբունքով անհրաժեշտ է համարում Փոքր-Ասիայի հայաբնակ դաւառների կառավարութեան սիստեմը արմատական փոփոխութեան ենթարկել:

Յիշենք նաև որ այս պատմութեան ընթացքում Ձէքի փաշան, չորրորդ զօրաբանակի հրամանատարը, նա որ ղեկավարել էր զինւորական գործողութիւնները Սասունում, վարձատրուց սուլթանից Իմթիազ պատւանշանով: Այդ դէպքը այնքան ծանր տպաւորութիւն արաւ Եւրոպայում, որ Բ. Դուռը իրան ստիպւած տեսաւ ասել որ իբր թէ այդ պատւանշանը Ձէքի փաշային վճուած էր շնորհել զեռ. ևս Սասունի դէպքերից առաջ: Գերմանական «Kölnische Zeitung» շատ տեղին դորան պատասխանեց, որ Իմթիազ պատւանշանը տրւում է Թիւրքիայում միայն հռչակ ստացած գեներալներին, և որ հազարաւոր մարդկանց սպանումն էր պէտք, որպէս զի անյայտ Ձէքի փաշան հռչակ ստանար:

Daily News-ի բռնած դիրքից դէպի խնդիրը պէտք էր դուշակել որ Պոլսում Անգլիան մեծամեծ ճիգեր է թափում Թիւրքիայի վրայ՝ ընդունել Հայաստանում մոցնւելիք բարեփոխութիւնների մի նոր սիստեմ: Այդ ճիգերի պսակը պէտք է նկատել ղեկտեմքերի 17-ից Կ. Պոլսից ուղարկւած հեռագիրը, որը աւետում էր հետևեալը.

«Մինիստրների վերջին խորհրդում, որ կայացաւ պալատում, Կ. Պոլսում, ընդունել է սկզբունքով պրօէկտը՝ կազմելու Կարինի, Վանի, Բիթլիսի և Մուշի նահանգներից մի նահանգ, մի նահան-

գապետով, որը նշանակւած կը լինի սուլթանից 5 տարով. առաջին նահանգապետը կը լինի մահմեդական, իսկ հետեւեալները պիտի նշանակեն քրիստոնէաներից, բայց միայն ոչ հայերից. տեղական ժանդարմերիան (ոստիկանութիւնը) կազմւած կը լինի սուլթանից նշանակւած զիւրիպիային զենեալի իշխանութեան ներքոյ. նահանգի եկամտները կը գործադրեն տեղական կարիքների համար, ի բաց առած մի որոշ գումար, որը պիտի մանի պետական պարտքի վարչութիւնը կամ թուլթունի ռէժիս. դատաւորները ընտրողական կը լինեն, ներկայումս գործող օրէնքների հիման վրայ:

Այստեղ մենք ընդհատում ենք: Յիշած իրողութիւնով վերջանում է հայկական խնդրի նորագոյն ընթացքի մի նշանաւոր շրջան: Այդ օրից հայկական խնդիրը պիտի զբաղւի համարել նոր հողի վրայ:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

## ՏԱՐԵԿԱՆ ՀԱԹԻԻ

Ղարաքաղի հայոց հոգևոր թեմական դպրանոցի տեսչի  
1893—1894 ուս. տ. համար:

(Կարգացած 1894 թ. յունիսի 12-ին տարեկան հաշվետու թեան  
հանդիսում)

Յարգելի հանդիսակամներ!

Ճիշդ մի տարի առաջ նույն այս օրը մենք պատիւ ունեցանք ներկադպրոցի Շուշալ ղարգելի հասարակութեան մեր ղեկավարութեան լանձընուած թեմական դպրոցի ուսումնական մասի մի տարւալ հաշիւը: Այն ժամանակ այս դպրոցում մեր գործունէութեան սկիզբն էր. հոր հիմքեր էին դնում, ուստի հարկ կար աւելի կանգ առնել այն սկզբունքների վրայ, որ առաջացրել էին որոշ փոփոխութիւններ: Այս երկրորդ տարում մենք միայն շարունակել ենք որոշ հիմքերի վրայ զբաղւած գործը և աշխատել ենք իրականացնել այն, ինչ որ անցեալ տարի ժամանակի սղութեան և ալ խոչնդոտների պատճառով չէր չաջողել մեզ. լիովին մեր փոքրիկ նաւին չէր վիճակուած խաղաղ ովկիանոսի մէջ շարունակել իւր ճանապարհը...

Ի հարկէ երկու տարին շատ կարճ ժամանակամիջոց է մի միջնակարգ դպրոցի կեանքում, որի մէջ ուսում սկսողը միայն 9 տարոց վտու է աւարտում իւր դասընթացը, մանաւանդ երբ դպրոցական կեանքի կանոնաւոր զարգացման համար բոլոր նպաստաւոր պայմանները չկան և ղեւ պէտք է մաքառել ամենատարրական բաների համար, բայց աչնուամենայնիւ աստիճանաբար կատարուած և սխտեմատիկաբար չառաջ տարւած փոփոխութիւնները երկու տարւալ ընթացքում ես որոշ գաղափար կարող են ալ դպրոցի մասին:

Դպրոցը, ուր ամեն մի նոր սերունդ ղիւրին ճանապարհով և կարճ ժամանակամիջոցում պիտի հասնի մտաւոր-բարոյական այն կատարելութեան, որին հասնելու համար մինչև ալ սերունդը մարդկութիւնը անպիտան ժամանակ և ջանքեր է գործ ղրել՝ չպէտք է չկա մնալ կեանքի և ղիտութեան պահանջներին, որ անընդհատ փոփոխուած են: Հասկանալի է, որ մեր դպրոցները այժմ չեն կարող լինել այն, ինչ 30—40 տարի առաջ,

ինչպէս և նոցանից աւարտած գիւղական ուսուցիչները և քահանաները չեն կարող գոհացնել մեզ այն պակասաւոր պատրաստութեամբ, որ աչքի չէր ընկնում առաջ: Սեմինարիան, իբրև միջնակարգ դպրոց, պէտք է նախ և առաջ միջին ընդհանուր կրթութիւն տալ իւր սաներին. դարգացման ւալտնի *mainstream* կալ, որից իջնելը չարիք է դարձնում ալլպիսի զարգացում ունեցողներին, մանաւանդ երբ նոցա ձեռքն է ընկնում մարդկանց մտաւոր բարոյականի վրայ ազդելու պաշտօնը այն է հոգևորականի և ուսուցչի:

1893—1894 ուս. տար. ընթացքում Վարաբաղի թեմական դպրոցը բաղկացած էր 3 պատրաստական և 6 սեմինարական դասարաններից: Պատրաստականներից Բ և Գ ունէին և մի մի զուգընթաց դասարաններ, այնպէս որ բոլոր դասարանների թիւն էր 11:

Ուսուցչական խմբի մէջ շատ քիչ փոփոխութիւն եղաւ. նա բաղկացած էր 14 հոգուց, որոնցից 4 բարձրագոյն կրթութեամբ, 2 Ալեքս. Ռուս. ինստիտուտից, 3 Էջմիածնի ճեմարանից, 2 Ներսիսեան դպրոցից, 1 Ռաֆայէլեան վարժարանից և 2 (կրօնուսուցիչ և վերակացու) Վար. թեմական դպրոցից, թերաւարտ:

Միջին թւով մի ուսուցչի ընկնում էր 24 չար. դաս: Ուսուցիչներից մի քանիսը ունէին և ձրի դասեր. ալլպիս անհնարին էր եղած բիւջէով, առանց վնասելու դպրոցական տնտեսական պահանջներին՝ կառավարել: Ուսուցիչները, բացի իրանց դասերից, ձրիաբար կատարում էին իւրաքանչիւրը մի դասարանի դաստիարակի պաշտօն և հերթական օրապահութիւն դասամիջոցներում:

Աշակերտների ընդունելութիւնը և վերաքննութիւնները սկսեցին օգոստոսի 20-ից. կանոնաւոր ուսումը՝ սեպտեմբերի 3-ից և տեղց մինչև մալիսի 20-ը, իսկ քննութիւնները՝ մինչև Յունիսի 3-ը: Պարապած օրերի թիւը, չհաշած ընդունելութիւնները, վերաքննութիւնները և քննութիւնները, եղել է տարալ ընթացքում 178 օր: Շաբաթական դասերի թիւը եղել է 304, արտակարգ պարապմունքները, բացատրողական ընթերցանութիւնները հաշւի չեն առնւած:

Ուսուցիչները շատ քիչ դաս են բաց թողել. միայն մէկը նոցանից երկարատե հիւանդութեան պատճառով չէր լաճախում չունւարից սկսած և նրա դասերը բաժանւած էին ուսուցիչների մէջ, իսկ ուձիկը ստանում էր հիւանդ ուսուցիչը: Մի ուսուցչի վրայ միջին թւով ընկնում է 6 բաց թողած դաս:

Մանկավարժական ժողովներ գումարել են 23 անգամ: Այս ուստար, մանկավարժական ժողովների պարապմունքները կարելի է համարել շարունակութիւն և ընդարձակումն անցեալ տարւալ զբաղմունքների:

Առանձին ուշադրութիւն էր դարձրած աշակերտների գրաւոր պարագմունքները կանոնաւորելու վրայ, ուսուցիչների փորձական դասերի, գրականական երեկոների և դաստիարակների բացատրողական ընթերցանութիւնների վրայ: Մի քանի խնդիրներ որ անցեալ ուս. տար. ընթացքում միայն չարուցւած էին, այս տարի վերջնական վճիռ ստացան, ինչպէս ուսուցչական փոխատու-խնայողական գանձարանի խնդիրն է և գրադարանի սիստեմատիկական ցուցակների կազմութիւնը: Նոր խնդիր էր սեմինարիակի ներկա ծրագրի պակասաւոր կողմերի քննութիւնը և նոր կազմելիք ծրագրի պոէզիտի մշակութիւնը. նոր էր և դպրոցիս չքաւոր աշակերտներին օգնելու համար մի պաշտօնական մարմնի կանոնադրութեան մշակութիւնը, որ պէտք է առաջարկել հաստատութեան ուր հարկ է:

Աշակերտների թիւը այս ուս. տար. ընթացքում եղել է 406, որոնցից 60% շուշեցիք, իսկ մնացածները, սակաւ բացառութեամբ, թեմիա գիւղերից: Տարւալ ընթացքում իրենց կամքով թողել են դպրոց 18 հոգի, վախճանել են 2 հոգի, այնպէս որ տարւալ վերջը, քննութիւններից առաջ, դպրոցում կալին 386 աշակերտ (անցեալ տարի 352): Առհասարակ ուսման պահանջը տարէցստարի աւելանում է, օրինակ՝

|                  |     |          |
|------------------|-----|----------|
| 89—90 թւին . . . | 299 | աշակերտ. |
| 90—91 " . . .    | 320 | "        |
| 91—92 " . . .    | 324 | "        |
| 92—93 " . . .    | 354 | "        |
| 93—94 " . . .    | 386 | "        |

Մեր դպրոցի աշակերտների ալժմեան թիւը հաւասար է ամբողջ Ղարաբաղի թեմի մէջ եղած բոլոր տղաւոց ծխական դպրոցների աշակերտների թւի (831) համարեա կէսին: Ուրեմն մի թեմ, ուր հալ ազգաբնակչութիւնը 75 հազար արու հոգուց է կազմւած և ուր միջին թւով 11,000 տղալ կալ ուսումնարանական հասակում—այդ բոլորից հալոց դպրոցներում հազիւ 1% է ուսում առնում: Հասկանալի է, որ այլ կարգի ուսումնարաններում թւով աւելի չեն սովորողները. սարսափ է ազդում մարդու վրայ, երբ մտածում է թէ քանի քանի անմեղ հոգիներ մատնւած են խաւարի:

Այս ուսումնական տարում ցանկութիւն են չալտնել դպրոց մտնել 240 հոգի, իսկ տեղի պակասութեան պատճառով ընդունել են 128 հոգի: Ուրեմն 47% չի ընդունել: Ընդունւածներից իսկայպէս միայն 32 հոգի են նոր տեղ բռնում, իսկ միւս նորեկները բռնել են արձակւածների, աւարտածների և իրանց կամքով դպրոցը թողածների տեղերը: Պահանջը մեծ է պատրաստականներում, միայն 6 հոգի են մտել մեմինարական դասարանները: Պարզ է որ կամ պէտք է մտածել ընդարձակել ուսումնարանի շինութիւնը, տեղափոխելով նրանից առաջնորդարանը ուրիշ տեղ, կամ

պէտք է ծինական դպրոցների թիւը գիւղերում աւելացնել, իսկ քաղաքում՝ ծխ. դպրոցներ բանալ, քանի որ բոլորովին չկան:

Ըստ դասարանների աշակերտները հետեւեալ կերպով էին դասաւորւած.

|          |                        | Տարւոյ ընթացում: | Բնակիչներից տալ: |
|----------|------------------------|------------------|------------------|
| Պատրաստ. | Ա. պատրաստական . . .   | 76               | 75               |
|          | Բ. հիմ. պատր. . . . .  | 56               | 51               |
|          | Բ. զուգըն. պատր. . . . | 57               | 55               |
|          | Գ. հիմ. պատր. . . . .  | 59               | 57               |
|          | Գ. զուգ. պատր. . . . . | 28               | 27               |
|          |                        |                  | 265              |
| Սեմինար. | I-ին սեմ. դաս. . . . . | 50               | 44               |
|          | II " " . . . . .       | 34               | 32               |
|          | III " " . . . . .      | 20               | 19               |
|          | IV " " . . . . .       | 14               | 14               |
|          | V " " . . . . .        | 7                | 7                |
|          | VI " " . . . . .       | 5                | 5                |
|          |                        | 406              | 386              |

Ուրեմն աշակերտներից միայն 31% էին սեմինարական դասարաններում: Թէև այս վերջին երկու տարւոյ ընթացքում նկատուում է որ առաջին չորս սեմինարական դասարանները աւելի բազմամարդ են դառնում, քան առաջ էր <sup>1)</sup>, բայց մի հիմնական պատճառ կալ, որ արգելում է մեր բոլոր սեմինարիաների բարձր դասարանների բազմարդութեան. պատճառը այն է որ սեմինարական ցենդը անհրաժեշտութիւն չէ ոչ քահանայագործութեան և ոչ վերջերումս ուսուցչութեան համար և առհասարակ շատ քիչ արտօնութիւններ է տալիս աւարտածներին:

Ըստ ծնողների պարապմանց աշակերտները բաժանուում էին.

- |                             |     |                               |    |
|-----------------------------|-----|-------------------------------|----|
| 1) Արհեստաւորների . . . . . | 127 | 5) Որբերի . . . . .           | 25 |
| 2) Առևտրականների . . . . .  | 110 | 6) Մանր ծառայողների . . . . . | 20 |
| 3) Երկրագործների . . . . .  | 53  | 7) Մառանների . . . . .        | 9  |
| 4) Հողերակաւնների . . . . . | 42  |                               |    |

<sup>1)</sup> Համեմատելու համար VI դասարանը բացւած տարւանից մինչև այժմ.

|           | VI | V | IV | III |         |
|-----------|----|---|----|-----|---------|
| 88—89 թ.  | 0  | 6 | 10 | 13  | աշակերտ |
| 89—90 " " | 6  | 7 | 10 | 11  | "       |
| 90—91 " " | 8  | 6 | 8  | 15  | "       |
| 91—92 " " | 7  | 7 | 10 | 13  | "       |

|       |   |   |   |    |    |   |
|-------|---|---|---|----|----|---|
| 92—93 | » | 7 | 5 | 14 | 15 | » |
| 93—94 | » | 5 | 7 | 14 | 20 | » |
| 94—95 | » | 7 | 9 | 18 | 28 | « |

Ըստ վճարի.

|               |   |   |   |   |     |
|---------------|---|---|---|---|-----|
| Տարեկան 12 ռ. | . | . | . | . | 134 |
| 4 »           | . | . | . | . | 120 |
| 8 »           | . | . | . | . | 93  |
| Ձրի           | . | . | . | . | 57  |
| Չեն վճ.       | . | . | . | . | 2   |

19 աշակերտի համար վճար տեւել է Հալոց Բարեգործական (Ընկերութեան տեղական ճիւղը ուղարկելով մեզ 100 ռուբլի:

Մանկավարժական ժողովի որոշմամբ 386 հոգուց փոխադրւածները կազմում են 50%, վերաքննութիւն ունեցողները՝ 20%, մնացողները՝ 26%, արձակւածները՝ 4%:

Սեմինարական ամբողջ դասընթացը աւարտել են 5 աշակերտ, և 1 հոգի իբրև կողմնակի անձ է քննութիւն տւել:

Աւարտածներն են. 1) Գանջեցեանց Աստածատուր, Շուշեցի, 2) Ճըզնաւորեանց Աբրահամ, Շուշեցի, 3) Մկրտչեանց Աղաբէկ, Շուշեցի, 4) Տէր-Աբրահամեանց Աբգար, Վարդաշէնցի, 5) Տէր-Աւագեանց Խաչատուր, Աշան գիւղից:

Այս ուսումնական տարում թէև արտաքին բարեկարգութիւնը աշակերտների նկատմամբ շարունակւել է, օր. միասեսակ զգեստին աւելացել են գլխարկների նշաններ, սակայն մենք այս տարի էլ, ինչպէս և անցեալ տարի, աւելի նշանակութիւն ենք տւել ներքին, բարոյական-մանկավարժական միջոցներին, աշխատել ենք զարգացնել նրանց մէջ գիտակցական, համոզւած վերաբերութիւն դէպի իրանց պարտականութիւնները: Նրթեակ դպրոցներում, ինչպէս մերն է, աւելի ևս դժւար է դաստիարակչական գործը, որովհետև աշակերտը օրւա մեծ մասը անց է կացնում ուսումնարանից դուրս, ուր նա ենթակալ է բազմազան ազդեցութիւնների. նրա մատաղ դեռ չկազմակերպւած ուղեղի և սրտի վրայ ազդում է փողոցը իւր անլանդակութիւններով, ընտանիքը իւր սակասութիւններով, անկիրթ, ինտրիգան մարդկանց խորխուղները ու դաւերը, վատ ընկերների շրջանը, փողոցալին լրագրների կրքոտ, անբարոյականացնող, կրկէսալին ցնդաբանութիւններն և հաճողանքը և այլն: Այդ բոլորի դէմ մենք ունենք մի զէնք՝ առաջացնել աշակերտների մէջ գիտակցական զբաւնք տղտութիւնից, մեծամիտ թեթեւութիւնից, շարամբտութիւնից ու ստախճութիւնից և սէր դէպի գիտութիւնը և լիցաւականը:

Գալով աշակերտների առողջապահական դրուժեան, պէտք է չափոնել մի ուրախալի նորութիւն. մեր դպրոցում վերջապէս չաջողեց մեզ ունենալ սեպհական բժիշկ և փոքրիկ դեղարան: Յարգելի բժիշկ Խ. Բահաթրեանցը չանձն առաւ ձրիաբար շաբաթը մի անգամ ալցելել դպրոցը, բժշկական օգնութիւն հասցնել հիւանդ աշակերտներին դպրոցում և տալ բժշկական-առողջապահական խորհուրդներ, իսկ բժ. Վ. Մ. Բաբախանեանցը չանձն առաւ ալցելել հիւանդ աշակերտներին իրանց տներում:

Գպրոցական դեղարանը շնորհիւ նւիրատուութիւնների շուք կալ որ կամաց-կամաց կը հարստանալ անհրաժեշտ դեղերով և պարագաներով:

Սակաւն մեր դպրոցի աշակերտներից շատերը աւելի կարօտ էին հաղուստի, կօշկի, սննդի, քան դեղերի. կոնցերտներից կամ քառաձայն խմբի օգտին ստացւած գումարները գործադրուումն մանկ. ժողովի որոշմամբ ալ նպատակով:

Շինութիւնը և կահկարասիքը, ինչպէս և անցեալ տարի ցոյց տւինք, ունին շատ և շատ հակաառողջապահական կողմեր, տարաբախտաբար ալ կողմերից ամենախոշորները, շինութեան նեղածութիւնը և վառարանների ու լատակների թնայլաքութիւնը՝ պահանջում են հիմնական վերանորոգութիւն, որ առանց հասարակութեան անկողութեան պէտք կը լինի հոգաբարձութեան իրականացնել:

Աշակերտների ֆիզիկական զարգացման մէջ, մենք կողմնակից ենք վարժութիւնների անդլիական ձևին, ալն է՝ ժողովրդական խմբական բացօդեալ խաղերին: Մեր դպրոցը չունի ձմեռալին չարմարութիւններ ալ վարժութիւնների համար և պէտք է հոգալ նա և դրա մասին:

Գպրոցի գրադարանը ալ տարի ևս հարստացաւ միայն նւիրաբերութիւններով. ալժմ ունենք 804 անուն հ. գիրք, 385 ան. ռուս. գիրք:

Բացի բացատրողական ընթերցանութիւնից մեծ ծաւալ էր ստացել և ինքնուրոյն ընթերցանութիւնը: Գրքերը մանկավ. ժողովի որոշմամբ բաժանւած էին, ըստ դասարանների մտաւոր պատրաստութեան, մի քանի կարգերի և տրւում էին համապատասխան զարգացում ունեցողներին: Սեմի-նարական դասարանների 124 աշ. վերցրել են 2109 անգամ հալերէն գիրք և 420 անգամ ռուս. գիրք:

Պատրաստական դասարանների աշակերտների հետ առաջին կիսամակում լինում են բացատրողական ընթերցանութիւններ մոգական լապտերով, իսկ երկրորդ կիսամակում՝ իրենք էին ինքնաբերաբար պահանջում գրքեր տանը կարդալու համար:

Ֆիզիկական կարճեւոր ալ տարի չհարստացաւ նոր գործիքներով, ալ միայն շինեցան ապակեալ պահարաններ, ալնպէն որ եղած իրերը ալ ևս բաց ընկած չեն և փոշու զոճ չեն լինի:

Աւելի բախտաւոր էր բնապատմական բաժինը. բաղաւրնակ պ. Յովհաննէս Աղամբանցը ուղարկեց մեզ 200 ռուբլի այն պայմանով, որ այդ գումարով ձեռք բերեն մեր անմիջական կարգադրութեամբ մարդակազմութեան վերաբերեալ մոդելներ, ի չիշատակ իւր հանգուցեալ մօրը Սանտա Աղամբանցի: Այդ մոդելները ձեռք են բերած:

Հանքալին, բուսական և կենդանական ժողովածուն հարստանում էր թէ մասնաւոր մարդկանց նւիրատուութիւններով, ինչպէս օր. շերամապահ պ. Գրիգորեանցի ստացած շերամի աստիճանաւար զարգացում ցոյց տուող սպիրտական պրեպարատներ, և թէ աշակերտների հաւաքած իրերով. ալժմ կազ 105 Ռ-իր:

Գպրոցիս երգեցողութեան ուսուցիչ պ. Ս. Դէմուրեանցի Հանքերով կազմակերպւած քառաձաչն խումբը այս տարի բաղկացած էր 50 հոգուց, որ հերթով երգել է 16 անգամ քաղաքիս 4 եկեղեցիներում:

9 անգամ Ղազանչեցոց

4 » Ագուլեաց

2 » Մեղրեցոց

1 » Վերին Թաղի

Բացի այդ, կազմակերպւած էին նաև 4 միաձաչն խմբեր, իւրաքանչիւր կիրակի եկեղեցիներում երգելու: Այս տարի երգեցիկ խմբի աշակերտների համար կարուեցան շապիկներ, և դրանով վերջ դրուեց այդ առիթով եկեղեցիների տիրացուների և լուսարարների հետ ունեցած տարաձայնութիւններին:

Այս ուսումնական տարուաչ ընթացքում երգեցիկ խմբի անունով նւէր է ստացւած 130 ռուբլի: Անցեալ ուսումնական տարուաչ ընթացքում ստացւածի հետ՝ 195 ռուբլի: Այդ գումարով մանկ. ժող. որոշմամբ 24 աշակերտի համար ձեռք են բերւած հագուստ, կոշիկ և դասարանական պիտույքներ:

Դեռ անցեալ ուսումնական տարուաչ տարեկան հաշուում չաչտե՛ն էինք որ դպրոցում երգեցողութիւնը կանոնաւորելու համար անհրաժեշտ է ունենալ Ֆիսգարմոնի: Պր. Ս. Դէմուրեանցը, երգեցիկ խմբի և մի քանի ազնիւ տիկիներն և պարոնների մասնակցութեամբ տեց մի կոնցերտ, որից ստացւած գումարով և ձեռք բերուեց հարկաւոր երաժշտական գործիքը:

Ներկաչ ուսումնական տարում մեր դպրոցի աչս 3 ըդ հասարակական հանդէսն է, որին պատուում Շուշաչ հաչ հասարակութիւնը իր ներկաչութեամբ. առաջինը Վեհափառ կաթողիկոսի օծման երեկոյեան (սեպտ. 26) կատարւած շքեղ հանդէսն էր, երկրորդ պ. Ն. Խանդամիրեանցի թատրոնական դաչլիճում չունւարի 2-ին կաչացած աշակերտներ զրական-երաժշտական առաւօտը և վերջինը աչս տարեկան հաչեւտու:

Թեան հանդէսը: Մենք կը ցանկալինք որ հասարակութիւնը լոկ լուսականատեսի դեր չկատարէր, այլ ներգործական ազդեցութիւն ունենար դպրոցի բարեկարգութեան գործում, ինչպէս չիչեցինք և անցեալ տարի: Այն հռչակը որ այլ տեղերում ունի Ղար. թեմական դպրոցը իւր ընդարձակ կալածանքով՝ գիտէք որ անհիմն է, որովհետեւ և ոչ մի կոպէկ չի ստանում դպրոցը այդ լաւնաժառ կալածանքից, որ օրնց եթէ ամեն մի դեռնատիւնը 1 ռ. եկամուտ տար՝ մեր դպրոցի բիւջէն տասնապատիկ աւելի կը լինէր...

Տեսուչ դպրոցի՝ ԼԵՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ

?

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

## ԱՐՅԵՍՏԱԻՈՐԱՑ „ՄՈՒՐՃ“ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Պ ա յ մ ա ն ա թ ու ղ թ)

Թիֆլիսի մի խումբ կրթած արհեստաւորներ, մտածելով իրանց դասակարգի նիւթական և բարոյական շահերի վրայ, չդացել են մի օգտակար և գեղեցիկ միտք՝ իրանց սեփական ինաչողութիւններով դրամագլուխ կազմել և դորանով արհեստանոցներ բաց անել, ղեկավարելով մի անպիսի ներքին կանոնադրութիւնով, որը, ներկայ հանգամանքների մէջ, ամենից լաւ կարող է համապատասխանել իրանց արհեստների և դասակարգի բարոյական շահերին: Մեր նպատակն է հրատարակելով ներկա պալմանաթուղթը, հրուիրել արհեստաւորների ընդհանրութեան ուշադրութիւնը: Մենք առիթ կ'ուենանք խօսելու այդ մասին:

ԽՄԲ.

### I

§ 1. Ընկերութիւնը կազմուած է արհեստաւոր ընկերներից, որոնք կը մասնակցեն երկու հարիւր (200) ուսւրուց ոչ պակաս պալով:

Մ ա ն օ թ ու թ իւ լ ն: Վործի սկզբում չխաւն (50) ուսւրուց ոչ պակասով մասնակցողը կը հաշոււի և կը մնաչ առ միշտ ձաչնաւոր անդամ:

§ 2. Նրք դրամագլուխը կը հասնի 12,000—15,000 ուսւրու, Ընկերութիւնը սկսում է իւր գործունէութիւնը: Մ ա ն օ թ ու թ. Վրամագլխի 12,000 ուսւր. հասնելուն պէս ընդհանուր ժողովը ձաչների բազմութեաւր վճուում է կամ սկսել գործը, կամ ոպասել միւնչև 15,000 ու. գուանալը:

§ 3. Ընկերութիւնը պիտի ուեննայ իւր արհեստանոցը կամ արհեստանոցները Թիֆլիսում կամ այլ սեղերում: ապա արհեստաւորների, բանւորների և այլ ծաւաւորների բնակարաններ՝ կառուցած ընկերութեան սեպհական հողի վրայ: Արհեստանոցներ բաց անելու, հող գնելու, շինութիւններ կառուցանելու խնդիրները առաջարկւում են վալչութեան միջոցով և վճուում են ընդհանուր ժողովներում. այդ խնդիրների մասին

վարչութիւնը պէտք է անդամներին՝ զրաւոր կերպով խմացնէ ժողովից երեք ամիս առաջ:

§ 4. Ընդհանուր ժողովներում չարուցանելի ալլ խնդիրները նույնպէս նախ պէտք է չարանեն վարչութեանը, որը սակաջն գոցա համար հրաւիրում է ընդհանուր ժողովներ, մի ամիս առաջ զրաւոր չարանելով անդամներին պարապմունքի առարկաները: Ընդհանուր ժողովի նիստը համարում է վաւերական, եթէ ներկայ են թիֆլիսում գտնուող անդամների թւից ոչ պակաս քան քաւորը: Խնդիրները վճուում են ձաջների առաւելութեամբ, չաւելով նաև բացակաների զրաւոր կերպով ուղարկած ձաջները: Աչս կանոնը մնում է անփոփոխ § 3-ում վիշած առարկաների համար. իսկ ալլ ընթացիկ խնդիրների համար եթէ առաջին ժողովը չկաւացաւ վիշած ձևով, երկու շաբաթից չետոջ հրաւիրում է նոյնը, որի վաւերականութեան համար պաշանջւում է բոլոր անդամների մի ութերորդի ներկաւութիւնը: Իսկ եթէ ալլ ես չաւջողեց, երրորդ անգամ հրաւիրում է ժողով մի շաբաթից չետոջ, որ վաւերական է որքան թւով որ ներկայ լինեն:

§ 5. Ընկերութեան գործերը կառավարում է վարչութիւնը, բաղկացած 5-ից ոչ պակաս անդամներից, որ ընտրում է ընդհանուր ժողովի չատուկ նիստում:

§ 6. Վարչութիւնը ընտրում է արհեստաւորների կառավարչին և նշանակում նրան ութիկ, հաստատութեամբ ընդհանուր ժողովի. իսկ ալլ պաշտօնատար անձերին թէ ընտրում է և թէ նշանակում է նոցա ութիկները վարչութիւնը աւանց հաստատութեան ընդհանուր ժողովի: Կառավարիչը և ալլ ծառաւորները կարող են լինել և ոչ անդամներից:

§ 7. Վարչութեան անդամները զուտ արգիւնքից ստանում են մաս, վարձատրութիւն, կամ եթէ հարկւոր դատւի՝ նաև ութիկ:

§ 8. Ընկերութեան գործերում աշխատաւոր անձն իւր ստուգած ութիկից պարտաւոր է խնաւել 10% մինչև 200 ո. խնաւելը, և ալլ կամանակամիջոցում նա ստանում է իւր խնաւածի արքունական բանկի տոկսը նախընթաց տարիների խնաւածի համար և համարում է անդամութեան թեկնածու. խնաւողութիւնը 200 ո. համեկուն պէս, աշխատաւորը ընդունում է անդամ ձաջով և դիւրիղէնդով. իսկ միանալ 200 ո. վճարողները ձաջաւոր անգամ են դաւճում միաջն ընդհանուր ժողովի ընտրութեամբ, ներկաների և զրաւոր սւած ձաջների 2/3-ով: Աշխատաւորները աջունհասե շարունակում են խնաւել չօգուտ ընկերութեան փոխատու-խնաւողական զանձարանի, որի կանոնադրութիւնը կը մշակւի արհեստանոց բաց անելուց չետոջ, իսկ եթէ աշխատաւորը մինչ 200 ո. խնաւելը արձակւի արհեստանոցից, նա ետ է ստանում իւր խնաւածը:

§ 9. Զուտ արգիւնքից հանում է 5% ընկերութեան պահեստի զրամալիս համար և 5% չօգուտ վարչութեան անդամների:

§ 10. Չուտ արդիւնքը բաժանուում է ալապէս. նախ հանուում է § 9 վիշաճ տոկոսները և մնացածը բաժանուում է իւրաքանչիւրի ունեցած դրամա գլխի համաչափութեամբ. ապա մի տարւաչ անդամների դիւրիզէնդի հաշւից հանուում է նոյն նպատակով (չօգուտ 5 տարւանից աւելի եղող անդամների)  $8\%$ , երեք տարւաչ անդամների դիւրիզէնդից՝  $4\%$ , չորս տարւաչ անդամների դիւրիզէնդից՝  $2\%$ :

§ 11. Վնասին մասնակցում են բոլոր արդամները՝ իւրաքանչիւրը իւր դրամագլխի չափով:

§ 12. Անդամը կարող է հրաժարւել անդամութիւնից, պահանջելով ընկերութիւնից իւր ունեցած դրամագլխի բաժնի  $\frac{3}{4}$ -ը պահանջած օրից վեց ամիս վետոյ, մնացած  $\frac{1}{4}$ -ը չափանած օրից երկու տարի վետոյ: Իսկ եթէ ընկերութիւնը ինքը հեռացնելու լինի մէկին անդամութիւնից, ալդ դէպքում հեռացրածին տրւում է նրան հասնելիք գումարը առանց վետաձգելու:

§ 13. Ընկերութիւնը կարող է ունենալ ձիւղեր, որոնց չարաբերութիւնները կենդրոնի հետ կ'որոշւեն ընդհանուր ժողովների վճիռների համեմատ:

## II

§ 14. Ընկերութիւնը իւր տները շինում է արհեստաւորների և նոցա ընտանիքների պահանջների համեմատ պլանով, հոգս քաշելով, որ նոքա համապատասխանեն սոսոկչապահական և մի որոշ չափով բարեկեցութեան պայմաններին:

§ 15. Ընկերութեան բնակարանները ծառայում են միմիայն արհեստանոցում աշխատողներին, որոնք գորա համար բնակարանի վարձ են վճարում ընկերութեան: Բնակարանների անրաւարար թւի դէպքում գերադասութիւն տրւում է՝ 1. հին՝ նորի առաջ, եթէ այլ պայմանները հաւասար են, 2. ամուսնացածներին՝ ոչ ամուսնացածների առաջ, 3. ընտանիքաւորներին՝ ոչ ընտանիքաւորների առաջ. այլ դէպքերում վճռում է վարչութիւնը:

§ 16. Բնակարանների վարձը որոշում է վարչութիւնը, խտրութիւն դնելով անդամի և ոչ անդամի մէջ, առաջնին վարձու տալով աւելի էժան գնով և աւելի զիջումներ անելով՝ ստացած ուժկի համեմատ աւելի ծանրաբեռնաձ անդամներին:

§ 17. Կահկարասիքը ձեռք է բերում բնակողը, իբր իւր սեպհականութիւն:

§ 18. Ընկերութիւնը հոգս է քաշում վառելիքի և լուսատրութեան նիւթերը աժան ձեռք բերելու մասին:

§ 19. Ընկերութեան շինութիւններում բնակւողները ենթարկւում են

ան կանոններին, որ ընկերութիւնը կ'որոշի բնակարանները մաքուր պահելու մասին:

§ 20. Ընկերութիւնը, ընդհանուր ժողովի որոշմամբ, պիտի ունենայ տպւած կանոնադրութիւն արհեստանոցներում բանողների համար, վերաբերեալ կարգապահութեան, աշխատանքի տեղութեան և այլն, և փոխադարձ չարաբերութիւններին վարչութեան հետ, ղեկավարելով արհեստանոցների բարեկեցութեան տեսակէտով, որքան աչք միայն հնարաւոր է արհեստանոցի կանոնաւոր և անփնաս գործունէութեան համար:

§ 21. Ընկերութիւնը պարտաւոր է իւր արհեստանոցներում աշխատողներին տպահովացնել ղժբաղղ ղէպլքերի ղէմ Խուսատանում թուլատրած որ և է ապահովացման ընկերութեան մէջ:

§ 22. Իւր անդամների և աշխատողների բժշկական խնամք տանելու համար ընկերութիւնը հոգս է քաշում որպէս չարմար կը դատի:

Փանօթ. Արհեստանոցներում ընդունուում են աշխատաւորներ արհեստանոցի անտեսակաւ պահանջի համեմատ:

§ 23. Ընկերութիւնը հիմնում է էժանագին ճաշ սրահներ և ընթերցարան-գրադարան իւր անդամների համար, թուլտուութեամբ պատշտճաւոր իշխանութեան:

§ 24. Ներկայ կանոնադրութեան լրացուցիչ կէտերը կ'որոշեն ընկերութեան կանոնաւոր ընդհանուր ժողովների վճիռների համաձայն, չարմարելով ներկայ կանոնադրութեան ոգուն:

### III

#### ԳՐԱՄԱԳՂԽԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

§ 25. Մասնակցիւ ցանկացողը ստորագրում է ներկայ պայմանագրին:

§ 26. Ստորագրողը որոշում է ամսական վճարը, մի և ոչ պակաս:

§ 27. Մասնակցողը պարտաւոր է որոշած ամսականը պահ տալ պետական խնադրական ֆանճարանին ընկերութեան գանձապահի միջոցով, որի մօտ կը գտնեն խնադրական գրքովները, ստանալով վերջինիցս անգորրագիր: Տարին լրանալով՝ ընդհանուր ժողովը վճռում է չվճարած անդամների մասին՝ համարել նոցա անդամ թէ ոչ:

§ 28. Ժողովը ընտրում է մի մի տարով մի մասնաժողով 5 հոգուց բաղկացած — նախագահ, գանձապահ և երեք ալ անդամներ: Մասնաժողովի պարտականութիւններն են՝ հարկաւոր եղած ժամանակ ժողովներ հրաւիրել, գանձապահի մօտ եղած գրքովները վերատուգել, թղթակից անդամներ գտնել, նոցա հետ չարաբերութիւններ ունենալ, նոր մասնակցողներին ընդունել և նոցա ծանօթացնել գործի հետ: Նախագահի մօտ են գտնուում ստորագրութիւնների թուղթը և գործին վերաբերեալ ալ

թղթերը: Մասնաժողովը պէտք է գումարւի ամիսը ոչ պակաս քան մի անգամ:

§ 29. Մասնաժողովը ընտրուում է ամեն տարի յունւարի 15-ին ստորագրած անձերի ժողովում, ձաջների առաւելութեամբ. առաջին տարին ընտրութիւնը լինում է առաջին կազացած ժողովում ոչ նւազ քան տասը ստորագրողների մասնակցութեամբ:

§ 30. Գործին վերաբերեալ ընթացիկ մանր ծախսերը հոգացուում են ստորագրողների առանձին վճարներով, որոնք կը գրւեն մատենաներում ամեն մէկի հաշւի առանձին, իբր պահանջելիք ընկերութիւնից:

## IV

## ԼՈՒԾՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

§ 31. Ընկերութիւնը լուծուում է բոլոր ընկերակիցների երեք քառորդի ( $\frac{3}{4}$ ) պահանջմամբ, արտաչալուած կանոնաւոր ժողովում:

§ 32. Ընկերութեան լուծելովը՝ նորա ունեցած շարժական և անշարժ կալքը բաժանուում է ընկերների մէջ՝ իւրաքանչիւրի ունեցած մասի համապատասխան: Անշարժ կալքը աչլ նպատակով վաճառուում է ընդհանուր ժողովում որոշած ձեով:

§ 33. Պահեստի գրամագլուխը չի բաժանուում, աչլ չատկացուում է մի գործի, սր մօտ է արհեստաւոր դասակարգի շահերին, որոշմամբ ընդհանուր ժողովի:

§ 34. Ներկաչ կանոնադրութեան որ և է կէտի փոփոխութեան համար պահանջուում է բոլոր անդամների երեք քառորդի ( $\frac{3}{4}$ ) համաձայնութիւնը:

§ 35. Աչ պալմանաթուղթը կը հաստատուի նօտարական կարգով կամ կառավարութեան ձեռքով, երբ ընկերութեանը մասնակցողների խնայողութիւնները հասած կը լինեն 12,000—15,000 ուլբլու գրամագլխին:

# ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՅԻ

## I

Լոնդոն. 2 սեպտ. 1894 թ.

Կարելով Ֆրանսիան, մտնում էի Անգլիա: Մեծ կղզիներ, անցնելուց առաջ կ'ուզեմալի քիչ գոնէ ուսումնասիրել Ֆրանսիան, բայց երկաթուղին շատ շուտ էր սլանուում-անցնում նրա քաղաքներից և ես ոչինչ չկարողացաւ աննել, բացի այն, որ ամալի-անմշակ հողեր շատ կալին, որ մեծ քանակութեամբ կրօնաւորներ վիստում են երկրի ամեն ուղղութեամբ և որ մուրացիկները արտօնւած են ձեռք պարզելու: Այլ երեք երևութիւնքը բնորոշում են Ֆրանսիան: Մոռացաւ երկու բան ևս վիշելու, Ֆրանսացու այն վերին աստիճանի նուրբ պարսկական ձևերը, որոնք կոչւում են իրանց մէջ «քաղաքավարութիւն» և Ֆրանսուհու հագնելու մասին ունեցած սքանչելի ընդունակութեան ու ճաշակը: Եթէ Ֆրանսուհին ունի մի լաւ բան, որով կարող է պարծենալ, դա հէնց սղղպէս վաղելուչ հագնելու, իր ձևերով, ժպիտով, զւարթութեամբ ու սրամտութեամբ հմայելու չտակութիւնն է: Մի քանի պարզ չթեղէն կտորներով, մի երկու ծոպով նա այնպէս սիրուն հագուստ կը սարքի, որ պերճասէր անգլուհին իր մեծ փողովը և միմեանց վրայ անմիտ կերպով կուտակւած թանգագին կտորներովն ու զարդերովը չէ կարող նրա կէսի չափ իսկ ունենալ: Եր խօսակցութեան, ժպտի և շարժւածքների մէջ Ֆրանսուհին գիտէ զմեկ այնպիսի զբաւիչ ձևեր, այնպիսի թովիչ կերպեր, որ չեմ կարծում թէ ուրիշ մի ազգի կին կարողանալ դրա քառորդի չափն անգամ անել, լինի նա հրեշտակի պէս գեղեցիկ կամ սիրուն:

Բայց ահա համնում ենք մշուշի երկրին: Ֆրանսիան—զուտ Ֆրանսիան—եւ միայն, սկսում են քիչ աւելի լուրջ, ոչ-ժպտող, զբաղւած, քիչ

էլ երկարաւուն դէմքեր: Երկիրը ծածկւած է մշուշով: Մտնում ենք Բուլղին և քիչ վտուղ Գալէից պիտի շոգենաւ նստենք Դուււրը դնալու համար: Անդլիալում եղած ուտելիաց թանդութիւնը սպտեղից իսկ սկսում է: Մի գաւաթ սուրճի համար Բէլնում ինձնից առին մէկ Ֆրանկ, իսկ Քալէում, մի բարակ կտոր եղան մսի և մի գաւաթ գինու համար ստիպւած եղաւ վճարել բուֆէտում 3 Ֆրանկ փող: Կատարելապէս կողոպտում են, որովհետև անդլիացիներն և մանաւանդ ամերիկացիները վճարում են առանց առարկութեան, սովոր լինելով, իրանց երկրի անուելի թանգութիւնը աչքի առջև ունենալով, աչտեղի եղածը շատ էժան համարել:

Քալէ հասնելիս՝ օդը պարզեց. նեղուցի ջրերը բարեբաղդաբար շատ հանդիստ էին: Յիւրիխից սկսած ինձ վախեցրել էին ալդ նեղուցից, ասելով որ նրա ջրերը աչնպէս կատաղի հակառակ հոտանքներով կտրում են միմեանց, որ շոգանաւելը շուրջի պէս օրօրում է: Այլ ևս, որ ծովը չեմ սիրում (սրովհետև ինձ վատ եմ զգում նրա վրայ) պլան էի կազմում թէ ինչպէս շոգենաւ նստելուս պէս կը պառկեմ, որպէս զի չբռնեմ: Մի երկար խօսակցութիւն էլ սկսել էր վագոնի մէջ. բարեկամս գիտել էր որ մինչև այժմ չպատնի չէր թէ ծովը օրագնիզմի որ մասի վրայ է սղողում իր ալեկոծութիւնը և որ հաւանական էր որ փոքր ուղեղի վրայ, որը շարժողութեան կետրոնն է. մի քանիսններն էլ պնդում էին թէ հիւանդութիւնը չառաջանում է ստամոքսի շարժելուց: Մի ուրիշը իբր խրատ լած լինելով ծեր ծովագնացից, պատւիրում էր ոչ թէ պառկել, ալ ուղիղ նստել և մէջքը ոչ մի բանի չկռթնեցնել, որպէս զի ողնուղեղը չգրգուէր: Եւ էլ գիտեցի որ լիտն ծծելը ինձ շատ օգնել է, նույնպէս և լաւ ուտելը:

Այսպէս անագին խրատներով պատրաստւած՝ հանում ենք Քալէ. արև է և սքանչելի եղանակ. բաց դեռ ծովը—նեղուցը չէ երևում, շոգենաւը մտել է ջրանցքի մէջ և կանգնել է կաշարանի կողքին: Այս մի լաւ ուտելու մտադրութեամբ մտնում եմ բուֆէտը, 3 Ֆրանկ վճարում և քաղցած զուրս գալիս ու վագում շոգենաւը: Ահա և նեղուցը, ամենքս սրտատրոփ ենք և ինչ... անցնում ենք նեղուցը առանց իսկ շարժողութեան, շոգենաւը սլանում է բոլորովին խաղաղ ջրերի վրայից ու մենք խօսակցելով ու ծիծաղելով Դուււրը ենք մտնում, ուր միայն մի քանի լուպէ կանգ առինք և սլացանք դէպի Լոնդոն:

Ակսած Բուլղինից, նոյն իսկ Բէլնից, ամբողջ գնացքը լիքն էր անդլիացիներով. հազիւ մի երկու հատ Ֆրանսիացիներ երևացին կամ ոչ: Ալդ անդլիացիները վերադառնում էին Շվէյցարիալից և Ֆրանսիալից, ուր նրանք գնացել էին լեռներում պտուղ գործելու: Մեծ մասամբ ունէին քաջ արած իրանց կողքից փոքրիկ լուսանկարչական ապարատներ. շատ կանաչք իրանց հետ էին կրում խոհանոց-արկղեր, իսկ շատ ուրիշ տղա-

մարդիկ այնպէս զինւած էին սրածալք դաւաղաններով ու չաճաներով, ակնոցներով, դիտակներով ու կոշիկներով, որ ակամայ Գօղէի Տարասկոնցի Տարտարէնն էի վիշում իր՝ Աւպերի վրայ արած ժամանակաց սպառազինութիւնը: Ապին այդտեղ շատ տարօրինակ դէմքեր, շէկ, կապոյտ աչքեր, մեծ մատամբ կատարեալ սպիտակ—չատ ախորժելի գոշնով, վերեւ ծնոտը առաջ պարզած, կիսաերկար գլուխ և ուղղահայեաց սեմի—դոլիկոսեֆալ: Սառը աչքեր, սրոնք արտապատում էին նրանց արամաբանական—պրակտիկական ոգին: Գերմանական ցեղը, ինչպէս և անգլօ սաքսոնը, որ այժմ աշխարհիս ամենաքաղաքակրթւած ցեղն է համարում, մեզ՝ արևելքոցոս նման ոչ թէ գերի է իր զգայմունքների բռնութեանը, այլ նրա տէրն է և իր խելքի (raison) արամաբանութեանը հետևող: Մենք արևելցիքս (եթէ կուզէք) բոլոր տաք կլիմայի մէջ ապրող ցեղերը) աւելի զգում ենք քան տրամաբանում, դրա համար էլ մեր մէջ շատ հազիւ են դանդում խորաթափանց ոգով անձեր, սրոնք, զբաղնակրանութիւնից ազատ, կարող լինէին լրջութեամբ ու արամաբանօրէն դասել երևութը կամ իրը: ամեն ինչ մակերևութական կերպարանք է առնում ալպիսով և սխալներից սխալ ընթանալով մեծապէս ետ ենք մնում միւս ազգերից: Մինչ մենք աչսօր երեկուս սխալն ենք ուղղել աշխատում, անգլիացիին երէկ լուս և խոր մտածած լինելով, աչսօր մի գործ է կատարում: Մենք շտապում ենք, շուտ գործում, գործին թեթև վերաբերում և սխալ գործում, իսկ անգլիացին դանդաղ է գործում, սակալն գործածը լաւ է: Աչք դանդաճութեան պատճառները կարելի է փնտռել ֆիզիոլոգիական պատմանների մէջ. սա սոցիոլոգիական մի իւր հարց է, որը արժէ առանձնապէս ուսումնասիրել:

Բաց ևս աչստեղ, երբ խօսում եմ անգլիացու մասին, չեմ կարող չլինել գերմանացի բանաստեղծ Հէլնէլի խօսքերը այդ ազգի և նրա բնաւորութեան մասին:

Աչք խօսքերը շատ սրամիտ են, թէև զուրկ չեն մի տեսակ, միալն Փրանսիացուն չատուկ—օտարատեցութիւնից: Խօսելով անգլիական լեզուի մասին, նա ասում է.

«Աչք մարդիկ բերանն են առնում մի դիւժինաչափ միալանկ բառեր, ծամում են, ծախում և վերջապէս դուրս են թքում և զբան էլ «խօսել» անուանում. բարեբազմաբար լուսիեաց են և ձեղ վրայ են նալում բերանարաց ու ալպիսով էլ ազատում ձեղ երկար խօսակցութիւններից. բայց վաչ նրան ով կ'ընկնի Ալբիոնի մի ալնպիսի որդու ճանկը, որը երկար ճանապարհորդութիւն է արել և ցամաքում սովորել է ֆրանսերէն խօսել: Աչք տեսակ անգլիացին, ինչ որ էլ լինի, կ'ուզենալ սովրածը քիչ վարժութիւն անել և ձեղ վրայ հարցերի մի հեղեղ կը տեղալ. դեռ մէկին չպատասխանած, միւսը վրայ կը տալ»...

Ճշմարիտ անբան տրամադիր եմ Հէնէի այս խօսքերը լիովին ճիշդ գտնել, որ քիչ է մնում բանաստեղծի մասին վերը ասած խօսքերս եւ առնեմ: Անգլիական լեզուն ճիշդ աչգլխի տպաւորութիւն է թողնում. թուում է որ եթէ թքեա ու շացնես—գա կը լինի անգլիերէն: Ար լու- կեաց են—աչգ լիովին ճիշդ է. որ ֆրանսերէն մի քիչ զիացողը զահլեղ կը տաքնի, դրան էլ խօսք չունի, իսկ անգլուհու մասին Հէնէի հիացումը եւ դեռ մինչեւ այժմ չեմ բաժանում, որովհետեւ երեք օր է որ Լոնդոն եմ ե՛ դեռ երեք հաս սիրուն անգլուհիներ շտեալ, թէև նրանք Հէնէի ասածի պէս սպիտակ—ախորժելի գոյն ունին. բայց երբ որովհետեւ այժմ Լոնդոնի մեռեալ սեղոնն է—սիրուն անգլուհիները ամառանոցներունն են գտնուում, ուրեմն եւ բազմ չեմ ունենալ տեսնելու: Անգլուհին, այր, կա- տարեալ սպիտակադէմ է, խիստ նուրբ եւ փափուկ մարմնի եւ դէմքի գծե- լով, գորշ սեթեկեթ մազեր, որոնց նա գունդ է անում ծոծրակի վրայ, չմուսնալով—գունդը մեծ ցուց տալու համար—քիչ բամբակ խոթել նրանց մէջ եւ մազերը վրայ կձկելը: Վեղեցիկը—հմայիչ զեղեցիկ է, հիա- ցնող է եւ թափիչ, աղեղն էլ—Աստուած իմ—չէի կամենալ որ թշնամիս հանդիպէր մի տղեղ անգլուհու, որի պրոֆիլը ոչնչով չէ զանազանում գորիւ կապիկի պրոֆիլից. աչգլխի տղեղ հարուհիներ կեանքուն երկու հաս եմ միայն տեսել. մէկը թիֆլիսում, իսկ միւսը Կարսում:

Գուերից սկսած մենք ճանապարհորդում ենք ասփարակի վրայ, ուր սակաչն—երեկ ցուց տալու համար որ Անգլիացունն էլ տունել կալ—չին- ւած կան 5—6 երկար առնելներ, փորած հարթ զաշաի մէջ, ուր իջնում է եւ լետու բարձրանում գնացքը: Երկու կողմում փուած մշակած դաշտերը մեծ մասամբ ծածկւած hops կոչող բուսով <sup>1)</sup>, տեղ-տեղ երեսում են պողատու. ծառեր էլ եւ ուրիշ բանջարանոցներ, բայց մեծ մասամբ hops բուսն է: Վեղին եւ կարմիր ազլխից տները, սիրուն եւ մաքուր, երեսում են ամեն կողմ:

Անգլիական լուսկեցութիւնը երեսում է ամեն տեղ. երկաթուղին, որ- քան կարող է, աւելի քիչ է շացնում. նրա անիւների զուգուոյն ու զըն- ցումը աւելի մեղմացած են. կոնդուկտորները ոչ ճրճուում են եւ ոչ էլ գողգողում. ամեն ինչ միմիայն ձեռքերի շարժումներով եւ սուր բարակ սուլուհներով է կատարում: Գուերից մի ժամ լետու սկսեցին երեխ Լոն- դոնի տները: Ալլանդակ տպաւորութիւն են թողնում աչգ շարքով եւ լի- ովին միատեսակ շինած տների բազմութիւնը, իրանց միաձև եւ միազոյն տանիքներով, որոնց վրայ վեց առ վեց կամ տաս առ տաս, միմեանց ետեից կարգով շարւած զինւորների պէս, հաւասար հեռաւորութեան վրայ, երեսում են ծխնելուղի տեղ ծառաչող սպիտակ եփւած հողէ խողովակները — եւ աչգ՝ մի ահագին տարածութեան վրայ, միատեսակ եւ միազոյն: Տները

<sup>1)</sup> Աչգ բուսը ծառաւում է գարեջրի պատրաստութեան մէջ (XMBAB):

բոլորն էլ աղիւսաչէն են, սակաջն ինչպէս որ ասացի, բոլորն էլ ծխից սեպցած:

Քանի մտնեալ եմք քաղաքին և մտնում նրա մէջ, աչքան մշուշը և ծուխը սաստկանում—բարձրանում է. ատմտօֆէրը միայն ծուխով է լիքը, շրջապատը կապարագոն և չաճախ էլ հացագոն լոյսով ողողած է, արևն է երևում հեռու մշուշի խորքում, միայն ճիշդ և ճիշդ հուանդական մի մեծ կտոր կարմիր պանիրի և երբեմն էլ մի մեծ խնձորի կարմրութեամբ: Եզանակը ճնշիչ է: Հեռու, հազիւ ուրեմն նշմարում են քաղաքի բարձր շէնքերի ծալերը: Ահա և Թեմզալի կամուրջները, որոնց մէկի վրայից է սլանում երկաթուղին: Մենք մտնում ենք Ղոնդանի ծոցը: Ծուխը ամեն ինչ սեպցրել է, շպէտք է ձեռք տալ ոչ մի առարկայ. Բագլի Ան քաղաքի պէս ամեն ինչ մրտա է: Գործարանների ծուխը, խառնուած մշուշի հետ, փողոցներն իսկ անտեսանելի է դարձնում: Մի խուլ, լարասե աղմուկ, որ դուրս է վիժում մշուշի միջից, հազարաւոր քանակութեամբ և անընդհատ գլուխը օմնիրուսների և կառքերի արդիւնքն է. այդ ձայնը մեզ հասնում է անզգար հոտոց մի շառաչուն հեղեղիպէս:

Մենք մտնում են Չէրինգ Գրոսի (Charing-gross) կալարանը և խոկոն էլ նրա հիւրանոցը, ուր մեզնից, մի գիշերաչ և մի սենեակի համար, 4 ուսուցիչ պահաս չեն ուզում առնել. այն էլ միայն չորրորդ չարկում:

Վառում եմ սենեակիս և էքքորական ճրագը—մութն էր դրսում—և լուսամտախից ցած ևս նայում:

Գիշեր է, մշուշով աւելի մթնացած գիշեր. կառքերի դղրղիւնը խլացնում է ամեն ձայն. մի ահագին, վիթխարի կենդանութիւն է երևում փողոցներում. ամեն կողմ խիստ լուսերով լուսաւորւած է. տները պատերը տակից մինչև վեր կրում են բեկլամներ ամեն տեսակ տառերով և ամեն ուղղութեամբ. և լեքտրական ճրագները ի ցոյց են հանում հոկալական մագաղկների սպրանքները, որոնց վրայ ուշադրութիւն հրաւիրելու համար, մտածւած են ամեն տեսակ, չաճախ խիստ ալանդակ միջոցներ—մեծամեծ զանգակներ, որոնք սակաջն չեն ձայնում. հոկալ լապտերներ, խոշոր ոսկեզօծ տառեր <sup>1)</sup>... Հազիւ ուրեմն լսում են հաս հաս ձայներ: Երևում են ոտտրկանների անզլիական մեծ գլխարկներ, երբեմն զինւորներ՝ իրանց կարմիր—զարդարուն բաճկոնակներով:

Օմնիրուսները սկսել էին իրանց անց ու դարձը, երբ միւս առաւօտ

<sup>1)</sup> Յալտարարողների մէջ նշանաւոր է սապրնի Պէրս (Pears) գործարանը, որ աշխարհի ամեն կողմում լղանում է ամեն տեսակ միջոցներ. չալտարարելու համար իր սապրնը. Ղոնդոնում ոչ մի քաղ չես կարող առնել առանց այդ գործարանի լալտարարութեանը հանդիպելու սուրից տակ, գլխից փրկել, աջ ձախ կողմերից, լապտերների վրայ... ամեն տեղ, մինչև իսկ արտաքնոցի ամենախուլ անկիւնում:

մենք փողոց ելանք: Նրանց կարգ ու կանոնով վարմունքը առաջին հա-  
ջեացքով իսկ նկատուում է: Սրանք միշտ դէպի ձախ գնալով՝ կազմում են  
փողոցի մէջ երկու կողքից երկու շարք, որոնց մէջտեղում անցնում են  
կամ կանգնած են կառքերը:

Օմնիրուս օմնիրուսի ետևից, անընդհատ, ցլրկի միջի ձիերի ընթաց-  
քի պէս՝ անցնում են նրանք միմեանց կպած, կրելով իրանց տանիքների  
վրա կարծես մի մեծ արկղով մարդկալին խմբեր. և աչք մեծ ընթացքը  
կառավարում է ցածում կանգնող սև հագուստով ոտտիկանը ձեռքերի շար-  
ժումներով: Նա մի շարժումով կանգնեցնում է ընթացքը, միջոց է սալիս  
մանուկներին և կանանց կամ ուրիշ անցորդներին՝ չընկնելու կառքերի տակ,  
կարգադրում է նեղ փողոցներից դուրս եկող կառքերի համար անցք և  
երբ ձեռքը ետ է քաշում, ընթացքը մի կորտէժի պէս շարունակում է  
նորն չտիով և չարատև:

Լոնդոնի փողոցներում ոտտիկանը ամեն ինչ է. նա շատ սակաւ է  
խօսում. միշտ լուրջ, ուշադրութիւնը անց ու գարծի վրա է, աչքերը  
ամեն կողմ. մի ձեռքով նա կառավարում է առջևից անցնող կառքերին,  
միւսով կանցնում ետևից եկողներին—եթէ պէտք է, և ամեն ինչ արա-  
գութեամբ հնազանդում է նրա շարժումներին. ոտտիկանին հնազանդելը  
աչքան գիտակցական է և աչքան իրաւացի, որ երբէք աչք պաշտօնեան  
չէ նկատում իբր շարիք կամ իբր պարազիտների պաշտպան: Նրան  
հնազանդում է ամեն ոք, չնայելով որ նա ոչ երկար սուր ունի ձախ  
կողքից և ոչ էլ մի լիքը բէտրէր՝ աջից: Նա լիովին անզէն է. նրա  
դէմքը բարութիւն է արտալատում: Քաղաքավարութեամբ ու պատրաս-  
տականութեամբ նրանք սալիս են ձեզ բոլոր պէտք եղած տեղեկութիւն-  
ները, ցոյց տալիս ձեր կամեցած տեղը գնացող օմնիրուսը, մինչև իսկ  
օդնում ձեզ նստելու... առանց բարկանալու, նիզարուելու և կամ հաջոյն  
լու: Միայն Օդեսոսալի մէջ տեսել եմ աչքալիսի ոտտիկաններ:

Մենք նստում ենք օմնիրուսի տանիքի վրա, որ երկրորդ չարին է  
կազմում և մի ցած պատերով մեծ արկղի է նմանում: Օդը ալպտեղ աւելի  
մաքուր է: Աչք արկղը միշտ լիքն է լինում, աչքպէս որ դուք տեսնում  
էք շարժուող երկու մարդկալին մեծ շարքեր, որոնք փալցում են կրթու-  
թեան գնացող զինուորների խմբերի պէս, ճիշտ քիչ վերևում՝ տների տա-  
նիքների լալ շարժած խողովակների գրութեամբ: Ամեն սուղ երևում է  
«միշտ դէպի ձախ» խօսքերը և օմնիրուսները միշտ դէպի ձախ են գնում՝  
առանց խառնելու միմեանց, միմեանց հետևից առանց իրաւունք ունե-  
նալու միմեանցից առաջ անցնելու. եթէ առջևից գնացող օմնիրուսը իբ-  
որոշեալ տեղը գեռ չի հասել, ոչ մէկը իրաւունք չունի փողոցի մի կողմից  
միւս կողմը անցնելու:

Մշուշը աւելի թանձրանում է. տեսարանը իսկապէս ֆանտաստի-

կական է: Հորիզոնի տեսքը, փողոցի պերագեկտիւրը ահա թէ ինչպէս է: Հսկալական շէնքերի գծագրութիւններ օդի մէջ, տեղ-տեղ վառուղ մեռե-  
լալին գողնով լուսեր. որոնք մի շատ նեղ շրջան են լուսաւորում. ցածից  
—մշուշի միջից դուրս են գալիս անընդհատ՝ փոքրիկ սփիներ, իսկ վերե-  
ւից վիթխարի ոգիները պէս օմնիբուսները, որոնք նմանում են մեծ ար-  
կղերի, մարդկալին խմբերով լիքը. աչք բոլորը մի կողմից դուրս են գա-  
լիս և միւս կողմից մտնում—անհետանում են խաւարի մէջ և ի լրումն  
ամենաչնի, այս տեսարանին իբր հանդիսատես՝ վերեւից երեցող լիովին  
արեւիգուն կտր արեւ իր կարծիր լուսով ցոլացնում է բարձր շէնքերի  
մի քանի ապակիներ... այս բոլորը ծածկւում է մի դեղնագուն—ալլանդակ  
լուսի ողորման մէջ:

Նայում ես եկող օմնիբուսների վրայ նստած անգլիացիները երկար  
սառ զէմքերին, որոնք խոր-պէս մտածում են: Կառավարը նախ, մաքուր  
է հագնւած, ցիլինդր գլխին. երբեմն աչքքան լաւ խմած, որ վերեւ փաշ-  
լող արեւից չի զանազանւում. աւելի ճիշդ կը լինի ասել, որ նրանից աւե-  
լի լաւ վարդազօն տեսք ունի: Նրանից վերեւ շարւած են, մեծ մասամբ  
սև հալած, մեծ մասամբ ցիլինդրներով՝ ջէնտըրմէններ և որովհետև դեռ  
առևտրական թաղերում ենք, կանաչք շատ քիչ են երևում: Բարեկամս  
ասում էր, որ կան փողոցներ, ուր մի կնոջ երեալը տարօրինակ կը թւի,  
ոչ թէ որովհետև ապահով փողոցներ չեն, այլ որովհետև զուտ գրասենե-  
կալին փողոցներ են, ուր կինը ոչ մի գործ չէ կարող ունենալ:

Փողոցները առհասարակ տախտակած են և կամ ասֆալտով միա-  
պաղպղ կոկած աճապէս, որ կառքերը ոչ ստակալի ցնցումներ են գործում  
և ոչ էլ խլացուցիչ աղմուկ հանում, որպէս լինում է Թիֆլիսում և կամ  
նոյն իսկ Ողեսասալում, ուր սր մարդ առանց աչիքները կտրտելու կամ  
ականջները խլացնելու չէ կարող մի ժամ մանգալ կառքով:

Կրկնում եմ, Անգլիան ոչ աղմկել է սիրում և ոչ էլ աղմուկ լսել.  
կառքերը անցնում են շատ քիչ աղմուկ և երբէք ցնցում գործելով. մար-  
դիկ երբէք չեն խօսակցում գողգողալով, ինչպէս մեզնում. այլ հանդար-  
տութեամբ ու մեղմութեամբ, հաղիւ երբեմն հնավաճառն ու լրագիր ծա-  
խողներն են, որոնք գոռում են և խառնում փողոցների հանդարտութիւնը:  
Յթէ օմնիբուսների ալլ հեղեղը չլինէր և մի կողմ մարդ անցնէր մի բազ-  
մամարդ փողոցից, անշուշտ կը կարծէր որ գիւղում է գտնւում:

Մշուշի մէջ առաջանում ենք. կառապանը, որ ոչ միայն խիստ քա-  
ղաքավարի է, այլ և սիրալիր, նկատելով որ մենք հետաքրքրւում ենք  
չէնքերով, ամեն մի նշանաւոր շէնքին հաննելու ժամանակ, դառնում է մեզ  
և բացադուրս նրանց ինչ լինելը:

Անցնում ենք Ս. Պողոսի մալր եկեղեցու կողքից. կառապանը գրտ-  
նում է որ վաղը, կիրակի, պիտի չատկապէս աչցելիլ այլ հսկալական

չէնքը: Ահա և կենտրոնական փոստը, որի մուտքը զարդարւած է գորիական կրկնակի սիւնազարդ մի գաւթիթով: Յետոյ գալիս են զանազան շէնքեր— շիւանդանոցներ, բանկեր և հսակ ուրեմն մենք իջնում ենք հոչակուոր Անգլիական բանկի շինութեան մօտ: Այդ շինութեան մէջն է, եթէ չեմ սխալուում, Օրբելեաների միլիոնները: Շէնքը կատարեալ ամբողջ է, քարեալ և ծխից սևացած, դրսից ոչ մի լուսամուտ չունի և դեռ վանդա կա յատ էլ է, տեղ տեղ էլ, ուր կարծնթական սիւները զարդարում են շէնքը, ցցւած են երկաթեալ սրածալր անուելի փշեր:

Մեզ թող են տալիս ներս մտնելու, անցնում ենք կորրիդորներից և աջ ու ձախ դանւող մեծ սրահների վրայ աչք ձգում: Անընդհատ հասող ջրերի պէս, արծաթեալ փողերի ձալն է համուում մեզ, մի մեծ սրահում փող են կշռում և համրում, մի ուրիշ սիւնեակ խորհրդատրասպէս լուսաստրւած՝ դրատենեակն է: Առսամուտները նալում են մի քանի ներքին բակերի վրայ և բանկի մուտքերը պահպանում են ստախաններ: Ներսում միշտ վառւում են ելեքարական ճրագները: Շուտ դուրս եկալ ազդ շէնքից, նրա տեսքը, փողերի ձալնը, լոյսերը, նրա մէջ դրադուող անձերի դժգոհն գէմքերը զլեւի ապաւորութիւն թողեցին վրաս, ինձ թւում էր թէ մարդկութիւնը իր ստորացման ամենազղզելի կեդրոնն է որ ունի այս պիսի տեղերում, թւում էր թէ հրական գձում հոտ է հանում քթիւ... Հեռացանք միւս դռնից և որովհետեւ բարեկամս գործ ունէր, մտանք մի մասնաւոր բանկ: Միւս մասնաւոր բանկերն էլ եկել մտել էին մեծ բանկի թեկերի տակը, որովհետեւ այդ թաղում ամեն կողմ բանկեր էին, որ երեւում էին <sup>1)</sup>:

Բանկերում, ինչպէս նաև առհասարակ ամեն տեղ, քաղաքավարութիւնը վերին աստիճանի է: Չեմ կարողանում ճանաչել իմ կանխաճանաչ անդլիացուն: Ես, որ օտար տեղ, մանաւանդ Պարսկաստանում և թիւրքաց Հալաստանում գործ եմ ունեցել չաճախ շատ անդլիացոց հետ և, Անգլիա մտնելիս, ըստ իմ կանխախալ կարծիքիս, սպասում էի տեսնել նորից նրանց կոպտութիւնն ու ամարդութիւնը, չանկարծ հանդիպում եմ լիովին սիրալիր վարմունքի, քաղցր-ժպտուն գէմքերի, պատրաստակամ քաղաքավալ ութեան և վերին աստիճանի բարեկամական կերպերի: Ոչ նրա խօսակցութիւնն է քեզ վիրաւորում իր լրբերն: Նպարս շեշտերով և ոչ էլ նրա շարժւածքները իրանց ամարդի, արհամարհող կերպերով: Այստեղ անդլիացին լիովին այլ է, ինչ որ տեսել էի Պարսկաստանում և թիւրքահալերի մէջ: Չէի զարմանալ եթէ ինձ ասէին որ այդ երկրներում այդպէս լիրբ, կոպիտ և ամարդի վարմունք ունեցող անդլիացիք իրանց երկրի մրուրներն են միալն:

<sup>1)</sup> Բանկերի քանակութիւնը անպին է Արմոնում:

Բանկերի թաղից չետոյ մտանք Շարլոթթ, սորիտ-բրիտանական միւզէի թաղը, որ բնակութեան թաղ է և ուր օմնիրուաներ երբէք չեն մտնում:

Ալտեղ, ինչպէս և բոլոր բնակութեան, թաղերում, տիրում է կատարեալ անդորրութիւն, որ երբեմն միմիայն խանգարում է փողոցից զլորւող հատ հատ կառքերի գոչնով: Տները ալտեղ եռաւարկ են և կամ շատ շատ՝ քառաւարկ. շինւած աղիւտից, որոնք դրսից քիչ սեպեցէ են: Ամենքն էլ ունին գետնապարկեր, որոնց լուսամուտների առջևը թողւած են վանդակներով պատապարւած բացւածքներ փողոցի կողմից: Տները միասեակ են, նոյն բարձրութիւն, նոյն չարկեր, նոյն քան լուսամուտներ և նոյն ձևերով, նոյնատեսակ մուտքեր, նոյն կերպի պատշգամներ... մի խօսքով և ոչ մի արտաքին գանազանութիւն: Ազգ չետոյ նկատեցի միւս բոլոր թաղերում էլ, լինէր նա աղքատ, լինէր արիստոկրատական թաղեր, ուր տների մուտքերը զարդարւած են կամ սիւնազարդ գաւիթներով և կամ առջևն ունին փոքրիկ գողարիկ ծաղիանոցներ. բոլորն էլ նոյն պարզ, քառակուսի շէնքեր, ոչ մի ճարտարապետութեան նշույլ չեն կրում իրանց վրայ, հասարակ շէնքեր, հասարակական հատատութիւններն են միայն որոնք նկատելի են իրանց մեծութեամբ ու ճարտարապետութեամբ: Աղիւսն է շէնքերի մեծ մասի նիւթը. օրինակ հէնց զեզին աղիւտից են շինած բրիտանական միւզէի ամբողջ շէնքի պատերը, բացի նախագաւթիթներից:

Յերեկը մի թիթև պտուտ գործելուց չետոյ առևտրական թաղերում, երեկոտան մտանք աւելի բազմամարդ, ալտէս ասած՝ ժողովրդեան թաղերը: Ազգ թաղերը նրանք են ուր կան փոքրիկ մաղաղիւններ, խանութներ և մասամբ կաֆէներ ու գարեջրատներ: Ինչպէս ցերեկը վերնագրերով, աջնպէս էլ զիշերը, գանազան գոչի և զանազան տեսակ աճազին քանակութեամբ լոտերով է որ խանութները գրաւում են զէպի իրանց բազմութեան: Փողոցի մի ծալրից ևթէ նաչելու լինենք, նրա անվերջ, երկար տարածութիւնը սղողւած կը գտնէք լոտերով, որոնք նմանում են անհամար լակիւսների: Ամեն կողմ, աջ ու ձախ, ամենից շատ խանութներն են իմելիքների տեղեր, որոնց վրայ անգաղար կտրում են «վիսկի» բառերը. որքան սիրում են ազգ խիտ և թիւնաւոր բծայելիքը. ինձ սասցին որ անգլուհիք մանաւանդ աչգ իմելիքի երկրպագուններն են:

Անց ու զարժը սաստիկ է ազգ փողոցներում. գործաւորները դուրս թախւած՝ գարեջրատուն են մտնում-ելնում և կամ զբաղիցրել են լաջն մալթերը. օմնիրուաները չաւտեան շարժւող դնացող միմեանց կպած երկու շարք օղերի պէս՝ հոտում են ցած և վեր. երբեմն լուում է փողոցի անկիւնում կանգնած նւագածունների կրած շտութիւնը և մանաւանդ աջն աճուելի փողոցային մուղիկան, որը ինչպէս Թիֆլիսում, աջնպէս էլ ալտեղ, կէօրից չետոյ մինչև երեկոյ՝ հարտահարում է մարդու լսողութիւնը:

Անցուղարժը անում է մինչև կէս գիշեր և գուցէ մինչև լուս, որովհետև վաղը կիւրակէ է և ինչպէս որ ասում են, անգլիական բարեպաշտութեան օրը, Լոնդոնի ամալութեան ժամանակը:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԳՐԻ ԱՌԻԹՈՎ

Քաղաքական աշխարհը այս վերջին երկու ամիսներում գլխա-  
որապէս կլանւած էր հայկական խնդրով, որի նորից չարուցանելու  
համար հարկաւոր էր Սասունի կոտորածի պէս մի սոսկալի անցք:  
Թէ ինչպէս վերաբերեց Եւրոպա դէպի խնդիրը՝ այդ մասին  
մեր ընթերցողները մանրամասն հաշիւ կը պոնեն ներկայ համարի  
ժամանակակից տեսութեան մէջ, ուր պատմութիւնը հասցրած է  
մինչ 17 դեկտեմբերի այժմեանից պատմական օրը, երբ սուլթանի  
մինիստրների ժողովում ընդունեց սկզբունքով տաճկահայկական  
նահանգները միացնել մի առանձին կառավարութեան ենթարկելու  
համար: Թողնելով «Մուրճ»-ի գալ համարում շարունակել պատմու-  
թիւնը մենք «Մուրճ»-ի այս բաժնում հարկաւոր ենք գտնում, քաղա-  
քական տեսակէտից, շեշտել այն գործակցութեան վրայ որ ցոյց  
տւին տաճկահայաստանում եղած անցքերի ընդիմաստնաժողով կազ-  
մելու համար Անդլիան, Ռուսիան և Ֆրանսիան, որոնց ներկայացու-  
ցիչները միայն մտան չիշեալ թուրքական մասնաժողովի մէջ, և  
շեշտել երրեակ դաշնակցութեան պետութիւնների ներկայացուցիչ-  
ների բացակայութիւնը: Հայկական խնդրի նորագոյն արժարժումը  
մի աւիթ էր մեծ պետութիւնների չորաբերութիւնների նորից  
երեւան դալուն, և մասնաւորապէս հետաքրքրական էր Անգլիայի  
դիրքը, որը, ինչպէս չայտնի է, միակն է վեց պետութիւններից,  
որը պահպանել է կատարելապէս անկախ դիրք, կապւած չլինելով  
որ և է պետութեան հետ դաշնակցական սերտ կապերով: Անգլիայի  
մերձեւալը ոչ ժերով իրար հուսասար երկու դաշնակցութիւններից  
մէկին կամ միւսին, որոնցից մէկի մէջ մտնում են Ռուսաստանը և  
Ֆրանսիան, իսկ միւսի մէջ Գերմանիան, Աստրիա-Սեւագրիան և

Խոտլիան, կը համարւի իբր առաջնակարգ կարևորութիւն ներկայացնող քաղաքական մի անցք: Անգլիայից այժմ սպասելի չէ որ նա մտնի այդ համախմբումներէն որ և է մէկի մէջ. բայց Ռուսաստանի և Ֆրանսիայի գործակցութիւնը Անգլիայի հետ մի այնպիսի խնդրում, որպիսին է հայկական խնդիրը, որ նոյնն է թէ Ռուսաստանին հարեան մի երկրի վիճակը, որը Անգլիայի աւելելեան քաղաքականութեան համար մեծ կարևորութիւն է ներկայացնում, այդ գործակցութիւնը, ասում ենք մենք, չի կարող որ և է կերպ չազդել մի քանի խնդիրների ընթացքի վրայ, որոնք վիճելի են մնացել Ֆրանսիայի և Ռուսաստանի մի կողմից և Անգլիայի մէջ— միւս կողմից: Մասնաւորապէս նկատելի էր թէ ինչպէս անգլիական մամուլը, օգտուելով հայկական խնդրի երևան գալուց, սկսեց ջեմադին պաշտպանել անվտանգութեան բարեկամութեան գաղափարը. թէև երևում էր, որ դորա համար երկուսի կողմից ևս ընդունելի մի հաստատուն ծրագիր չկար մէջ տեղը, նամանաւանդ, որ այդ կարելի էր իրագործել միայն, երբ կանխօրէն համաձայնութիւն կայանար մի կողմից Անգլիայի և միւս կողմից Ռուսաստանին բարեկամ Ֆրանսիայի մէջ, բոլոր այն խնդիրների նկատմամբ, որոնք վիճելի են մնում Ֆրանսիայի և Անգլիայի մէջ— Եգիպտոսում, Մագադասկարում, Ճայրագոյն արևելքում և այլն:

Թէ որքան զժւարին է միացնել Անգլիայի և Ռուսաստանի ու Ֆրանսիայի շահերը, այդ կարելի է եզրակացնել նաև այն բանից, որ Գերմանիան, Աւստրո-Սլոնգարիան և Իտալիան համաձայնել են միանալ այն որոշումներին տաճկա-Հայաստանի մասին, որ կը կաշանան Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի մէջ: Պարզ է, որ առաջինները ենթադրում են, թէ Անգլիայի մի կողմից և Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ միւս կողմից չի կարող այն միաձայնութիւնը և բարեկամութիւնը հաստատուել, որ բացարձակօրէն վնասակար լինէր երբեակ դաշնակցութեան պետութիւններին և որ նոցա համաձայնութիւնը կարող է կայանալ միայն այն փոքր չափով, որ կարևորութիւն չի ներկայացնիլ ընդհանուր քաղաքականութեան տեսակէտից, ի վնաս ընդհանուր շահերի:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-ի ներկայ տետրը լրջ է տեսնում 240 էջով: Այս մեծութեամբ «Մուրճ»-ը կարող է հրատարակել ամեն ամիս, եթէ ունենանք դէթ 1000 բաժանորդ: Եթէ հասարակութիւնը մեզ այդ միջոցը տա՝ մենք կը հրատարակենք «Մուրճ»-ը կամ ներկայ տետրի մեծութեամբ ամեն ամիս և կամ ամիսը երկու անգամ սովորական մեծութեամբ: Մենք սպասում ենք ընթերցող հասարակութեան խրախուսանքին՝ «Մուրճ»-ը այդ ցանկալի զիրքին հասցնելու համար:

ԳԵՕԹԷՆ «ՄՈՒՐՃ»-ում: Գալ 1895 թականանի ընթացքում «Մուրճ»-ի բեղկորիտարկալի բաժնում ենթադրում է սպազրել Գեօթէի հռչակաւոր «Ֆատուտ» դրաման, արձակ թարգմանութեամբ բժշկ. պ. Լեոն Տիգրանեանցի, «Հերման և Գորթթէա» նույն պ. Տիգրանեանցի թարգմանութեամբ: Խմբագրութեան քննութեան ներքոյ է նաև Գեօթէի «Էգմոնտը», թարգմանութեամբ պ. Հմ. Մաթինեանի:

«ՄՈՒՐՃ»-ի ԿՐԱՄԱԿԱՆ ԾՐԱՐՆԵՐ ուղարկում ենք մեր բաժանորդներին նաև ներկայ համարի հետ, խնդրելով որ այդ ծրարները նոքա բարեհաճեն բաժանել իրանց շրջաններում:

«ՄՈՒՐՃ»-ի ՆԻՒՐՈՂՆԵՐ 1895 թ. համար: Պր. Աբրահամ Բունիաթեանց 1) Յղնալի հայոց ծխակ. դպրոցին. 2) Զաքարթալի հայոց դըպրոցին. պ. Ալեքսանդր Մելիք-Ազարեանց և 3) Ռէչաի հայոց ընթերցարանին:

ՎԵՀԱՓՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ներկայ ղեկավարների 27-ին սղջամբ ժամանեց Թիֆլիս: Վեհափառը մեկնեց ս. Էջմիածնից ղեկաւ. 19-ին և մի քանի օր մնաց Երևանում: Վեհափառի ընդունելութիւնը Թիֆլիսում կատարեց մասնակցութեամբ բազմաթիւ ժողովրդի թէ կալարանում և թէ վանքի դաւթում: Կալարանից Վեհափառին ուղեկցում էին աւելի քան հարիւր կառք: Վեհափառը մտադիր է առաջիկայ մեծ տօները Թիֆլիսում անցկացնել:

ՄԱՏԹԷՈՍ ԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆ ընտրեց հայոց ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՈՒՍԻ ղեկավարների 7-ին, 67 ձայնով 75 հոգուց:

**ՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԷ:** Նովեմբերի 15-ին վախճանեց Սիսի Մկրտիչ կաթողիկոսը 80 տարեկան հասակում: Հանգուցեալը եպիսկոպոս էր ձեռնադրւած Էջմիածնում, Մաթթէոս կաթողիկոսի ձեռքով, ապա առաջնորդական պաշտօններ վարեց Կիլիկիայի (Սիսի) գանազան թեմիւում — Եողղատ, Ատանա և Մարաշ: Սիսի կաթողիկոս եղաւ 1871 թւի ապրիլին, սուլթանի բերաթով: Յաւանի են նորա արած ապարդիւն ջանքերը Պոլսի հայոց պատրիարքարանից անկախ լինելու:

**ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԵՍՏ,** որով նոր կաւար Նիկոլայ II, ամուսնանալու առիթով, բազմաթիւ ներումներ է շնորհում, տրեց նշեմբերի 14-ին:

**ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ:** Ճեմարանից արձակւած են մօտ 90 աշակերտ և երկու ուսուցիչ: հրաժարական տալով հեռացել է նաև մանկավարժութեան ուսուցիչ պ. Տէր-Միրաքեանց: Նաև գլուխ տնտեսութեան կուրսը, որ աւանդում էր լսարաններում, զաղարեցրած է ուսուցիչ պ. Աթանասեանի պաշտօնաթող լինելու պատճառով:

**ՇՈՒՇԻԱՅ ԳՊՐԱՆՈՅԸ:** Շուշույ գպրանոցի ուսուցչական կազմի լուծելը անցեալ հոկտեմբեր ամսին առանձնապէս հետաքրքրական են դարձնում գպրանոցի տարեկան հաշիւը 1893/94 թ. համար, որ սոպագրում ենք «Մուրճ»-ի ներկալ համարում, խնդրանօք դրպրանոցի նախկին տեսուչ պ. Լ. Սարգսեանցի:

**ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԵՋՅՆ, ԳՊՐՈՅՆԵՐԻ** խնդիրը (տես «Մուրճ»-ի անցեալ № 10) թէ արդեօք պէտք է նոցա մասնաւոր թէ հասարակական համարել, իւր լուծումը ստացաւ Գեկտ. 13-ին, քաղաքալին գործերի Թիֆլիսի նահանգական ատեանում քննեց աչդ խնդիրը. նիստին մասնակցում էին, նախագահութեամբ Թիֆլիսի նահանգապետի իշխ. Շերաշվիձէի, Կովկասի ուսումնարանական շրջանի նոգաբարձուն, փոխ-նահանգապետը, քաղաքապետը, նահանգական դատարանի պրոկուրորը, արքունական պալատի (կազեոննալա պալատա) կառավարիչը և քաղաքի ներկայացուցիչ մի ձաչնաւոր: Չորս ձաչների մեծամասնութեամբ երեքի դէմ նահանգական ատեանը վճեց, որ աչդ դպրոցները պէտք է հասարակական համարել, համաձաչն ուսումնարանական շրջանի կառավարութեան բացատրութեան: Ի դիմաց աչդպիսի վճու՝ քաղաքաքաչին ուսումնարանների կոմիտեաը մտադիր է խնդրել քաղաքաչին խորհրդարանից՝ գանգատով դիմել սենատին նահանգական ատեանի վճու դէմ:

**ՆԻՒՐԱՅԵՐՈՒԹԻՆՆԵՐ:** Հանգուցեալ Գէորգ Փրիդոնկանի (Թիֆլիսեցի)

կրակի համաձայն՝ Նորա քրգիք Մնացականեան և Գրիգոր լանձնել են վհճ. Կաթողիկոսին մի ստմն 9000 ոււրլու, որի սովորներով պէտք է ուսանի մի սան՝ որոշմամբ վհճ. Կաթողիկոսի՝ ուսաց բարձրագոյն զպրոցներում.

**ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՑԷՆՁԻ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ Հալոց Բարեց. Ընկերութիւնը,** համաձայն Ընկերութեան Խորհրդի «Մուրճ»-ին ուղարկած վկայաթղթի, նւիրել են՝ 1) Փիթղեան առևտրական տունը 500 ու., 2) Ալեքսանդր Անանեան. 500 ու., 3) Ալեքս. Մանթաշեան 200 ու., 4) Եղոր փողինեան 200 ու., 5) Ալեքսանդր Մելիք-Աղարեան 100 ու., 6) Մարկոս Գոլուխանեան 100 ու., 7) Հանգուցեալ Չիթախեան 100 ու., Իշխան Կոստանդին Մուխրանսկիլ 100 ու., 9) Կարապետ Մութաֆեան 100 ու. 10) Բժշկ. Գասպարեան 50 ու., 11) Յովհ. Մովսիանեան 50 ու., 12) Յովհ. Շաղինեան 50 ու., 13) Ստեփան Սուլխանեան 50 ու., 14) Բ. Մելիք-Ղարազեօղեան 50 ու., 15) Գ. Աղելխանեան 50 ու., 16) Կոնստանդին Աղելխանեան 50 ու., 17) Ս. վաչեանց 10 ու., 18) Մեղրի գիւղի ուսուցիչներ 10 ու., 19) Աղբուլղի մի խումբ երիտասարդներ 10 ու., 20) Բժշկ. Ս. Անանեան 30 ու., 21) Բարսեղ Եղիազարեան 30 ու., 22) Ներսէս Աթաբէգեան 25 ու., ընդամենը 2.365 ու.: Այս և ստորև սովեալների բաժնում չիշւած նւէրների համար, որ ստացել է Հ. Բար. Ընկերութիւնը, Խորհուրդը սորանով լաւանում է իւր շնորհակալութիւնը.

**ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ.**

|   |                    |
|---|--------------------|
| Ա. ու աջին ցուցակով, հրատարակած «Մուրճ» № 4-ում . . . . . | 38.500 ու. 29 կող. |
| Ալիւր 600 պուղ, ցորեն 250 պուղ, կամ դրամով մօտ . . . . .  | 1.200 " — "        |
| Երկրորդ ցուցակով, հրատարակած «Մուրճ» № 5-ում. . . . .     | 24.116 " — "       |

Երրորդ ցուցակի համար մենք ուզատում էինք «Արարատ»-ի № 3-ում հրատարակած նւէրների ցուցակի չարունակութեան. սակայն մինչ «Արարատ»-ի հոկտեմբերի համարը, որ մենք ստացանք Նոյեմբերի 29-ին միալն, մենք իզուր սպասեցինք այդ չարունակութեան. այդ վերջին համարի մէջ մենք գտանք միալն չիշատակութիւն 1513 ոււրլու, որ ստացւած էր՝

|  |              |
|--|--------------|
| Ամերիկայի հազ գաղթականների կողմից՝<br>նոցա հովիւ Մաղաքիա վ. ձեռքով.  | 1.513 ո. — " |
| 2) Հաւոց Բարեգործական Ընկերութիւնը<br>ստացած է լօգուտ տառապեալների<br>և ալ պիտուքների՝ պ. Բարսեղ Եզրա-<br>ղարեանից ի չիչատակ իւր հանգու-<br>Բաղչի եղբօր. . . . .   | 500 " — "    |
| Հանգուցեալ Տէր-Եղիշէ քահանայի կտա-<br>կատարներից . . . . .   | 100 " — "    |
| Տիկ. Ն. Առաքելեանի ձեռքով հանգանակած<br>Ծանօթ. Ազդ նպատակով Բարեգ. Ընկեր.<br>ստացած գումարների մէջ չենք չի-<br>չատակում նւէրները, սրոնց գումարը<br>(400 ո.) հաշւած է «Մշակ»-ի ստա-<br>ցած գումարների մէջ): | 85 " — "     |
| 3) «Մշակ» լրագրին ուղարկւած է լուսնիս<br>ամսից մինչ նոյեմբերի վերջը . . .  | 4.530 " 21 " |
| Երրորդ ցուցակի գումարն է .   | 6.728 " 21 " |

Մինչև այժմ «Մուրճ»-ում լօգուտ սովելոց  
ցուցակագրւած նւէրների գումարն է **70.544 ո. 50 կոպ.**

**ՇՈՒՇԻԱՅ ՔԱՂԱՔ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ:** Դեկտ. 11-ին գաւառական դա-  
տարանում ընդունւեցին քաղաքի ղեկուտատներ՝ Զ. Իշխա-  
նեան և Բ. Թիւնիբէգեան, անձնաւորխանորդներ՝ Աղաջան  
Ժամհարեանց և Բ. Արզումանեանց:

**ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐԻ X-րդ ԺՈՂՈՎՈՒՄ** (Ժընևում) կարդացելիք ղեկու-  
ցումներից Մուրճ № 7—8 մենք չիչատակել էինք մի քանիսը,  
որոնք հպերիս համար աւելի կարևորութիւն էին ներկայա-  
ցնում: Այժմ, որ ունինք մեր ձեռքում նոյն ժողովում կարդաց-  
ւած ղեկուցումների լրակատար ցուցակը, հարկ ենք համարում  
մեր ասածը լրացնել երկու ղեկուցումների չիչատակութեամբ  
ևս, այն է՝

Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանց—Էջմիածնի  
գրագարանի ձեռագիրների մասին:—Յակոբ Մեղաւորեան—  
հին հպերի մէջ տեղի ունեցած վաճառքով և չափչատակութեամբ  
ամուսնութիւնների հետքերը (Vestiges du mariage par achat  
et par rapt chez les anciens arméniens).

**ԿԱԵԹԻԱՅԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ,** որի կառուցումը վճուած է, այս ուղղու-  
թիւնն է ունենալու: Սկզբի կապրանը շինւելու է Թիֆլիսում,

Հաւարարի թաղում, անդրկովկասեան երկաթուղու և կախէթեան շոսէի մէջ տեղ. ալդտեղից գիծը, շոսէին զուգահեռարար, կ'երթալ մինչ աչն կետը, ուր Մարտկոբի գետը միանում է մօտաւոր գետակի հետ. ալդտեղից 12-րդ վերստից, ուղին կը ծռի դէպի ձախ և կ'երթալ Մարտկոբի գետի աջ ափով դէպի հիւսիս. 24-րդ վերստի վրալ գիծը կը ծռի դէպ արևելք, կարելով Մարտկոբի, Նորիօ և այլ գետակներ, ապա Ախալտպելի գիւղից վեր, Նիկոլանկալ գիւղի մօտ, գիծը կ'երթալ հարաւ-արևելք, անցնելու է Սանդորի կիրճը 2796 ոտաչափ բարձրութեամբ (Սև ծովի մակերևութից) և մտնելու է Իօրա գետի աւազանը: Մի քանի ստորոտներ անելով դէպի Իօրալի զառիվայրը, գիծը կտրելու է Իօրա գետը՝ Սուգանլո ու կարաբուլաղ գիւղերի մօտ: Յետոյ գիծը պահպանելով իւր ուղղութիւնը դէպի հարաւ-արևմուտք, գնալու է Իօրալի ձախ ափով մինչ 86-րդ վերստը: Ալդտեղ նա անելու է երկու շեղումներ, նախ ձախ կողմով դէպ հիւսիս, չետոյ աջ՝ ուղիղ դէպ արևելք: Հետանալով Իօրալից, գիծը, 104-րդ վերստի վրալ կտրում է լակրէ օժանդակ գետակը և չետոյ բարձրանում է Չալաուբանեան կիրճը, առանց փոփոխելու վերը չիչած ընդհանուր ուղղութիւնը: Չալաուբանեան կիրճից, որ բարձրանում է 2420 ոտաչափ ծովի մակերևութից, ուղիղ գնում է կիրճի ձախ կողմով, հասնում է 124-րդ վերստի վրալ աչն կետին, ուր Ալապան գետը դուրս է գալիս կիրճից դէպի հովիտը և ալդ հովիտի աջ զառիվայրով մտնում է բուն հովիտը Գուրջուանի գիւղի կտն, 134-րդ վերստի վրալ: Ապա ուղին, մնալով Ալապանի հովիտում, նորա աջ ափին, գնում է մինչ իւր վերջնական կէտը՝ Թելաւ քաղաքը:

Գիծը, որպէս ենթադրւած է, ունենալու է 16 կալարան. գծի ամբողջ տարածութիւնը լինելու է  $163\frac{3}{2}$  վերստից քիչ աւելի:

**ԱՂԱԼԱՐՈՎԻ ՀՈՂԵՐՆ, որ անուրդով վաճառւած էին (տես «Մուրճ» 1894 թ. № 3 և 4) դատարանի վճռով մնացին Ա. Ծատուրեանի և Զ. Թաղիեւի վրալ:**

**ՂԶԼԱՐԻ ԻԶՄԻՐԵԱՆՆԵՐ. Մի ամբողջ զար գոլութիւն ունեցած Խլմիրեանների գինեվաճառական Ֆիրման ներկալ տարւալ օգոստոսի 26-ին անանկ չալտարարուեց, թողնելով 478.000 ուռք. պարտք, որի քառորդը ղզարցիներին: Ղզարը, իւր գլինեգործութեան ալթմեան համբաւով պարտական է չիչեալ Խլմիրեաններին, որոնք արտահանողներն էին Ղզարու գինու գէպի Ռուսաս-**

տանի կենդորոնները: Մնանկ չարտարարելուց չետո՛վ՝ ֆիրմայի գլխավոր ներկայացուցիչ Սիմէոն Եսայեան Խզմիրեանց անչափացաւ, թողնելով այս գրութիւնը՝ «Իմ դիակը հանգիստ կը գտնի Մոսկա գետի չտակում: Թշառ Սիմէոն»:

**ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՖՈՆՎՐԸ** հիմնելու նախապատրաստութիւնների ծախքերը ծածկելու համար ստացանք պ. Ստ. Մալխասեանից 1 ռուբլի **ՀԱՅՈՑ ԲԱՐԵՎ. ԸՆԿԵՐ.** ընհանուր ժողովը, հաստատելու համար ընկերութեան հաշիւները 1893 թ., կապացաւ դեկտ. 25-ին, Թիֆլիսորհրդարանի դահլիճում, մասնակցութեամբ մօտ 40 հոգու: Ժողովի նիստում երևան եկան մի քանի տխուր երևոյթներ: Ընդհանուր ժողովների արձանագրութիւնները կազմըւում են շատ անփութ կերպով. ժողովի ընտրած քարտուղարը սակի հանդիսատես և վիճաբանող է քան արձանագրող. ժողովի նախագահը, ըստ երևոյթին, հէնց առիթների է սպասում՝ ժողովի այս ու այն անդամի հետ կռւի բռնելու, դիտաւորեալ և անտեղի խօսքերով չաղումներ առաջացնելու թէ քննադատող անդամի և թէ ժողովի մէջ և ալըսլիտով կերպարանափոխելով անդամների պարզ և օրինաւոր առաջարկութիւնները՝ կիսա-սկանդալներին: Ընկերութեան խորհուրդը «կարծիք» է չալումում, որ ընդհանուր ժողովները վճիռները իրա համար պարտաւորեցուցիչ չեն, ալնպէս որ ընդհանուր ժողովի կազմած նախահաշիւների մէջ նա կարող է նոյն իսկ շատ խոշոր փոփոխութիւններ մտցնել առանց ընդհանուր ժողովին դիմելու: Եւ որ գլխաւորն է՝ ընդհանուր ժողովը սառնասրտութեամբ նալում է այդ բոլոր երևոյթների վրայ, առանց մտածելու, որ ալը երևոյթներով է հէնց, որ լաւագոյն գործը քաղքալման վտանգին է ենթարկում:

**ԼԵՍՍԵՊՍ:** Ֆերդինանդ դը Լեսսէպը վախճանեց Պարիզում 25 նոյ. (նոր տոմարով 7 դեկտեմբերի): Լեսսէպս ծնեց Վերսալում նոր տոմարով 19 նոյեմբերի 1805 թւականի, հետեալպէս 89 տարին լրացրած նա վախճանեց իւր կեանքի 90-երորդ տարւաւ մէջ: Մինչ 1849 թւականը նա դեպլոմատիկական ծառայութեան մէջ էր, 1834 թւականից նա իրան ամբողջապէս նւիրեց Սուէդի պարանոցի միջով ջրանցք անցկացնելու գործին, որը նա, չնայած մեծ քաղաքական և ալ դժւարութիւնների՝ 1869-ին չաջող վախճանին հասցրեց: 1879 թւականից սկսած նա զբաղւած էր Պանամալի պարանոցի միջով ջրանցք անցկացնելու գործով, որով պիտի միանար Ատլանտեան ովկիանոսը Խաղաղ ովկիանոսի հետ: Ալը գործի համար Լեսսէպսի գլխաւորու-

Թեամբ մի մեծ ֆինանսական ընկերութիւն կազմւեց, որը, սակաւն, 1892-ին իւր սնանկութեամբ երևան հանեց ներկայիս հասարակական ախպերը և ապականութիւնը նոյն իսկ բարձր ղեկավարող շրջաններում: Իսկ այն մեծահոշակ պանամեան գործն է, որի մանրամասնութիւնները մեր ընթերցողները կարդացած են Մուրճի 1892 թ. № 12 և 1893 թ. № № 1, 2 և 3-րդում: Սակաւն թողնելով որ պանամեան ընկերութեան արատը ժամանակակից ֆրանսիական և նոյն իսկ եւրոպական հասարակութեան արատը մնալ, Լեոսէպսին պատկանում է ամբողջ փառքն ու պատիւը Սուէցի տիեզերական նշանակութիւն ունեցող ջրանցքի իրագործման և նոյն իսկ Պանամայի ջրանցքի, որի գլուխ բերելը եթէ չլաջողեց Լեոսէպսին, անշուշտ կը չաջողւի մտապագայում:

† ԲԻՒՐԿՕ, Ֆրանսիացի պատգամաւորների ժողովի նախագահը վախճանւեց նոր տոմարով 12 դեկտեմբերի: Հանգուցեալը ժամանակակից Ֆրանսիայի լաւագոյն ներկաչացուցիչներին էր: Նա կտաւագործի որդի էր, եղել էր աշակերտ կտաւագործի արհեստանոցի, ապա մտաւ միջնակարգ դպրոց իբր թոշակաւոր. փալլուն կերպով աւարտելուց չետոյ՝ մտաւ բարձրագոյն ուսուցչական դպրոցը (Ecole normale), որը ընդհատեց 1870 թ. պատերազմը, որին սասնակցեց՝ վէրք ստանալով և դերի բռնւեց: Ուսումը աւարտելուց չետոյ նա ուսուցիչ կարգւեց Louis le Grand լիցէնտում: Հրաւերքով չալսնի Պոլ-Բէրի, որ լուսաւորութեան միմիտոր էր Գամբէտտայի միմիտորութեան ժամանակ՝ Բիւրգօն քաղաքական ասպարէզ մտաւ և նշանակւեց նոյն միմիտորութեան կանցելարիայի պէտ: 1885-ին և 1889-ին նա ընտրւեց պատգամաւոր, չալսնի եղաւ իբր լաւ հոետոր ֆինանսական խնդիրներում, 1892-ին նշանակւեց ծովալին միմիտոր Լուբէի և Ռիբօի միմիտորութեան մէջ, ապա ֆինանսների միմիտոր՝ Կազիմիր Պերիէի միմիտորութեան մէջ: Ներկալ ամբանը, երբ Պերիէն հանրապետութեան նախագահ ընտրւեց՝ Բիւրգօն ընտրւեց պատգամաւորների ժողովի նախագահ: Նա ընդամենը 42 տարեկան էր:

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 10-ում: Պ. Ա. Մատուրեանի լոզածում «Մի համակրելի երեւոյթ» էջ 1506, 10 տող ներքեից տալամ է՝ Նւիրած (ուղիղն է՝ Նւիրում), էջ 1507 տող 7 ներքեից՝ տարածում (աւածում), 1508, տող 4 վերեից պէտք է լինի՝ Ալսոր լրանում է հարիւր տարի հալոցանդրանիկ և ալլն. էջ 1511, տող 17՝ պարբերաբար (պարբերական). էջ 1511, տող 21՝ գրող (գրօշ):

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

- 1) АРЦРУНИ, Григорій. «Эвелина», психологическій этюдъ. Переводъ съ армянскаго А. Н. Дастакова. Баку, изд. типографіи Арооръ 1894. (Արծրունի, Գրիգոր. — «Էլեվինա», հոգեբանական էտյուդ, թարգմ. հայերէնից Ս. Դաստակովի, Բաքու, հրատ. Արոր տպարանի, գինն է 70 կոպ.)
- 2) ՕՐԱՑՈՅՑ 1895 թ. ս. Էջմիածնի հրատարակութիւն: Գինն է 20 կոպ.
- 3) «ԱՐՕՐ»-ի «Պատկերազարդ օրացույց, 1895 թ.»։ Երկրորդ տարի: Բաքու, տպ. «Արոր», 1894 թ. գինն է 70 կոպէկ:
- 4) «ՕՐԱՑՈՅՑ 1895 թ.»։ հրատարակութիւն «Արոր» տպարանի, Բաքու, գինն է 15 կոպէկ:
- 5) ԼԻՆՆԻՉԵՆԿՈ, Ի. Տ. — «Լեհաստանի և Արևմտեան Ռուսիայի հայերը» թարգմ. Խ. Յովհաննիսեանցի (Արտատպած «Գրականական և Պատմական հանդիսից»)։ Մոսկւա, տպ. Ք. Բարխուդարեանցի, 1894. գինն է ? —
- 6) ԱՐԾՐՈՒՆԻ, Գրիգոր. — «Թիւրքաց Հայերի անտեսական դրութիւնը»։ Արտատպած Մշակ լրագրից. հրատարակութիւն Մշակի խմբագրութեան: Թիֆլիս տպ. Մ. Մարտիրոսեանի և ընկ., 1894. գինն է 20 կոպ.
- 7) ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՅ, Գալուստ, միաբան ս. Էջմիածնի. — «Հազկականք», Ա.—ժ.Բ. տպ ս. Էջմիածնի, 1894, գինն է ?
- 8) ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆՅ, Մէսրոպ վարդապետ, միաբան ս. Էջմիածնի. — «Ուղեբուրժիւն Տ. Տ. Մկրտիչ վեհ. կաթողիկոսի ամենաջն հաջոց — Երուսաղէմից» — Էջմիածին: Տպար. ս. Էջմիածնի, 1894, գինն է 1 ռուբլի:
- 9) ՉՈՐԵՅԻ. — «Չուր ժամալաճառ» (ոտանաւորներ): Պետերբուրգ, տպար. Լիբերմանի, 1894 թ., գինն է 30 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

Չէջերորդ տարւոյ

1894 թ. № 1, 2, 3, 4, 5, 6, 7—8, 9, 10, 11—12

№ 1

|                                   |   |
|-----------------------------------|---|
| 1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻԲ . . . . .   | 5 «Մուրճ»-ը նոր տարեշրջ. շէմքում:   |
| 2 ՂԱԶԲԷՂ, ԱԼԵՔՍԱՆԴՐԷ . . . . .    | 9 Զորի նահապետ Դոչա:  |
| 3 ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ-Ա. ԾԱՏՈՒՐ. . . . .  | 43 Նւէր «Գե» պօէմային:  |
| 4 ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ . . . . .     | 44 Իմ կեանքի գլխ. ղէպքերը (վերջ):   |
| 5 ՅԱԿՈՒԵԱՆ, ՅԱԿՈՒ . . . . .       | 58 Էլի նորան (բանաստեղծ.):  |
| 6 ԲԱՂԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ . . . . .     | 59 Կենդանիների հասարակ. կեանքը:   |
| 7 ՊԼԷՇՉԵԻԻ-Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ . . . . . | 75 Երազ (բանաստեղծ.):   |
| 8 ԶԱՔԱՐԵԱՆ, ԹԱԹԷՈՍ ԲԺՇ. . . . .   | 78 Բժշկականութ. և հոգեբանութիւն:  |
| 9 ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ . . . . .     | 84 Հող. և անձն. իրաւ. հին Հալաստ.   |
| 10 ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ . . . . .      | 101 Բանւորների ապահովաց. խնդիրը:  |
| 11 ՖԵԼԻՔՍ . . . . .               | 111 Նատուրալիստ և Զուան (վերջ):   |
| 12 Մ. Ն. . . . .                  | 118 «Մոամբէ»:   |
| 13 Ս. Բ. . . . .                  | 120 «Հանրամատչելի բնախօսութիւն»:  |
| 14 » » . . . . .                  | 122 «Կովկասի հանքային ջրերը»:   |
| 15 » » . . . . .                  | 123 «Վարեղահողը պարար. միջոցները»:  |
| 16 ԼՈՒՍԻՆԻ . . . . .              | 124 Ժամանակակից Տեսութիւն: — Ռուս<br>մամուլի հաշիւայքները ռուսական<br>չահերի մասին կովկասում: |
| 17 ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ . . . . .     | 127 Կաթողիկոս. անդրանիկ կոնդակը:  |
| 18 ՎԱՆՅԵԱՆ, ԳՐԻԳՈՐ . . . . .      | 133 Գպրոցական խնդիրներ:   |
| 19 Ա. . . . .                     | 133 Ղարաբաղի թեմ. գպրոցը:   |

- 20 . . . . . 146 Տաճկաստան:
- 21 ԱՂԱՅՆԱՆՅ, Ղ. և ԳԻՏՈՂ . Նամակներ Խմբագրին:
- 22 ԽՄԲ. . . . . Զանազան լուրեր:—«Մուրճի» վիպական մասը:—«Մուրճ» 1893 թ.:—Շովրեան «Արձագանքում»:—Ղ. Աղաբանի Յիշատակարանը:—Հայոց Ուսումնական վարչական րեֆորմի խնդիրը:—Շուշույ թեմական դպրանոցի հոգաբարձական ընտրութիւնները:—Խաւարամիտների քարոզներից նմուշներ:—Միսական պատգամաւորների ընտրութիւններ Սարիամեան-Յոզեանեան օրիորդաց դպրոցի համար:—Թիֆլիսի քաղաքագլուխ —Բաքւի քաղաքագլխի խնդիրը և քաղաքագլխի ընտրութիւնը:—Զմիւռնիայի հայ ընթերցարանի 25 ամեակը:—Րաֆֆի ընկերութիւն:—Գլոցցական առողջապահութիւն:—«Տարազ» պատկերազարդ շարաթատերթը:—«Շաւրղ» շարաթատերթը:—Հալեթի մասնաւոր դասեր:—Նւիրաբերութիւններ:—Թիֆլիսի III Պատկերահանդէսը:—Պատկերահանդէս Բաքուում:—Իուս. Գերմանական առևտրական դահլիճութիւնը:—Кавказскій Календарь (Արմկասեան Օրացույց):—Էթանագլին գրադարան ընթերցարան Հաւաքարում:—† Բիլրոտ:—† Կիւլպէնկեան Յովհաննէս:—† Տէր-Ստեփանեան աւագ քահանայ Տէր-Ասեփանեան:—Նոր լոյս տեսած գրքեր:

№ 2

- 1 ՂԱԶԲԷՔ, ԱԼԵՔՍԱՆԳՐԷ. . . 181 Չորի Նահապետ Գոչա:
- 2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. . . 212 Աւերակների վերայ (բանաստ.):
- 3 ԲՍԼԱՂԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. . . 213 Կենդանիների հասարակ. կեանքը:
- 4 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԳՐ. . . 222 Փառքի տենչը (բանաստեղծ.):
- 5 ԶԱՔԱՐԵԱՆ, ԹԱԳԷՈՍ. . . 224 Բժշկականութ. և հոգեբանութիւն:
- 6 ԱՐԳԱՀԱՏԵԱՆ, Ա. . . . . 231 Հրէշը (պատմածք):
- 7 ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ. . . . . 243 Բանտըն. ապահովաց. խնդիրը:
- 8 ՍԱՐԳՍԵԱՆՅ, ՍԱՐԳԻՍ. . . . . 255 Լեզուն և ուղղագրութիւնը:
- 9 ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ. . . . . 267 Հոգ. և անձն. իրաւ. նին Հալաստ:
- 10 Ա. Ա. . . . . 281 «Թատրոն» հանդէսը:
- 11 Ս. Բ. . . . . 283 «Ֆլամմարիոնի աստղաբաշխ»:
- 12 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻԲ. . . . . 285 Ընտրողական գործ. վտանգումը:
- 13 . . . . . 291 Մի ընկ. սկիզբն ու վախճանը:
- 14 ՄԱՐԳԱՆԵԱՆ, ՖՐԻԴՈՆ. . . . . 308 Նաւթարդիւնաբ. ներկ. վիճակը:
- 15 ՏԷՐԵԱՆ, ՍՏ. . . . . 316 Տպաւորութիւններ Գանձակից:
- 16 ԲԱԼԱՂԱՆ, Ս. . . . . 324 Բնագէտների ժողով Մոսկւայում:
- 17 ԽՄԲ. . . . . 328 Զանազան լուրեր:—«Մուրճ» նւիրագրներ:—Գէորգ եպ. Սուրենեանց:—Վարդապետների ձեռնադրու-

թիւն: — Հալոց Բարեգ. ընկ. կենարոնի ընդհանուր ժողովը: — Ուսուցչական ցենդ: — «Մոամբէ»: — Հալ լրագրութեան հարիւրամիակը: — «Մամուլ»: — Նւիրաբերութիւններ: — Թեմական դպրանոց Աստրախանի թեմում: — Յօդուտ Երևանի և Կարսի նահանգների կարօտեալներին: — Լևոն Մանուէլեանց իբր դերասան: — Արձան Աբովեանին: — † Կոչուտ: — Էմիլ Զառէր: — Նոր լոս տեսած գրքեր:

№ 3

|    |                               |     |   |
|----|-------------------------------|-----|---|
| 1  | ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . .      | 339 | *** (բանաստեղծ.):   |
| 2  | ՂԱԶԲԷԳ, ԱԼԷՔՍԱՆԳՐԷ . . .      | 340 | Զորի նահապետ Գոչա:  |
| 3  | ՅԱԿՈՒԲԵԱՆ, ՅԱԿՈՒԲ . . . . .   | 258 | Խմ բարեկամին (բանաստեղծ.):  |
| 4  | ԿՈՊԷ, ՖՐԱՆՍՈՒԱ . . . . .      | 359 | Երեխալ: Զարգարանք (պատմած):   |
| 5  | ԶԱՔԱՐԵԱՆ, ԹԱԴԷՈՍ ԲԺ . . .     | 368 | Բժշկականութ. և հոգեբանութիւն:   |
| 6  | ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆԳՐ          | 877 | Խաւարի բարեկամներին (բան.):   |
| 7  | ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . .      | 378 | Դպրոցական նամակներ:   |
| 8  | ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ . . . . .     | 388 | Բանասիրների ապահովաց. խնդիրը:   |
| 9  | ԾԱՏՈՒՐԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԳՐ           | 404 | Զատիկ (բանաստեղծ.):   |
| 10 | ՍԱՐԳՍԵԱՆՅ, ՍԱՐԳԻՍ † . . . . . | 406 | Լեզուն և ուղղագրութիւնը (վերջ):   |
| 11 | ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ . . . . .   | 413 | Հող. և անձն. իրաւ. հին Հայաստ.  |
| 12 | ԳՆՈՒՆԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ . . . . .   | 433 | «Գև» Լեւոնտովի:   |
| 13 | Ս. Բ. . . . .                 | 436 | «Անեղանինների կեանքը»:  |
| 14 | Գ. ՎՆԿ . . . . .              | 438 | «Արիստակէս Լատովկերոցի»:  |
| 15 | ՆՍԻԱՍԱՐԳԵԱՆ, ՄԿՐՏ. . . . .    | 440 | Մովս. Խոր. և «Թուրքաց կրգք»:  |
| 16 | ԱՐԱՍԹԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՔ . . . . . | 445 | Քահանազական խնդիրը:   |
| 17 | ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿ . . . . .        | 450 | Կոնդակ սովեալների օգտին:  |
| 18 | Ա. Ա. . . . .                 | 457 | Յովնան. դպր. հոգ. ընտրութիւն:   |
| 19 | ՄԱՐԳԱՆԵԱՆ, ՖՐԻԴՈՆ . . . . .   | 460 | Նաւթարդին. ներկալ վիճակը Մ.:  |
| 20 | Շ. . . . .                    | 472 | Քաղաք. Տեսութիւն: — Գլխատոնի հրաժարականը: — Խտալիա:   |
| 21 | ԽՄԲ. . . . .                  | 488 | Զանազ. լուրեր: — Ուղերձ «Մուրճ»-ին: — «Մուրճը» նւիրողները: — Նւէրներ Վեհափառ Կաթողիկոսին: — Հալոց Հալրիկի ծննդեան նոր տարեդարձը: — Տաճկա. Հալաստանից: — Կաթողիկոսի զիմումը սովեալների և կարօտեալների օգտին: — Կ. Պոլսի պատրիարք Խորէն արքեպ. Աչըղեանի սպանութեան փորձը: Երևանի քաղաքագլխի ընտրելը: — Արձատեած քաղաքալին ինքնավարութիւն: — Կուրսեր զիւղական տիրացուների համար: — Վալուտ Տէր-Մկրտչեան: — Քիֆլիսի Հալոց Հրատարակչական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը: — Հալոց Բարեգործական Ընկերութեան Նաշւալ ճիւղ: — Երևանի թեմական դպրանոցի հոգաբարձական |

ընտրութիւնները:—Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութիւն:— Ազգայնաբանի հոգիի վաճառումը:—«Արշէն Երէցի քարոզը» և Արիստակէս եպ. Սեդրակեանի լողածը:—Սովը Տաճկա-Հալաստանում:— «Մասիս» շարաթաթերթը:—† Ներսէս Ներսէսեան:—† Բրուէն-Սեկար:—Նոր ստացած գրքեր:

№ 4

- 1 ԳՈՒՐԲԱԽԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ 507 Որդիական սէր:
- 2 ՇԱՆԹ . . . . . 525 Ես պատրանքը սիրեցի (բան):
- 3 ԿՈՐՈՒՆԿՈՒՄԻ ԿՎԱՆՅԵԱՆ . . . 527 Կարմիր Զատիկի զիշերը:
- 4 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . . 535 Դպրոցական նամակներ:
- 5 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷԲՍԱՆԳՐ. 543 \* \* (բանաստեղծութիւն).
- 6 ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ. . . 544 Հող, և անձն. իրաւ. հին Հալաստ.
- 7 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ . . . . . 558 Բաֆֆիլի շիրմի մաս:
- 8 ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ. . . . . 560 Բանուր. ապահ. խնդիրը (վերջ):
- 9 ՎԱՐԳԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ . . . . . 576 Մեծ ձեռնարկ. և բանուրները.
- 10 Ա. Ա. . . . . 587 Երիցեանի «Ամենայն հայոց կաթ. և կովկասի Հայք XIX-րդ դար»
- 11 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻԲ . . . 594 Ժամանակ. Տեսութիւն:— Ծխակ. ընտրութ. կանոնադրութիւնը:
- 12 ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ . . . . . 607 Կոնդակ Աչըղեանին:
- 13 ՂԱԶԱՐԵԱՆ, ԵՐՈՒԱՆԴ . . . . . 610 Սովը և գաղթականութիւնը:
- 14 ԱՐՇԷՆ ԵՐԼՅ. . . . . 616 Գիւղական քահանայի քարոզը:
- 15 ՍԵԳՐԱԿԵԱՆ, ԱՐԻՍՏ. ԵՊ. . . . 622 Ո՞վ հաւատաց:
- 16 ՂԱԶ. Մ. . . . . 629 Գիւղական քահանան. խնդիրը:
- 17 ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . . . . 638 Հալ. սեմինարիան և գիւղ. քահ.:
- 18 Ն., ՕՐՕՐ. . . . . 642 Քահ. Ղարաբ. և Պարսկաստան:
- 19 Թ. ԶԵՐՆՈՎ, Ն. . . . . 645 Նամակներ՝—Եկատերլինոզարից և Եսենթուկից:
- 20 ԽՄԲ. . . . . 649 Զանազան լուրեր:—Յօդուտ Տաճկաստանի սովեալների և Երեանի ու Ղարսի նահանգների կարօտեալներին նւիրաբերութիւնները:—Քահանայական խնդիրը:—Կրօնափոխութիւն:—Ծխական հոգաբարձութիւններ Թիֆլիսի թեմում:— Որն է անհիմն (պատասխան «Մշակ»-ին):—Թիֆլ. Հայունեաց Բար. ընկերութիւն:—Նւիրաբերութիւններ:—Կարա-Մուրզան Թիֆլիսում Պր. Գ. Ղարաջեանի լողածը:—Տաճկաստանի բաժանորդներին:— Հայերէն նոր տառերի հարկաւորութիւնը:—«Մուրճ»-ը ձրի կարդացողներին:—† Կոմս Փոն Շակ:—† Նինոչելի:—Եւլախ միւլքի ծախելու մասին:—Նոր լուս տեսած գրքեր:

№ 5

|    |                              |     |   |
|----|------------------------------|-----|---|
| 1  | ՏՈՒՐԳԵՆԵՒԻՑ-Ա. ԾԱՏՈՒՐ.       | 667 | Արձակ բանաստեղծութիւններ  |
| 2  | ՀԱՅՆԷՑԻՑ-Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ        | 675 | Երգ (բանաստեղծութ.):  |
| 3  | ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. . . . .        | 676 | Լուր-դա-լուր (քրդական պոէմա):   |
| 4  | ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆՑ, ԳԱՔՐԻԷԼ        | 682 | Գեղը կանգնի—գերան կը կտորի:   |
| 5  | ՂԱԶԲԷԳ, ԱԼԷՔՍԱՆԴՐԷ . . . . . | 691 | Էլբերգ (պատմած.ք):  |
| 6  | ԼԵՖՈՐ, Գ. . . . .            | 711 | Գրոշակ (պատմած.ք):  |
| 7  | ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺՇԿ. Վ. . . . .   | 726 | Բնական Հիւնդոտիւմ:  |
| 8  | ԲԱՀԱԹՐԵԱՆ, Ս. . . . .        | 738 | Հող. և անձն. իրաւ. Հին. Հալաստանում (վերջ):   |
| 9  | ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ . . . . .  | 749 | Արծաթի և սուղու խնդիրը:   |
| 10 | ՅԱԿՈՒԲԵԱՆ, ՅԱԿՈՒԲ . . . . .  | 756 | Բանւ. ապանովացումը Ռուսիայում:  |
| 11 | ԱՍՏ. Գ. . . . .              | 765 | «Ձոնակ Բիւրասպի Աժղահակ»:   |
| 12 | » » . . . . .                | 673 | «Հանրամատչելի Բնախօսութիւն»:  |
| 13 | ՎԱՆՑԵԱՆ, ԳՐ. . . . .         | 780 | Օրէնք և կազմակերպութիւն:  |
| 14 | ՂԼՏՃԵԱՆ, ԱՐՍԷՆ ՎԱՐԳ. . . . . | 792 | Քանանները Ալսալք. վիճակում:   |
| 15 | ***                          | 801 | Մի բրոշիւրի առիթով I, II, III:  |
| 16 | Z. . . . .                   | 803 | Քաղաք. Տես. Կարնօ՛ր մահը. Կազմիւր Պիրիէ:—Մինիստր. փոփոխ.  |
| 17 | ԽՍԲ. . . . .                 | 804 | Ձանազան լուրեր:—Սովը:—Յօգուտ սովեակների նւէրներ:—Քանանական խնդիր:—Սիւնն բէ՛Մաքսուտ:—Թիֆլիսի նահանգի ազնականների առաջնորդ:—Թիֆլիսի ազնականաց կալաճական բանկի ընդհանուր ժողովները:—Պուրի «Ա. ետաբեր»-ը:—Արվկասեան Գլուզանտեուութիւն շաբաթաթերթը:—Թիֆլ. Քաղաք. Փոխաղ. Ապահով. Բնկերութիւն:—Կալաճները Անդրկովկասում:—Ներուէսեան դպրանոցի հոգաբարձական ծիական պատգամաւորների ընտրութիւնները և «Արձաղանքը»:—Կազմալուծութեան խորհուրդներ:—Խուրա:—Նւրարերութիւններ: † Նիկոսերա Ձիովաննի:—† Վիլհելմ Ռոշեր:—Նոր ստացած գրքեր: |

№ 6

|   |                              |     |                              |
|---|------------------------------|-----|------------------------------|
| 1 | ԳԱԲԱՇԻԻԼԻ . . . . .          | 881 | Երկկղուն և Քուչէ (պատմած.ք): |
| 2 | ՇԱՆԹ. . . . .                | 844 | Մակոկը (բանաստեղծ.):         |
| 3 | ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. . . . .        | 845 | Աննա (պատմած.ք):             |
| 4 | Ա. . . . .                   | 865 | Հելէն Կելէր:                 |
| 5 | ՅԱԿՈՒԲԵԱՆ, ՅԱԿՈՒԲ . . . . .  | 886 | *** I, II (բանաստեղծ.):      |
| 6 | ԳՈՒՐԲԱԽԵԱՆ, Յ. . . . .       | 888 | Սանձարձակ անասուն. զբօսանքը: |
| 7 | ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . . | 892 | Գարոցական նամակներ:          |

|                                  |   |
|----------------------------------|---|
| 8 ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺՇ. ՎԱՀԱՆ . . . . . | 901 Բնական Հիպնոտիսմ:   |
| 9 ՅԱԿՈՒԲԵԱՆ, ՅԱԿՈՒԲ . . . . .    | 913 Բանւորն. ապահ. Ռուսաստանում:  |
| 10 Գ. ԱՍՏ. . . . .               | 924 «Հայ աշուղներ»:   |
| 11 Ե. ՄԻՆ. . . . .               | 927 «Ճանապարհ. Արարատի վրայ»:   |
| 12 » » . . . . .                 | 928 «Երկրագունդ, ծովերը և ցամաք»:   |
| 13 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻՔ . . . . . | 930 Ժամանակակից Տեսութիւն:—Յու-<br>նիսի ընտրութիւնները:   |
| 14 ՄԵԼՔՈՒՄԵԱՆՅ, Մ. . . . .       | 938 Մեղրի գիւղի զրութիւնը:  |
| 15 ՄՈՒՐԱԳԵԱՆՅ, Յ. . . . .        | 945 Նամակներ Ան ծովի ափերից:  |
| 16 ՎԱՐԳԱՆԵԱՆՅ, Գ. . . . .        | 949 Գերմանացիք Փոքր-Ասիայում:   |
| 17 Ա. Մ. Ն. . . . .              | 952 Արտասահմ. կարծի սպանումը:   |
| 18 ԽՄԲ. . . . .                  | 974 Լուերի:— Ուղերձ «Մուրճ»-ին:—<br>Աջըղեան պատրիարքի հրատարականը:—Ներսիսեան գպրանոցի հո-<br>գաբարձուների ընտրութիւնը:—Երկաթուղի դէպի Ալեքսանդրապոլ,<br>Երևան և Կարս:—Նւիրաբերութիւններ և կտակներ:—Հայոց ընթեր-<br>ցարան Լոնդոնում:—† Հենրի Լէլարդ:—Նոր լուս տեսած գրքեր: |
| 19 ԽՄԲ. . . . .                  | 978 «Մուրճ» ի բովանդակութ. № 1—6:   |

№ 7—8

|                                    |  |
|------------------------------------|--|
| 1 ԱԳԵԼԵԱՆ, Ա. . . . .              | 987 Ներհակ Առաքելը (եղելութիւն):   |
| 2 ՊՈՒՇԿԻՆԻՅ—ԾԱՏՈՒՐԵԱՆ . . . . .    | 1017 Հրեշտակ (բանաստեղծ.):   |
| 3 ՆԱԳՍՈՒՆԻՅ—ԾԱՏՈՒՐԵԱՆ . . . . .    | 1018 * * (բանաստեղծութիւն):  |
| 4 ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ . . . . .       | 1019 Օրհնեակ լինես (Հնդ. լեզուից):   |
| 5 ՅԱԿՈՒԲԵԱՆ, ՅԱԿՈՒԲ . . . . .      | 1023 Անմուսց ընկերիս (բանաստ.):  |
| 6 ՎՐՈՅՐ, Ա. Մ. . . . .             | 1025 Աղամեանի նամակները:   |
| 7 ՇԱՆԹ. . . . .                    | 1035 Երգ (բանաստեղծութիւն):  |
| 8 ՎՈՒՈՎՈՋԱ, ԵԼԻՍ . . . . .         | 1036 Գիւղական քահան. Անդլիայում:   |
| 9 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ . . . . .     | 1047 Մանկան (բանաստեղծութիւն):   |
| 10 ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺՇ. ՎԱՀԱՆ . . . . .  | 1049 Բնական Հիպնոտիսմ (չարուն.):   |
| 11 ԱԹԱՆԱՍԵԱՆ, ԱՇՈՏ. . . . .        | 1060 Գութանի շուրջը:   |
| 12 ՎԱՆՅԵԱՆ, ԳՐԻԳՈՐ. . . . .        | 1066 Պատմ. ակնարկ բոչան. անցեալից:   |
| 13 ՄԻԻԼԼԷՐ, ՅՐԻԳՐԻՍ, ՊՐՈՅ. . . . . | 1089 Հայերէնի ձայնաւորն. ծագումը:  |
| 14 ՅԱԿՈՒԲԵԱՆ, ՅԱԿՈՒԲ . . . . .     | 1093 Բանւորների ապահ. Ռուսաստան.   |
| 15 Ա. Ա. . . . .                   | 1102 «Մասիս»:  |
| 16 Գ. ԱՍՏ. . . . .                 | 1109 «Մեղապարտ փարիսեցիներ»:   |
| 17 » » . . . . .                   | 1113 «Մխիթարանք և հանգիստ»:  |
| 18 ՎԱՐԳԱՆԵԱՆ, Գ. . . . .           | 1117 «Լուրդ» — Էմիլ Զոլայ:   |
| 19 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻՔ . . . . .   | 1122 Ժամանակակ. Տեսութիւն:— Պատ-<br>րիարքական տեղապահի ընտրութիւնը տաճկահայերի համար:— |

Պատուաւոր հաշտարար դատաւորների հաստատութիւնը կովկասում:—  
 Չալնատու ծխականների խնդիրը:—Ներսիսեան դպրոցի հին հոգաբար-  
 ձութեան նոր սխրագործութիւնը:—Հրատարակչական ընկերութիւնը  
 և մամուլը:—Մի նոր չարձակումն հայերի վրայ ուստաց մամուլի  
 մէջ:—Մի նոր չարձակումն «Մուրճ»-ի վրայ հայոց մամուլի մէջ:

- 20 ՂԱԶԱՐԵԱՆՅ, ԵՐՈՒԱՆԴ . . . . . 1143 Ուսուցչական խնդիր:
- 21 ՏԷՐ-ՄԿՐՏՁԵԱՆ, Մ: . . . . . 1147 Աւագ ուսուցիչը մեր գպրոցներում:
- 22 Ա. Ա. . . . . 1151 Յովհ. Ս, Խատիսեան:
- 23 ՄԻՐԻՄԱՆԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ 1154 Գաւառակ. Նամակն.—Գեղաշենը:
- 24 Ա. Մ. Ն. . . . . 1163 Արտաս. քրտն. Պոլսի երկրաշարժը:
- 23 Շ. . . . . 1168 Քաղ. Տես. Չին-եապ. պատերազմը:
- 26 ԽՄԲ. . . . . 1173 Լուրեր:—կովկասեան կառավար-  
 չագետի շրջաբերականը հայոց եկեղ. ծխական դպրոցների մասին:—  
 Հալածէս կաթուղիի հայերը աւստրիական Լէհաստանում:—Պոլսի Խե-  
 նիկումի խնդիրը Թիֆլիսում:—Շուշայ թեմական դպրանոցի առի-  
 թով:—Գէորգեան ձեմարանի նոր տեսուչ:—Ուղղափառ դպրանոց  
 Գուլթալիսում:—Կարա-Մուրղա:—Բողարջեանցի ծխախոտի գործա-  
 րանը և իւր բանւորները:—† Յովհաննէս Խատիսեան:—† Պարիզի  
 կոմսը:—† Հելմոլց:—Նոր ստացւած գրքեր:

№ 9

- 1 ԱԴԵԼԵԱՆ, Ա. . . . . 1179 Ներհակ Առաքելը (եղելութիւն):
- 2 ՇԱՆԹ. . . . . 1208 Տեհնանք (բանաստեղծ.):
- 3 ԳՐԱԽՄԱՆ, ՀՈՂԳԵՐ. . . . . 1211 Աղջիկը մեռաւ և նրան թաղեցին:
- 4 ՊՈՒՇԿԻՆԻՅ—ԾԱՏՈՒՐԵԱՆ . . . . . 1222 Աչնան առաւօտ (բանաստեղծ.):
- 5 ՍՈՂՈՄՈՆԵԱՆՅ, Բ. . . . . 1224 Սուրբ գերեզման (եղելութիւն):
- 6 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ . . . . . 1243 Նաղտնից (բանաստեղծ.):
- 7 ՇՏԵԻԷՆ, ՕՐ. Ա. . . . . 1244 Գիւղ. վարժուհ. վիշտակարանից:
- 8 ՎՐՈՅՐ, Ա. Մ. . . . . 1256 Ազամեանի նամակները (չար.):
- 9 ԽԱԺԱԿՆԵԱՆ, ԳԱՐԵԳԻՆ. . . . . 1565 Ֆլամմարիոնը ժընևում:
- 10 ԱԹԱՆԱՍԵԱՆ, ԱՇՈՏ . . . . . 1278 Գուլթանի շուրջը, Բ.:
- 11 Ա. Ա. . . . . 1285 «Գարւիճիզմ»:
- 12 » » . . . . . 1296 «Յար. Արարատեանի կեղծիքը»:
- 13 ԲԱՀԱԹՐԵԱՆ, ԼԵՒՈՆ . . . . . 1303 «Ռոտամ և Սոհրաբ»:
- 14 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՔ . . . . . 1305 Ժամանակակից Տեսութիւն:—Պոլ-  
 սի պատրիարք. ընտր. խնդիրը:—  
 Սասուն:—Նրմուլով կովկասում:—  
 Հայոց թատրոն:
- 15 . . . . . 1310 Թիֆլ. քաղ. դպրոցների խնդիրը:

- 16 . . . . . 1315 *Հաղոց թեմ. դպր. կազմը 1894/95.*
- 17 ՄԻՐԻՄԱՆՆԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ 1322 *Գաւառ. նամակն. Գեղաշէն (չար.):*
- 18 ՍԵՒՆԱՆ, Վ. . . . . 1328 *Թատրոնի շուրջը:*
- 19 Վ. Ա. . . . . 1330 *Ֆրանս. ուղղադր. բարեփոխումը:*
- 20 Շ. . . . . 1333 *Քաղաքական Տեսութիւն:—Չին-  
հապոնական պատերազմը:—Ֆրան-  
սիան և Մադակասկար:*
- 21 ԽՄԲ. . . . . 1336 *Լուրեր: Ալեքսանդր III ի հիւան-  
դութիւնը.—Նպիտոկոպոսների ձեռնադրութիւն:—Սինոդի նոր ան-  
դամներ:—Գիւղաօժտեսութիւնը ճեմարանում:—Ներսիսեան դպրա-  
նոցի անշի ընտրութեան խնդիրը:—Գրագէտներին օժանդակող  
ընկերութեան խնդիրը:—Արսէն Վարդ. Ղլտճեան:—Նրզղաղի ապս-  
տամբութեան համար քանտարկածները:—Հրդեհ Սաս-զիւղում:—  
Շուշու առաջնորդ կարապետ եպ. Ալվազեան:—Թիֆլիսի քաղա-  
քային դպրոցների խնդիրը:—Թիֆլ. արքունական թատրոնի նոր  
դիրեկտոր:—Բաթումի քաղաքային ընտրութիւնները:—Սահմանա-  
չափական լանձնաժողով:—Նւիրաբերութիւններ:—Գիֆտերիտի դէմ  
Ռուի միջոցը:—Արեւելագէտների X-րդ միջազգային ժողով:—Փափա-  
զեանի Աննա վէպը:—† Գրիգոր Աբրահամեան:—† Սարգիս քահա-  
նայ Բէգնազարեանց:—† Ներսէս Հակագուճի:—Նոր ստացւած  
գրքեր:*

**№ 10**

- 1 ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ, ԲԷՈՐԳ. . . 1353 *Մուրացիականեր:*
- 2 ՇԱՆԹ. . . . . 1380 *Չէ, կը չիշիմ քեզ (բանաստեղծ.):*
- 3 ՖԻԼՈՆ, ՕԳԵՒՍՏԷՆ . . . . . 1382 *Ջիմ և Ջէկ:*
- 4 ՅԱԿՈՐԵԱՆ ՅԱԿՈՐ . . . . . 1395 *\* \* (Բանաստեղծութիւն):*
- 5 ՍԿՐԱՄ, ԱՄԱԼԻԷ . . . . . 1396 *In Asiam profectus est.*
- 6 ՓԱՓԱՋԵԱՆՅ, Վ. . . . . 1407 *Մեծ փականք:*
- 7 ՎՐՈՅՐ, Ա. Մ. . . . . 1411 *Աղամեանի նամակն. (չարունակ):*
- 8 ԽԱԺԱԿՆԵԱՆ, ԳԱՐԵԳԻՆ. . . 1421 *Ֆլամմարիոնը ժընեում:*
- 9 ԱՐԾՐՈՒՆԻ Վ. ԲԺ. . . . . 1428 *Բնական Հիպնոտիսմը:*
- 10 ՇՏԵԻԷՆ, ՕՐ. Ա. . . . . 1439 *Գիւղ. վարժուհ. չիչատակարանից:*
- 11 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ 1450 *Կապիտալիսմի զարգացումը:*
- 12 ՍԷՅԼԱՆ . . . . . 1465 *Սասուն:*
- 13 ՂԱՋԱՐԵԱՆ, ԵՐՈՒԱՆԳ . . . . . 1471 *Անցեալի չիչատակը:*
- 14 ԳԱՂԲԱՇԵԱՆ, ՅԱՐ. . . . . 1477 *«Ագաթ. և իւր բաղմ. գաղտնիք»:*
- 15 Ա. Ա. . . . . 1486 *Ս. Բալազ. «Գարւլինիլով» առիթով:*
- 16 ԱՐԱՍԻԱՆՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻՓ . . 1491 *ժամ. Տես. Կալսր Ալեքսանդր III.*

- 17 Մ. 7 . . . . . 1496 Սասնուլ դէպքերը:
- 18 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԳՐ. 1505 Մի համակրելի երևութ հաչ մա-  
մուլի 100-ամեակի առիթով:
- 19 ԽՄԲ. . . . . 1614 Լուրեր: Սասունի դէպքերը:—Սա-  
սունի կոտորածը:—Հոգևոր ատենան Ատրպետականի իեմում:—Էջ-  
միածնի ուսումնական լանձնաժողովի նոր կազմը:—Շուշուի դպրա-  
նոցի գրութիւնը:—Ներսիսեան դպրանոցի տեսչական ընտրու-  
թիւնը:—Կաթողիկոսակ. պատգամաւոր Ալեքսանդր III-ի թագման:—  
Հալոց դպրոցների մասին Անդրկասպեան երկրում և Թուրքեստանում  
պետական խորհրդի որոշումն:—Գրականներին օգնելու ֆոնդ:—Փո-  
թիլի նոր քաղաքագլուխ:—Ախալցխայի քաղաքակրթ. խորհուրդ:—  
Գանձակի քաղաք. դեպուտատներ:—Վարդրոպ:—Պոլսի արկածեալ-  
ների օգտին:—Ներսիսեան թիւններ:—Գարսիլի:—Գրողով:—Հողա-  
չափութիւնը Անդրկովկասում:—Ներշակ Առաքել վէպը:—Վանքեանի  
բուշաների մասին լուրացում:—Նանովսիու 50 ամեալ լուրեանը:—Նա-  
թաղործների ժողով:—† Իշխ. Խմբակիւնակիւ:—† Գրիգոր Խզմի-  
րեան:—† Անտոն Ռուբինշտէյն:—Տիրաժ կալուածական բանկի:—  
Նոր ստացւած գրքեր:

№ 11—12

- 1 ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆՑ, ԳԱՔՐԻԷԼ 1529 Չարաբեր խարազանը (պատմ.):
- 2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . 1535 Ասում են, պօէտ, (բանաստ.):
- 3 " " . . 1536 Հիասթափութիւն (բանաստեղծ.):
- 4 ՍՏՐԻՆԳԵՐԳ, ԱԻԳՈՒՍ. . . 1537 Խղճի խալթոցները (պատմ.):
- 5 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԳՐ. 1559 Մեռեալի սէրը (բանաստ.):
- 6 ԿՈՊՊԷ, ՖՐԱՆՍՈՒԱ . . . . 1561 Համբույր (պատմաձք):
- 7 ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ . . 1567 Երգ (բանաստեղծութիւն):
- 8 ՓԱՓԱՋԵԱՆՑ, Վ. . . . . 1568 Ջգաղնաչափ (պատմ.):
- 9 " " . . . . . 1572 Չիստի (պատմաձք):
- 10 ՇԱՆԹ. . . . . 1577 Երազ օրեր:
- 11 ՍԻՉՈՎԱ, Ա. . . . . 1601 Վենետիկեան հաշիւ (պատմ.):
- 12 ՎՐՈՅՐ, Մ. . . . . 1609 Աղամեանի նամակները:
- 13 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . 1625 Գպրոցական նամակներ VII VIII.
- 14 ՍԷՅԼԱՆ . . . . . 1639 Սասուն (նկարադիր) (չար.):
- 15 ՎԱՋԱՐԵԱՆ, ԵՐՈՒԱՆԴ . . . 1654 Անցեալի զիշատակը (չար.):
- 16 Լ. Մ. . . . . 1667 «Պետրոս Դուրեան»:
- 17 Յ. Գ. . . . . 1671 «Ամիէլի զիշատակարանից»:
- 18 ԳՆՈՒՆԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ . . . 1676 Լերմոնտովի «Դեր»:
- 19 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ . 1692 Ժամանակ. տեսութիւն:— Հալկա-

կան ինդրի նորագոյն զարգացումը:

- 20 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . 1722 Շուշալ զպրանոցը 1893/94 թ.
- 21 Ա. Ա. . . . . 1730 Արհեստ. «Մուրճ» ընկերութիւն:
- 22 ՓԱՓԱՋԵԱՆՑ, Վ. . . . . 1735 Նամակներ Անգլիայից:
- 23 Շ. . . . . 1744 Քաղաքական Տեսութիւն:—Քաղաքական դրութիւնը հալկական ինդրի առիթով:
- 24 ԽՄԲ. . . . . 1746 Չանազ. լուրեր:—Լուրեր «Մուրճ»-ից:—Վ. Կաթողիկոսը Թիֆլիսում:—Մատթէոս Իզմիրլեան հալոց պատրիարք Կ. Պոլսի:—Սխալ կաթողիկոսի մահը:—Բարձրագոյն մանիֆեստ:—Կէտողեան ձեմարանից:—Թիֆլ. քաղ. սկզբն. դպրոցների ինդիրը:—Նւիրաբերութիւններ:—Նւէրներ լոգուտ ուսուցչական ցենզի գործի:—Նւէրներ լոգուտ սովեալները:—Շուշալ քաղաքային դեպուտատների ընտրութիւն:—Սրեելագէտների Տ-րդ ժողով:—Կախեթիակի երկաթուղին:—Աղալարովի հողերի վաճառումը:—Ղզլարի Իզմիրեանների:—Հալոց Բարեգ. ընկերութեան ընդհանուր ժողովը:—† Լեսէպո:—† Բիրրո:—Նոր ստացւած գրքեր:
- 25 ԽՄԲ. . . . . 1754 «Մուրճ»-ի բովանդակութ. 1894 թ.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### „ՄՈՒՐՇ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառող էն հետեւեալ գներով

(Եշտնակամ դները անփոփոխ պահպանելու են մինչեւ վերջը 1895 թ.)


|  |           |
|--|-----------|
| «ՄՈՒՐՇ» 1889 թ. անկազմ . . . . .             | 4 ռ. — կ. |
| «ՄՈՒՐՇ» 1890 թ. անկազմ . . . . .             | 5 » — »   |
| «ՄՈՒՐՇ» 1891 թ. (սակաւաթիւ) անկազմ . . . . . | 10 » — »  |
| «ՄՈՒՐՇ» 1892 թ. անկազմ . . . . .             | 9 » — »   |
| «ՄՈՒՐՇ» 1893 թ. անկազմ . . . . .             | 10 » — »  |
| «ՄՈՒՐՇ» 1894 թ. անկազմ . . . . .             | 7 » — »   |
| ԲՈՒՈՐ 6 ՏԱՐԻՆԵՐԸ . . . . .                   | 45 ռ. — » |

#### Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Ճանապարհածախքի համար ուղարկուած է մի-մի ուղբլի  
ամեն տարւայ համար:

Կազմի համար վճարուած է վերադիր 60 կոպ. ամեն կիսա-  
մեակի համար (աչսինքն 1 ռ. 20 կ. ամեն տարւայ հա-  
մար):

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.  
Tiflis, Rédaction de la Revue „Mourtsch“.



# „Մ Ո Ւ Ր Ճ“

ՔՍԱՆՈՐԴՍԳՐՈՒԹԻՒՆ — ՀԱՍՈՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴՍԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻՍՎԱՆԻ ՀԱՍՏԻ

Բ Ա Ց Ի Ա Մ Ի

*Տարեկան գինն է 10 ռ.*


*Ասուցիչների և ուսանողների համար 8 ռ.*

*Վճարել կարելի է նաև մաս-մաս, սկզբում 3 (կամ 4) ասուլի,*

*Յաղկալը արժեքներով մինչ չունիսի վերջը:*

*Բաժանորդագրութեան համար զիմել՝*

ԽՄԲԱԴՐԱՑՈՒՆԸ } Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЦЪ“.  
Tiflis, Rédaction de la Revue „MOURTCH“.



1872  
1873  
1874  
1875  
1876  
1877  
1878  
1879  
1880  
1881  
1882  
1883  
1884  
1885  
1886  
1887  
1888  
1889  
1890  
1891  
1892  
1893  
1894  
1895  
1896  
1897  
1898  
1899  
1900

